INEE

Inter-Agency Network for Education in Emergencies
Réseau Inter-Agences pour l´Éducation en Situations d´Urgence
La Red Interagencial para la Educación en Situaciones de Emergencia
Rede Inter-Institucional para a Educação em Situação de Emergência
الشبكة المشتركة لوكالات التعليم في حالات الطوارئ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ

Պատրաստվածություն, արձագանքում, վերականգնում

Առաքելության նպատակը

ԱԻԿՄՑ-ը համաշխարհային բաց ցանց է, որի շրջանակում համատեղ աշխատում են գործող մասնագետներ ու քաղաքականություն մշակողներ՝ արտակարգ իրավիճակներում և հետճգնաժամային վերականգնողական փուլում բոլոր մարդկանց համար որակյալ կրթության իրավունք և անվտանգ ուսումնական միջավայր ապահովելու նպատակով. **www.ineesite.org:**

ԱՄՆ, Նյու Յորք նահանգ, 10017, ք. Նյու Յորք
ՄԱԿ-ի Պլազա 3, 7-րդ հարկ,
ՅՈՒՆԻՍԵՖ, Կրթության բաժին
ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտների և ցանցային գործիքների համակարգող

minimumstandards@ineesite.org
www.ineesite.org
www.ineesite.org/toolkit

Տպագրության համար պատրաստ ձեռնարկի շարվածքը պատվիրելու համար խնդրում ենք այցելել
www.ineesite.org/request-resource կայքը

INEE

Inter-Agency Network for Education in Emergencies
Réseau Inter-Agences pour l´Éducation en Situations d´Urgence
La Red Interagencial para la Educación en Situaciones de Emergencia
Rede Inter-Institucional para a Educação em Situação de Emergência
الشبكة المشتركة لوكالات التعليم في حالات الطوارئ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆՎԱՀԱԳՈՒՅՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ

Պատրաստվածություն, արձագանքում, վերականգնում

Արտակարգ իրավիճակներում կրթության հարցերով զբաղվող միջգերատեսչական ցանցը (ԱԻԿՄՑ) գործող մասնագետների և քաղաքականություն մշակողների համաշխարհային բաց ցանց է, որի անդամները, արտակարգ իրավիճակներից մինչև վերականգնում, մարդասիրական օգնություն են ցուցաբերում բոլորի համար որակյալ կրթության իրավունքը և անվտանգ ուսումնական միջավայրն ապահովելու նպատակով: ԱԻԿՄՑ ղեկավարող հանձնախումբն ապահովում է ցանցի ընդհանուր ղեկավարումը և ուղղորդում է վերջինիս աշխատանքները: Ներկայիս ղեկավարող հանձնախմբի անդամներն են՝ ChildFund International-ը, Փրկության միջազգային կոմիտեն (ՓՄԿ), Փախստականների կրթության հիմնադրամը (ՓԿՀ), «Սեյվ դը Չիլդրեն»-ը, Բաց հասարակության ինստիտուտը (ԲՀԻ), ՅՈՒՆԵՍԿՕ-ն, ՄԱԿ ՓԳՀ-ն, ՅՈՒՆԻՍԵՖ-ը, ԱՄՆ ՄԶԳ-ն և Համաշխարհային բանկը:

Նվազագույն ստանդարտների և ցանցային գործիքների հարցերով զբաղվող ԱԻԿՄՑ-ի աշխատանքային խումբը նպաստում է համաշխարհային մակարդակով իրականացնելու *պատրաստվածության, արձագանքման և վերականգնման վերաբերյալ Կրթության նվազագույն ստանդարտները*: ԱԻԿՄՑ-ի աշխատանքային խումբը բաղկացած է հակամարտությունների և արտակարգ իրավիճակներում գործող կրթության ոլորտի 19 փորձառու կազմակերպություններից. ActionAid, American Institutes of Research (AIR), Basic Education for Afghan Refugees (BEFARe), Family Health International 360 (FHI), Mavikalem Social Assistance and Charity Association, Եմենի կրթության նախարարություն, Նորվեգիայի զարգացման գործակալություն (ՆԶԳ), Փախստականների հարցերով նորվեգական խորհուրդ (ՓՆԽ), Plan International, Reach out to Asia (ROTA), «Սեյվ դը Չիլդրեն» կազմակերպության ավստրալական ներկայացուցչությունը, «Սեյվ դը Չիլդրեն» կազմակերպության նորվեգական ներկայացուցչությունը, ՅՈՒՆԵՍԿՕ, ՅՈՒՆԻՍԵՖ, War Child Holland, «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ»:

ԱԻԿՄՑ-ն իր երախտագիտությունն է հայտնում հիմնադրումից ի վեր իրեն աջակցող ավելի քան 41 գործակալություններին, հաստատություններին և կազմակերպություններին: Աջակիցների ամբողջական ցանկը բերված է ԱԻԿՄՑ-ի **www.ineesite.org** կայքում:

ԱԻԿՄՑ-ն բաց է այն բոլոր շահագրգիռ անհատների ու կազմակերպությունների համար, որոնք արտակարգ իրավիճակներում իրականացնում են, սատար են կանգնում և պայքարում են հանուն կրթության: Հետաքրքրված անհատներն ու կազմակերպություններն անդամակցության համար կարող են գրանցվել ԱԻԿՄՑ-ի **www.ineesite.org/join** կայքի միջոցով.: Անդամակցությունն անվճար է և որևէ պարտավորություն չի ենթադրում:

Լրացուցիչ տեղեկատվության համար խնդրում ենք այցելել **www.ineesite.org** կամ կապվել ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտների և ցանցային գործիքների համակարգողի հետ հետևյալ էլ. հասցեով՝ **minimumstandards@ineesite.org**:

1-ին հրատարակություն՝ ԱԻԿՄՑ © 2004
Վերահրատարակություն՝ ԱԻԿՄՑ © 2006
Վերահրատարակություն՝ ԱԻԿՄՑ © 2009
2-րդ հրատարակություն՝ ԱԻԿՄՑ © 2010
Վերահրատարակություն՝ ԱԻԿՄՑ © 2010
Վերահրատարակություն՝ ԱԻԿՄՑ © 2012

Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են, սակայն կրթական նպատակներով նյութը կարելի է վերարտադրել ցանկացած եղանակով: Նմանատիպ բոլոր նպատակների համար պահանջվում է պաշտոնական թույլտվություն, որը, որպես կանոն, տրամադրվում է անմիջապես: Այլ հանգամանքներում նյութը պատճենելու, այլ հրատարակություններում այն վերաօգտագործելու, թարգմանելու կամ ադապտացնելու համար անհրաժեշտ է ստանալ հեղինակային իրավունքի սեփականատիրոջ նախնական գրավոր թույլտվությունը:

Ձևավորումը՝ Creatrix Design Group-ի (Կանադա)
Կազմի լուսանկարները՝ Փրկության միջազգային կոմիտեի, «Սեյվ դը Չիլդրեն»-ի և Oxfam Novib-ի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն. Կրթության նվազագույն ստանդարտներ. պատրաստվածություն, արձագանքում, վերականգնում 3

Բաժին 1. Հիմնարար ստանդարտներ..... 29

Համայնքի մասնակցության ստանդարտ 1.
Մասնակցություն 34
Համայնքի մասնակցության ստանդարտ 2.
Միջոցներ..... 43
Համակարգման ստանդարտ 1.
Համակարգում 47
Վերլուծության ստանդարտ 1.
Նախնական գնահատում..... 52
Վերլուծության ստանդարտ 2.
Արձագանքման ռազմավարություններ 60
Վերլուծության ստանդարտ 3.
Մշտադիտարկում 66
Վերլուծության ստանդարտ 4.
Ընթացիկ գնահատում.....71

Բաժին 2. Հասանելիություն և ուսումնական միջավայր 75

Հասանելիության և ուսումնական միջավայրի ստանդարտ 1.
Հավասար հասանելիություն 79
Հասանելության և ուսումնական միջավայրի ստանդարտ 2.
Պաշտպանություն և բարեկեցություն 87
Հասանելիության և ուսումնական միջավայրի ստանդարտ 3.
Կառույցներ և ծառայություններ 97

Բաժին 3. Ուսուցում և ուսումնառություն 105

Դասավանդման և ուսումնառության ստանդարտ 1.
Ուսումնական պլաններ..... 109
Դասավանդման և ուսումնառության ստանդարտ 2.
Վերապատրաստում, մասնագիտական
կատարելագործում և աջակցություն.....118
Դասավանդման և ուսումնառության ստանդարտ 3.
Ուսուցման և ուսումնառության գործընթացներ.....123
Դասավանդման և ուսումնառության ստանդարտ 4.
Ուսումնառության վերջնարդյունքների գնահատում.....126

Բաժին 4. Ուսուցիչներ և կրթական ոլորտի այլ աշխատակիցներ 132
Ուսուցիչների և կրթական ոլորտի այլ աշխատակիցների ստանդարտ 1. Աշխատակիցների հավաքագրում և ընտրություն 135
Ուսուցիչների և կրթական ոլորտի այլ աշխատակիցների ստանդարտ 2. Աշխատանքային պայմաններ 139
Ուսուցիչների և կրթական ոլորտի այլ աշխատակիցների ստանդարտ 3. Աջակցություն և վերահսկում 143

Բաժին 5. Կրթական քաղաքականություն 147
Կրթական քաղաքականության ստանդարտ 1. Օրենքների և քաղաքականությունների մշակում 150
Կրթության քաղաքականության ստանդարտ 2. Պլանավորում և իրագործում 157

Հավելվածներ 161
Հավելված 1. Տերմինների բացատրական բառարան.....161
Հավելված 2. Հապավումներ 177
Հավելված 3. Բառացանկ.....178
Հավելված 4. Հետադարձ կապի ձև.....187

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ. ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ. ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ, ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ, ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

Ի՞նչ է կրթությունն արտակարգ իրավիճակներում

Կրթությունը մարդու հիմնարար իրավունքներից մեկն է: Կրթությունը հատկապես կարևոր է հակամարտությունից և աղետներից տուժած տասնյակ միլիոնավոր երեխաների և երիտասարդների համար, բայցևայնպես, արտակարգ իրավիճակներում այն հաճախ զգալիորեն խաթարվում է՝ սովորողներին զրկելով որակյալ կրթության զարգացնող ազդեցությունից:

Կրթությունն արտակարգ իրավիճակներում ներառում է բոլոր տարիքային խմբերի համար նախատեսված ուսումնառության հնարավորությունները: Այն ընդգրկում է նախադպրոցական, տարրական, միջնակարգ, ոչ ֆորմալ, նախնական և միջին մասնագիտական, բարձրագույն, ինչպես նաև մեծահասակների կրթությունը: Արտակարգ իրավիճակներում և վերականգնման փուլում որակյալ կրթությունն ապահովում է ֆիզիկական, սոցիալ-հոգեբանական և ճանաչողական պաշտպանություն, ինչը կարող է փրկել և պահպանել կյանքեր:

Արտակարգ իրավիճակներում կրթությունը երաշխավորում է երեխաների և երիտասարդների արժանապատվությունն ու պահպանում նրանց կյանքը՝ տրամադրելով ուսումնառության համար ապահով տարածքներ, որտեղ կարող են հայտնաբերվել հավելյալ օգնության կարիք ունեցողները: Արտակարգ իրավիճակների ժամանակ, որակյալ կրթությունը կյանքեր է փրկում՝ վտանգներից ֆիզիկական պաշտպանություն ապահովելով: Երբ սովորողը գտնվում է ապահով ուսումնական միջավայրում, քիչ հավանական է, որ նա կենթարկվի սեռական, տնտեսական շահագործման կամ այլ ռիսկերի, ինչպիսիք են պարտադրված կամ վաղ ամուսնությունը, ինչպես նաև զինված ուժերին և զինված խմբավորումներին անդամագրվելը կամ կազմակերպված հանցագործության մեջ ներքաշվելը: Բացի այդ, արտակարգ իրավիճակներում կրթությունը կարող է գոյապահպանման հմտությունների ու հաղթահարման մեխանիզմների կատարելագործման մասին կենսական կարևոր տեղեկատվություն տրամադրել, օրինակ՝ ինչպես խուսափել ականներից, պաշտպանվել սեռական ոտնձգությունից, խուսափել ՄԻԱՎ վարակից և օգտվել սննդի ու առողջապահական ծառայությունների հնարավորություններից:

Կրթության ընձեռած հնարավորությունները մեղմացնում են նաև հակամարտության և աղետների հոգեբանասոցիալական ազդեցությունը՝

հույս արթնացնելով առօրեականության, կայունության, կազմակերպվածության և ապագայի հանդեպ: Կատարելագործելով խնդիրների լուծման և հաղթահարման հմտությունները՝ կրթությունը սովորողներին հնարավորություն է տալիս գիտակցված որոշումներ կայացնել վտանգավոր միջավայրերում գոյատևելու շուրջ, ինչպես նաև հոգ տանել սեփական անձի և այլոց մասին: Սա կարող է նպաստել, որ մարդիկ քննադատաբար վերաբերվեն քաղաքական ուղերձներին կամ հակասական աղբյուրներից ստացվող տեղեկատվությանը:

Դպրոցներում և ուսումնական այլ տարածքներում կրթության ոլորտից դուրս կարող են տրամադրվել նաև կարևոր այլ ծառայություններ, օրինակ, պաշտպանություն, սննդի կազմակերպում, առողջապահություն, ջրամատակարարում և ջրահեռացում: Սովորողների համար հարմար և ապահով տարածքներ հիմնելու տեսանկյունից կարևոր է կրթության, պաշտպանության, կացարանների տրամադրման, ջրամատակարարման և ջրահեռացման, առողջապահական և հոգեբանասոցիալական ոլորտների աշխատակիցների համագործակցությունը:

Որակյալ կրթությունն ուղղակիորեն նպաստում է հասարակությունների սոցիալական, տնտեսական և քաղաքական կայունությանը: Այն օգնում է նվազեցնել թեժ հակամարտության ռիսկը՝ ամրապնդելով սոցիալական համախմբվածությունը, նպաստելով հակամարտությունների կարգավորմանն ու խաղաղության հաստատմանը: Չնայած այն հանգամանքին, որ երկարատև խաղաղություն հաստատելու հնարավորությունները զգալիորեն աճում են, սակայն հակամարտությունից տուժած բնակչության կրթվածության դեպքում կրթությունը նույնպես կարող է բացասական ազդեցություն ունենալ խաղաղության և կայունության վրա: Կրթությունը կարող է նպաստել հակամարտությանը այն դեպքում, երբ խորացնում է անհավասարություններն ու սոցիալական անարդարությունը՝ որոշ սովորողներին զրկելով կրթության հնարավորությունից, կամ էլ եթե ուսումնական պլաններն ու մանկավարժական պրակտիկան կողմնակալ են: Հակամարտության ընթացքում ուսումնական հաստատությունները կարող են թիրախ դառնալ, իսկ ուսանողներն ու կրթական անձնակազմը կարող են դպրոցի ճանապարհին հարձակման ենթարկվել: Կրթական համակարգերի պաշտպանությունն ապահովելու և հակամարտությունից տուժած հասարակություններին կայուն խաղաղության և զարգացման ուղու վրա դնելու համար անհրաժեշտ է լավ նախագծված կրթական բարեփոխում, որը կարելի է մեկնարկել արտակարգ իրավիճակից անմիջապես հետո:

Ճգնաժամերը կարող են ազգային իշխանություններին, համայնքներին

և միջազգային շահառուներին հասարակության վերափոխման ուղղությամբ համատեղ աշխատելու հնարավորություն ընձեռել՝ ստեղծելով ավելի անաչառ կրթական համակարգեր և կառույցներ: Հաճախ մեկուսացվող խմբերը, ինչպիսիք են փոքր երեխաները, աղջիկները, դեռահասները, հաշմանդամություն ունեցող երեխաները, փախստականները և ներքին տեղահանման ենթարկված անձինք (ՆՏԱ-ներ), կարող են օգուտ քաղել կրթություն ստանալու հնարավորություններից: Սա կարող է ճգնաժամի օգտակար արդյունք հանդիսանալ՝ հանգեցնելով կրթության հասանելիության և որակի բարելավմանը:

Ճգնաժամերը համայնքի բոլոր անդամներիի համար հնարավորություն են ընձեռում ձեռք բերելու նոր հմտություններ և ձևավորելու նոր արժեքներ, այսինքն գիտակցելու ներառական կրթության, մասնակցության ու հանդուրժողականության, հակամարտությունների կարգավորման, մարդու իրավունքների, շրջակա միջավայրի պահպանության և աղետների կանխարգելման կարևորությունը: Անհրաժեշտ է, որ թե ճգնաժամերի ընթացքում և թե վերականգնման փուլում կրթության որակը լինի պատշաճ և համապատասխան: Այն պետք է տրամադրի տարրական գրաճանաչություն և թվաբանական հմտություններ, ապահովի սովորողների կարիքներին համապատասխանող ուսումնական ծրագրեր և խրախուսի քննադատական մտածողությունը: Կրթությունը կարող է ստեղծել ապահովության և դիմակայմանն մշակույթ՝ տեղեկատվություն տրամադրելով վտանգների մասին, դպրոցները դարձնելով՝ աղետների ռիսկի նվազեցման համայնքային կենտրոններ, իսկ երեխաներին ու երիտասարդներին՝ աղետների կանխարգելման առաջնորդներ:

Կրթության դերը մարդասիրական արձագանքման գործում

Ճգնաժամի ժամանակ կրթությունը համայնքների համար առաջնահերթ կարևորություն ունի: Դպրոցներն ու ուսումնական այլ տարածքները հաճախ գտնվում են համայնքի ուշադրության կենտրոնում և ապագա սերունդների համար խորհրդանշում են հնարավորություն և առավել լավ կյանքի հույս ներշնչում: Սովորողներն ու նրանց ընտանիքներն ունեն ձգտումներ, իսկ կրթությունը յուրաքանչյուր անձի համար հանդիսանում է հասարակության կյանքին տնտեսապես, սոցիալապես և քաղաքականապես լիարժեք մասնակցելու ունակությունների կատարելագործման բանալին:

Մինչ վերջերս մարդասիրական օգնության շրջանակում ներառվում էր սննդի և կացարանների տրամադրումը, ջրամատակարարումն ու ջրա-

հեռացումը, ինչպես նաև առողջապահական ծառայությունների մատուցումը: Կրթությունն առավելապես ընկալվում էր որպես զարգացմանն ուղղված առավել երկարատև աշխատանքի մի մաս, քան որպես անհրաժեշտ արձագանքում արտակարգ իրավիճակների ժամանակ: Սակայն ներկայումս արժևորվել է կրթության կենսապահպան ու կենսափրկիչ դերը, և կարևորվել է վերջինիս դերը մարդասիրական արձագանքման գործում:

Կրթությունը պլանավորման և մարդասիրական արձագանքման անբաժանելի մասն է, որը դուրս է գալիս անհապաղ օգնության տրամադրման շրջանակներից: Կրթության և անհետաձգելի այլ ծառայությունների համակարգումն ու փոխհամագործակցությունը կարևոր են բոլոր սովորողների իրավունքներին և կարիքներին արդյունավետ արձագանքման համար: Սա արտացոլված է «Սֆերա»-ի և ԱԻԿՄՑ-ի միջև կնքված Փոխգործակցության համաձայնագրում և Միջգերատեսչական մշտական հանձնաժողովի (ՄՄՀ) կրթական կլաստերի աշխատանքում (տե՛ս ռազմավարական կապերի մասին բաժինը, էջ 24-25):

Մարդասիրական արձագանքումը բնութագրվում է որպես անընդհատ շարունակվող գործընթաց, որն իր մեջ ամփոփում է ճգնաժամից առաջ աղետներին պատրաստվածությունն ու արձագանքումը՝ սկսած արտակարգ իրավիճակից մինչև վաղ վերականգնման փուլ: Տևական անկայունության իրավիճակներում այս գծային զարգացումը հաճախ չի համապատասխանում իրականությանը, սակայն այն կարող է բարենպաստ պայմաններ ստեղծել վերլուծության և պլանավորման համար:

ԱԻԿՄՑ ստանդարտները

«ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտներ» ձեռնարկը պարունակում է 19 ստանդարտ, որոնցից յուրաքանչյուրն ուղեկցվում է հիմնական գործողություններով և ուղղորդող ցուցումներով: Ձեռնարկը նպատակ ունի բարելավել կրթական պատրաստվածությունը, արձագանքման և վերականգնման որակը, ընդլայնել ապահով և պատշաճ կրթություն ստանալու հնարավորությունները, ինչպես նաև ապահովել այս ծառայությունների մատուցման հաշվետվողականությունը:

Արտակարգ իրավիճակներում կրթության հարցերով միջգերատեսչական ցանցն (ԱԻԿՄՑ) աջակցել է մի խորհրդակցական գործընթացի, որը տարբեր երկրների ազգային իշխանություններին, պրակտիկ մասնագետներին, քաղաքականություն մշակողներին, գիտամանկավարժական կադրերին և կրթական ոլորտի այլ աշխատակիցներին ներգրավել է այս ձեռնարկի 2004թ. մշակման և 2010թ. թարմացման գործերում

(մանրամասները տե՛ս ստորև): «ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտներ»-ի ձեռնարկի ուղեցույցը նախատեսված է մի շարք արտակարգ իրավիճակներին, այդ թվում՝ բնական վտանգավոր երևույթներին և հակամարտություններին, աղետներին, դանդաղ զարգացող կամ հանկարծահաս, ինչպես նաև գյուղական ու քաղաքային միջավայրերում արտակարգ իրավիճակներին արձագանքելու համար:

«ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտներ» ձեռնարկի ուշադրության կենտրոնում է որակյալ և համակարգված մարդասիրական արձագանքման ապահովումը, այսինքն՝ աղետներից տուժած մարդկանց կրթական իրավունքների իրացումը և կարիքների բավարարումը այնպիսի գործընթացների միջոցով, որոնք պաշտպանում են վերջիններիս արժանապատվությունը: Կարևորվում է նաև կրթության ոլորտում մարդասիրական և զարգացմանն ուղղված օգնությունների համակարգումը: Մասնավորապես, հակամարտություններից տուժած գոտիներում կայուն ժամանակաշրջանները հաճախ կարող են ընդհատվել հակամարտության, անկայունության և մարդասիրական ճգնաժամերի պատճառով: Այս իրավիճակներում մարդասիրական և զարգացմանն ուղղված գործունեությամբ զբաղվող կազմակերպությունները կրթությանն արդյունավետ օժանդակելու նպատակով հաճախ միաժամանակ են գործում: Այս շահառուների միջև համակարգումն ու սերտ համագործակցությունն առանցքային դեր ունեն կրթությանն արդյունավետ աջակցելու գործում, այդ թվում՝ մարդասիրական օգնությունից զարգացմանն ուղղված աջակցությանն անցնելու ընթացքում: Ձեռնարկն ուղղորդում է, թե ինչպես պատրաստվել և արձագանքել սուր ճգնաժամերին այնպիսի եղանակներով, որոնք նվազեցնում են ռիսկը, բարելավում հետագա պատրաստվածությունը և ամուր հիմք ստեղծում որակյալ կրթության համար: Սա նպաստում է վերականգնման և զարգացման փուլերում ավելի հզոր կրթական համակարգի կառուցմանը:

Ինչպե՞ս են մշակվել ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտները

2003-2004 թթ. ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտները մշակվել, քննարկվել և համաձայնեցվել են տեղական, ազգային և տարածաշրջանային խորհրդակցությունների, ինչպես նաև ԱԻԿՄՑ-ի էլեկտրոնային հաղորդագրությունների միջոցով իրականացված առցանց խորհրդակցությունների և փորձագիտական գնահատման մասնակցային գործընթացի միջոցով: Լայնածավալ խորհրդակցական գործընթացն արտացոլում էր ԱԻԿՄՑ-ի՝ փոխգործակցության, թափանցիկության, ծախսարդյունավետության և խորհրդակցական եղանակով որոշումների կայացման ուղղորդող սկզբունքները: ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտների

առաջին հրատարակության մշակման գործին նպաստել են ավելի քան 2250 մարդ 50 երկրներից: 2009-2010 թթ. գնահատման արդյունքների և օգտվողներից ստացված առաջարկությունների հիման վրա ցանցը մեկնարկեց թարմացման գործընթացը, որպեսզի ձեռնարկը.

- արտացոլի արտակարգ իրավիճակներում կրթության բնագավառի վերջին զարգացումները,
- միավորի այն մարդկանց փորձառությունն ու լավագույն փորձի օրինակներն, ովքեր օգտվում են ձեռնարկից և ստանդարտները հարմարեցնում են իրենց համատեքստին,
- 2004թ.-ի հրատարակության համեմատությամբ առավել հարմար լինի օգտվողների համար:

ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտների 2010թ. թարմացումն իրականացվել է հիմնվելով սկզբնական խորհրդակցական գործընթացի վրա ԱԻԿՄՑ-ի՝ կրթական, մարդասիրական և զարգացման բնագավառների պրակտիկ մասնագետների ու քաղաքականություն մշակողների սերտ համագործակցությամբ: Այս գործընթացում ներգրավված են ավելի քան 1000 մարդ ամբողջ աշխարհից: Առանցքային են եղել ձեռնարկի վերաբերյալ կարծիքների վերլուծությունը, առցանց խորհրդակցությունները, խաչաձև հարցերի կարևորումը փորձագիտական խմբերի խորհրդակցությունների միջոցով, ստանդարտների բոլոր բաժինների համախմբումը, փորձագիտական գնահատումը և առցանց վերանայումը ԱԻԿՄՑ անդամների էլեկտրոնային հաղորդագրություններով:

Մարդու իրավունքների շրջանակը՝ ուղղված արժանապատիվ կյանքի իրավունքի ապահովմանը

Մարդու իրավունքները, մարդասիրության և փախստականների մասին օրենքը կազմում են միջազգային իրավական պայմանագրերի և նորմատիվների հիմքը, որոնք երաշխավորում և կանոնակարգում են մարդու իրավունքները խաղաղ պայմաններում և հակամարտությունների ու աղետների հետևանքով առաջացած ճգնաժամերի ընթացքում: ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտները, ինչպես ներկայացված է մարդու իրավունքների հիմնարար փաստաթղթերում, բխում են մարդու իրավունքներից և, հատկապես, կրթության իրավունքից:

1990թ. Ջոմտիենի հռչակագիրը, 2000թ. Կրթության համաշխարհային համաժողովի գործողությունների շրջանակային ծրագիրը, որտեղ ներկայացվել են «Կրթություն բոլորի համար» ծրագիրը, ինչպես նաև 2000թ. Հազարամյակի զարգացման նպատակները, իրավաբանորեն պարտադիր չլինելով, վերահաստատել, իսկ որոշ դեպքերում ընդլայնել

են կրթության իրավունքը: Այս հռչակագրերը հատուկ ուշադրություն են դարձնում կրթությանը արտակարգ իրավիճակներում, ինչպես նաև այն իրավիճակներում, որոնք նպաստում են տեղահանված բնակչության, օրինակ՝ փախստականների և ՆՏԱ-ների թվի աճին: Հռչակագրերում շեշտադրվում է վաղ մանկական հասակի (0-8 տարեկան) երեխաների կրթությունը, բոլոր երիտասարդների և մեծահասակների համար ուսումնական ծրագրերի հասանելիությունը և առկա կրթական ծրագրերի որակի բարելավումը:

ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտները բխում են նաև «Սֆերա» նախագծի մարդասիրական կանոնադրությունից: Վերջինիս հիմքում ընկած են միջազգային մարդասիրական իրավունքի սկզբունքներն ու դրույթները, միջազգային բնագավառում մարդու իրավունքների գործող օրենսդրությունը, փախստականների իրավունքը, ինչպես նաև *Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժման և աղետների ժամանակ օգնություն տրամադրող հասարակական կազմակերպությունների (ՀԿ-ներ) վարքագծի կանոնագրքերը*: Մարդասիրական կանոնադրությունն արտահայտում է այն համոզմունքը, որ արժանապատիվ և անվտանգ կյանքի տարրական պայմանների ապահովման համար աղետից և զինված հակամարտությունից տուժած բոլոր մարդիկ օգնություն ստանալու և պաշտպանված լինելու իրավունք ունեն: Պաշտպանության և օգնության իրավունքները երաշխավորելու նպատակով կանոնադրությունն ընդգծում է պետությունների և պատերազմող կողմերի իրավական պարտականությունները: Երբ պատկան մարմիններն ի զորու կամ պատրաստակամ չեն իրականացնել իրենց պարտականությունները, նրանք պարտավոր են մարդասիրական կազմակերպություններին թույլ տալ պաշտպանություն և օգնություն տրամադրել (տե՛ս **www.sphereproject.org**):

ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտների հիմքում ընկած միջազգային իրավական գործիքներ

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր (1948 թ.) (հոդվածներ 2, 26)

Ժնևյան IV կոնվենցիա (1949 թ.) (հոդվածներ 3, 24, 50) և II Հավելյալ արձանագրություն (1977թ.) (հոդված 4.3 (ա))

Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիա (1951թ.) (հոդվածներ 3, 22)

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր (1966 թ.) (հոդված 2)

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր (1966 թ.) (հոդվածներ 2, 13, 14)

Կանանց նկատմամբ ցանկացած խտրականության վերացման մասին կոնվենցիա (1979 թ.) (հոդված 10)

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա (1989 թ.) (հոդվածներ 2, 22, 28, 29, 30, 38, 39)

Հռոմի միջազգային քրեական դատարանի կանոնադրություն (1998 թ.) (հոդված 8 (2) (բ) (ix) և 8 (2) (ե) (iv))

Ներքին տեղահանության վերաբերյալ ուղղորդող սկզբունքներ (իրավաբանորեն ոչ պարտադիր) (1998 թ.) (պարբերություն 23)

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիա (2006 թ.) (հոդված 24)

Արտակարգ իրավիճակներում կրթության իրավունքի մասին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի բանաձև (2010 թ.):

Արդյոք գոյություն ունի՞ կրթության իրավունք արտակարգ իրավիճակներում

Այո: Մարդու իրավունքները համընդհանուր են և կիրառվում են անգամ արտակարգ իրավիճակներում: Կրթության իրավունքը թե՛ մարդու իրավունք է, թե՛ այլ իրավունքներ կամ հնարավորություններ ընձեռող իրավունք: Կրթությունն ապահովում է այնպիսի հմտություններ, որոնք անհրաժեշտ են մարդկանց իրենց լիարժեք ներուժը, ինչպես նաև վերջին-

ներիս այլ իրավունքները, այդ թվում՝ կյանքի և առողջության իրավունքն իրացնելու համար: Օրինակ, երբ մարդը ճանաչում է ականների վտանգի մասին նախազգուշացնող նշանները կամ նշագրերը, ապա նա կարող է խուսափել ականապատ դաշտից: Տարրական գրագիտությունը նպաստում է նաև առողջության իրավունքի իրացմանը: Այն մարդկանց հնարավորություն է տալիս կարդալ բժիշկների կողմից տրված ցուցումները և ճշտորեն հետևել դեղի սրվակի վրա նշված չափաբաժինների մասին հրահանգներին:

Բոլորին որակյալ կրթությամբ ապահովելու գործը գլխավորապես ազգային իշխանությունների պարտականությունն է, որը պատվիրակվում է կրթության նախարարություններին և կրթության ոլորտի կառավարման տեղական մարմիններին: Արտակարգ իրավիճակների ժամանակ այլ շահառուները, այդ թվում՝ բազմակողմ կազմակերպությունները (օրինակ՝ Միավորված ազգերի կազմակերպությունը (ՄԱԿ)), ազգային և միջազգային ՀԿ-ները, ինչպես նաև համայնքային կազմակերպությունները նույնպես կրթական միջոցառումներ են ձեռնարկում: Այն իրավիճակներում, երբ համապատասխան տեղական և ազգային իշխանությունները պատրաստակամ կամ ի զորու չեն կատարել իրենց պարտականությունները, վերոնշյալ շահառուները կարող են ստանձնել կրթության ապահովման պատասխանատվությունը: ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտների սույն ձեռնարկը բոլոր շահառուների համար կարող է ծառայել որպես լավագույն փորձ որակյալ կրթության հասնելու համար:

Որակյալ կրթությունը հասանելի, հանրամատչելի, ընդունելի և հարմարեցվող կրթություն է: ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտներում որպես կրթության պլանավորման հիմք են ընդունվում մարդու իրավունքների բնագավառում գործող օրենսդրության տառն ու բառը: Դրանք օգնում են կրթությունը հասցնել որակյալ մակարդակի, կիրառելով մասնակցության, հաշվետվողականության, խտրականության բացառման և իրավական պաշտպանության սկզբունքները:

ԱԻԿՄՑ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՁԵՌՆԱՐԿԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտների բովանդակությունը

ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտները ներկայացված են հետևյալ հինգ բաժիններում:

Հիմնարար ստանդարտներ. համակարգումը, համայնքային մասնակցությունն ու վերլուծությունն ընդգրկելու նպատակով սրանք վերանայվել

և ընդլայնվել են: Ամբողջական և որակյալ արձագանքմանը նպաստելու համար այս ստանդարտները պետք է կիրառել բոլոր բաժիններում: Իրավիճակն ավելի լավ ըմբռնելու և հաջորդ բաժիններում դրանք ավելի նպատակահարմար կիրառելու համար այս ստանդարտներում առանձնահատուկ կարևորություն է տրվում ծրագրի իրականացման բոլոր փուլերում մանրակրկիտ գնահատման անհրաժեշտությանը:

Հասանելիություն և ուսումնական միջավայր. այս բաժնի ստանդարտների կիզակետում ապահով և պատշաճ կրթական հնարավորությունների հասանելիությունն է: Այս ստանդարտներում մեծ նշանակություն է տրվում այլ ոլորտների, ինչպիսիք են առողջապահությունը, ջրամատակարարումը և ջրահեռացումը, սննդի և կացարանների ապահովումը, հետ ունեցած կարևոր կապերին, որոնց միջոցով ամրապնդվում է անվտանգությունն ու ապահովությունը, ինչպես նաև ֆիզիկական, ճանաչողական և հոգեբանական բարեկեցությունը:

Ուսուցում և ուսումնառություն. այս ստանդարտները կենտրոնանում են այն կարևոր հիմունքների վրա, որոնք նպաստում են արդյունավետ ուսուցմանն ու ուսումնառությանը: Վերջիններիս շարքում կարելի է նշել ուսումնական պլանները, վերապատրաստումը, մասնագիտական կատարելագործումն ու աջակցությունը, ուսուցման և ուսումնառության գործընթացները և ուսումնառության վերջնարդյունքների գնահատումը:

Ուսուցիչներ և կրթության բնագավառի այլ աշխատակիցներ. այս բաժնի ստանդարտներն ընդգրկում են կրթության բնագավառում մարդկային ռեսուրսների կառավարումն ու ղեկավարումը, այդ թվում՝ աշխատողների հավաքագրումն ու ընտրությունը, աշխատանքային պայմանները, վերահսկողությունը և աջակցությունը:

Կրթության քաղաքականություն. այս բաժնում բերված ստանդարտների կիզակետում են քաղաքականության մշակումը, ընդունումը, պլանավորումը և իրականացումը:

Սույն ձեռնարկի յուրաքանչյուր բաժին ներկայացնում է կրթադաստիարակչական աշխատանքի որոշակի ոլորտ: Ձեռնարկում բերված յուրաքանչյուր ստանդարտ փոխկապակցված է մյուս ստանդարտների հետ: Որակյալ կրթության վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու համար ուղղորդող ցուցումներն անհրաժեշտության դեպքում վեր են հանում համապատասխան այլ ստանդարտների կամ այլ բաժիններում առկա ուղղորդող ցուցումների հետ կարևոր փոխկապակցվածությունները:



Ինչն է նոր ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտների ձեռնարկի 2010 թ. հրատարակությունում

Նրանք, ովքեր ծանոթ են Ձեռնարկի 2004թ. հրատարակությանը, ծանոթ են նաև սույն հրատարակության բովանդակության զգալի մասին: Կատարվել են հետևյալ բարելավումները.

- Կարևորվել են իրավիճակի վերլուծությունը և առանցքային խնդիրների լուծումը հետևյալ ոլորտներում. պաշտպանություն, հոգեբանա-սոցիալական աջակցություն, հակամարտության մեղմացում, աղետների ռիսկի նվազեցում, վաղ մանկական զարգացում, գենդերային հարցեր, ՄԻԱՎ և ՁԻԱՀ, մարդու իրավունքներ, ներառական կրթություն, միջոլորտային կապեր (առողջ ապրելակերպի, ջրային ռեսուրսների, սանիտարական կանոնների ու հիգիենիկ նորմերի պահպանման խթանում, ապաստան, պարենային հումք և սննդամթերք) և երիտասարդության հետ կապված խնդիրներ: Այս առանցքային խնդիրների լուծմանն օժանդակող գործիքակազմի համար այցելեք ԱԻԿՄՑ գործիքակազմ՝ **www.ineesite.org/toolkit:**
- Հիմնական ցուցիչների փոխարեն ներառվել են հիմնական գործո-

ղություններ, որոնց կատարումն անհրաժեշտ է ստանդարտներին համապատասխանելու համար:

- Առաջին՝ «Բոլոր խմբերի համար ընդհանուր ստանդարտներ» բաժնի անվանումը փոխարինվել է «Հիմնարար ստանդարտներ» անվանումով, այսպիսով ընդգծելով այս ստանդարտների՝ որպես ողջ կրթադաստիարակչական աշխատանքի համար հիմք կիրառելու անհրաժեշտությունը: Բացի այդ, հաշվի առնելով ողջ կրթադաստիարակչական աշխատանքի համակարգման անհրաժեշտությունը, համակարգման վերաբերյալ ստանդարտը «Կրթության քաղաքականություն» բաժնից տեղափոխվել է այս բաժին:

Համատեքստի վերլուծություն

Մարդասիրական արձագանքումը պետք է կենտրոնացված լինի տուժած բնակչության վրա, այդ իսկ պատճառով ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտների թարմացված տարբերակում նույնպես վերջինս արժանացել է մեծ ուշադրության: Աղետներն ու հակամարտությունները տարբեր ազդեցություն են ունենում մարդկանց վրա ռեսուրսների և իրավասությունների վերահսկողության գործում ոչ հավասար մոտեցումների դրսևորման հետևանքով: Խոցելիությունը հատկանիշ է կամ հանգամանք, որը մարդուն ավելի զգայուն է դարձնում աղետի կամ հակամարտության կործանարար հետևանքների նկատմամբ: Խոցելիությունը սահմանելու գործում որոշակի դեր են խաղում մարդկանց շրջապատող սոցիալական, սերնդային, ֆիզիկական, բնապահպանական, մշակութային, աշխարհագրական, տնտեսական և քաղաքական համատեքստերը: Համատեքստից ելնելով, խոցելի խմբերը կարող են ընդգրկել կանանց, հաշմանդամություն ունեցող անձանց, երեխաների, աղջիկների, զինված ուժերի և զինված խմբավորումների հետ նախկինում առնչություն ունեցած երեխաների և ՄԻԱՎ կարգավիճակ ունեցող մարդկանց: Կարողությունը առկա ուժեղ կողմերի, հատկությունների և ռեսուրսների համադրությունն է անհատի, ինչպես նաև համայնքի, հասարակության և կազմակերպության ներսում, ինչը կարող է օգտագործվել համաձայնեցված նպատակներին հասնելու համար:

Հասկանալու համար, թե համատեքստն ինչպես է ազդում խոցելիության և կարողությունների վրա, կրթության ոլորտի շահառուները իրենց տեղական համատեքստի վերլուծության մեջ պետք է հաշվի առնեն մասնակիորեն համընկնող և փոփոխվող խոցելիություններն ու կարողությունները: Որոշ համատեքստերում մարդիկ կարող են առավել խոցելի դառնալ էթնիկ, դասային, տոհմացեղային, կրոնական, կուսակցական պատկանելիության կամ տեղահանության պատճառով: Այս տարրերը կարող

են բացասաբար անդրադառնալ որակյալ կրթական ծառայությունների հասանելիության վրա: Այդ պատճառով յուրաքանչյուր համատեքստում մարդկանց կարիքների, խոցելիությունների և կարողությունների համապարփակ վերլուծությունն առանցքային դեր ունի արդյունավետ մարդասիրական արձագանքման համար: Հիմնարար ստանդարտներն ընդգրկում են համատեքստի վերլուծության վերաբերյալ ուղեցույցներ, որոնց նույնպես առաջնային տեղ է հատկացվել ամբողջ ձեռնարկում:

Ճգնաժամի ժամանակ մարդկանց խոցելիության մակարդակը նվազեցնելու նպատակով կարևոր է լավ պատկերացում ունենալ վերջիններիս դիմակայունության ու կարողությունների մասին դրանց վրա հիմնվելու համար: Բացարձակ առաջնահերթություններ են համարվում արձագանքման տեղական միջոցառումների ըմբռնումն ու դրանց սատարումը, ինչպես նաև տեղական դերակատարների կարողությունների զարգացումը: Հիմնարար ստանդարտներում բարելավվել է համատեքստային վերլուծությունը և ներառվել են բոլոր հիմնահարցերը, ինչը հնարավոր է դարձնում Ձեռնարկի 2010թ.-ի հրատարակությունը հիմք համարել կրթության պատրաստվածության, արձագանքման և վերականգնման ժամանակ համատեքստին, խոցելիությանն ու կարողություններին ավելի արդյունավետ և համապարփակ ձևով անդրադառնալու համար:

Ո՞րն է ստանդարտի, հիմնական գործողության և ուղղորդող ցուցման միջև տարբերությունը:

Յուրաքանչյուր ստանդարտ ունի նույն ձևաչափը: Նախ, սահմանվում է ***Նվազագույն ստանդարտը***: Ստանդարտները բխում են այն սկզբունքից, որ աղետից կամ հակամարտությունից տուժած բնակչությունն ունի արժանապատիվ կյանքի, ինչպես նաև ապահով, որակյալ և պատշաճ կրթության իրավունք: Հետևաբար, դրանք որակական բնույթ են կրում և նախատեսված են յուրաքանչյուր համատեքստում կիրառելի և համընդհանուր լինելու համար:

Ստանդարտներին հաջորդում են մի շարք ***հիմնական գործողություններ***, որոնք առաջարկվում են որպես ստանդարտին հասնելու ուղիներ: Որոշ գործողություններ կարող են կիրառելի չլինել բոլոր համատեքստերի համար և պետք է հարմարեցվեն որոշակի համատեքստերին: Դրանք գործնականում կիրառողները կարող են այդ ստանդարտին համապատասխան այլընտրանքային գործողություններ մշակել:

Եվ վերջապես, ***ուղղորդող ցուցումներն*** ընդգրկում են լավագույն փորձի վերաբերյալ որոշակի կետեր, որպեսզի վերջիններս հաշվի առնվեն նվազագույն ստանդարտները կիրառելիս և հիմնական գործողությունները տարբեր համատեքստերին հարմարեցնելիս: Դրանք խորհուրդներ են պարունակում առաջնային խնդիրների և գործնական դժվարությունների հաղթահարման վերաբերյալ, միաժամանակ տրամադրելով սահմանումներ և ընդհանուր տեղեկատվություն:

Ո՞վ պետք է կիրառի ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտները

Արտակարգ իրավիճակներում կրթության պատրաստվածությամբ, արձագանքմամբ և վերականգնմամբ, այդ թվում՝ աղետների ռիսկի նվազեցմամբ և հակամարտությունների մեղմացմամբ զբաղվող բոլոր շահառուները պետք է կիրառեն և խթանեն այս նվազագույն ստանդարտները, հիմնական գործողությունները և ուղղորդող ցուցումները, ինչպես նաև նպաստեն վերջիններիս իրականացմանը: Դրանք տեխնիկական գիտելիքների և լավագույն փորձի հիմք են ապահովում որակյալ և ապահով կրթության հասանելիության համար, ինչպես նաև պետական և համաշխարհային մակարդակներում համախմբում են շահագրգիռ կողմերին: Այդ շահագրգիռ կողմերի շարքում են՝

- կրթության ոլորտի ազգային և տեղական կառավարման մարմինները,
- ՄԱԿ–ի գործակալությունները,
- երկկողմ և բազմակողմ դոնոր կազմակերպությունները,
- ՀԿ-ներն ու համայնքային կազմակերպությունները, ներառյալ ուսուցիչ–ծնող միավորումները,
- ուսուցիչները, կրթական ոլորտի այլ աշխատակիցները և ուսուցիչնե-

րի միավորումները,

- կրթության համակարգման հարցերով զբաղվող հանձնախմբերը և կրթական կլաստերները,
- կրթական հարցերով խորհրդատուները,
- հետազոտողներն ու գիտամանկավարժական կադրերը,
- մարդու իրավունքների ու մարդասիրական շահերի պաշտպանները:

Ինչպե՞ս հարմարեցնել ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտները տեղական համատեքստին

Մարդու իրավունքների վրա հիմնված համընդհանուր ստանդարտների և դրանց գործնական կիրառության միջև անհամաձայնությունն անխուսափելի է: Ստանդարտները որակյալ կրթության հասանելիության նպատակները սահմանում են համաշխարհային տեսանկյունից, մինչդեռ հիմնական գործողություններն իրենցից ներկայացնում են հստակ քայլեր, որոնք անհրաժեշտ են յուրաքանչյուր ստանդարտին հասնելու համար: Քանի որ բոլոր համատեքստերը տարբերվում են միմյանցից, ձեռնարկում տեղ գտած հիմնական գործողությունները պետք է հարմարեցնել յուրաքանչյուր տեղական համատեքստին, ելնելով վերջինիս առանձնահատկություններից: Օրինակ, ուսուցիչ–աշակերտ հարաբերակցության վերաբերյալ հիմնական գործողությունը ներկայացնող կետում շարադրված է, որ ուսուցիչ–աշակերտ պատշաճ հարաբերակցությունն ապահովելու համար պետք է աշխատանքի ընդունել բավարար թվով ուսուցիչներ (տե՛ս «Ուսուցիչների և կրթական ոլորտի այլ աշխատակիցների ստանդարտ 1»-ը, 5-րդ ուղղորդող ցուցումը, էջ 138): Սրա հարմարեցումը համատեքստին պետք է կատարվի համապատասխան շահառուների հետ խորհրդակցության ժամանակ, սահմանելով ուսուցիչ–աշակերտ այնպիսի հարաբերակցություն, որն ընդունելի կլինի տեղական մակարդակում: Թեև ճգնաժամի սուր փուլում մեկ ուսուցչի հաշվով 60 աշակերտը կարող է ընդունելի հարաբերակցություն լինել, սակայն ակնկալվում է, որ տևական ճգնաժամի կամ վերականգնման համատեքստում այդ թիվը կնվազեցվի մինչև մեկ ուսուցչի հաշվով 30 կամ 40 աշակերտի: Տեղական ընդունելի համատեքստին հարմարեցված գործողությունները սահմանելիս պետք է հաշվի առնել համատեքստը, ինչպես նաև առկա ռեսուրսները և արտակարգ իրավիճակի փուլը:

Առավել ճիշտ կլինի, եթե համատեքստին հարմարացնելու գործընթացն իրականացվի որպես կրթության՝ արտակարգ իրավիճակներին արձագանքման պլանավորման և պատրաստվածության մի մաս, նախքան արտակարգ իրավիճակում հայտնվելը: ԱԻԿՄՑ նվազագույն ստան-

դարտների կիրառման փորձը ցույց է տվել, որ համատեքստին հարմարեցումն ավելի արդյունավետ է, երբ այն իրականացվում է որպես մասնակցային և համատեղ միջոցառում: Իր գործունեության վայրում կրթության ոլորտի կամայական համակարգող հանձնախումբ կամ կրթական կլաստեր կարող է հանդիսանալ իդեալական համաժողով, որըկարող է ստանդարտները տեղական պայմաններին համապատասխանեցնելու նպատակով մշակել հստակ և իրագործելի գործողություններ (ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտները համատեքստին հարմարեցնելու վերաբերյալ ուղեցույցի համար այցելեք ԱԻԿՄՑ գործիքակազմ՝ www.ineesite.org/toolkit):

Որոշ դեպքերում տեղական գործոնները խոչընդոտում են նվազագույն ստանդարտների և հիմնական գործողությունների իրականացումը կարճ ժամանակահատվածում: Նման դեպքերում շատ կարևոր է անդրադառնալ տեղական համատեքստում տիրող իրականությանը և պարզել, թե ո՞րն է առկա բացը ձեռնարկում թվարկված ստանդարտների ու հիմնական գործողությունների միջև: Ստանդարտներն իրականացնելու համար պետք է ուսումնասիրել մարտահրավերները և որոշել փոփոխությունների ռազմավարությունները: Այնուհետև կարելի է մշակել ծրագիր և քաղաքականության ռազմավարություններ, ինչպես նաև ջանքեր գործադրել այդ բացերը լրացնելու համար:

ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտները մշակվել են բարելավելու համար այն ձևերը, որոնցով աղետներից տուժած մարդկանց կրթության իրավունքի և կարիքների բավարարմանն ուղղված մարդասիրական գործողությունները կդառնան հաշվետվողական: Հետապնդվող նպատակն է զգալիորեն փոփոխել ճգնաժամերից տուժած մարդկանց կյանքը: Սակայն ոչ մի ձեռնարկ չի կարող ինքնուրույն հասնել դրան: Դա կարող եք անել միայն դուք: ԱԻԿՄՑ-ն ուրախ կլինի ստանալ ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտների 2010թ. հրատարակության վերաբերյալ Ձեր արձագանքները, որոնք հիմք կծառայեն ձեռնարկի հետագա վերանայման համար: Խնդրում ենք օգտվել Հետադարձ կապի ձևից, որը կարող եք գտնել ձեռնարկի վերջում կամ հետևյալ կայքէջում՝ **www.ineesite.org/feedback**:

Գործիքներ, որոնք կօգնեն իրականացնել և ինստիտուցիոնալացնել ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտները

ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտների կիրառման ու ինստիտուցիոնալացման վերաբերյալ նյութերը հասանելի են ԱԻԿՄՑ–ի կայքում՝**www.ineesite.org/standards:**

ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտների թարգմանությունները. www.ineesite.org/translations

ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտների ձեռնարկի 2004թ. հրատարակությունը ներկայումս հասանելի է 23 լեզուներով, իսկ սույն հրատարակությունը՝ 17 լեզուներով, այդ թվում՝ արաբերենով, ֆրանսերենով, իսպաներենով, պորտուգալերենով և այլն:

ԱԻԿՄՑ գործիքակազմը. www.ineesite.org/toolkit

ԱԻԿՄՑ գործիքակազմը բաղկացած է ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտների ձեռնարկից, ուսումնական և գովազդային նյութերից (ներառյալ բոլոր թարգմանությունները), ինչպես նաև պրակտիկ գործիքներից, որոնք նախատեսված են ստանդարտների իրականացման նպատակով այդ ցուցիչները տեղական պայմաններին հարմարեցնելու համար: Գործիքները փոխկապակցված են ձեռնարկի յուրաքանչյուր բաժնի, ինչպես նաև ձեռնարկում արծարծված հիմնահարցերի հետ: Գործիքակազմը պարունակում է նաև մի շարք ԱԻԿՄՑ գործիքներ, որոնք մշակվել են «ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտներ» ձեռնարկը լրացնելու և վերջինիս վերամշակմանը աջակցելու համար: Այդպիսի օրինակներ են շինարարության վերաբերյալ «Ավելի ապահով դպրոցներ» ուղղորդող ցուցումները, «Ուսուցիչների վարձատրության վերաբերյալ» ուղղորդող ցուցումները, «Ուսուցման և ուսումնառության» վերաբերյալ ուղղորդող ցուցումներ»-ը, «Ներառական կրթության վերաբերյալ գրպանի ուղեցույց»-ը և «Գենդերային հարցերի վերաբերյալ գրպանի ուղեցույց»-ը:

ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտների տեղեկատվական գործիք.
www.ineesite.org/MSreferencetoo
Այս գործիքը համառոտ տեղեկատու ուղեցույց է, որն ունի «անբաժանելի» գրքույկի տեսք: Այստեղ դյուրընթեռնելի ձևաչափով թվարկվում են բոլոր ստանդարտները, հիմնական գործողությունները և ուղղորդող ցուցումները:

ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտների ինստիտուցիոնալացման ստուգացանկեր.
www.ineesite.org/institutionalisation
Այս ստուգացանկերը մշակված են տարբեր տիպի կազմակերպությունների (ՄԱԿ-ի գործակալություններ, ՀԿ–ներ, կառավարություններ, դոնորներ և կրթության համակարգման մարմիններ և կրթական կլաստերներ) հատուկ կարիքները բավարարելու նպատակով, որտեղ թվարկվում են մի շարք գործողություններ, որոնք կազմակերպությունները կարող են իրականացնել երկկողմ ու բազմակողմ աշխատանքներում, ինչպես նաև նվազագույն ստանդարտների ներքին ինտեգրման համար:

Ինչպե՞ս կիրառել ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտները

Հիմնարար ստանդարտները միշտ պետք է կիրառվեն հետևյալ բաժինների ստանդարտները գործածելիս. «Հասանելիություն և ուսումնական միջավայր», «Ուսուցում և ուսումնառություն», «Ուսուցիչներ և կրթության բնագավառի այլ աշխատակիցներ» և «Կրթության քաղաքականություն»: Անհրաժեշտ է ընթերցել նաև ստանդարտների յուրաքանչյուր բաժնին վերաբերող համառոտ ներածությունը, որը սահմանում է այդ բաժնին առնչվող հիմնահարցերը: Ստանդարտների կիրառմանն աջակցող լավագույն փորձի տեխնիկական գործիքները կարելի է գտնել ԱԻԿՄՑ գործիքակազմում՝ **www.ineesite.org/toolkit**:

«ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտներ» ձեռնարկը կազմվել է մարդասիրական արձագանքման իրականացումը պլանավորելու, մշտադիտարկելու և ընթացիկ ու վերջնական գնահատումը կատարելու նպատակով (ստորև տես օրինակ 1-ը): Այն առավելագույնս արդյունավետ կօգտագործվի, եթե կրթության ոլորտի շահառուներն արդեն ծանոթ լինեն ձեռնարկին և վերապատրաստված լինեն նախքան սուր արտակարգ իրավիճակներին արձագանքելը (ստորև տես օրինակ 2-ը): Որպես

կարողությունների զարգացմանն ուղղված օժանդակ ուսումնական ձեռնարկ այն արժեքավոր է: Վերջինս կարող է օգտագործվել նաև որպես տեղեկատվաքարոզչական գործիք՝ մարդասիրական աջակցության ցուցաբերման, ինչպես նաև ռեսուրսների ապահովման շուրջ բանակցելու ընթացքում (ստորև տե՛ս օրինակ 3-ը): Ձեռնարկն օգտակար է աղետներին պատրաստվածության, արտակարգ իրավիճակներին արձագանքումը պլանավորելու և ոլորտը համակարգելու համար:

ՄԵՆՔ ԿԱՐՈՂ ԵՆՔ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵԼ ԱԻԿՄՑ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻՆ

2004թ. հրատարակվելուց ի վեր ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտների ձեռնարկը արդյունավետ միջոց է հանդիսացել կրթության որակի բարձրացման համար ավելի քան 80 երկրներում արտակարգ իրավիճակների սկզբից մինչև վերականգնման փուլ: Ստանդարտներն այն ընդհանուր հիմքն են, որոնք նպաստում են տարբեր շահառուների, այդ թվում՝ կառավարության անդամների, համայնքների և միջազգային գործակալությունների ընդհանուր նպատակների իրականացմանը: ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտներից օգտվողները հայտնել են, որ ձեռնարկն օգտակար է հետևյալ նպատակներով.

- ապահովելու համայնքների նշանակալի ներգրավվածությունը կրթական ծրագրերի նախագծման և իրականացման գործում արտակարգ իրավիճակներից մինչև վերականգնման փուլ,
- առավելագույնս համակարգելու կրթության ոլորտում իրավիճակի գնահատման գործընթացը և այն հարմարեցնել ուսուցման գործընթացին,
- հզորացնելու ազգային կրթական համակարգերը,
- նպաստելու ծառայությունների մատուցման որակի բարելավմանը,
- մշտադիտարկելու և գնահատելու կրթադաստիարչական աշխատանքն արտակարգ իրավիճակներից մինչև վերականգնման և զարգացման փուլեր,
- զարգացնելու կարողությունները և հմտությունները բարձրորակ կրթական ծրագրերի իրականացման և դրանց բարելավման նպատակով,
- ուղղորդելու դոնորների ներդրումները կրթության ոլորտում:

ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտները կրթական ծառայություններ մա-

տուցողների համար հանդես են գալիս նաև որպես հաշվետվողականության հիմնական գործիք: Հետզհետե դրանք ավելի շատ են կիրառվում դոնոր կազմակերպությունների կողմից, հիմք հանդիսանալով վերջիններիս կողմից աջակցվող կրթական նախագծերում որակի և հաշվետվողականության համար:

Ստորև բերված են առանձնահատուկ համատեքստերում ստանդարտների կիրառման օրինակներ.

1. *Դպրոցի վերականգնում Իրաքում*: Պատերազմից հետո, որի պատճառով մարդիկ լքել էին իրենց տները, ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտները կիրառվեցին Ֆալուջա քաղաքի հինգ հանրակրթական դպրոցների վերականգնմանն աջակցելու համար: 2007թ.-ին թե՛ հայրենադարձ և թե՛ պատերազմի ընթացքում քաղաքը չլքած մարդիկ (աշակերտներ, ծնողներ և ուսուցիչներ) մասնակցում էին դպրոցի վերականգնման ծրագրի շրջանակներում առաջնահերթությունները սահմանելու վերաբերյալ նպատակային խմբի քննարկումներին: Ելնելով Համայնքային մասնակցության վերաբերյալ ստանդարտներից, ինչպես նաև «Հասանելիություն և ուսումնական միջավայր» բաժնի ցուցումներից,առաջնահերթ համարվեցին ջրամատակարարումը, ջրահեռացումը և դասասենյակների կարգավորումը, ինչպես նաև ձևավորվեց Համայնքային կրթության հանձնախումբ (ՀԿՀ): Աշակերտուհիների ցածր հաճախելիության պատճառը պարզելու և ՀԿՀ–ում կանանց մասնակցությունն ապահովելու նպատակով նախագծի իգական սեռի անձնակազմը տնային այցելություններ կազմակերպեց, հանդիպելով երիտասարդ աշակերտուհիների և նրանց մայրերի հետ: Դպրոց հաճախող աղջիկների ապահովության հետ կապված մտահոգություններին լուծում տրվեց և կազմակերպվեց այնպես, որ աղջիկները դպրոց գնան միասին կամ որևէ մեկի ուղեկցությամբ: Դպրոցում աշխատող արական սեռի ամուրի ուսուցիչների առկայության հետ կապված մտահոգությունը մեղմացնելու նպատակով ՀԿՀ-ն աշխատանք տարավ դպրոցի վարչական աշխատողների հետ անձնակազմի հավաքագրման գործընթացի թափանցիկությունը բարձրացնելու համար: Այս ամենը հավատ ներշնչեց ընտանիքներին, որ ուսուցիչները մեծ պատասխանատվությամբ կմոտենան իրենց երեխաներին, որի հետևանքով աճեց հաճախումների թիվը:
2. *Միջերատեսչական համակարգում Հնդկական օվկիանոսի ցունամիից հետո:* 2004թ. դեկտեմբերին տեղի ունեցած երկրաշարժի և ցունամիի հետևանքով Ինդոնեզիան անթիվ մարդկային կորուստներ և նյութական վնասներ կրեց: Աչե նահանգում զոհվեցին ավելի

քան 44,000 ուսանողներ, 2,500 ուսուցիչներ ու կրթության բնագավառի այլ աշխատակիցներ, իսկ 150,000 ողջ մնացած ուսանողները կորցրեցին պատշաճ ուսումնական հաստատություններ հաճախելու հնարավորությունը: Որպես արձագանք լայնորեն ընդունվեցին պատշաճ նախագծման և իրականացման գործիք հանդիսացող ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտները, որոնք թույլ տվեցին բարձրացնել համակարգման մակարդակը և կատարելագործել ճգնաժամային փուլի գործելակերպը: Կիրառելով Համակարգման վերաբերյալ ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտները, տեղական իշխանություններն ու միջազգային գործակալությունները ձևավորեցին Կրթության համակարգման հարցերով հանձնախումբ, որը պարբերաբար հանդիպումներ էր կազմակերպում Բանդա Աչեում: Նվազագույն ստանդարտների հարցերով մի միջգերատեսչական աշխատանքային խումբ գերատեսչությունների աշխատակազմի համար կազմակերպեց Նվազագույն ստանդարտների կիրառության վերապատրաստման դասընթացներ, լավագույն օրինակներով կիսելով իր փորձը: Ձեռնարկն շուտափույթ թարգմանվեց ինդոնեզերեն (*Բահասա Ինդոնեզիա*) և օգտագործվեց Աչե նահանգի կրթության նախարարության կողմից: Քաղաքի հիմնական դասը սուր ճգնաժամի ընթացքում անձնակազմի կողմից համակարգումն իրականացնելու և շարունակականության պահպանելու կարևորությունն էր: Պարբերաբար նոր աշխատակիցների ընդգրկումը «ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտներ»-ի վերաբերյալ ներածական դասընթացներում էական ազդեցություն ունեցավ նմանատիպ արտակարգ իրավիճակներում համակարգման գործընթացի բարելավման վրա:

3. *Դոնորային քաղաքականության ամրապնդում:* Նորվեգիան այն հինգ դոնորներից մեկն է, որոնք կրթության ոլորտը համարում են իրենց մարդասիրական քաղաքականության մի մասը և մեծապես աջակցում է «ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտներ»-ի կիրառմանը: 2007թ. Նորվեգիայի Արտաքին գործերի նախարարությունը (ՆԱԳՆ) կազմավորեց Արտակարգ իրավիճակներում գործող կրթական թիմ, որը հանձն առավ խթանել ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտների վերաբերյալ իրազեկության բարձրացումը, դրանց գործնական կիրառությունն ու պարբերական օգտագործումը Նորվեգիայի զարգացման գործակալության (ՆՈՐԱԴ), Նորվեգիայի արտաքին գործերի նախարարության (ԱԳՆ) և նրա գործընկերների շրջանում: Արտակարգ իրավիճակներում գործող կրթական թիմը կրթության ոլորտին տրամադրվող դրամաշնորհների հատկացումների մասին տեղեկացնում է ԱԳՆ-ին և ՆՈՐԱԴ-ին, ինչպես նաև ԱԻԿՄՑ-ի տեղեկագրերից

համապատասխան տեղեկատվություն է տարածում իրենց գործընկերների շրջանում: Այն հանձնարարում է, որ ֆինանսական օժանդակության համար ՆՈՐԱԴ-ին դիմող կազմակերպությունները նկարագրեն, թե ինչպես են կիրառում ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտները: 2008թ. ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտներն ընդգրկվել են Հարավային Սուդանում կայացած դոնորների ամենամյա համատեղ առաքելության տեխնիկական առաջադրանքում: Այդտեղ ներգրավված էին ՅՈՒՆԻՍԵՖ–ը, Համաշխարհային բանկը և Եվրոպական միությունը: Այսպիսով, ՆՈՐԱԴ-ը խթանեց ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտների կիրառությունն ու ինստիտուցիոնալացումը դոնորային գործընկեր կազմակերպությունների և Հարավային Սուդանի կրթության նախարարության միջոցով, որոնք պատասխանատու են կրթության ոլորտի վերակառուցման համար: Նվազագույն ստանդարտների ինստիտուցիոնալացման հարցում ՆՈՐԱԴ-ին աջակցել են Նորվեգիայի հիմնական ՀԿ–ները, որոնք ԱԻԿՄՑ-ի անդամ են հանդիսանում: Արտակարգ իրավիճակներում կրթական թիմն էլ իր հերթին խրախուսում է նորվեգական այլ ՀԿ–ների և գիտահետազոտական հաստատությունների, որպեսզի վերջիններս ընդունեն ստանդարտները և իրենց ծրագրերը մշակելիս օգտվեն դրանցից: Նորվեգիայի կառավարության աջակցությունը ԱԻԿՄՑ–ին, ինչպես նաև նրա կողմից ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտների կիրառումը վկայում է կրթության, մասնավորապես՝ուսուցիչների, գենդերային հարցերի և արտակարգ իրավիճակների վերաբերյալ համաշխարհային քննարկումներում և բանավեճերում վերջինիս ունեցած առաջատար դերի մասին:

ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտների համաշխարհային կիրառության և ազդեցության այլ օրինակների համար այցելեք՝ **www.ineesite.org/MScasestudies**:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՊԵՐ

Որո՞նք են ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտների և «Սֆերա»-ի մարդասիրական արձագանքման նվազագույն ստանդարտների միջև առկա կապերը

«Սֆերա» նախագծի Մարդասիրական կանոնադրությունը և Աղետների արձագանքման նվազագույն ստանդարտները, որոնք մշակվել են 1997թ. մի շարք մարդասիրական ՀԿ–ների, ինչպես նաև Կարմիր խաչի և Կարմիր մահիկի շարժման կողմից, սահմանում են, որ աղետից տուժած

մարդիկ մարդասիրական աջակցություն ակնկալելու իրավունք ունեն: «Սֆերա»-ի ձեռնարկն ընդգրկում է Մարդասիրական կանոնադրությունը, ինչպես նաև ջրային ռեսուրսների կառավարման, սանիտարահիգիենիկ նորմերի պահպանման, սննդամթերքի անվտանգության, պարենի և սննդամթերքի, կացարանի, բնակավայրի, ոչ պարենային ապրանքների ու առողջապահական ոլորտների նվազագույն ստանդարտները:

ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտներն արտացոլում են «Սֆերա» նախագծի առանցքային համոզմունքներն առ այն, որ ձեռնարկվող բոլոր հնարավոր քայլերը պետք է ուղղվեն աղետների կամ հակամարտությունների հետևանքով ի հայտ եկած մարդկային տառապանքը թեթևացնելու համար, ինչպես նաև հավաստում են, որ աղետից տուժած մարդիկ արժանապատիվ կյանքի իրավունք ունեն: 2008թ. հոկտեմբերին «Սֆերա» նախագիծը և ԱԻԿՄՑ–ն ստորագրեցին Փոխգործակցության համաձայնագիր, որով «Սֆերա» նախագիծն ընդունում է ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտների որակը և այն լայնածավալ խորհրդակցական գործընթացը, որը հանգեցրել է վերջիններիս մշակմանը: «Սֆերա» նախագիծն, ըստ էության, հանձնարարում է օգտագործել ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտները, որոնք ուղեկցում և լրացնում են «Սֆերա» նախագծի Մարդասիրական կանոնադրության և մարդասիրական արձագանքման նվազագույն ստանդարտները: Փոխգործակցության համաձայնագիրն ընդգծում է արտակարգ իրավիճակների նախնական փուլում կրթության և «Սֆերա» նախագծի շրջանակներում ներկայացված ոլորտների միջև առկա կապերի ապահովման կարևորությունը: Սա միտված է բարելավել ճգնաժամից տուժած մարդկանց տրամադրվող աջակցության որակը և բարձրացնել մարդասիրական համակարգի հաշվետվողականությունն աղետներին նախապատրաստվելու և արձագանքման ժամանակ: «ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտներ» ձեռնարկի սույն հրատարակության մեջ խաչաձև հղում է կատարվում «Սֆերա» ձեռնարկի համապատասխան ուղեցույցին: Համապատասխանաբար, կրթության վերաբերյալ ուղեցույցն ընդգրկվել է «Սֆերա» ձեռնարկի 2011թ. հրատարակության մեջ: ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտների կիրառումը՝ որպես «Սֆերա» ձեռնարկին կից փաստաթուղթ, կօգնի միջոլորտային կապեր հաստատել կարիքների գնահատման միջոցով, այնուհետև համատեղ պլանավորմամբ և ամբողջական արձագանքմամբ:

«Սֆերա»-ի Մարդասիրական կանոնադրության և Մարդասիրական արձագանքման նվազագույն ստանդարտների վերաբերյալ լրացուցիչ տեղեկության համար այցելեք՝ **www.sphereproject.org**:

ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտների և Միջգերատեսչական մշտական հանձնաժողովի (ՄՄՀ) Կրթական կլաստերի միջև առկա կապերը:

Համաշխարհային մակարդակով ՅՈՒՆԻՍԵՖ–ի և «Սեյվ դը Չիլդրեն»–ի կողմից ղեկավարվող Կրթական կլաստերն իրենից ներկայացնում է արտակարգ իրավիճակների կանխատեսման հնարավորության, պատրաստվածության և արձագանքման հանձնառություն կրթության բնագավառում: Կրթական կլաստերը, անկախ իր գործունեության վայրից, հանդես է գալիս որպես առանցքային համակարգման մեխանիզմ, որն աջակցում է պետություններին արտակարգ իրավիճակներում կրթական կարիքները սահմանելու և համակարգված ձևով դրանց համատեղ արձագանքելու հարցերում: ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտներն այն հիմնարար գործիքներն են, որոնք օգտագործվում են Կրթական կլաստերի կողմից՝ որակյալ կրթության համար հիմք ստեղծելու նպատակով: Համաշխարհային, ինչպես նաև պետություններում հիմնված կրթական կլաստերները այս ստանդարտները կիրառում են հետևյալ նպատակներով.

- բարելավելու կլաստերների համակարգման որակը և նպաստելու միջգերատեսչական երկխոսությանն ու ընդհանուր նպատակների մշակմանը,
- կատարելագործելու պատրաստվածության, ռիսկի նվազեցման և արձագանքման պլանավորումն ու իրականացումը, համատեղ ջանքերով կարիքների նախնական գնահատումների և համապատասխան մշտադիտարկման ու հետագա գնահատման միջոցով,
- վերապատրաստելու անձնակազմը ու գործընկերներին, ինչպես նաև աջակցելու կարողությունների զարգացման գործին,
- մշակելու հայտաձևեր ֆինանսավորման համար,
- նպաստելու միջգերատեսչական երկխոսությանը, ինչպես նաև կլաստերների անդամների, դոնորների և այլ ոլորտների միջև խորհրդակցություններ անցկացնելու գործին:

Հավելյալ տեղեկատվության համար այցելեք՝ **http://oneresponse.info/GlobalClusters/Education**:

ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտների վերաբերյալ առավել հաճախ տրվող հարցերը

Ինչ ենք անում մենք նպաստելու համար, որ ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտներն ամրապնդեն գոյություն ունեցող ազգային կրթական ստանդարտները:

Կրթության բազմաթիվ նախարարություններ մշակել են ազգային կրթական ստանդարտներ: ԱԻԿՄՑ–ն ընդունում և սատարում է ազգային իշխանությունների առաջատար դերը կրթության օրենսդրության և քաղաքականությունների մշակման գործում, ինչպես նաև տվյալ երկրի բոլոր երեխաներին, այդ թվում՝ փախստականներին, ներքին տեղահանության ենթարկված անձանց (ՆՏԱ-ներ) և փոքրամասնությունների ներկայացուցիչներին հիմնարար կրթության ծառայությունների մատուցման ապահովման հարցում: Այն դեպքերում, երբ արդեն գոյություն ունեն ազգային ստանդարտներ, հարկավոր է վերլուծել այդ ստանդարտների և ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտների միջև կիրառման ոլորտի, նպատակների և բովանդակության առկա տարբերությունները: Փորձը ցույց է տվել, որ ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտներն ընդհանուր առմամբ համապատասխանում են ազգային կրթական ստանդարտներին: Դրանք օգտակար գործիք են ազգային ստանդարտները լրացնելու, հավելելու և դրանք իրականացնելու համար: Վերջիններս տրամադրում են արտակարգ իրավիճակներին հատուկ ուղղորդման և իրականացման ռազմավարություններ, որոնց լիարժեքորեն չեն անդրադարձել ազգային քաղաքականություններում և ռազմավարություններում:

ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտները բարձր չափանիշներ են սահմանում. ինչու՞ են դրանք կոչվում «նվազագույն»:

Քանի որ ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտները հիմնված են կրթության իրավունքի վրա, ինչպես որ ամրագրված է բազմաթիվ իրավական փաստաթղթերում և միջազգային համաձայնագրերում, ձեռնարկում տեղ գտած ցուցումները չեն կարող ավելի ցածր իրավունքներ սահմանել: Ստանդարտները կարող են բարձր թվալ, քանզի դրանք նկարագրում են միջազգայնորեն համաձայնեցված մարդու իրավունքները, ինչպես նաև լավագույն փորձը, սակայն դրանք սահմանում են նաև որակյալ կրթության և մարդկային արժանապատվության վերաբերյալ նվազագույն պահանջները:

Հնարավոր է ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտներն օգտագործել այն դեպքերում, երբ սահմանափակ են ֆինանսական և կրթական միջոցները:

Սահմանափակ ռեսուրսների դեպքում ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտները կարող են արդյունավետորեն օգտագործվել երեք եղանակով: Նախ, ստանդարտների բազմաթիվ տեսակետեր սահմանում են մեծ ծախսեր չպահանջող լավագույն փորձի օրինակներ: Օրինակ, համայնքի մասնակցության վերաբերյալ ստանդարտները լրացուցիչ մեծ ծախսեր չեն պահանջում, սակայն դրանց կիրառումը կարող է բարելավել մարդասիրական և կրթադաստիարակչական աշխատանքի որակը: Սա նպաստում է ռեսուրսների և ժամանակի երկարատև խնայողությանը, ինչպես նաև դրական արդյունքների պահպանմանը: Երկրորդ, ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտները կարող են օգտագործվել ճգնաժամային իրավիճակներում և վերականգնման ժամանակ կրթության ոլորտի համար առավել արդյունավետ և լայնածավալ ֆինանսավորում հայթայթելու նպատակով: Երրորդ, ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտների կիրառումը նպաստում է արձագանքման սկզբում կրթության ոլորտի կառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից ճիշտ որոշումներ կայացնելու, ինչպես նաև վատ մշակված ծրագրի կամ համակարգի բարելավման համար անհրաժեշտ անցանկալի ծախսերից խուսափելու գործին:

1 ՀԻՄՆԱՐԱՐ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ

Հիմնարար չափորոշիչների բաժին

Համայնքային մասնակցություն

Ստանդարտ 1 Մասնակցություն

Համայնքի անդամներն ակտիվորեն, թափանցիկ կերպով և առանց խտրականության մասնակցում են կրթության արձագանքման միջոցառումների վերլուծությանը, պլանավորմանը, նախագծմանը, իրականացմանը, մշտադիտարկմանը և գնահատմանը:

Ստանդարտ 2 Ռեսուրսներ

Համայնքային ռեսուրսները վերհանվում, հավաքագրվում և օգտագործվում են սովորողների տարիքին համապատասխան ուսման հնարավորությունների իրագործման նպատակով:

Համակարգում

Ստանդարտ 1 Համակարգում

Առկա են կրթության համակարգման մեխանիզմներ, որոնք շահառուներին աջակցում են որակյալ կրթության հասանելիության և շարունակականության ապահովման հարցում:

Վերլուծություն

Ստանդարտ 1 Նախնական գնահատում

Կրթության համակարգի կողմից Արտակարգ իրավիճակների մասին ժամանակին կատարված գնահատումներն իրականացվում են ամբողջական, թափանցիկ և մասնակցային եղանակով:

Ստանդարտ 2 Արձագանքման ռազմավարություններ

Ներառական կրթության արձագանքման ռազմավարություններն ընդգրկում են համատեքստի և կրթության իրավունքի խոչընդոտների հստակ նկարագրություն, ինչպես նաև այդ խոչընդոտների հաղթահարման ռազմավարություններ:

Ստանդարտ 3 Մշտադիտարկում

Իրականացվում է կրթության արձագանքման միջոցառումների և տուժած բնակչության փոփոխվող կրթական կարիքների պարբերական մշտադիտարկում:

Ստանդարտ 4 Ընթացիկ Գնահատում

Համակարգված և անկողմնակալ գնահատումները բարելավում են կրթության արձագանքման միջոցառումները և բարձրացնում հաշվետվողականությունը:

Այս գլուխը մանրամասն նկարագրում է հետևյալ ոլորտների ստանդարտները.

- Համայնքի մասնակցություն. մասնակցություն և ռեսուրսներ:
- Համակարգում:
- Վերլուծություն. նախնական գնահատում, արձագանքման ռազմավարություններ, մշտադիտարկում, ընթացիկ գնահատում:

Այստեղ նկարագրված ստանդարտները շատ կարևոր են արդյունավետ կրթության արձագանքման համար: Դրանք հիմք են հանդիսանում «Հասանելիություն և կրթական միջավայր», «Ուսուցում և ուսումնառություն», «Ուսուցիչներ և կրթական ոլորտի այլ աշխատակիցներ» և «Կրթության քաղաքականություն» բաժիններում ներկայացված ստանդարտների կիրառման համար:

Արտակարգ իրավիճակներում կրթության խնդիրներին արդյունավետ արձագանքման հիմքում ընկած է համայնքների գործուն մասնակցությունը, այսինքն՝ այն գործընթացներն ու միջոցառումները, որոնք ընդլայնում են որոշումների կայացման գործընթացներին մասնակցելու և կրթական հարցերի վերաբերյալ միջոցներ ձեռնարկելու մարդկանց հնարավորությունները: Համայնքային ներգրավվածությունն ու մասնակցությունը բարձրացնում են հաշվետվողականության մակարդակը, աջակցում տեղական ռեսուրսների հավաքագրմանը և նպաստում կրթական ծառայությունների երկարաժամկետ մատուցմանը: Մասնակցությունը նպաստում է տեղական համատեքստում հատուկ կրթական խնդիրների և դրանց արձագանքման եղանակների վերհանմանը: Այսպիսով, գնահատման, պլանավորման, իրականացման, կառավարման և մշտադիտարկման գործում համայնքային մասնակցությունն օգնում է ապահովել կրթության խնդիրներին արձագանքելուն միտված միջոցառումների նպատակահարմարությունն ու արդյունավետությունը:

Համայնքի մասնակցությունը պետք է ընդգրկի համայնքի անդամների կարողությունների զարգացման հարցերը, հիմնվելով արդեն իսկ իրականացվող կրթական միջոցառումների վրա: Երեխաների և երիտասարդների մասնակցությունը, ովքեր կարող են նպաստել համայնքի դիմակայունության և վերականգնման գործընթացներին, շատ կարևոր է:

Գոյություն ունեն մասնակցության տարբեր աստիճաններ և ձևեր: Խորհրդանշանակ/ոչ լիարժեք մասնակցության շրջանակն ընդգրկում է հետևյալը՝ ծառայություններից օգտվելուց մինչև ուրիշների կողմից կայացված որոշումների ընդունումը: Լիարժեք մասնակցություն նշանակում է կրթական միջոցառումների վերաբերյալ որոշումների կայացման,

պլանավորման և իրականացման համար ժամանակի տրամադրում և անմիջական ներգրավվածություն: Փորձը ցույց է տվել, որ միայն խորհրդանշանակ/ոչ լիարժեք մասնակցությունը չի կարող արդյունավետ լինել որակյալ և երկարաժամկետ կրթության խնդիրներին արձագանքող միջոցառումներ ապահովելու համար: Արտակարգ իրավիճակներում հաճախ դժվար է հասնել լիարժեք և համակողմանի մասնակցության, սակայն հարկավոր է այդ ուղղությամբ աշխատել:

Կրթության ոլորտի կառավարման մարմինները, որոնք պատասխանատու են բոլորի կրթության իրավունքն ապահովելու գործում, պետք է համակարգեն կրթության խնդիրներին արձագանքման գործընթացը: Մարդասիրական գործունեությամբ զբաղվող միջազգային շահառուները կրթության ոլորտի կառավարման մարմիններին, քաղաքացիական հասարակության կազմակերպություններին և տեղական դերակատարներին պետք է աջակցեն կարողությունները զարգացնելու գործում առանց խաթարելու վերջիններիս օրինական դերերը: Երբ կրթության ոլորտի կառավարման մարմինները բավարար կարողություններ չունեն կամ լեգիտիմ չեն, ապա նման դեպքերում համաձայնագրի հիման վրա առաջնորդությունը կարող է փոխանցվել որևէ միջգերատեսչական համակարգող հանձնաժողովի, օրինակ, Կրթական կլաստերին կամ որևէ այլ ոլորտային համակարգող խմբի: Կրթության խնդիրներին արձագանքման գործընթացի համակարգումը պետք է կատարվի ժամանակին, թափանցիկ ձևով, հիմնված լինի արդյունքների վրա և հաշվետու լինի տուժած համայնքին:

Արդյունավետ արձագանքման և կրթական ծրագրերի «մի՛ վնասիր» մոտեցումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է պատշաճ կերպով վերլուծել և հասկանալ տեղական համատեքստն ու արտակարգ իրավիճակների փոփոխվող բնույթը: Կրթության ոլորտի վերլուծությունը պետք է կատարվի մարդասիրական այլ ոլորտների վերլուծության հետ համատեղ: Վերլուծության նպատակն է որոշել արտակարգ իրավիճակի բնույթը, դրա պատճառներն ու բնակչության վրա ունեցած բացասական հետևանքները, ինչպես նաև ազգային իշխանության իրավական և մարդասիրական պարտականություններն իրականացնելու ունակությունը: Վերլուծությունը պետք է հաշվի առնի տնտեսական պայմանները, կրոնական և տեղական հավատալիքները, սոցիալական նորմերը և գենդերային հարաբերությունները, քաղաքական և անվտանգության գործոնները, հաղթահարման մեխանիզմները և ակնկալվող հետագա զարգացումները: Պետք է բացահայտել տուժած մարդկանց և հաստատությունների խոցելիությունը, կարիքները, իրավունքներն ու կարողու-

թյունները, ինչպես նաև բոլոր սովորողներին մատուցվող կրթական ծառայությունների բացերը և այդ կրթական ծառայությունների համար նախատեսված տեղական առկա ռեսուրսները: Կարևորվում են նաև տեղական վտանգների մասին համայնքի գիտելիքները, ինչպես նաև կանխարգելիչ ու արձագանքման միջոցառումներ ձեռնարկելու համար անհրաժեշտ կամ տիրապետած հմտությունների գիտակցումը վերջիններիս կողմից:

Տեղեկատվության հավաքագրումն ու վերլուծությունը պետք է ապահովի թափանցիկ, հանրամատչելի և ըստ բաղադրիչների տարանջատված կրթական տվյալներ, որոնք անհրաժեշտ են արտակարգ իրավիճակների սկզբից մինչև վերականգնում: Տեղեկատվության հավաքագրումն ու վերլուծությունը կարող է պատահաբար հանգեցնել բախումների և անկայունության, ուստի, դրանից խուսափելու համար, հարկ է զգուշավորություն ցուցաբերել: Կրթության խնդիրներին արձագանքման գործընթացի և փոփոխվող կրթական կարիքների կանոնավոր մշտադիտարկումն ու ընթացիկ գնահատումը պետք է լինի համապարփակ և թափանցիկ: Կրթության խնդիրներին արձագանքման միջոցառումների հետագա բարելավելման համար անհրաժեշտ է տարածել մշտադիտարկման և ընթացիկ գնահատման վերաբերյալ զեկույցները, այդ թվում՝ քաղած դասերը:

Համայնքի մասնակցության ստանդարտ 1. Մասնակցություն

Համայնքի անդամներն ակտիվորեն, թափանցիկ և առանց խտրականության մասնակցում են կրթության խնդիրներին արձագանքման ուղղված միջոցառումների վերլուծությանը, պլանավորմանը, նախագծմանը, իրականացմանը և ընթացիկ գնահատմանը:

Առանցքային գործողություններ (կարդալ ուղղորդող ցուցումներին զուգահեռ)

- Անվտանգ, արդյունավետ և անաչառ կրթական ծառայությունների մատուցումն ապահովելու նպատակով համայնքի մի շարք անդամներ ակտիվորեն մասնակցում են կրթական միջոցառումների առաջնահերթությունների սահմանմանն ու պլանավորմանը (տես ուղղորդող ցուցումներ 1-4-ը):
- Համայնքային կրթության հանձնախմբերում ընդգրկվում են ներկայացուցիչներ բոլոր խոցելի խմբերից (տես ուղղորդող ցուցումներ 1-4-ը):
- Երեխաները և երիտասարդներն ակտիվորեն մասնակցում են կրթական միջոցառումների մշակմանը, իրականացմանը, մշտադիտարկմանը և արդյունքների գնահատմանը (տես ուղղորդող ցուցում 5-ը):
- Համայնքի անդամների մի հոծ մաս մասնակցում է կրթական ոլորտի գործունեության նախնական գնահատման, համատեքստի վերլուծության, սոցիալական աուդիտների, բյուջեի համատեղ վերանայման, ինչպես նաև աղետների ռիսկի նվազեցմանն ու հակամարտությունների մեղմացմանն ուղղված միջոցառումներին (տես ուղղորդող ցուցում 6-ը):
- Վերապատրաստման և կարողությունների զարգացման հնարավորությունները հասանելի են համայնքի անդամներին (տես ուղղորդող ցուցում 7-ը):

Ուղղորդող ցուցումներ

1. **Համայնքի համակողմանի մասնակցություն:** Կրթության ոլորտի կառավարման մարմինները և այդ ոլորտի այլ շահառուները պետք է ապահովեն համայնքի մասնակցությունը կրթության խնդիրների

արձագանքման միջոցառումների վերլուծության, պլանավորմանը, նախագծման, իրականացման, մշտադիտարկման և ընթացիկ գնահատման գործում: Տուժած համայնքի ցանկացած անդամ, անկախ իր տարիքից, սեռից, էթնիկ և կրոնական պատկանելիությունից, սեռական կողմնորոշումից, հաշմանդամությունից, ՄԻԱՎ կարգավիճակից կամ այլ գործոններից, պետք է մասնակցություն ունենա:

Կրթության ոլորտի կառավարման մարմինները և նույն ոլորտի այլ շահառուները պետք է համայնքին ներգրավեն հետևյալ հարցերի վերհանման գործում.

- բոլոր սովորողների կրթական կարիքները,
- տեղական մակարդակում ֆինանսական, նյութական և մարդկային առկա ռեսուրսները,
- արական և իգական սեռի երեխաների, երիտասարդների և մեծահասակների միջև առկա և փոփոխվող հարաբերությունները
- իշխանության դինամիկան համայնքի ներսում ՝ ներառյալ գոյություն ունեցող հարաբերությունները լեզվական և ցանկացած այլ խմբերի միջև, որոնք կարող են անտեսվել,
- անվտանգության խնդիրները, մտահոգությունները և սպառնալիքները,
- ուսումնական հաստատությունները, աշխատակիցներին և սովորողներին հնարավոր հարձակումներից, այդ թվում՝ սեռական բռնությունից պաշտպանելու եղանակները,
- տեղական վտանգները, դպրոցների և ուսման համար նախատեսված ապահով ու մատչելի տարածքները և աղետների ռիսկի նվազեցման հարցում տեղական մոտեցումները,
- կրթության խնդիրներին արձագանքման բոլոր միջոցառումներում կենսական հմտությունների և կոնֆլիկտազգայուն, այդ թվում՝ համայնքում առկա առողջապահական հիմնական սպառնալիքների վերաբերյալ ուղերձների ինտեգրումը:

Անհրաժեշտ է մշակել մասնակցային, ներառական և խորհրդակցական այնպիսի մեթոդներ, որոնք կնպաստեն ընտանիքների, համայնքների, դպրոցների կամ այլ ուսումնական հաստատությունների միջև կապերի ամրապնդմանը (ստորև տե՛ս նաև ուղղորդող ցուցումներ 2-3-ը, «Վերլուծության ստանդարտ 1»-ը և ուղղորդող ցուցում 3-ը, էջ 52; «Վերլուծության ստանդարտ 2-ը» և ուղղորդող ցուցում 5-ը, էջ 63; «Վերլուծության ստանդարտ 3»-ը և ուղղորդող ցուցումները 1-3-ը, էջ 71-72, ինչպես նաև «Վերլուծության ստանդարտ 4»-ը

և ուղղորդող ցուցումներ 3-4-ը, էջ 72-73):

2. **Համայնքային կրթության հանձնախումբը** կոչված է վեր հանելու համայնքի բոլոր սովորողների կրթական կարիքներն ու իրավունքները և անդրադառնալու դրանց: Այս հանձնախմբերը այլընտրանքայնորեն կարող են է կոչվել «ուսուցիչ-ծնող միավորումներ» կամ «դպրոցների կառավարման հանձնախմբեր»: Կրթական ծրագրերին սատարելու նպատակով վերջիններս կարող են աջակցել համայնքին վերապատրաստման և կարողությունների զարգացման միջոցառումներ կազմակերպելով, ինչպես նաև կրթության կառավարման մարմինների կամ կրթության ոլորտի այլ շահառուների հետ համագործակցության միջոցով: Եթե համայնքային կրթության հանձնախումբ դեռևս գոյություն չունի, հարկավոր է խրախուսել վերջինիս ձևավորումը (ստորև տե՛ս նաև ուղղորդող ցուցումներ 3-ը և 7-ը):

   Համայնքային կրթության հանձնախումբը պետք է ներկայացնի համայնքում առկա բոլոր խմբերը: Հանձնախմբում կարող են ներառվել.

   - դպրոցի վարչական աշխատողներ, ուսուցիչներ և այլ աշխատակիցներ,
   - ծնողներ կամ խնամակալներ,
   - երիտասարդներ,
   - քաղաքացիական հասարակության կազմակերպությունների աշխատակիցներ,
   - տեղական ՀԿ-ների և կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչներ,
   - ավանդական առաջնորդներ,
   - բուժաշխատողներ:

   Կարևոր է խոցելի խմբերի ներկայացուցիչների ներգրավումը: Համայնքային կրթության հանձնախմբի անդամները պետք է ընտրվեն տեղական մասնակցային ընթացակարգերի համաձայն, որոնք համապատասխանում են տվյալ համատեքստին և թույլ են տալիս, անկախ սեռական պատկանելությունից, ինչպես մեծահասակների, այնպես էլ երեխաների հավասար մասնակցությունը:

   Բարդ արտակարգ իրավիճակներում, երբ կարող են շահարկվել սոցիալական այնպիսի տարբերություններ, ինչպիսիք ենէթնիկ, տոհմացեղային, կրոնական և ռասայական պատկանելությունները, Համայնքային կրթության հանձնախումբը պարտավոր է աշխատել բոլոր կողմերի հետ: Թեև նպատակը բոլոր կողմերի ներգրավումն

է, սակայն առաջնահերթությունը տրվում է անհատների և խմբերի ապահովությանը: Հանձնախմբերը պետք է ապահովեն անկողմնակալ, պատշաճ և ապահով կրթություն համայնքի յուրաքանչյուր անդամի համար: Նրանք պետք է ունենան սեփական փորձով ձեռք բերված գիտելիքներ փոփոխվող սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակի մասին, ինչպես նաև հաղորդակցվեն բոլոր մակարդակներում որոշում կայացնողների հետ (տե՛ս նաև «Վերլուծության ստանդարտ 1»-ը և ուղղորդող ցուցում 3-ը, էջ 54-56):

3. Համայնքային կրթության հանձնախմբի անդամների **դերերն ու պարտականությունները** պետք է սահմանվեն հստակորեն. վերջիններս պետք է.

- պարբերաբար հանդիպումներ անցկացնեն մտահոգության առիթ հանդիսացող խնդիրներին անդրադառնալու համար,
- արձանագրությունների կազմեն հանդիպումների և որոշումների մասին,
- կազմակերպեն համայնքում ֆինանսական և բնամթերային նվիրաբերությունների հավաքագրումը,
- կրթական ծրագրերում սովորողների կարիքների և իրավունքների նկատմամբ հարգանքն ապահովելու նպատակով, հիմնվելով տարիքային և մշակութային առանձնահատկությունների վրա, սահմանեն համապատասխան մոտեցումներ (օրինակ՝ դպրոցական ճկուն դասացուցակներ և տարիքին համապատասխան ուսումնական պլաններ, որոնք կարտացոլեն համայնքում տիրող իրավիճակը),
- հաղորդակցվեն համայքի, ինչպես նաև տեղական և ազգային մակարդակների կրթության ոլորտի կառավարման մարմինների հետ համայնքի անդամների և համայնքից դուրս որոշումներ կայացնողների միջև արդյունավետ հարաբերություններ ստեղծելու նպատակով,
- ապահովեն կրթության հասանելիության և որակի համար պատասխանատու անձանց հաշվետվողականություն,
- ուսուցման և ուսումնառության պատշաճ որակի ապահովմանն աջակցելու նպատակով մշտադիտարկեն կրթության մատուցումը,
- հավաքագրեն և մշտադիտարկեն տարանջատված տեղեկատվություն ուսման հնարավորություններից օգտվողների և չօգտվողների մասին, - ապահովեն անձնակազմի և ուսանողների

անվտանգությունը հարձակումներից, ուսումնական հաստատություններ տանող ճանապարհներին

- ապահովեն, որ կրթական ծառայություններում ընդգրկվի աղետների ռիսկի նվազեցման բաղադրիչը,
- ապահովեն հոգեբանասոցիալական համապատասխան աջակցություն (տես նաև վերլուծության ստանդարտ 1-ը և ուղղորդող ցուցում 3-ը, էջ 54-56):

4. **Կրթության գործողությունների ծրագիրը տեղական մակարդակում:** Կրթության ոլորտի կառավարման տեղական մարմինները, համայնքը և համայնքային կրթության հանձնախումբը պետք է առաջնահերթ ուշադրություն դարձնեն և պլանավորեն կրթական միջոցառումները և մասնակցային պլանավորման մեթոդով, մշակեն կրթական համայնքահեն գործողությունների ծրագիր: Կրթության համայնքահեն գործողությունների ծրագիրը պետք է հիմնված լինի ազգային կրթական ծրագրի վրա (եթե վերջինս առկա է), ինչպես նաև բարելավի ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական ծրագրերի որակը: Ծրագրում պետք է արտացոլվեն արտակարգ իրավիճակից տուժած համայնքի, հատկապես՝ խոցելի խմբերի, կարիքները, իրավունքները, մտահոգությունները և արժեքները:

   Կրթական գործողությունների ծրագիրը միտված է ապահովելու կրթության շարունակականությունը: Այն կարող է հետապնդել մի քանի նպատակ, այդ թվում.

   - ուսուցման և ուսումնառության ապագա միջավայրի մասին ընդհանուր տեսլականի մշակումը, որի նկարագրությունը կհիմնվի միջոցառումների, ցուցիչների, թիրախների և ժամանակացույցերի վրա,
   - ուսումնական ծրագրերի հարմարեցումը որոշակի համատեքստի, ըստ անհրաժեշտության հաշվի առնելով աղետների ռիսկի նվազեցումը և հակամարտությունների հանդեպ զգայունությունը,
   - համաձայնության ձեռք բերում ուսուցիչների վարձատրության, աջակցության, ինչպես նաև աշխատակիցների հավաքագրման, վերահսկման և վերապատրաստման գործընթացում,
   - մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցման առաջնահերթության ձևավորում՝ խտրականությունները կրճատելու, ինչպես նաև մատչելի, հասանելի, հարմարեցվող և ընդունելի կրթության անհրաժեշտության ընդհանուր ընկալումն ապահովելու համար,

- ապահով և բարենպաստ ուսումնական միջավայր ստեղծելու վերաբերյալ առաջնահերթության ձևավորում և այդ նպատակի շուրջ ընդհանուր պարտականությունների սահմանում և համաձայնության ձեռքբերում,
- կրթության իրավունքի պաշտպանության համար օրենքով պատասխանատու կրթության ոլորտի կառավարման մարմինների և այդ ոլորտի այլ շահառուների կոնկրետ առաջադրանքների և պարտականությունների նկարագրում: Այստեղ կարող են ներառվել ռեսուրսների հավաքագրումը, ենթակառուցվածքների սպասարկումը և զարգացումը, ինչպես նաև այլ գերատեսչությունների և ոլորտների (սննդի անվտանգություն, առողջապահություն, հիգիենա, սննդամթերք, ջրամատակարարում և կոյուղի) հետ արձագանքման միջոցառումների համաձայնեցում:

Գործողությունների ծրագրերում պետք է նախատեսվեն համայնքի կողմից մշտադիտարկումն ու նախնական գնահատումը, ինչը կապահովի համայնքի լայն մասնակցությունը (տես նաև համակարգման ստանդարտ 1-ը, էջ 47-51, վերլուծության ստանդարտ 1-ը և ուղղորդող ցուցում 3-ը, էջ 54-56, ուսուցիչների և կրթության ոլորտի այլ աշխատակիցների ստանդարտ 2-ը, էջ 139-142, կրթության քաղաքականության ստանդարտ 1-ը և ուղղորդող ցուցում 6-ը, էջ 155, կրթության քաղաքականության ստանդարտ 2-ը և ուղղորդող ցուցում 3-ը, էջ 158, ինչպես նաև «Ջրային ռեսուրսների,սանիտարահիգիենիկ կանոնների և նորմատիվների պահպանում», «Սննդամթերքի անվտանգություն և սնունդ» և «Առողջապահական գործողություններ» գլուխներում տեղ գտած «Սֆերա»-ի ստանդարտները):

5. **Երեխաների և երիտասարդների մասնակցությունը կրթական միջոցառումներում:** Երեխաներն ու երիտասարդներն իրավունք ունեն մասնակից լինելու իրենց կյանքին վերաբերող, ինչպես նաև կրթական համակարգի զարգացման և կառավարման վերաբերյալ հարցերում: Նրանք պետք է հրավիրվեն ապահով, անվտանգ և բարենպաստ միջավայրերում տեղի ունեցող քննարկումներին, ինչը կամրապնդի հարգանքը կառուցողական երկխոսության նկատմամբ: Կարող են կիրառվել երեխաների և երիտասարդների ինքնարտահայտմանը նպաստող մշակութային միջոցներ, ինչպիսիք են՝ գեղարվեստը, երաժշտությունը և դրամատուրգիան (տես նաև կրթության քաղաքականության ստանդարտ 1-ը և ուղղորդող ցուցումներ 1-ն ու 6-ը, էջ 151-152 և 155):

Երեխաները և երիտասարդները պետք է սովորեն, թե ինչպես կա-

րող են պաշտպանել և ապահովել իրենց և իրենց ընտանիքի անդամների ու հասակակիցների հուզական և սոցիալական բարեկեցությունը: Երեխաներն ու երիտասարդները հաճախ կարող են կարևոր դեր խաղալ արտակարգ իրավիճակից հետո դպրոց չհաճախողներին բացահայտելու հարցում և օգնեն նրանց դպրոց հաճախել: Նրանք կարող են օգնել նաև իրենց վիրավոր կամ հաշմանդամություն ունեցող հասակակիցներին օգտվելու կրթական հնարավորություններից: Կարողությունների զարգացումը պետք է ընդգծի նրանց ունակությունները դրական փոփոխություններ ձեռնարկելու, այդ թվում՝ հակամարտությունների և աղետների խորքային պատճառները պարզելու և խաղաղություն հաստատելու համար: Ուսուցումը կարող է նպաստել, որպեսզի երեխաներն ու երիտասարդները կարողանան զեկուցել ուսումնական միջավայրում չարաշահումների և դրանք կանխելու մասին, ինչպես նաև մասնակից լինել իրենց հասակակիցների համար միջնորդելու կամ բախումները հարթելու հարցում (ստորև տե՛ս նաև ուղղորդող ցուցում 7-ը, «Հասանելիության և ուսումնական միջավայրի վերաբերյալ ստանդարտ 2»-ը, էջ 87-96, «Ուսուցիչների և կրթական ոլորտի այլ աշխատակիցների վերաբերյալ ստանդարտ 3»-ը և ուղղորդող ցուցումներ 5-6-ը, էջ 145):

Մթերքի բաժանման, ապաստարանների կառուցման և նման առաջադրանքները կարող են հնարավորություն ընձեռել, որպեսզի երիտասարդները մասնակցեն իրենց համայնքների համար կարևոր միջոցառումների պլանավորման և իրականացման գործում: Նման մասնակցությունը դրական այլընտրանք կարող է դառնալ հանցագործ կամ զինված խմբավորումների մեջ ներքաշվելու փոխարեն, այն շահեկան է սոցիալ-հոգեբանական առումով և կարող է նպաստել լայն հասարակության կողմից երիտասարդների ներդրումների առավել բարձր գնահատմանը: Երիտասարդների մասնակցությունը կրթական ծրագրերի պլանավորման, մշտադիտարկման և գնահատման, մասնավորապես՝ հմտությունների և կենսապահովման միջոցների վերաբերյալ դասընթացներին, թույլ է տալիս երաշխավորել, որ այս ծրագրերն ապահովում են իրենց ընթացիկ և ապագա կարիքների լուծումը: Հատուկ ջանքեր է պետք գործադրել խրախուսելու աղջիկների և երիտասարդ կանանց մասնակցությունը, ինչպես նաև երաշխավորելու, որ նրանց ձայնը լսելի է, քանզի արական սեռի հասակակից ներկայացուցիչների համեմատությամբ կրթության հասանելիությունը և կրթական կարիքները նրանց համար կարող են տարբեր լինել (տե՛ս նաև «Փոքր ձեռնարկությունների ուսուցման և խթանման ցանց»-ի Տնտեսության հետճգնաժամային վերականգն-

ման *նվազագույն ստանդարտները*, աշխատատեղերի ստեղծման և ձեռնարկությունների զարգացման ստանդարտները):

6. **Սոցիալական աուդիտներ:** Սոցիալական աուդիտները կրթական ծրագրի ընթացիկ գնահատումներն են համայնքի կողմից: Դրանք կիրառվում են հետևյալ.
   - ծրագրի իրականացման համար առկա մարդկային, ֆինանսական և նյութական ռեսուրսների հաշվարկման,
   - բացերի վերհանման,
   - ծրագրի արդյունավետության մշտադիտարկման նպատակներով:

   Միշտ չէ, որ հնարավոր է լինում սոցիալական աուդիտներ իրականացնել արտակարգ իրավիճակների սկզբնական կամ ընթացիկ փուլերում: Երկարատև ճգնաժամերի կամ վերականգման վաղ փուլի համատեքստերում սոցիալական աուդիտները համայնքներին հնարավորություն են տալիս ընդլայնել իրենց ունակությունները կրթական ծրագրերն առավել արդյունավետ մշտադիտարկելու և իրավունքների խախտումները փաստաթղթավորելու գործում: Սոցիալական աուդիտներին մասնակցությունը հատկապես վերաբերում է այն երիտասարդներին, ովքեր չեն առնչվում ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության հետ: Համայնքի բոլոր անդամների և պատկան մարմինների շրջանում սոցիալական աուդիտների արդյունքների տարածումը կարևոր է (տե՛ս նաև «Վերլուծության ստանդարտ 4»-ը, էջ 71-73):

7. **Կարողությունների զարգացումն** ընդլայնում է գիտելիքների, ունակությունների, հմտությունների և վարվելակերպի շրջանակները, ինչն էլ նպաստում է մարդկանց և կազմակերպությունների կողմից իրենց նպատակներին հասնելու գործին: Անհրաժեշտ է գործադրել բոլոր ջանքերը տուժած բնակչության շրջանում կրթության ոլորտի փորձագետներին՝ ուսուցիչներին, կրթական ոլորտի այլ աշխատողներին և ուսումնական պլաններ մշակողներին հայտնաբերելու համար՝ նրանց ծրագրերի պլանավորման և իրականացման գործընթացում ներգրավելու նպատակով: Եթե բացահայտված տեղական փորձագետների թիվը բավարար չէ, կամ եթե մարդիկ ի վիճակի չեն կամ չեն կամենում աջակցել կրթական համակարգի ստեղծման (վերստեղծման) գործին, ապա համայնքի անդամների կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումները կարող են տեղին լինել: Գնահատումների ընթացքում պետք է ուսումնասիրվեն համայնքի տղաների և աղջիկների, երիտասարդների և մեծահասակների, ինչ-

պես նաև խոցելի խմբերի տարբեր կարողությունները, կարիքները և վերջիններիս բավարարման միջոցները: Վերապատրաստման ծրագրերը պետք է գնահատեն համայնքի կարողությունները վերապատրաստման և այլ կարողությունների զարգացման կարիքներն ու դրանց անդրադառնալու եղանակները բացահայտելու համար: Նմանատիպ միջոցառումները պետք է նպաստեն համայնքի մասնակցությանը ուսումնական ծրագրերին, դրանց պահպանման, ինչպես նաև այլ հատվածների հետ համակարգման գործընթացին:

Համայնքի մասնակցության ստանդարտ 2. Միջոցներ

Համայնքային ռեսուրսները վերհանվում, հավաքագրվում և օգտագործվում են տարիքին համապատասխան ուսման հնարավորությունների իրագործման նպատակով:

Առանցքային գործողություններ (կարդալ ուղղորդող ցուցումներին զուգահեռ)

- Որակյալ կրթության հասանելիությունը ընդլայնելու նպատակով համայնքների, կրթական ոլորտի աշխատակիցների և սովորողների կողմից վերհանվում և հավաքագրվում են տեղական ռեսուրսները (տե՛ս ուղղորդող ցուցումներ 1-3-ը):
- Կրթության ոլորտի կառավարման մարմինները, տեղական համայնքը և մարդասիրական գործունեությամբ զբաղվող շահառուները բացահայտում են առկա հմտություններն ու գիտելիքները և այս կարողություններն առավելագույնս օգտագործելու համար նախագծում են կրթական ծրագրեր (տե՛ս ուղղորդող ցուցումներ 4-5-ը):
- Ազգային իշխանությունները, տեղական համայնքները և մարդասիրական գործունեությամբ զբաղվող շահառուները համայնքային միջոցներն օգտագործում են կրթությունը զարգացնելու, հարմարեցնելու և մատուցելու, ինչպես նաև աղետների ռիսկերի նվազեցման և հակամարտությունների մեղմացման նպատակով (տե՛ս ուղղորդող ցուցում 5-ը):

Ուղղորդող ցուցումներ

1. **Համայնքային ռեսուրսներ ասելով, հասկանում ենք** համայնքում առկա մարդկային, մտավոր, լեզվական, դրամական և նյութական ռեսուրսները: Կրթական խնդիրներին արձագանքման միջոցառումների նախագծման և պլանավորման ժամանակ պետք է բացահայտել և վերլուծել տեղական առկա ռեսուրսները, որոշելու համար, թե վերջիններս ինչպես կարող են նպաստել կրթության զարգացմանը:

   Համայնքային ռեսուրսները չեն փոխարինում ազգային իշխանությունների իրավական պատասխանատվությունները: Համայնքային ռեսուրսները կարող են բարձրացնել դասավանդման և ուսումնառության որակը, դրանց ապահովությունն ու հասանելիությունը: Ֆիզիկական ներդրումները ենթադրում են աշխատուժ և նյութական

օժանդակություն վաղ մանկական զարգացման կենտրոնների, դպրոցների և այլ ուսումնական հաստատությունների կառուցման, պահպանման և վերանորոգման համար: Հուզական, ֆիզիկական, սոցիալական բարեկեցությանը և պաշտպանությանը նպաստող ներդրումներն էլ ենթադրում են հոգեբանասոցիալական աջակցություն սովորողների, ուսուցիչների, ֆասիլիտատորների և խնամատարների համար: Աշխատավարձերի համար հավաքագրված ռեսուրսների և վարձատրության այլ ձևերի միջոցով կարելի է բարձրացնել ուսուցիչների մոտիվացիան: Թափանցիկության և հաշվետվողականության նպատակով անհրաժեշտ է հաշվառել հավաքագրված ռեսուրսները: Մշտադիտարկումների ընթացքում պետք է հավաստիանալ, որ երեխաները չեն շահագործվում իրենց կարողություններից վեր ֆիզիկական աշխատանք կատարելով (տե՛ս նաև «Հասանելիության և ուսումնական միջավայրի ստանդարտ 2»-ը, էջ 87-96, «Հասանելիության և ուսումնական միջավայրի ստանդարտ 3»-ը, ուղղորդող ցուցումներ 1-4-ը, էջ 98-101, և «Կրթության քաղաքականության ստանդարտ 2»-ը, ուղղորդող ցուցում 4-ը, էջ 158):

2. **Հասանելիության և անվտանգության խթանում:** Կրթության ոլորտի կառավարման մարմինները, տեղական համայնքներն ու մարդասիրական գործունեությամբ զբաղվող շահառուները պետք է խրախուսեն համայնքի անդամներին բացահայտել խոցելի երեխաներին ու երիտասարդներին, օգնել նրանց կանոնավոր կերպով դպրոց հաճախել և օգտվել ուսումնական այլ միջոցառումներից: Օրինակ,- կանայք և երիտասարդական խմբերն ամենաաղքատ ընտանիքների երեխաներին համապատասխան հագուստ են տրամադրում, իսկ երեխաների կողմից ղեկավարվող ընտանիքներին՝ սնունդ: Համայնքի անդամները պետք է համագործակցեն կրթության ոլորտի կառավարման մարմինների հետ, հոգալով, որ դպրոցները, վաղ մանկական զարգացման կենտրոնները և ուսումնական այլ հաստատությունները ապահով և անվտանգ են երեխաների և երիտասարդների համար: Նրանք կարող են կազմակերպել ապահով տեղ հասնելու և տեղափոխման խնդիրները, ինչպես նաև աջակցել հեռավոր վայրեր օգնություն հասցնելու գործում: Հաշմանդամություն ունեցող աշակերտների համար կրթությունը հասանելի դարձնելու նպատակով պետք է վերացնել ֆիզիկական խոչընդոտները: Կանայք կարող են ստանձնել դասարանի օգնականների դերը կամ՝ աղջիկներին և հաշմանդամություն ունեցող աշակերտներին պաշտպանել ոտնձգություններից՝ դրանով իսկ խրախուսելով նրանց դպրոց հաճախելը: Եթե պաշտպանության կամ մշակութային խնդիրների բերումով երի-

տասարդները չեն կարող դասերի հաճախել ավելի փոքր երեխաների հետ, ապա համայնքը կարող է մշակել ոչ ֆորմալ կրթության ծրագրեր (օրինակ, հավասարակիցների փոխուսուցման, տեխնիկական և մասնագիտական կրթության և վերապատրաստման, ինչպես նաև փոքր բիզնեսի զարգացման վերաբերյալ դասընթացներ) և տեղեկատվական քարոզարշավներ կազմակերպել դրանց մասին: Համայնքային ռեսուրսները պետք է օգտագործվեն աղետների ռիսկերի նվազեցմանն ուղղված ուսուցման և աղետների արձագանքմանը համայնքի պատրաստվածության մասին տեղեկատվությունը մշակելու, հարմարեցնելու և տարածելու համար (ստորև տե՛ս նաև ուղղորդող ցուցում 5-ը; «Հասանելիություն և ուսումնական միջավայր. ստանդարտներ 2-3»-ը, էջ 87-104 և «Փոքր ձեռնարկությունների ուսուցման և խթանման ցանց»-ի *Ընտեսության հետճգնաժամային վերականգնման նվազագույն ստանդարտները* և Ձեռնարկությունների զարգացման ստանդարտները):

3. **Երկարաժամկետ զարգացում:** Երկարաժամկետ զարգացման համար կրթական ոլորտի աշխատակիցները և համայնքները պետք է մասնակցեն իրենց դերերին և պարտականություններին նվիրված դասընթացների: Վերջիններս կարող են վերաբերել ռեսուրսների հավաքագրմանն ու կառավարմանը, ուսումնական հաստատությունների պահպանմանը, հաշմանդամության մասին իրազեկմանը, ինչպես նաև երեխաների ու երիտասարդների մասնակցության ապահովմանն ուղղված հատուկ միջոցառումներին:
4. **Համայնքային ներդրումների ճանաչում:** Համայնքների կատարած ներդրումների մասին տեղեկատվությունը պետք է ներառված լինի ինչպես պլանավորման, ծրագրման, մշակման ընթացքում, այնպես էլ հաշվետվություններում: Կրթության համակարգի (վերա)կառուցմանն ուղղված համայնքային ներդրումները կարող են կրել ֆիզիկական բնույթ (օրինակ, շինանյութ): Դրանք կարող են լինել որակական (օրինակ՝ տեղական հմտություններ), այսինքն՝ չեն կարող չափվել քանակապես: Համայնքի կատարած մեծածավալ ներդրումները վկայում են վերջինիս մասնակցության մասին և երաշխավորում են երկարաժամկետ աջակցության ապահովումը: Սակայն, արտաքին շարունակական աջակցությունը պետք է տրամադրվի անկախի համայնքի նման ներդրումներից: Կրթության համար իրավական պատասխանատվություն են կրում ազգային իշխանությունները:

Պետք է խրախուսել և արժևորել երիտասարդների մասնակցությունն ու ներդրումը փոխադարձ ուսուցման, համայնքային ռեսուրսների

հավաքագրման և համայնքի զարգացմանն ուղղված նախաձեռնություններում: Երիտասարդների մասնակցությունը հատկապես կարևոր է նախագծման և կարիքների գնահատման փուլերում:

5. **Տեղական կարողություններ**: Աղետների ռիսկերի նվազեցման և հակամարտությունների մեղմացման համար կրթության զարգացումը, հարմարեցումը և կրթական ծառայությունների մատուցումը պետք է հիմնված լինեն հաղթահարմանն ուղղված տեղական դրական ռազմավարությունների և կարողությունների վրա և զարգացնեն դրանք:

   Համայնքի տարբեր խմբերի անհավասար մասնակցությունը և ռեսուրսների անհավասար հասանելիությունը կարող են ազդել կրթական միջոցառումների վրա և մեծացնել մեկուսացումը կամ պառակտումը: Կրթական պլաններում կամ ծրագրերում անհատական կամ խմբային ներդրումներ կատարողներին չպետք է արտոնություններ տալ ի վնաս նրանց, ովքեր չեն կարող որևէ կերպ աջակցել: Նրանք, ովքեր նախընտրում են չաջակցել, չպետք է խտրականության ենթարկվեն (տե՛ս նաև «Վերլուծության ստանդարտ» 1-ը, ուղղորդող ցուցում 3-ը, էջ 54-56 և «Կրթության քաղաքականության ստանդարտ» 1-ը, ուղղորդող ցուցում 6-ը, էջ 155):

Համակարգման ստանդարտ 1. Համակարգում

Կան կրթության համակարգման մեխանիզմներ, որոնք աջակցում են որակյալ կրթության հասանելիության և շարունակականության ապահովման ուղղությամբ աշխատող շահառուներին:

Առանցքային գործողություններ (կարդալ ուղղորդող ցուցումներին զուգահեռ)

- Կրթության իրավունքի իրացման համար պատասխանատու կրթության ոլորտի կառավարման մարմիններն առաջատար դեր են ստանձնում կրթության խնդիրներին արձագանքելու, ինչպես նաև կրթության ոլորտի այլ շահառուների հետ համակարգման մեխանիզմները գործարկելու և մասնակցության գործում (տե՛ս ուղղորդող ցուցում 1-ը):
- Միջգերատեսչական համակարգող հանձնաժողովը համակարգում է նախնական գնահատան, պլանավորման, տեղեկատվության կառավարման, ռեսուրսների հավաքագրման, կարողությունների զարգացման ու տեղեկատվական քարոզարշավների կազմակերպման գործընթացները (տե՛ս ուղղորդող ցուցում 1-ը):
- Համակարգման միջոցառումներում հաշվի են առնվում կրթության մի շարք տեսակներ ու մակարդակներ (տե՛ս ուղղորդող ցուցում 1-ը):
- Կրթական միջոցառումներին աջակցելու նպատակով (տե՛ս ուղղորդող ցուցում 2-ը) կրթության ոլորտի կառավարման մարմինները, դոնորները, ՄԱԿ–ի գործակալությունները, ՀԿ-ները, համայնքներն ու այլ շահառուներ կիրառում են ժամանակին կատարված, թափանցիկ, անաչառ և համակարգված ֆինանսավորման մեխանիզմներ:
- Համակարգման հանձնաժողովում և համակարգման խմբերում գործում են արձագանքի պլանավորման և համակարգման վերաբերյալ տեղեկատվության տարածման թափանցիկ մեխանիզմներ (տե՛ս ուղղորդող ցուցումներ 3-4-ը):
- Կրթության խնդիրներին արձագանքման կարողություններն ու բացերը վերհանելու նպատակով կատարվում են նախնական համատեղ գնահատումներ (տե՛ս ուղղորդող ցուցում 4-ը):
- Արդյունքների հասնելու համար բոլոր շահառուները հավատարիմ են մնում հավասարության, թափանցիկության, պատասխանատվության և հաշվետվողականության սկզբունքներին (տե՛ս ուղղորդող ցուցումներ 5-6-ը):

Ուղղորդող ցուցումներ

1. Կրթության խնդիրներին արձագանքումը համակարգող միջգերատեսչական հանձնաժողովները պետք է մեծապես ներկայացուցչական լինեն: Կրթության ոլորտի կառավարման ազգային մարմինը պետք է ապահովի առաջնորդությունը, սակայն տեղական մարմիններն ու խմբերը ևս պետք է պատշաճ կերպով ներկայացված լինեն: Այն դեպքերում, երբ կրթության կառավարման մարմինների կարողությունները կամ լեգիտիմությունը չեն բավարարում, ապա պայմանագրային հիմունքներով առաջնորդությունը կարող է փոխանցվել տարբեր գերատեսչությունների: Այս պարտականությունները պետք է ստանձնի կրթության ոլորտի համակարգման հարցերով գործող հանձնախումբը, իսկ եթե ՄՄՀ-ում ձևավորված է կլաստերային համակարգ, ապա պետք է հիմնել Կրթական կլաստեր: Սակայն, կրթության համապատասխան ոլորտի կառավարման մարմնի մեկ ներկայացուցիչ միշտ պետք է ներգրավված լինի որոշումների կայացման գործընթացում: Կախված ճգնաժամի բնույթից, կարող են անհրաժեշտ լինել ազգային և տեղական մակարդակների համակարգման խմբեր: Անդամների դերերն ու պարտականությունները պետք է սահմանված լինեն հանձնախմբի տեխնիկական առաջադրանքներում (տե՛ս նաև «Կրթության քաղաքականության ստանդարտ 2»-ը, ուղղորդող ցուցումներ 3-4-ը, էջ 158):

   Համակարգման միջոցառումներում պետք է նկատի առնվեն կրթության բոլոր տեսակներն ու մակարդակները, այդ թվում՝ վաղ մանկական զարգացումը, տարրական, հիմնական, միջնակարգ, ոչ ֆորմալ, տեխնիկական, մասնագիտական, բարձրագույն, ինչպես նաև մեծահասակների կրթությունը:

2. **Ռեսուրսների հավաքագրում**: Արտակարգ իրավիճակներից մինչև վերականգնման փուլ որակյալ կրթական ծրագրերը հաջողությամբ և ժամանակին իրականացնելու համար զգալի ֆինանսական միջոցներ են անհրաժեշտ: Պետք է բոլոր ջանքերն ուղղել ապահովելու համար ֆինանսավորման ներառական, թափանցիկ և համակարգված մոտեցումները, այդ թվում՝ ՄԱԿ–ի Հրատապ կոչերի և Դիմումների համախմբված գործընթացների միջոցով: Ծայրահեղ իրավիճակներում ՄԱԿ–ի Արտակարգ իրավիճակներին արձագանքման կենտրոնական հիմնադրամը և արտակարգ իրավիճակների արձագանքման այլ հիմնադրամներ կարող են ֆինանսական միջոցներ հատկացնել կրթության համար: Անհրաժեշտ է ֆինանսական միջոցները հասանելի դարձնել տեղական գործընկերների համար:

Արտակարգ իրավիճակներում ֆինանսավորման մեխանիզմներում պետք է հաշվի առնվեն ազգային և տարածաշրջանային աշխատաշուկայի պայմաններն ու ավանդույթները: Անհրաժեշտ է նաև խուսափել այնպիսի նախադեպեր ստեղծելուց, որոնք անհնար կլինի պահպանել: Հատկապես հակամարտությունների դեպքում երկպառակտումների սրումից խուսափելու համար, ֆինանսական միջոցների հատկացումը պետք է հիմնված լինի քաղաքական վերլուծության վրա: Շատ կարևոր է համակարգված քաղաքականություն վարել ուսուցիչների և կրթական ոլորտի այլ աշխատակիցների վարձատրության, կրթական այլ վճարների և վարձավճարների սահմանման հարցում: Արտակարգ իրավիճակներում միջոցառումների շարունակական իրականացմանն աջակցելու համար ֆինանսավորման մեխանիզմները պետք է համապատասխանեցնել երկարաժամկետ մեխանզմներին, որպիսիք են,օրինակ, բազմաթիվ դոնորներ ունեցող հավատարմագրային հիմնադրամները կամ զարգացման ֆինանսավորման մեխանիզմները, օրինակ, համատեղ կամ ազգային ֆինանսավորումը: Պետք է ուսումնասիրել նաև մասնավոր հատվածի կողմից ֆինանսավորման հնարավորությունը, մասնավորապես՝ տեխնիկական և մասնագիտական կրթության և վերապատրաստման նպատակներով (տե՛ս նաև Հասանելիության և ուսումնական միջավայրի ստանդարտ 2-ը, ուղղորդող ցուցում 8-ը, էջ 93, «Ուսուցիչների և կրթական ոլորտի այլ աշխատակիցների ստանդարտ 2»-ը, ուղղորդող ցուցում 2-ը, էջ 140, «Կրթական քաղաքականության ստանդարտ 2»-ը, ուղղորդող ցուցոմ 4-ը, էջ 158, «*Ուսուցիչների վարձատրության վերաբերյալ ԱԻԿՄՑ ուղղորդող ցուցումներ*» և «*Կրթության արտաքին ֆինանսավորման վերաբերյալ ԱԻԿՄՑ տեղեկատու» ուղեցույցը*, որոնք հասանելի են ԱԻԿՄՑ գործիքակազմում՝ **www.ineesite.org/toolkit**, և «Փոքր ձեռնարկությունների ուսուցման և խթանման ցանց»-ի *Տնտեսության հետճգնաժամային վերականգնման նվազագույն ստանդարտներ»-ը*, «Ֆինանսական ծառայությունների ստանդարտ 5»-ը. Համակարգում և թափանցիկություն):

3. **Տեղեկատվության ու գիտելիքների կառավարումն ընդգրկում է**.
   - կարիքների, կարողությունների և ծավալի գնահատում,
   - տեղեկատվության հավաքագրում, պահպանում, վերլուծություն, տարածում, մշտադիտարկում և գնահատում,
   - քաղած դասեր, որոնք կազդեն հետագա գործելակերպերի վրա:

   Տեղեկատվության և գիտելիքների արդյունավետ կառավարման համակարգերը ոչ թե փոխարինում կամ կրկնում, այլ հիմնվում են ազ-

գային համակարգերի վրա և ընդլայնում դրանք: Կարևոր է ներգրավել ազգային և տեղական այն գործընկերներին, ովքեր աշխատում են երեխաների պաշտպանության, հոգեբանասոցիալական աջակցություն ցուցաբերելու, ապաստաններով ապահովման, ջրամատակարարման և կեղտաջրերի հեռացման, առողջապահական խնդիրների լուծման և սանիտարական համապատասխան միջավայր ապահովելու ոլորտներում: Տեղեկատվության և գիտելիքների կառավարման համակարգերը պետք է նախագծվեն ազգային և տեղական մարմինների կողմից, ովքեր կարող են նաև երկարաժամկետ մասնակցել դրանց (տե՛ս նաև «Վերլուծության ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցում 6-ը, էջ 58, «Վերլուծության ստանդարտ 2»-ը, ուղղորդող ցուցում 6-ը, էջ 64 և «Վերլուծության ստանդարտ 3»-ը, ուղղորդող ցուցում 3-ը, էջ 68-69, «Կրթության քաղաքականության ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցում 5-ը, էջ 155, և «Փոքր ձեռնարկությունների ուսուցման և խթանման ցանցի Տնտեսության հետճգնաժամային վերականգնման նվազագույն ստանդարտներ»-ը, «Ընդհանուր ստանդարտ 6»-ը. Համակարգել ջանքերը հանուն ավելի մեծ ազդեցության):

4. **Համատեղ նախնական գնահատումներ:** Կրթության ոլորտի խնդիրներին արձագանքման բնագավառի կարողություններն ու բացերը վերհանելու համար պետք է հարմարեցնել և կիրառել Համաշխարհային կրթական կլաստերի մշակած և նախապես համաձայնեցված կրթական կարիքների գնահատման գործիքակազմը կամ կարիքների գնահատման այլ գործիքներ: Այս գործիքների կիրառության վերաբերյալ դասընթացները պետք է ընդգրկվեն պատրաստվածության և արտակարգ իրավիճակների պլանավորման միջոցառումներում: Եթե առանձին շահառուներ կրթության նախնական գնահատումներ են կատարում, ապա նրանք պետք է կիսեն գնահատման արդյունքները կրթության ոլորտի կառավարման մարմինների ու համակարգման հարցերով զբաղվող ավելի լայն խմբի հետ, նպաստելով համակարգված արձագանքման գործընթացին: Որոշ երկրներում արտակարգ իրավիճակից հետո 48 ժամվա ընթացքում կատարվում է կրթական հարցերի բազմաոլորտ անհապաղ գնահատում: Այս պարագայում գնահատումը պահանջում է համաձայնեցում այլ ոլորտների, օրինակ, ապաստան տրամադրող, առողջապահական ծառայություններ մատուցող, ջրամատակարարման և կոյուղացման համակարգերը, հետ (տե՛ս նաև «Վերլուծության ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցումներ 1-8-ը, էջ 53-59):

5. **Հաշվետվողականություն:** Թեև առանձին շահագրգիռ մարմիններ ունեն իրենց սեփական մանդատները, սակայն, համակարգման և տեղեկատվության տարածման հաշվետվողականության հարցերում բոլորի միջև պետք է համաձայնության ձեռք բերվի: Սա նշանակում է, որ անհրաժեշտ է ապահովել տեղեկատվության հավաքումը և աշխատանքների պլանավորման թափանցիկությունը: Կրթության ոլորտի խնդիրներին արձագանքելու ոլորտում լուրջ բացերի առկայության պարագայում առաջնահերթ կարիքները բավարարելու համար ՄՄՀ Կրթական կլաստերը կամ որևէ այլ համակարգման մեխանիզմ պարտավոր է հոգալ այն մասին, որ համապատասխան շահառուներն անդրադառնան այդ բացերին: Կրթադաստիարակչական աշխատանքի արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակելու միջոցով համակարգված մշտադիտարկումն ու արդյունքների գնահատումը կարող են նպաստել տուժած մարդկանց նկատմամբ հաշվետվու լինելու մակարդակի բարձրացմանը: Այն կարող է նպաստել նաև ԱԻԿՄՑ Նվազագույն ստանդարտների, ինչպես և դրանց հիմքում ընկած մարդասիրական սկզբունքների կիրառմանը, մատնանշելով, թե որ ասպարեզում առավել աշխատանքի կարիք է զգացվում: Մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատությունները պետք է աջակցեն և մշտադիտարկեն ազգային իշխանությունների կողմից տուժած բնակչության կրթության իրավունքի իրացման նկատմամբ պարտականությունները (տե՛ս նաև «Կրթության քաղաքականության ստանդարտ 2»-ը, ուղղորդող ցուցում 5-ը, էջ 159-160):
6. **Արդյունքահեն մոտեցումը** նշանակում է, որ բոլոր շահառուները ջանում են հավաստիանալ, որ կրթության ոլորտի խնդիրներին արձագանքումը իրականացվում է համակարգված և արձանագրում է ցանկալի արդյունքներ: Կրթության ոլորտի խնդիրներին արձագանքման համակարգման շարունակական մշտադիտարկումն ու գնահատումը թույլ են տալիս արագ հայտնաբերել և միջոցներ ձեռնարկել համակարգման բացերը վերացնելու համար (տե՛ս նաև «Վերլուծության ստանդարտ 3-4»-ը, էջ 66-73):

Վերլուծության ստանդարտ 1. Նախնական գնահատում

Արտակարգ իրավիճակում կրթական ոլորտի գնահատումները պետք է իրականացվեն ժամանակին և կրեն ամբողջական, թափանցիկ և մասնակցային բնույթ:

Առանցքային գործողություններ (կարդալ ուղղորդող ցուցումներին զուգահեռ)

- Կրթության ոլորտի նախնական անհապաղ գնահատումն իրականացվում է հնարավորինս շուտ, ելնելով անվտանգության և ապահովության պահանջներից (տե՛ս ուղղորդող ցուցում 1-ը):
- Այս մակարդակում գնահատման ընթացքում հավաքագրվում են տարանջատված տվյալներ, որոնք բացահայտում են կրթության նպատակի և կարևորության մասին տեղական ընկալումները, կրթական ծառայությունների հասանելիության խոչընդոտները և կրթական առաջնահերթ կարիքներն ու իրականացվելիք միջոցառումները (տե՛ս ուղղորդող ցուցում 2-ը):
- Ցանկացած արտակարգ իրավիճակից առաջ և դրա ընթացքում պետք է բացահայտվեն տեղական կարողությունները, ռեսուրսները և ուսուցման ու կրթության ռազմավարությունները (տե՛ս ուղղորդող ցուցումներ 2-5-ը):
- Կատարվում է համատեքստի վերլուծություն՝ հավաստիանալու, որ կրթության արձագանքմանն ուղղված միջոցառումները էական են, տեղին և զգայուն հնարավոր ռիսկերի և հակամարտության հանդեպ (տե՛ս ուղղորդող ցուցում 3-ը),
- Տուժած բնակչության ներկայացուցիչները պետք է մասնակցեն տվյալների հավաքագրման, մշակման ու իրականացման գործընթացներին (տե՛ս ուղղորդող ցուցումներ 2-3-ը, 5-ը և 7-8-ը):
- Կրթության տարբեր մակարդակների և տեսակների համար կրթական կարիքների և ռեսուրսների համապարփակ գնահատումը պետք է իրականացվի հիմնական շահառուների մասնակցությամբ (տե՛ս ուղղորդող ցուցումներ 2-7-ը):
- Կրկնակի ջանքերից խուսափելու համար Միջգերատեսչական համակարգող հանձնաժողովը գնահատումները պետք է համաձայնեցնի այլ ոլորտների և համապատասխան շահառուների հետ (տե՛ս ուղղորդող ցուցումներ 6-ը և 8-ը):

Ուղղորդող ցուցումներ

1. **Նախնական գնահատումների ժամկետները սահմանելիս** պետք է հաշվի առնել գնահատող թիմի և տուժած բնակչության անվտանգությունն ու ապահովությունը: Գնահատումը պետք է կատարվի արտակարգ իրավիճակից անմիջապես հետո, հնարավորության սահմաններում անդրադառնալով տուժած բոլոր վայրերում մատուցվող կրթության բոլոր տեսակներին: Տվյալները պետք է պարբերաբար թարմացվեն նախնական գնահատումից հետո մշտադիտարկման և գնահատման միջոցով: Սա ենթադրում է ծրագրի ձեռքբերումների, խոչընդոտների և բացերի վերանայում: Այն դեպքերում, երբ հնարավոր չի լինում ընդհանուր գնահատումներն անմիջապես կատարել, ապա մասնակի գնահատումների միջոցով կարելի է տեղեկանալ պահանջվող անհապաղ գործողությունների մասին:
2. **Նախնական գնահատման** ընթացքում անհրաժեշտ է հավաքագրել տարանջատված տվյալներ, որոնք հաշվի կառնվեն կրթության ոլորտի խնդիրների արձագանքմանն ուղղված միջոցառումներում, ինչպես նաև պետք է գնահատել հակամարտության կամ աղետների շարունակական ռիսկերը: «Տարանջատված» նշանակում է բաղադրիչ մասերի բաժանված տեղեկատվություն, իսկ տվյալ դեպքում տեղեկատվության վերլուծությունն իրականացված է ըստ սեռային և տարիքային խմբերի: Տվյալները բացահայտում են տուժած բոլոր խմբերի կրթության իրավունքի իրացման մարտահրավերները, բացերը, խոցելիությունը, կարողությունները և ռեսուրսները: Ռեսուրսների անարդյունավետ օգտագործումից և բնակչության տուժածության մակարդակի կամ ծագած խնդիրների գերագնահատումից խուսափելու համար արտակարգ իրավիճակներում կրթության բնագավառի աշխատակիցների կատարած գնահատումներն ու տեղային այցելությունները պետք է համակարգված լինեն: (տե՛ս նաև «Համայնքային մասնակցության ստանդարտ 2»-ը, էջ 43-46, և «Համակարգման ստանդարտ 1»-ը, էջ 47-51):

   Գնահատման ընթացքում պետք է առավելագույնս օգտվել տեղեկատվության առկա աղբյուրներից: Նախնական տվյալների հավաքագրումը պետք է սահմանափակվի գիտելիքների բացերը լրացնելու համար պահանջվող և կրթության բնագավառի շահառուների կարևոր որոշումների վրա ազդող տվյալներով: Հասանելիության սահմանափակ լինելու դեպքում կարելի է օգտվել տեղեկատվության հավաքագրման այլընտրանքային ռազմավարություններից: Դրանց շարքում կարելի է նշել տեղական առաջնորդների հետ շփումները,

համայնքային ցանցերից օգտվելը, ինչպես նաև այլ ոլորտներից ու մինչ ճգնաժամը տվյալների գոյություն ունեցող շտեմարանից երկրորդական տվյալների հավաքագրումը: Գոյություն ունեցող տվյալները թույլ կտան համեմատել մինչճգնաժամային և արտակարգ իրավիճակներում տիրող իրադրությունները:

Նախագծերի համակարգումը դյուրացնելու և տեղեկատվություն տրամադրող անձանց նկատմամբ պահանջները նվազագույնի հասցնելու նպատակով երկրի ներսում տվյալների հավաքագրման գործիքները պետք է ստանդարտացվեն և տիպայնացվեն: Հնարավորության դեպքում գնահատման գործիքները՝ որպես նախապատրաստական պլանավորման մի մաս, պետք է մշակվեն և համաձայնեցվեն բոլոր շահառուների հետ նախքան արտակարգ իրավիճակը: Գործիքները պետք է ծավալ ունենան լրացուցիչ տեղեկատվության հավաքագրման համար, ինչը կարևոր է համարվում տեղական արձագանքողների կողմից:

Տուժած համայնքների անդամները պետք է ներառվեն գնահատման թիմերում: Թիմերը պետք է գենդերային տեսանկյունից հավասարակշռված լինեն, որպեսզի կարողանան առավել արդյունավետ ընկալել իգական և արական սեռի սովորողների, ուսուցիչների, կրթական ոլորտի այլ աշխատակիցների, ծնողների ու խնամակալների փորձը, կարիքները, մտահոգությունները և կարողությունները: Անհրաժեշտ է խորհրդակցել պատկան մարմինների հետ:

Գնահատման գործընթացի համար հիմք են հանդիսանում նաև էթիկական՝ հարգանքի և ոչ խտրական վերաբերմունքի, սկզբունքները: Տեղեկատվության հավաքագրումը կարող է մարդկանց ռիսկի ենթարկել տեղեկությունների գաղտնիության կամ պարզապես այդ գործընթացին մասնակցելու պատճառով (ստորև տե՛ս նաև ուղղորդող ցուցում 5-ը): Տեղեկատվություն հավաքագրողները պարտավոր են պաշտպանել մասնակիցներին և նրանց տեղեկացնել.

- տվյալների հավաքագրման նպատակի,
- տվյալների հավաքագրման գործընթացին *չմասնակցելու* կամ ցանկացած պահի առանց բացասական հետևանքների հրաժարվելու իրավունքի,
- գաղտնիության և անանունության իրավունքի մասին:

(Տես նաև «Վերլուծության ստանդարտ 4»-ը, ուղղորդող ցուցում 2-ը, էջ 72):

3. **Համատեքստի,** ինչպես նաև աղետների ռիսկերի ու հակամար-

տությունների **վերլուծությունը** թույլ է տալիս, որ կրթության ոլորտի խնդիրների արձագանքմանն ուղղված միջոցառումները հնարավոր հակամարտության և աղետների նկատմամբ լինեն զգայուն, տեղին և համապատասխան:

Ռիսկերը վերլուծելիս հաշվի են առնվում համատեքստի բոլոր այն կողմերը, որոնք սպառնում են սովորողների առողջությանը, անվտանգությանը և ապահովությանը: Սա վստահեցնում է, որ կրթությունն առավել պաշտպանական միջոց է, քան ռիսկային գործոն: Այս վերլուծությունը գնահատում է կրթությանը սպառնացող հետևյալ ռիսկերը.

- անվտանգություն, վատ կառավարում և կաշառակերություն,
- հանրային առողջապահական խնդիրներ, ինչպես, օրինակ՝ վարակիչ հիվանդությունների տարածվածությունը,
- սոցիալական, տնտեսական, ֆիզիկական և բնապահպանական այլ գործոններ, այդ թվում նաև արդյունաբերական վտանգներ, ինչպեսիք են, օրինակ՝ թունավոր գազերի արտանետումները և քիմիական թափոնները,
- ռիսկեր, որոնք սպառնալիք են հանդիսանում սեռի, տարիքի, հաշմանդամության, էթնիկ պատկանելիության և համատեքստին համապատասխանող այլ գործոնների համար:

Հակամարտության վերլուծությունը գնահատում է հակամարտության առկայությունը կամ ռիսկը՝ միաժամանակ փորձելով ապահովել, որ կրթական միջոցառումները չսրեն դրանց հիմքում ընկած անհավասարությունները կամ հակամարտությունը: Սա անհրաժեշտ է և՛ հակամարտային, և՛ աղետային իրավիճակներում: Հակամարտության վերլուծությունն անդրադառնում է այնպիսի հարցերի, որոնք վերաբերում են.

- հակամարտության մեջ ուղղակիորեն կամ անուղղակիորեն ներգրավված, հակամարտությունից տուժած կամ տուժելու ռիսկի ենթակա դերակատարներին,
- փաստացի կամ հնարավոր հակամարտության պատճառներին և դրանց առաջացմանը նպաստող գործոններին,
- դերակատարների (այդ թվում՝ կրթության ոլորտի շահառուների) միջև փոխհարաբերություններին և հակամարտության պատճառներին:

Հետազոտական կազմակերպություններում հաճախ կատարվում են որոշակի տարածաշրջանների կամ պետությունների հակամարտու-

թյունների վերլուծություններ:

Անհրաժեշտության դեպքում, գուցե հարկ կլինի դրանք վերանայել նաև կրթության տեսանկյունից: Առկա վերլուծությունների անհասանելիության կամ կիրառելի չլինելու դեպքում տուժած տարածքում հակամարտության վերլուծությունը կարող է իրականացվել սեմինարների կամ գրասենյակային ուսումնասիրության միջոցով: Կրթության ոլորտի շահառուները պետք է հանդես գան ի պաշտպանություն համապատասխան գործակալությունների՝ հակամարտության համապարփակ վերլուծությունների ձեռնարկման, այդ թվում՝ կրթության վերաբերյալ տեղեկատվության տրամադրման հարցում, և վերլուծությունների արդյունքները տրամադրեն բոլոր շահառուներին:

Ռիսկի վերլուծության զեկույցում առաջարկվում են բնական և մարդածին վտանգների, ինչպես նաև՝ հակամարտությունների կառավարման ռազմավարություններ, որոնք թույլ կտան կանխարգելել, մեղմել, նախապատրաստվել և արձագանքել հնարավոր ռիսկերին: Հաստատությունները պետք է ունենան արտակարգ իրավիճակները կանխելու, մեղմացնելու և արձագանքելու համար նախատեսված կանխարգելման և անվտանգության ծրագրեր: Դրանք կարող են պատրաստել նաև ռիսկերի քարտեզ, որը կմատնանշի հավանական սպառնալիքները և այն գործոնները, որոնք առավել խոցելի են դարձնում սովորողներին և ազդում նրանց դիմակայելու կարողության վրա:

Ռիսկերի վերլուծությունը համալրվում է համայնքի դիմակայնության բարձրացմանն ուղղված տեղական միջոցառումների, ինչպես նաև ռեսուրսների և կարողությունների գնահատման միջոցով: Վտանգի մեղմացմանը, պատրաստվածությանը և վերականգնմանն ուղղված գիտելիքները, հմտությունները և կարողությունները գնահատվում և հզորացվում են ինչպես արտակարգ իրավիճակից առաջ, այնպես էլ դրանից հետո պատրաստվածությանը և մեղմացմանն ուղղված միջոցառումներով (տես նաև «Համայնքային մասնակցության ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցումներ 1-4-ը, էջ 34-39, «Համայնքային մասնակցության ստանդարտ 2»-ը, ուղղորդող ցուցում 5-ը, էջ 46, «Հասանելիություն և ուսումնառության միջավայր. Ստանդարտ 2»-ը, ուղղորդող ցուցում 11-ը, էջ 95-96, «Դասավանդման և ուսումնառության ստանդարտ 2»-ը, ուղղորդող ցուցում 6-ը, էջ 122, «Կրթության քաղաքականության ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցումներ 2-ը և 4-ը, էջ 152-155, և «Կրթության քաղաքականության ստանդարտ 2»-ը, ուղղորդող ցուցումներ 3-ը և 5-ը, էջ 158-160):

4. **Տվյալների հավաստիությունը և վերլուծության մեթոդները.**

Տվյալների վերլուծությունները պետք է հստակորեն սահմանեն.

- ցուցիչները,
- տվյալների աղբյուրները,
- հավաքագրման մեթոդները,
- տվյալների հավաքագրողներին,
- տվյալների վերլուծության ընթացակարգերը:

Եթե գոյություն ունեն ռիսկեր տվյալների հավաքագրողների համար են անվտանգության առումով, ապա պետք է վկայակոչվեն ոչ թե տվյալներ հավաքագրող անձանց անունները, այլ տվյալների հավաքագրման գործում ներգրավված կազմակերպությունների տեսակները: Պետք է նշվեն նաև տվյալների հավաքագրման կամ վերլուծության այն սահմանափակումները, որոնք կարող են ազդել արդյունքների հավաստիության կամ իրավիճակի հետ դրանց համապատասխանելիության վրա: Օրինակ, տվյալների հավաստիության վրա կարող են ազդել հաշվառված և հաճախող երեխաների վերաբերյալ չափազանցված տվյալներ հաղորդողները, առավելագույնս օգտվելու ռեսուրսների բաշխումից կամ պատասխանատվությունից խուսափել նպատակով: Պետք է նշվեն նաև այն խմբերն ու հարցերը, որոնց չեն անդրադարձել ծրագրերում և մշտադիտարկումների ընթացքում:

Կողմնակալ վերաբերմունքը նվազագույնի հասցնելու նպատակով տվյալները պետք է հիմնվեն մի քանի աղբյուրների վրա և համեմատվեն: Այս մեթոդը բարձրացնում է տվյալների հավաստիության մակարդակը: Նախքան եզրակացությունների հանգելը պետք է խորհրդակցել առավել տուժած խմբերի, այդ թվում՝ արական և իգական սեռի երեխաների ու երիտասարդների հետ: Վերլուծության մեջ ուշադրությունը պետք է սևեռվի տեղական ընկալումների ու գիտելիքների վրա, բացառելու համար կողմնակի մարդկանց ընկալումների վրա հիմնված մարդասիրական օգնությունը (տե՛ս նաև «Կրթության քաղաքականության ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցում 4-ը, էջ 154-155):

5. **Գնահատումների մասնակիցները** պետք է լինեն կրթության ոլորտի կառավարման մարմիններն ու տուժած բնակչության, այդ թվում՝ խոցելի խմբերի ներկայացուցիչները: Սկզբնական գնահատման ժամանակ տվյալների ու տեղեկատվության հավաքագրման, վերլուծության, կառավարման և տարածման գործընթացներում այս խմբերի մասնակցությունը կարող է սահմանափակվել տարբեր հանգամանքների բերումով: Մասնակցությունը պետք է ընդլայնվի իրավիճակի

կայունացմանը զուգընթաց: Գնահատումները պետք է դյուրացնեն հաղորդակցությունը համայնքի բոլոր լեզուներով, հնարավորության սահմաններում նաև ժեստերի լեզվի և Բրայլյան այբուբենի միջոցով (տե՛ս նաև «Կրթության քաղաքականության ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցում 4-ը, էջ 154-155):

6. **Կրթության ոլորտի ներսում և այլ ոլորտների միջև փոխհամագործակցությունը** կարևոր է գնահատումների որակի, համապարփակության և օգտակարության տեսանկյունից: Կրկնակի ջանքերից խուսափելու համար Միջգերատեսչական համակարգող հանձնաժողովը գնահատումները համաձայնեցնում է այլ ոլորտների համապատասխան շահառուների հետ: Համակարգված գնահատումների շնորհիվ կարելի է բացահայտել արտակարգ իրավիճակների հետևանքները և նպաստել դրանց հետևողական արձագանքմանը: Դրանք բարելավում են նաև մարդասիրական գործունեությամբ զբաղվող շահառուների հաշվետվողականությունը և խրախուսում տեղեկատվության տարածումը (տե՛ս նաև «Համակարգման ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցում 4-ը, էջ 50-51): Կրթության ոլորտը պետք է համագործակցի այլ ոլորտների հետ նրանցից տեղեկատվություն ստանալու համար սպառնալիքների, ռիսկերի և ծառայությունների հասանելիության վերաբերյալ: Այդ ոլորտների շարքում են.
   - առողջապահությունը, որը տվյալներ է տրամադրում համաճարակաբանության և համաճարակների վտանգների մասին, առողջապահական առկա հիմնական ծառայությունների, այդ թվում՝ սեռական և վերարտադրողական առողջության, ՄԻԱՎ-ի կանխարգելման, բուժման, խնամքի և աջակցության ծառայությունների վերաբերյալ,
   - պաշտպանության ոլորտը, որը տվյալներ է տրամադրում գենդերային և սեռական բռնության, ծնողազուրկ երեխաների և հասարակության այլ խոցելի խմբերի հետ կապված ռիսկերի, կրթության ոլորտում առկա խոչընդոտների, սոցիալական ու հոգեբանական աջակցության հասանելի ծառայությունների մասին,
   - սննդի ոլորտը, որը տվյալներ է տրամադրում դպրոցներում, համայնքներում մատուցվող սննդի ծառայությունների մասին,
   - կացարանների և ճամբարների կառավարման ոլորտը, որը տեղեկացնում է ապահով և համապատասխան տարածքների, ուսումնական և վերականգնողական հաստատությունների շինարարության/վերակառուցման ու դրանց հասանելիության, ինչ-

պես նաև ուսումնական հաստատությունների համար անհրաժեշտ ոչ պարենային ապրանքների տրամադրման մասին,

- ջրամատակարարման ոլորտը տվյալներ է ապահովում ուսումնական վայրերում հուսալի ջրամատակարարման և համապատասխան կոյուղացման մասին,
- նյութատեխնիկական ապահովման ոլորտը՝ գրքերի և այլ պարագաների գնումն ու առաքումը կազմակերպելու մասին:

(Տես նաև «Համակարգման ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցումներ 1-ը և 3-4-ը, էջ 47-51 և «Կրթության քաղաքականության ստանդարտ 2»-ը, ուղղորդող ցուցում 2-ը, էջ 158):

7. **Կրթական և հոգեբանասոցիալական կարիքներ:** Ընդհանուր կարիքների գնահատման ընթացքում անհրաժեշտ է նաև տարանջատված տվյալներ հավաքագրել կրթական և հոգեբանասոցիալական կարիքների և ռեսուրսների մասին: Տեղական իրադրության մասին գնահատման թիմի տեղյակ անդամները կարող են աջակցել գնահատելու այս խնդիրները: Այս իրականացնելու համար գերատեսչությունները պետք է աջակցեն կազմակերպչական կարողություններով, տրամադրելով համապատասխան աշխատողներ ու միջոցներ:

8. **Գնահատման արդյունքները** պետք է հասանելի լինեն հնարավորինս վաղ, որպեսզի հնարավոր լինի պլանավորել կրթական միջոցառումները: Անհաժեշտ է հրապարակել նաև ռեսուրսներն ու կրթական կարիքները վերհանող մինչ ճգնաժամը եղած տվյալները, հետճգնաժամային գնահատումները և/կամ կրթության ոլորտի կառավարման մարմինների, ՀԿ-ների, մարդասիրական գործունեությամբ զբաղվող գործակալությունների և տեղական համայնքի կողմից կրթության իրավունքի իրացման կամ խախտումների բացահայտման մասին տվյալները:

Կրթության ոլորտի տեղական և ազգային կառավարման մարմինները պետք է համակարգեն գնահատման արդյունքների հրապարակումը: Այն դեպքերում, երբ նրանք այս գործողությունները կատարելու համար բավարար կարողություններ չունեն, ապա միջազգային առաջատար դերակատարներից մեկը, օրինակ՝ կրթության ոլորտի համակարգման հանձնախումբը կամ Կրթական կլաստերը, կարող են ստանձնել այս գործընթացի կառավարումը: Հնարավորության դեպքում գնահատման արդյունքերում ներառված տվյալները պետք է ստանդարտացվեն այդ տեղեկատվությունից հեշտությամբ օգտվելու նպատակով (տե՛ս նաև «Համակարգման ստանդարտ 1»-ը, էջ 47-51):

Վերլուծության ստանդարտ 2. Արձագանքման ռազմավարություններ

Ներառական կրթության խնդիրներին արձագանքելու ռազմավարությունները ներառում են համատեքստի հստակ նկարագրությունը, կրթության իրավունքի իրացման խոչընդոտները և վերջիններս հաղթահարելու միջոցները:

Առանցքային գործողություններ (կարդալ ուղղորդող ցուցումներին զուգահեռ)

- Արձագանքման ռազմավարությունը ճշգրտորեն արտացոլում է գնահատման վերջնարդյունքները (տե՛ս ուղղորդող ցուցումներ 1-2-ը):
- Կրթության խնդիրների արձագանքմանն ուղղված միջոցառումներն աստիճանաբար բավարարում են տուժած բնակչության ներառական և որակյալ կրթություն ստանալու կարիքները (տե՛ս ուղղորդող ցուցումներ 1-ը, 5-ը և 8-ը):
- Արձագանքման ռազմավարությունները մշակվում և իրականացվում են այնպես, որ հասարակությունը կամ կրթական ծառայություններ մատուցողները վնասներ չկրեն, իսկ արտակարգ իրավիճակներն էլ ավելի չսրվեն (տե՛ս ուղղորդող ցուցումներ 3-ը և 7-ը):
- Նախնական գնահատման ու համատեքստի վերլուծության միջոցով հավաքագրված տեղեկատվությունը պարբերաբար թարմացվում է կրթության ոլորտում իրականացվող ընթացիկ գործողությունների վերաբերյալ նոր տվյալներով (տե՛ս ուղղորդող ցուցում 4-ը):
- Արձագանքման ռազմավարություններում ներառվում է կարողությունների զարգացումը, ինչը միտված է կրթության ոլորտի կառավարման մարմիններին ու հասարակության անդամներին աջակցելու (տե՛ս ուղղորդող ցուցում 2-ը):
- Կրթության ոլորտի խնդիրների արձագանքմանն ուղղված միջոցառումները համալրվում են և համապատասխանեցվում ազգային կրթական ծրագրերի հետ (տե՛ս ուղղորդող ցուցումներ 6 և 8):
- Ելակետային տվյալների հավաքագրումն իրականացվում է նախքան ծրագրի մեկնարկը (տե՛ս ուղղորդող ցուցում 9-ը):

Ուղղորդող ցուցումներ

1. **Արձագանքման ռազմավարություն:** Կրթության ոլորտի շահառուները պետք է աջակցեն գնահատման մանրամասն վերլուծության և

տվյալների մեկնաբանման գործընթացին, դրանով իսկ ապացուցելով, որ իրենց արձագանքման ռազմավարությունը հիմնված է հիմնական արդյունքների և գնահատման արդյունքում բացահայտված հիմնական առաջնահերթությունների վրա: Դրանով նրանք նաև կխուսափեն գնահատման վերջնարդյունքների ռիսկից՝ հաստատելով ծրագրային արձագանքման միջոցառումների համար արդեն իսկ ձևավորված գաղափարները:

Արձագանքման ռազմավարությունը պետք է ընդգծի կրթության ոլորտի կառավարման մարմինների առաջատար դերը և այլ շահառուների հետ համագործակցության կարևորությունը: Օրինակ, կազմակերպությունների միջև պետք է համաձայնություն ձեռք բերվի կրթական ծախսերի, օրինակ, ուսուցիչների վարձատրության և սարքավորումների ձեռքբերման, վերաբերյալ, հաշվի առնելով ծախսերի մակարդակների երկարաժամկետ կայունությունը:

Արձագանքման ռազմավարությունը պետք է հիմնված լինի կանխարգելման համապատասխան պլանների վրա, որոնք, իրենց հերթին, պետք է մշակվեն համայնքի գործուն մասնակցությամբ: Դրանցում պետք է նշվեն կրթության տարբեր մակարդակները և տեսակները, ռիսկերի ու վտանգների մասին իրազեկվածության մակարդակը, ինչպես նաև այլ գործակալությունները, որոնք պետք է աջակցեն կրթական միջոցառումների իրականացմանը: Կրթական հիմնական միջոցառումների, ինչպես նաև նախնական տվյալների հավաքագրման ու գնահատումների համար պետք է տրամադրվեն ֆինանսական համապատասխան միջոցներ (տե՛ս նաև «Համայնքային մասնակցության ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցում 1-ը, էջ 34-36):

Պետք է անցկացվի խոչընդոտների, այդ թվում՝ գենդերային խոչընդոտների վերլուծություն կրթության ու միջոցառումների բոլոր մակարդակներն ու տեսակները հասանելի դարձնելու նպատակով: Հնարավորինս անհրաժեշտ է ճկունություն ցուցաբերել ներառական կրթություն ապահովելու և ուսուցման աճող պահանջներին արձագանքելու համար:

2. **Տվյալների հավաքագրման և վերլուծության կարողությունների զարգացում**: Արձագանքման ռազմավարությունը նախատեսում է կրթական ոլորտի տարբեր մարմինների աշխատակիցների, ինչպես նաև համայնքի անդամների կարողությունների զարգացում: Մշտադիտարկման ու գնահատման գործում կարող են ներգրավվել հատկապես համայնքի երիտասարդ անդամները: Գնահատման տվյալների համապարփակ ու արդյունավետ հավաքագրման և ճշգրիտ

վերլուծության համար կարևոր է գործող անձնակազմի գենդերային հավասարակշռությանը միտված մոտեցումը (տես նաև «Վերլուծության ստանդարտ 3»-ը, ուղղորդող ցուցում 2-ը, էջ 68 և «Վերլուծության ստանդարտ 4»-ը, ուղղորդող ցուցում 3-ը, էջ 72-73):

3. **«Մի՛ վնասիր»:** Արտակարգ իրավիճակներում կրթության ոլորտի խնդիրներին ճիշտ արձագանքումն ապահովելու համար անհրաժեշտ է սուղ ռեսուրսներ ունեցող վայրերին ռեսուրսներ (օրինակ, անցկացնել վերապատրաստման դասընթացներ, ստեղծել աշխատատեղերի, ապահովել տարբեր պարագաներով և պարենով) տրամադրել: Հարկ է նկատի ունենալ, որ այս ռեսուրսները հաճախ նույնացվում են իշխանության և բարեկեցության հետ: Դրանք կարող են համայնքներում հակամարտության պատճառ դառնալ, նպաստել մարգինալացման (մեկուսացման) կամ խտրականության խորացմանը: Հակամարտություններիժամանակ որոշ մարդիկ կարող են վերահսկել ու օգտագործել այս ռեսուրսները հօգուտ իրենց՝ մյուս կողմին թուլացնելու կամ անձնական շահ ստանալու համար: Նման իրավիճակ ստեղծվելու դեպքում կրթության ոլորտի խնդիրներին ուղղված արձագանքման միջոցառումները կարող են վնաս պատճառել: Պետք է, հիմնվելով ռիսկի ընկալման և հակամարտության վերլուծության վրա, ջանքեր գործադրել նման իրավիճակներից խուսափելու համար (տե՛ս նաև «Վերլուծություն ստանդարտ 1-ը», ուղղորդող ցուցում 3-ը, էջ 54-56):

   Ռեսուրսների փոխանցումը և արտակարգ իրավիճակներում կրթության ոլորտի խնդիրների արձագանքմանն ուղղված միջոցառումների իրականացումը կարող են նաև հզորացնել խաղաղության հասնելու տեղական կարողությունները: Անցկացվող միջոցառումների շնորհիվ, ինչպես նաև համայնքները միավորող կապերի ստեղծմամբ, կարելի է կրճատել կործանարար հակամարտությունների հանգեցնող բաժանումները և վերացնել լարվածության աղբյուրները: Օրինակ, ուսուցիչների վերապատրաստման ծրագրերը մասնագիտական հետաքրքրությունների շուրջ կարող են միավորել ուսուցիչներին՝ անկախ նրանց էթնիկ պատկանելությունից: Համայնքներում առավել անաչառ հարաբերությունների ստեղծմանը կարող է նպաստել նախկինում մարգինալացված (մեկուսացված) խմբերի ներգրավումը:

4. **Արձագանքման ռազմավարությունների թարմացում:** Կրթության ոլորտի շահառուները պետք է պարբերաբար վերանայեն և թարմացնեն իրենց արձագանքման ռազմավարությունները արտակարգ

իրավիճակներից մինչև վերականգնման և զարգացման փուլեր: Նրանք պետք է ներկայացնեն ձեռք բերված հաջողությունները, արտակարգ և անվտանգ իրավիճակներում կատարված փոփոխությունները և ռազմավարության մեջ իրականացված համաժամանակյա փոփոխությունները: Պետք է իրականացվեն չբավարարված կարիքների ու իրավունքների ընթացիկ գնահատումներ և ռազմավարության մեջ կատարվեն համապատասխան փոփոխություններ այդ կարիքները բավարարելու համար: Միջոցառումները պետք է աստիճանաբար բարելավեն կրթության որակը, ընդգրկման ծավալները, հասանելիությունը, կայունությունը և ընդհանուր մասնակցությունը:

5. **Դոնորների արձագանքը:** Կրթության որակի և հասանելիության նվազագույն մակարդակն ապահովելու համար դոնորները պետք է պարբերաբար վերանայեն արտակարգ իրավիճակներում կրթության ոլորտի խնդիրների արձագանքմանն ուղղված միջոցառումների թե որակը, և թե ընդգրկումը: Արտակարգ իրավիճակներից տուժած վայրերում կրթական հնարավորությունների հավասար հասանելիությունն ապահովելու նպատակով պետք է հատուկ ուշադրություն դարձնել խոցելի խմբերից սովորողներ ներգրավելու ու նրանց հնարավորինս երկար պահելու կրթական հաստատություններում: Հավասար հասանելիությունը վերաբերում է հնարավորությունների հավասարությանը ինչպես արական և իգական սեռի երեխաների, այնպես էլ երիտասարդ և մեծահասակ սովորողների, և հատկապես նրանց համար, ովքեր մեկուսացված են էթնիկ պատկանելության, լեզվական տարբերության կամ հաշմանդամության պատճառով: Տուժած բնակչությանը կրթություն տրամադրելու նպատակով ջրամատակարարման, սննդով, կացարաններով և առողջապահական ծառայություններով ապահովելուն ուղղված արձագանքման միջոցառումներին զուգահեռ պետք է ֆինանսավորվեն կրթության ոլորտի խնդիրների արձագանքմանն ուղղված ծրագրերը: Սա վերաբերում է այն համայնքներին, որոնք ընդունում են փախստականներին կամ ներքին տեղահանության ենթարկված անձանց: Համապատասխան ֆինանսավորումը շատ կարևոր նշանակություն ունի բոլորի կրթության իրավունքն ապահովելու գործում: Ծրագրերի իրականացումը չպետք է սահմանափակվի ֆինանսավորման կարճատև շրջափուլերով. այն պետք է շարունակվի նաև վերականգնման շրջանում (ստորև տե՛ս ուղղորդող ցուցում 7-ը, «Հասանելիություն և ուսումնական միջավայրի ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցումներ 1-2-ը, էջ 80-82, և «*Կրթության արտաքին ֆինանսավորման վերա-*

բերյալ ԱԻԿՄՑ տեղեկատու» ուղեցույցը, որը հասանելի է ԱԻԿՄՑ գործիքակազմում՝ **www.ineesite.org/toolkit**):

6. **Ազգային ծրագրերի հզորացում**: Արտակարգ իրավիճակներում կրթության ոլորտի խնդիրների արձագանքմանն ուղղված միջոցառումները պետք է համապատասխանեցվեն ազգային կրթական ծրագրերին և միաժամանակ կատարելագործեն դրանք: Սա վերաբերում է, վաղ մանկական զարգացման, մասնագիտական, կենսապահովման կրթական ծրագրերին: Սա ենթադրում է ազգային և տեղական կրթական ոլորտների պլանավորում, տնօրինում ու կառավարում, ինչպես նաև ֆիզիկական ենթակառուցվածք, աշխատող ուսուցչների վերապատրաստում և աջակցություն: Արտակարգ իրավիճակներում կրթության ոլորտի խնդիրներին արձագանքողները պետք է աշխատեն կրթության կառավարման մարմինների հետ ապագայում առավել արդյունավետ համակարգ ստեղծելու նպատակով, ինչպես նաև՝ հզորացնելով ներառական կրթության համակարգը բոլոր, այդ թվում, օրինակ, հաշմանդամություն ունեցող և փոքրամասնություն կազմող խմբերին պատկանող, երեխաների համար (տե՛ս նաև «Կրթության քաղաքականության ստանդարտ 1»-ը, էջ 150-156 և «Կրթության քաղաքականության ստանդարտ 2»-ը, ուղղորդող ցուցում 4-ը, էջ 158-159):
7. **Արտակարգ իրավիճակներում արձագանքման պատրաստվածությունը և աղետների ռիսկերի նվազեցումը:** Զարգացման գործակալություններն ու դոնորները պետք է կանխարգելիչ քայլեր ձեռնարկեն, նպաստելով և աջակցելով աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում արձագանքման պատրաստվածության, ինչպես նաև ճգնաժամից հետո վերականգնման ընթացքում իրականացվող միջոցառումներին: Աղետների ռիսկերի նվազեցմանն ու պատրաստվածությանն ուղղված միջոցառումների համար կատարվող ներդրումները կարող են արդյունավետ լինել, քանզի կարող են նպաստել կրթության ոլորտի կառավարման մարմինների ու գործընկերների կողմից առավել ճիշտ պլանավորման, համակարգման ու արձագանքման գործընթացներին: Սա նշանակում է նաև, որ արտակարգ իրավիճակների ընթացքում թերևս ավելի քիչ ներդրումներ կպահանջվեն:
8. **Կազմակերպական մանդատների սահմանափակումների հաղթահարում:** Սահմանափակ մանդատներ ունեցող մարդասիրական կազմակերպությունները, որոնք զբաղվում են, օրինակ, երեխաների, տարրական կրթության կամ փախստականների հարցերով, իրենց

կողմից իրականացվող կրթության ոլորտի խնդիրներին ուղղված արձագանքման միջոցառումները պետք է համապատասխանեցնեն կրթության ոլորտի կառավարման մարմինների և ոլորտի այլ շահառուների արձագանքման գործողություններին: Ընդհանուր կրթական ռազմավարությունը պետք է ընդգրկի հետևյալը.

- վաղ մանկական զարգացումը,
- ներառական տարրական ուսուցումը,
- երիտասարդների կարիքների բավարարումը, այդ թվում՝ միջնակարգ, բարձրագույն և մասնագիտական կրթությունը,
- մեծահասակների կրթությունը,
- մանկավարժական պրակտիկան և ուսուցիչների վերապատրաստումը:

Մեծահասակ սովորողների համար նախատեսված ռազմավարությունը պետք է ներառի գրագիտության ու թվաբանության, կյանքի հմտությունների զարգացման, ապահովության ու անվտանգության (օրինակ, ականների տեղադրման) մասին իրազեկության բարձրացման ոչ ֆորմալ կրթական ծրագրեր:

Հայրենադարձներին ընդունող վայրերում կրթական զարգացումը ենթադրում է երկարաժամկետ աջակցության տրամադրում, ինչպես օրինակ, արագացված դասընթացներ ու մասնագիտական ուսուցում (տե՛ս նաև «Համակարգման ստանդարտ 1»-ը, էջ 47-51 և «Դասավանդում և ուսումնառություն. Ստանդարտներ 1-2», էջ 109-122):

9. **Նախնական տվյալների հավաքագրում:** Նախնական տվյալներ ասելով, ենթադրվում են այն տեղեկությունները, որոնք ստացվել են թիրախային բնակչությունից նախքան կրթական նոր միջոցառումներ սկսելը: Այս տեղեկություններն օգնում են ծրագիրն իրականացնող անձնակազմին հասկանալ կրթության ոլորտում տիրող վիճակը և հետագայում օգտագործվում են մշտադիտարկման և գնահատման ընթացքում հավաքված տեղեկությունների հետ համեմատություն անցկացնելու նպատակով: Նախնական տվյալների հավաքագրումը պետք է իրականացվի պարբերաբար: Տեղեկատվությունը պետք է պարունակի բնակչության վերաբերյալ տարանջատված տվյալները, ինչպես նաև տվյալներ սովորողների հաճախելիության և ուսուցիչ – աշակերտ կապերի մասին: Որոշ տվյալներ կարող են վերաբերել առանձին միջոցառումների: Օրինակ, եթե ծրագիրը նպատակաուղղված է բարձրացնելու աղջիկների կողմից դպրոց հաճախելու մակարդակը, ապա անհրաժեշտ է տեղեկանալ վերջիններիս հաճախելիության աստիճանի մասին նախքան ծրագրի մեկնարկը:

Վերլուծության ստանդարտ 3. Մշտադիտարկում

Իրականացվում է կրթության ոլորտի խնդիրների արձագանքմանն ուղղված միջոցառումների և տուժած բնակչության կրթական փոփոխվող կարիքների պարբերական մշտադիտարկում:

Առանցքային գործողություններ (կարդալ ուղղորդող ցուցումներին զուգահեռ)

- Առկա են արդյունավետ համակարգեր, որոնք նպաստում են արտակարգ իրավիճակներից մինչև վերականգնման փուլ կրթության ոլորտի խնդիրների արձագանքմանն ուղղված միջոցառումների կանոնավոր մշտադիտարկումների իրականացմանը (տես ուղղորդող ցուցում 1-ը):
- Կրթության ոլորտի խնդիրների արձագանքմանն ուղղված միջոցառումները մշտադիտարկվում են բոլոր սովորողների, ուսուցիչների և կրթական ոլորտի այլ աշխատակիցների ապահովությունն ու անվտանգությունն ապահովելու նպատակով (տես ուղղորդող ցուցում 1-ը):
- Խոցելի խմբերին պարբերաբար տրամադրվում է խորհրդատվություն, նրանց համար կազմակերպվում են վերապատրաստման դասընթացներ տվյալների հավաքագրման մեթոդաբանության վերաբերյալ, ինչպես նաև նրանց ներգրավում են մշտադիտարկման միջոցառումներում (տես ուղղորդող ցուցում 2-ը):
- Կանոնավոր կերպով իրականացվում է տարանջատված կրթական տվյալների հավաքագրում, ինչը նպաստում է կրթության ոլորտի խնդիրների արձագանքմանն ուղղված միջոցառումներին (տես ուղղորդող ցուցումներ 3-4-ը):
- Կրթական ոլորտին վերաբերող տվյալները պարբերաբար վերլուծվում և տրամադրվում են համապատասխան բոլոր շահառուներին, հատկապես տուժած համայնքներին և խոցելի խմբերին (տես ուղղորդող ցուցումներ 3-4-ը):

Ուղղորդող ցուցումներ

1. **Մշտադիտարկման միջոցառումները կամ** ծրագրերը **միտված են բավարարելու** բնակչության կրթական փոփոխվող կարիքները և սահմանելու, թե ինչպես է բնակչությունն արձագանքում զարգացող

համատեքստին: Մշտադիտարկումների միջոցով.

- ապահովվումէ միջոցառումների համապատասխանությունը և սահմանվում է դրանց նկատմամբ զգայունությունը,
- բացահայտվում են բարելավման հնարավորությունները,
- օժանդակվում են հակամարտություններիմեղմացմանն ու աղետների ռիսկերի նվազեցմանն ուղղված գործողությունները,
- խթանվում է հաշվետվողականությունը:

Մշտադիտարկումներն անհրաժեշտ են կրթական ծրագրերի պլանավորված և չպլանավորված ազդեցությունները վերահսկելու, ինչպես նաև հետևելու, որ դրանք ակամա չբարձրացնեն մեկուսացվածության, խտրականության մակարդակը և հակամարտությունների կամ բնական վտանգների հավանականությունը: Մշտադիտարկման չհայտարարված այցերը կարող են բարելավել մշտադիտարկման տվյալների հավաստիությունը:

Մշտադիտարկումների ծրագրումը սահմանում է տարբեր տվյալների հավաքագրման հաճախականությունը և տվյալների հավաքագրման ու վերամշակման համար պահանջվող տարբեր ռեսուրսները: Ընտրության հիմունքով դպրոցներից կամ կրթական այլ ծրագրերից կարող է ավաքագրվել տարբեր բնույթի տեղեկատվություն կարիքներին և խնդիրներին արագ անդրադառնալու նպատակով: Նման տեղեկատվությունը կարող է ներառել տվյալներ.

- հաճախելիության ու դուրս մնալու,
- դպրոց հաճախելուց առաջ աշակերտների սնվելու
- դասագրքերի, ուսումնամեթոդական նյութերի առկայության վերաբերյալ:

Դպրոցներում չներգրավված երեխաների և երիտասարդների դպրոց չհաճախելու պատճառները բացահայտելու նպատակով մշտադիտարկումները կարող են իրականացվել փոքրաթիվ ընտանիքների պատահական այցելություններով: Մշտադիտարկումների ընթացքում կարևոր է անմիջական շփում ունենալ կանանց և խոցելի խմբերի հետ: Եթե համապարփակ հիմունքներով դժվար է տվյալներ հավաքագրել էթնիկ կամ սոցիալական այլ խմբերի վերաբերյալ, ապա որոշակի խմբերի առանձնահատուկ խնդիրների մասին կարելի է պատկերացում կազմել ընտրանքային հետազոտությունների և որակական արձագանքների, օրինակ, ոչ պաշտոնական խոսակցությունների միջոցով:

Մշտադիտարկումների և հաշվետվությունների համակարգերն անհրաժեշտ են սովորողների, ուսուցիչների, կրթական ոլորտի այլ աշխատակիցների անվտանգությունն ու բարեկեցությունն ապահովելու, ինչպես նաև կրթական ենթակառուցվածքում տեղի ունեցող խախտումները կանխելու համար: Այս համակարգերը մասնավորապես կարևորվում են այն դեպքերում, եթե առկա են զինված հարձակումների, առևանգումների, զինված ուժերում և խմբերում երեխաներին ներքաշելու, սեռական բռնության կամ բնական աղետների ենթարկվելու ռիսկեր: Այս տեսանկյունից ելնելով, մշտադիտարկումներ իրականացնելու համար կրթության ոլորտի շահառուները պետք է կապ հաստատեն տեղական և ազգային իշխանությունների կամ ՄԱԿ –ի և հասարակական կազմակերպությունների հետ անվտանգության, արդարադատության, պաշտպանության և մարդու իրավունքների հետ կապված հարցերը լուծելու համար: Կարևոր է հաշվի առնել հաղորդված տեղեկատվության գաղնտիությունը:

Անհրաժեշտության դեպքում, ըստ մշտադիտարկումների արդյունքների, պետք է փոփոխվեն կրթության ոլորտի խնդիրների արձագանքման ընթացիկ միջոցառումները:

2. **Մշտադիտարկումների գործընթացում** ներգրավված մարդիկ պետք է կարողանան նրբանկատորեն տեղեկատվություն հավաքագրել տուժած բնակչության բոլոր խմբերից: Կարևոր է, որ խումբը լինի գենդերային տեսանկյունից հավասարակշռված, վարժ տիրապետի տեղական լեզվին (լեզուներին) և համապատասխան պատրաստվածություն ունենա տեղեկատվություն հավաքագրելու համար: Ըստ տեղական սովորույթներիկարող է պահանջվել, որ կանանց կամ փոքրամասնություն կազմող խմբերին խորհրդատվություն տրամադրվի առանձին-առանձին՝ նրանց համար վստահելի անձանց կողմից: Տուժած համայնքի ներկայացուցիչները, մասնավորապես երիտասարդները, պետք է հնարավորինս վաղ ընդգրկվեն իրենց կյանքի վրա ուղղակիորեն ազդող կրթական ծրագրերի արդյունավետության մշտադիտարկումներում: Սա, մասնավորապես, կարևոր է առանձնահատուկ (օրինակ, դեռահաս աղջիկների կամ հաշմանդամություն ունեցող սովորողների) խմբերի համար նախատեսված ոչ ֆորմալ կրթական ծրագրերում (տե՛ս նաև «Վերլուծության ստանդարտ 2»-ը, ուղղորդող ցուցում 2-ը, էջ 61-62 և «Վերլուծության ստանդարտ 4»-ը, ուղղորդող ցուցում 3-ը, էջ 72-73):

3. **Կրթության ոլորտի կառավարման տեղեկատվական համակարգը** սովորաբար կառավարվում է ազգային իշխանությունների կող-

մից: Համակարգը հավաքագրում ու վերլուծում է կրթական ոլորտին վերաբերող տվյալները: Եթե նույնիսկ կրթության ոլորտի կառավարման տեղեկատվական համակարգ գոյություն ունի համատեքստում, ապա այն կարող է խախտվել արտակարգ իրավիճակների հետևանքով և կարող է թարմացման կարիք ունենալ: Ազգային կրթության ոլորտի կառավարման տեղեկատվական կամ համարժեք համակարգի զարգացումը կամ վերականգնումը պահանջում է կարողությունների զարգացում ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակներով: Կարողությունների զարգացումն օգնում է համապատասխան մարդկանց հավաքագրել, կառավարել, մեկնաբանել, օգտագործել կամ տարածել առկա տեղեկատվությունը: Գործող համակարգ ունենալու նպատակով կարողությունների զարգացման գործընթացը պետք է մեկնարկվի հնարավորինս շուտ՝ վերականգնման փուլում, և այն պետք է ընդգրկված լինի կառավարման մարմիններում, (տես նաև «Համակարգման ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցում 3-ը, էջ 49-50, «Կրթության քաղաքականության ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցում 5-ը, էջ 155, և «Կրթության քաղաքականության ստանդարտ 2»-ը, ուղղորդող ցուցում 4-ը, էջ 158-159):

Համատեղելի ծրագրային ապահովումն ու սարքավորումները կարևոր նշանակություն ունեն կրթության ոլորտի կառավարման տեղեկատվական համակարգի համար: Կրթության ոլորտի կառավարման ազգային և տեղական մարմինները, ինչպես նաև կրթական այլ ենթակառուցվածքները, օրինակ, վերապատրաստման ազգային հաստատությունները, տեղեկատվության փոխանակումը հեշտացնելու համար պետք է ունենան համատեղելի սարքավորումներ: Հատուկ ծրագրային ապահովմամբ բջջային հեռախոսները կարող են բարելավել տվյալների հավաքագրումը, սակայն տեխնոլոգիական սարքավորումների պակասը պետք է խոչընդոտ չհանդիսանա սահմանափակ ռեսուրսներ ունեցող տարածքներում տվյալների հավաքագրման համար:

4. **Սովորողների մշտադիտարկումները** հնարավորության դեպքում պետք է իրականացվեն ինչպես կրթություն ստանալու ընթացքում, այնպես էլ կրթական հաստատությունն ավարտելուց կամ դասընթացը կիսատ թողնելուց հետո: Որակական և քանակական գնահատումների միջոցով իրականացվող մշտադիտարկումները կարող են ներառել, օրինակ՝
   - փոքրահասակ երեխաների մոտ խոշոր և մանր մոտորիկայի, ինչպես նաև իմացական և սոցիալ – հուզական զարգացումը,

- գրագիտության և թվաբանական ունակությունների բարելավումը,
- կյանքի հիմնարար հմտությունների մասին իրազեկումը և կիրառումը,
- գրաճանաչության փուլին հաջորդող ընթերցանության փուլի համար նյութերի հասանելիությունը:

Մշտադիտարկումների միջոցով պետք է վերահսկվեն մասնագիտական կրթություն ստացողների զբաղվածության հնարավորությունները: Սովորողների հետծրագրային մշտադիտարկումները արժեքավոր են ծրագրերի մշակման համար (տե՛ս նաև «Դասավանդում և ուսումնառություն. Ստանդարտ 4»-ը, էջ 126-128 և «Փոքր ձեռնարկությունների ուսուցման և խթանման ցանց»-ի *Տնտեսության հետճգնաժամային վերականգնման նվազագույն ստանդարտները*, «Աշխատատեղերի ստեղծման ստանդարտ»-ը և «Ձեռնարկությունների զարգացման ստանդարտներ»-ը):

Վերլուծության ստանդարտ 4. Ընթացիկ գնահատում

Արդյունքների համակարգված և անկողմնակալ գնահատումները բարելավում են կրթության ոլորտի արձագանքմանն ուղղված միջոցառումները և հաշվետվողականությունը:

Առանցքային գործողություններ (կարդալ ուղղորդող ցուցումներին զուգահեռ)

- Կրթության ոլորտի խնդիրների արձագանքմանն ուղղված միջոցառումների կանոնավոր գնահատումների շնորհիվ ստեղծվում է վստահելի և թափանցիկ տվյալների բազա, որը հիմք է ստեղծում կրթական հետագա միջոցառումների համար (տես ուղղորդող ցուցումներ 1-2-ը):
- Բոլոր շահառուները, այդ թվում՝ տուժած համայնքի և կրթության ոլորտի կառավարման մարմինների ներկայացուցիչները, պետք է ներգրավվեն գնահատման ընթացիկ միջոցառումներում (տես ուղղորդող ցուցում 3-ը):
- Ձեռք բերված փորձը նունպես տեղեկատվություն է տրամադրում շահերի հետագա պաշտպանության, ծրագրերի ու քաղաքականությունների մասին (տես ուղղորդող ցուցում 4-ը):

Ուղղորդող ցուցումներ

1. **Մշտադիտարկումների և գնահատումների տարբերությունը:** Մշտադիտարկումներն ու արդյունքների գնահատումները կրթական ծրագրերի խնդիրները լուծելու և նպատակներին հասնելու հիմնական միջոցներն են: Մշտադիտարկումը շարունակական գործընթաց է, որը պարբերաբար արձանագրում է ձեռքբերումները կրթական ծրագրերի խնդիրների լուծման և նպատակներին հասնելու գործում: Այն թույլ է տալիս կրթական ծրագրեր իրականացնող անձնակազմին փոփոխություններ կատարել ծրագրի կամ նախագծի մեջ՝ ելնելով օրվա հրամայականից:

   Արդյունքների գնահատումները կատարվում են առավել հազվադեպ, սովորաբար՝ ծրագրի կամ նախագծի իրականացման կեսին կամ ավարտին: Դա իրականացվում է արտաքին կամ անկախ դերակատարների կողմից: Դրանց միջոցով գնահատվում են ձեռքբերումների վերջնարդյունքները, ինչպես նաև միջոցառումների ար-

դյունավետությունը և դրանց համապատասխանելիությունը նշված առաջնահերթություններին, քաղաքականություններին և իրավական փաստաթղթերին:

2. **Կրթության ոլորտի խնդիրների արձագանքմանն ուղղված միջոցառումների գնահատումների ընթացքում** պետք է կիրառվեն այնպիսի մոտեցումներ ու մեթոդներ, որոնք ժամանակին վստահելի ապացույցներ են տրամադրում ծրագրի վերջնարդյունքների ու ազդեցությունների վերաբերյալ և կողմնորոշում են, հետագա գործողությունները: «Ազդեցությունն» այն չափելի փոփոխությունն է, որը ծրագրի շնորհիվ տեղի է ունեցել մարդկանց կյանքում: Կարևոր են սեռերին և տարիքին վերաբերող թե որակական, և թե քանակական տվյալները: Քանակական տվյալները վերաբերում են այն ամենին, ինչը կարելի է հաշվել: Դրանց միջոցով չափվում են այնպիսի վերջնարդյունքներ, ինչպիսիք են, օրինակ, ընդգրկվածությունը, հաճախելիությունը, դուրս մնալու հաճախականությունն ու ձեռքբերումները: Որակական տվյալները վերաբերում են այն ամենին, ինչը հաշվելի չէ: Դրանք օգնում են ըմբռնել գործընթացների զարգացումներն ու բացահայտել արդյունքները: Որակական է, օրինակ, տեղեկատվությունն այն մասին, թե ինչ է կատարվում դպրոցներում կամ ուսումնական այլ հաստատություններում, որոնք են ընդգրկվածության, հաճախելիության և դուրս մնալու գործակիցները և դրանց պատճառները (տե՛ս նաև «Վերլուծության ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցում 2-ը, էջ 53-54 և «Համակարգման ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցում 3-ը, էջ 49-50):

3. **Կարողությունների զարգացում գնահատումների միջոցով:** Գնահատումների բյուջեում պետք է նախատեսված լինեն համապատասխան շահառուների, այդ թվում՝ կրթության ոլորտի կառավարման մարմինների, համայնքային ներկայացուցիչների և սովորողների, համար կարողությունների զարգացման վերաբերյալ սեմինարներ անցկացնելու ծախսերը: Այդ սեմինարները կարող են ներկայացնել և բացատրել գնահատման ընթացակարգը, մասնակցային և թափանցիկ եղանակով մշակել գնահատման պլանները, հնարավորություն տալ շահառուներին միասին ուսումնասիրել և մեկնաբանել արդյունքները: Սովորողները, ուսուցիչները և կրթական ոլորտի այլ աշխատակիցներ պետք է ներգրավվեն կրթական գործընթացում, որպեսզի բարելավեն տվյալների հավաքագրման ճշգրտությունը և աջակցեն իրատեսական առաջարկությունների զարգացմանը: Օրինակ, ուսուցիչները և կրթական ոլորտի այլ աշխատակիցները կարող

են վերծուծել առաջարկությունների իրագործման ժամանակ ի հայտ եկած գործնական դժվարությունները (տե՛ս նաև «Վերլուծության ստանդարտ 2»-ը, ուղղորդող ցուցում 2, էջ 61-62, «Վերլուծության ստանդարտ 3»-ը, ուղղորդող ցուցում 2-ը, էջ 68-69, «Կրթության քաղաքականության ստանդարտ 2»-ը, ուղղորդող ցուցում 4-ը, էջ 158-159):

5. **Գնահատման արդյունքների և քաղած դասերի հրապարակում:** Գնահատման հաշվետվությունների հիմնական արդյունքները, մասնավորապես առաջարկություններն ու ձեռքբերված փորձը, պետք է հասկանալի ձևով մատուցվեն բոլորին, այդ թվում՝ համայնքի անդամներին: Նրանք պետք է տեղեկացվեն հետագա աշխատանքների մասին: Գաղտնի տվյալները պետք է օգտագործվեն զգուշությամբ՝ արտակարգ իրավիճակների կամ հակամարտությունների սրումից, ինչպես նաև շահառուներին անանուն կամ գաղտնի տեղեկատվություն տրամադրած տեղեկատուներին ռիսկի ենթարկելուց խուսափելու համար (տե՛ս նաև «Համակարգման ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցում 3-ը և 5-ը, էջ 49-50 և «Կրթության քաղաքականության ստանդարտ 2»-ը, ուղղորդող ցուցում 4-ը, էջ 158):

Այս ստանդարտների իրականացմանն օժանդակող գործիքների համար այցելեք ԱԻԿՄՑ գործիքակազմ՝ www.ineesite.org/toolkit

ԱԻԿՄՑ գործիքակազմ
↳ ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտներ
↳ Իրականացման գործիքներ
↳ Հիմնարար ստանդարտներ

2 ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Հիմնարար չափորոշիչների բաժին. Համայնքային մասնակցություն, համակարգում, վերլուծություն

Հասանելիության և ուսումնական միջավայրի տիրույթ

Ստանդարտ 1 Հավասար հասանելիություն

Բոլոր անձինք ունեն որակյալ և պատշաճ կրթություն ստանալու հնարավորություն:

Ստանդարտ 2 Պաշտպանություն և բարեկեցություն

Ուսումնական միջավայրերն անվտանգ ու ապահով են և նպաստում են սովորողների, ուսուցիչների և կրթության ոլորտի այլ աշխատողների պաշտպանությանն ու հոգեբանասոցիալական բարեկեցությանը:

Ստանդարտ 3 Հաստատություններ և ծառայություններ

Կրթական հաստատությունները նպաստում են սովորողների, ուսուցիչների և կրթության ոլորտի այլ աշխատողների ապահովությանն ու բարեկեցությանը և կապված են առողջապահական, պարենային, հոգեբանասոցիալական և պաշտպանական ծառայությունների հետ:

Ճգնաժամային իրավիճակներում կենսական իրավունք և ռեսուրս հանդիսացող կրթության հասանելիությունը հաճախ չափազանց սահմանափակվում է: Կրթությունը կարևոր դեր է խաղում տուժած մարդկանց կյանքում: Այն օգնում է հաղթահարել ստեղծված իրավիճակը, ինչպես նաև հնարավորություն է տալիս նրանց զգալ, որ կյանքը նորմալ հունի է վերադառնում: Կրթությունը մարդկանց ապահովում է համապատասխան գիտելիքներով ու գոյատևման հմտություններով: Այն կարող է ընձեռել այնպիսի փոփոխությունների հնարավորություններ, որոնք կապահովեն կրթություն ստանալու հավասարությունը և կբարձրացնեն կրթության որակը:

Արտակարգ իրավիճակներից մինչև վերականգնման փուլ ընկած ժամանակահատվածում կրթական միջոցառումների կազմակերպումը հաճախ այնքան էլ դյուրին չէ: Վտանգ կա, որ նոր խոցելի խմբերը չեն կարող կրթություն ստանալ, ինչը և մեծացնում է արտակարգ իրավիճակներում նրանց մեկուսացման ռիսկը: Ազգային իշխանությունները, համայնքները և մարդասիրական կազմակերպությունները պարտավորություն են կրում բոլորի համար հասանելի դարձնել անվտանգ ուսումնական միջավայրերում պատշաճ և որակյալ կրթության ստացումը: Սա ապահովում է սովորողների, ուսուցիչների և կրթական ոլորտի այլ աշխատակիցների ֆիզիկական պաշտպանությունն ու հոգեբանասոցիալական բարեկեցությունը:

Սովորողները, ուսուցիչներն ու կրթական ոլորտի այլ աշխատակիցները շատ հաճախ ուսումնական հաստատություններ գնալու ու այնտեղից վերադառնալու ճանապարհին կամ հենց ուսումնական տարածքներում ենթակա են ֆիզիկական, հոգեբանասոցիալական ռիսկերի: Կրթական ծրագրերն արտակարգ իրավիճակներից մինչև վերականգնման փուլ ընկած ժամանակահատվածում կարող են ապահովել ֆիզիկական և հոգեբանասոցիալական պաշտպանություն: Ժամանակավոր և մշտական կրթական հաստատությունները, այդ թվում՝ դպրոցները, ուսումնական, ինչպես նաև երեխաների համար նախատեսված տարածքները, պետք է տեղակայված, նախագծված և կառուցված լինեն այնպես, որ դիմակայեն բոլոր հնարավոր վտանգներին:

Առավել անվտանգ ուսումնական հաստատություններն ապահովում են կրթության շարունակականությունը, նվազագույնի հասցնելով ուսուցման և ուսումնառության խափանումը: Դրանք կարող են դառնալ համայնքային միջոցառումների կենտրոններ և վճռորոշ ծառայություններ մատուցել աղքատության, անգրագիտության և աղետների նվազեցման գործում: Այնտեղ, որտեղ նախքան արտակարգ իրավիճակը կրթությու-

նը կարող էր լինել տարբերակված, առավել ապահով և անաչառ կրթության ապահովումը կարևոր ներդրում կլինի խաղաղության հաստատման գործում:

Խտրականության պատճառով ոչ ոք չպետք է զրկվի կրթության և ուսման հնարավորություններից: Ծրագրերը պետք է տրամադրեն ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական ծառայություններ՝ կրթության իրավունքն իրացնելու և կրթության հասանելիության խոչընդոտները նվազեցնելու նպատակով: Կրթական ծառայություններ մատուցողները պետք է զգոն լինեն հատկապես գենդերային խտրականությունների դրսևորման, ինչպես նաև տղաներին ու աղջիկներին սպառնացող տարբեր ռիսկերի նկատմամբ: Անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել վերոնշյալ ռիսկերը նվազագույնի հասցնելու համար: Խտրականության համար պատճառ կարող են հանդիսանալ, օրինակ, դպրոցի վարձավճարները, լեզվական ու ֆիզիկական խոչընդոտները, որոնք կարող են խանգարել կրթական գործընթացում որոշակի խմբերի ընդգրկմանը:

Հասանելիության և ուսումնական միջավայրի ստանդարտ 1. Հավասար հասանելիություն

Բոլոր անձինք որակյալ և պատշաճ կրթություն ստանալու իրավունք ունեն:

Առանցքային գործողություններ (կարդալ ուղղորդող ցուցումներին զուգահեռ)

- Խտրականության պատճառով ոչ ոք կամ ոչ մի սոցիալական խումբ պետք է զրկված չլինի կրթություն ստանալու և ուսումնառության հնարավորությունից (տես ուղղորդող ցուցում 1-ը):
- Ուսուցման համար նախատեսված կառույցները և վայրերը պետք է հասանելի լինեն բոլորի համար (տես ուղղորդող ցուցում 1-ը):
- Պետք է վերացնել ուսումնական գործընթացում ներառվելու խոչընդոտները, օրինակ, գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերի բացակայությունը (տես ուղղորդող ցուցումներ 2-ը և 4-ը):
- Կրթական կարիքները բավարարելու համար տուժած բնակչությանը աստիճանաբար տրամադրում են ճկուն, ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության մի շարք հնարավորություններ (տես ուղղորդող ցուցումներ 3-5-ը):
- Իրազեկության բարձրացման և վերապատրաստման միջոցով տեղական համայնքներն ավելի ու ավելի են ներգրավվում բոլոր երեխաների, երիտասարդների ու մեծահասակների որակյալ և պատշաճ կրթության իրավունքի ապահովման գործում (տես ուղղորդող ցուցումներ 6-7-ը):
- Առկա են ռեսուրսներ, որոնք ապահովում են կրթական միջոցառումների շարունակականությունը, անաչառությունը և որակը (տես ուղղորդող ցուցում 8-ը):
- Սովորողները հնարավորություն ունեն արտակարգ իրավիճակի հետևանքով առաջացած խաթարումներից հետո հնարավորինս շուտ մուտք գործել կամ վերադառնալ ֆորմալ կրթական համակարգ (տես ուղղորդող ցուցում 9-ը):
- Փախստականների առկայության համատեքստում կրթական ծրագրերն ընդունվում են կրթության ոլորտի կառավարման տեղական, ինչպես նաև փախստականների հայրենի երկրի համապատասխան մարմինների կողմից:

- Աղետից տուժած բնակչությանը մատուցվող կրթական ծառայությունները չպետք է բացասաբար ազդեն ընդունող բնակչության վրա:

Ուղղորդող ցուցումներ

1. **Խտրականություն ասելով ենթադրվում են** այն խոչընդոտները, որոնք կապված են սեռի, տարիքի, հաշմանդամության, ՄԻԱՎ կարգավիճակի, ազգության, ռասայի, ցեղի, տոհմի, կաստայի, կրոնի, լեզվի, մշակույթի, քաղաքական պատկանելության, սեռական կողմնորոշման, սոցիալ-տնտեսական ծագման, աշխարհագրական դիրքի կամ հատուկ կրթական կարիքների հետ: Խտրականությունը կարող է դրսևորվել կանխամտածված: Այն կարող է դրսևորվել նաև ոչ կանխամտածված այն դեպքերում, երբ հաշմանդամություն ունեցող մարդկանց համար ենթակառույցների կամ քաղաքականություններիգործելակերպերը չեն նպաստում սովորողների մասնակցությանը: Խտրականության դրսևորման օրինակներ կարող են լինել հղի աղջիկների կամ ՄԻԱՎ կարգավիճակ ունեցող սովորողների համար դպրոց հաճախելու արգելքը կամ դպրոցի, համազգեստի, գրքերի և այլ պարագաների համար վարձավճարները:

   Արտակարգ իրավիճակներում առանձին խմբեր կամ անձինք կարող են կրթության հասանելիության հետ կապված դժվարություններ ունենալ: Ոմանք արտակարգ իրավիճակների և տեղահանման արդյունքում կարող են ավելի խոցելի դառնալ: Այդ խմբերում կարող են ընդգրկված լինել.

   - ֆիզիկական և հոգեկան հաշմանդամություն ունեցող մարդիկ,
   - հոգեկան ծանր հաշմանդամություն ունեցող և հոգեբանասոցիալական բարդույթներով տառապող մարդիկ,
   - աղջիկներ,
   - երիտասարդներ,
   - զինված ուժերի և խմբավորումների հետ առնչություն ունեցող երեխաներ,
   - առանց ծնողների մնացած դեռահասեր,
   - անչափահաս մայրեր,
   - որոշակի էթնիկ կամ սոցիալական այլ խմբերի պատկանող անձինք:

   Ազգային իշխանությունները, համայնքները և մարդասիրական կազմակերպությունները պատասխանատու են կրթական միջոցա-

ռումները բոլորին հասանելի դարձնելու համար: Սա նշանակում է կրթությունից դուրս մնացած խմբերի և որոշակի համատեքստում կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցողների առաջնահերթությունների ու կարիքների գնահատում և արձագանքում: Պետք է բացահայտել ուսման հնարավորությունների հասանելիությունը սահմանափակող խտրական քաղաքականություններն ու գործելակերպերը հասանելիությունը վերականգնելու նպատակով: Կրթության անհասանելիությունը առանձին էթնիկ, լեզվական, աշխարհագրական կամ տարիքային խմբերի համար կարող է ստեղծել լարվածություններ կամ պահպանել դրանք՝ հանգեցնելով հակամարտության:

Մշակութային տնտեսական, սոցիալական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (1966 թ.) ճշգրտում է կրթության իրավունքի էությունը.

- Հոդված 2-ը ճանաչում է «կրթության իրավունքն առանց որևէ խտրականության, այն է՝ անկախ ռասայից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, գույքային դրությունից կամ այլ կարգավիճակից»:
- Հոդված 13-ը ճանաչում է յուրաքանչյուրի կրթության իրավունքը, որը «պետք է ուղղված լինի անձի և սեփական արժանապատվության զգացումի համակողմանի զարգացմանը և մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի ամրապնդմանը»: Կրթությունը պետք է բոլորին հնարավորություն ընձեռի արդյունավետ մասնակցություն ունենալ ազատ հասարակական կյանքին, նպաստի ազգերի, ռասայական, էթնիկ կամ կրոնական խմբերի միջև փոխըմբռնմանը, հանդուրժողականությանն ու բարեկամությանը, իսկ այնուհետև՝ Միավորված ազգերի կազմակերպության խաղաղապահ գործունեությանը»:

Հոդված 13-ը նաև պարտավորեցնում է երկրներին ընդունել, որ սույն օրենքի լիարժեք իրականացման նպատակով «1) տարրական կրթությունը պետք է բոլորի համար պարտադիր և անվճար լինի, 2) միջնակարգ կրթությունն իր տարբեր ձևերով, այդ թվում՝ արհեստագործական և միջին մասնագիտական կրթությունը, բոլոր համապատասխան միջոցներով, մասնավորապես՝ անվճար կրթության աստիճանական ներդրմամբ, պետք է բոլորի համար մատչելի և հասանելի դառնա, 3) հիմնարար կրթությունը պետք է հնարավո-

րինս խրախուսվի կամ ամրապնդվի այն անձանց համար, ովքեր չեն ստացել ամբողջական կամ մասնակի տարրական կրթություն » (տես նաև «Կրթության քաղաքականության ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցումներ 1-ը և 7-ը, էջ 151-152 և 156, ինչպես նաև «Կրթության քաղաքականության ստանդարտ 2»-ը, ուղղորդող ցուցում 3-ը, էջ 158):

2. **Սովորողների ընդունելությունը, հաճախումները և պահպանում:** Փաստաթղթերի ձևակերպման պահանջները պետք է ճկուն լինեն: Ընդունվելու համար պարտադիր չէ պահանջել քաղաքացիության, ծննդյան վկայականներ կամ անձի ինքնությունը հաստատող այլ փաստաթղթեր, դպրոցական հաշվետվություններ, քանի որ արտակարգ իրավիճակներից տուժած բնակչությունը կարող է չունենալ նշված փաստաթղթերը: Պետք չէ խստորեն կիրառել տարիքային սահմանափակումներ այն պայմանով, որ պաշտպանության և մշակութային նորմերը հարգվելու են: Ուսումն անավարտ թողած աշակերտներին պետք է դասերին հաճախելու երկրորդ հնարավորություն տրվի: Առավել խոցելի անձանց բացահայտելու և վերջիններիս ներառելու գործում պահանջվում են հատուկ ջանքեր: Անվտանգության հետ կապված մտահոգությունների դեպքում փաստաթղթերի ձևակերպման և գրանցման մասին տեղեկատվությունը պետք է գաղտնի պահվի (ստորև տես նաև ուղղորդող ցուցում 4-ը, «Կրթության քաղաքականության ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցումներ 1-ը, 2-ը և 7-ը, էջ 151-156 և «Կրթության քաղաքականության ստանդարտ 2»-ը, ուղղորդող ցուցում 1-ը, էջ 157):

3. **Կրթության հնարավորությունները**: Անհրաժեշտ է նպաստել սովորողների կրթական կարիքների բավարարման ու պետության տնտեսական, սոցիալական և քաղաքական զարգացման գործընթացին: Կրթության հնարավորությունները պետք է համապատասխանեն ոչ միայն սովորողների կարիքներին այլ նաև տեղական համատեքստին: Այդ հնարավորությունները ենթադրում են .
   - վաղ մանկական զարգացում,
   - տարրական, միջնակարգ և բարձրագույն կրթություն,
   - գրագիտության և թվաբանության դասեր,
   - կյանքի հմտությունների ուսուցում,
   - կրթական ծրագրեր (օրինակ՝տեխնիկական և մասնագիտական կրթություն) երիտասարդների և մեծահասակների համար:

   Հաճախ սուր ճգնաժամերին արձագանքելու համար առաջին հերթին ստեղծվում են երեխաների համար հարմար և ապահով տարածք-

ներ, մինչ կհիմնվեն կամ կրկին կգործարկվեն ֆորմալ կրթության հաստատությունները: Նման տարածքների ստեղծումը նպատակ է հետապնդում պաշտպանել երեխաներին և երիտասարդներին և նպաստել նրանց բարեկեցությանը: Որոշ դեպքերում կրթական ծրագրերը երեխաներին և երիտասարդներին նախապատրաստում են ֆորմալ դասարաններ վերադառնալուն, իսկ այլ դեպքերում թույլ են տալիս վերջիններիս մասնակցել ոչ-ֆորմալ կրթական միջոցառումներին: Այդ ծրագրերը տարիքային տարբեր խմբերի (մանկահասակ երեխաներ, երիտասարդներ) համար ապահովում են համակարգված ուսուցման, խաղերի, սպորտի, դրամատուրգիայի, արվեստի, երաժշտության, պաշտպանության և հոգեբանական աջակցության հասանելիությունը: Երեխաների համար նախատեսված տարածքները թույլ են տալիս համայնքի անդամներին, մարդասիրական կազմակերպություններին և կառավարության ներկայացուցիչներին գնահատել ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության կարիքները և կարողությունները, ինչպես նաև համատեղել տեղական նախաձեռնությունները և աջակցել դրանց:

4. **Ճկունություն:** Ուսուցման հնարավորությունները պետք է լինեն ճկուն և համատեքստին հարմարեցված: Կարող են նախատեսվել հետևյալ հարմարեցումները.
   - սովորողների որոշակի խմբերի կարիքները բավարարելու համար դասացուցակների, ժամերի, հերթափոխերի և տարեկան ժամանակացույցի փոփոխություններ,
   - ուսուցման այլընտրանքային եղանակներ, ինչպիսիք են՝ ինքնուսուցումը, հեռահար ուսուցումը, արագացված կամ լրացուցիչ ուսումնական ծրագրերը,
   - երեխաների խնամքին ուղղված ծառայությունների մատուցում երիտասարդ ծնողների համար,
   - ծննդյան վկայական կամ անձը հաստատող այլ փաստաթղթեր ներկայացնելու պահանջի անտեսում (տես նաև վերոնշյալ ուղղորդող ցուցում 2-ը):

Նման հարմարեցումները պետք է քննարկվեն համայնքի անդամների՝ երիտասարդների, կանանց և այլոց հետ, ովքեր հակառակ դեպքում կարող էին չներառվել: Հավաստիանալու համար, որ առաջարկվող հարմարեցումները կընդունվեն, հարկավոր է ներգրավել կրթության ոլորտի կառավարման համապատասխան մարմիններին: Տարածքային առումով ովորողների սփռվածությանպարագայում

դպրոցները և ուսումնական այլ վայրերը կարող են քարտեզագրվել՝ կրթական մի շարք հնարավորություններից օգտվելն առավել ծախսարդյունավետ դարձնելու նպատակով (տե՛ս նաև «Կրթության քաղաքականության ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցում 7-ը, էջ 156 և «Կրթության քաղաքականության ստանդարտ 2»-ը, ուղղորդող ցուցում 1-ը, էջ 157):

5. **Կրթության առաջնահերթ գերակայությունները** պետք է հիմնված լինեն փորձագետների նախնական գնահատման վրա: Կարևոր է հաշվի առնել հետևյալը.
   - ըստ սեռի և տարիքի տարանջատված տվյալները,
   - խոցելիության և պաշտպանության հետ կապված մտահոգությունները,
   - որոշակի համատեքստային կարիքներ, օրինակ՝ կյանքի համար կարևոր տեղեկատվությունը,
   - կրթական համակարգի վերակազմավորմանն առնչվող կապերը:

   Առաջնահերթությունների սահմանման ժամանակ կարող են դիտարկվել նաև ֆինանսավորման, նյութատեխնիկական, անվտանգության սահմանափակումները, սակայն դա չպետք է հանգեցնի խոցելի խմբերի անտեսմանը (տե՛ս նաև «Վերլուծության ստանդարտ 1»-ը, էջ 52-59, «Դասավանդման և ուսումնառության ստանդարտ 1»-ը, էջ 109-117 և «Կրթության քաղաքականության ստանդարտ 1-2»-ը, էջ 150-160):

6. **«Որակյալ» և «պատշաճ» կրթություն:** Այս եզրույթների սահմանումները տե՛ս էջ 173-174-ի եզրույթների բացատրական բառարանում:

7. **Համայնքի ներգրավվածություն:** Կրթության հասանելիությանն աջակցելու համար համայնքը պետք է ակտիվորեն ներգրավված լինի կրթական գործընթացներում: Համայնքի ներգրավումն օգնում է.
   - անդրադառնալ հաղորդակցության բացերին,
   - հավաքագրել հավելյալ ռեսուրսներ,
   - անդրադառնալ անվտանգության, պաշտպանության և սոցիալ-հոգեբանական խնդիրներին,
   - վերհանել այլընտրանքային ուսման հնարավորությունների կարիքները,
   - խթանել բոլոր համապատասխան, մասնավորապես, խոցելի

խմբերի մասնակցությունը:

(«Մասնակցություն» բառի սահմանումը տես նաև էջ 172-ի եզրույթների բացատրական բառարանում, «Համայնքային մասնակցության ստանդարտ 1-2»-ում, էջ 34-46 և «Դասավանդման և ուսումնառության ստանդարտ 3»-ում, ուղղորդող ցուցում 2-ում, էջ 124):

8. **Ռեսուրսներ:** Կրթության ապահովման վերջնական պատասխանատվությունը կրում են ազգային իշխանությունները: Սա ենթադրում է բավարար ֆինանսական, նյութական և մարդկային ռեսուրսների համակարգումն ու ապահովումը: Եթե ազգային իշխանություններն արտակարգ իրավիճակի և վերականգնման փուլի միջև ընկած ժամանակահատվածում ի վիճակի չեն լիովին աջակցել կրթության ոլորտին, ապա աջակցությունը կարող է տրամադրվել այլ աղբյուրներից: Դրանք են միջազգային հանրությունը, ՄԱԿ-ի գործակալությունները, միջազգային և տեղական ՀԿ-ները, տեղական իշխանությունները, համայնքները, կրոնական կազմակերպությունները, քաղաքացիական հասարակության խմբերը և զարգացման գործունեությամբ զբաղվող այլ գործընկերները: Դոնորները պետք է լինեն ճկուն և աջակցեն մի շարք համակարգված մոտեցումների՝ կրթության և ուսման նախաձեռնությունների շարունակականությունն ապահովելու համար (տես նաև «Համայնքային մասնակցության ստանդարտ 2»-ը, ուղղորդող ցուցում 1-ը, էջ 43 և «Վերլուծության ստանդարտ 2»-ը, ուղղորդող ցուցումներ 1-ը և 5-ը, էջ 60-64):

9. **Նվազագույնի հասցնել ուսումնական հաստատությունների օգտագործումը որպես ժամանակավոր կացարաններ:** Ուսումնական հաստատությունները որպես ապաստան պետք է օգտագործվեն միայն այն դեպքերում, երբ տեղահանված մարդկանց համար այլ հնարավորություններ չկան: Արտակարգ իրավիճակներում կամ աղետի դեպքում ապաստանելու այլընտրանքային վայրերը պետք է սահմանվեն պատրաստվածությունը պլանավորելու ընթացքում:

   Ուսումնական հաստատությունների՝ որպես ժամանակավոր կացարաններ օգտագործման դեպքում, կացարանների տրամադրման և պաշտպանության հարցերով զբաղվող ոլորտների համագործակցությունը կարող է նվազագույնի հասցնել բացասական ազդեցությունները և պաշտպանությանը սպառնացող հնարավոր ռիսկերը: Շահառուները պետք է համաձայնություն ձեռք բերեն ուսումնական հաստատությունները սկզբնական գործառույթին վերադարձնելու ժամկետի շուրջ: Սա հնարավորություն կտա նվազեցնել ուսումնառության խաթարումները և ուսումնական հաստատությունում

ապաստան գտած ընտանիքներին հնարավորինս շուտ ապահովել կացարաններով:

Ուսումնական հաստատությունների՝ որպես ժամանակավոր կացարաններ օգտագործման դեպքում, անհրաժեշտ է պահպանել դպրոցական գույքը. գրքերը, գրադարանները, կահույքը, դպրոցական մատյանները և զվարճանքի համար նախատեսված սարքավորումները: Անհրաժեշտ է ուսումնական հաստատությունները վերադարձնել օգտագործելի վիճակի: Հնարավորության սահմաններում շահառուները պետք է բարելավեն ուսումնական հաստատությունների վիճակը: Օրինակ. կարելի է վերանորոգել սանհանգույցները, ամրակայել շինությունները (տես նաև «Հասանելիության և ուսումնական միջավայրի ստանդարտ 3»-ը, ուղղորդող ցուցումներ 4-6-ը, էջ 101-102 և «Կրթության քաղաքականության ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցում 3-ը, էջ 153-154):

Հասանելության և ուսումնական միջավայրի ստանդարտ 2. Պաշտպանություն և բարեկեցություն

Ուսումնական միջավայրերը պետք է լինեն անվտանգ ու ապահով և նպաստեն սովորողների, ուսուցիչների և կրթական ոլորտի այլ աշխատողների պաշտպանությանը և հոգեբանասոցիալական բարեկեցությանը:

Առանցքային գործողություններ (կարդալ ուղղորդող ցուցումներին զուգահեռ)

- Ուսումնական միջավայրը պետք է զերծ լինի սովորողներին, ուսուցիչներին և կրթական ոլորտի այլ աշխատակիցներին վնաս սպառնացող աղբյուրներից (տես ուղղորդող ցուցումներ 1-ը և 3-4-ը):
- Ուսուցիչները և կրթական ոլորտի այլ աշխատակիցները պետք է ձեռք բերեն հմտություններ և գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են ուսումնառության բարենպաստ միջավայր ստեղծելու և սովորողների հոգեբանասոցիալական բարեկեցությունը խթանելու համար (տես ուղղորդող ցուցումներ 2-3-ը և 8-9-ը):
- Դպրոցները, ուսմուցման համար նախատեսված ժամանակավոր, ինչպես նաև երեխաների համար նախատեսված տարածքները պետք է մոտ գտնվեն սպասարկվող բնակչությանը (տես ուղղորդող ցուցումներ 5-6-ը):
- Ուսումնական վայր տանող ուղիները պետք է լինեն ապահով, անվտանգ և բոլորի համար մատչելի (տես ուղղորդող ցուցումներ 5-7-ը):
- Կրթական հաստատությունները պետք է տեղակայվեն այնպիսի վայրերում, որոնք օկուպացված չեն և զերծ են հարձակումների ենթարկվելու վտանգից (տես ուղղորդող ցուցումներ 1-3-ը և 6-7-ը):
- Համայնքը պետք է նպաստի կրթավայրի և սովորողների, ուսուցիչների և կրթական ոլորտի այլ աշխատակիցների ապահովությունն ու անվտանգությունն ապահովող համակարգերի և քաղաքականությունների վերաբերյալ որոշումների կայացմանը (տես ուղղորդող ցուցումներ 1-ը և 10-ը):
- Ուսումնական միջավայրերի անվտանգությունը պետք է պահպանվի աղետների ռիսկերի նվազեցման և կառավարման միջոցառումների միջոցով (տես ուղղորդող ցուցում 11-ը):

Ուղղորդող ցուցումներ

1. **Անվտանգություն և ապահովություն:** Անվտանգ ուսումնական միջավայրը պետք է ապահովի պաշտպանությունը սպառնալիքներից, վտանգներից, վնասվածքներից և կորուստներից: Ապահով միջավայրը պետք է զերծ լինի ֆիզիկական կամ հոգեբանասոցիալական սպառնալիքներից (տե՛ս նաև էջ 175 եզրույթների բացատրական բառարանը):

   Ազգային իշխանությունները պարտավորություն են կրում անվտանգության ապահովման համարել: Սա ենթադրում է բավարար և որակյալ ոստիկանական ծառայությունների տրամադրում և զորքերի տեղակայում անհրաժեշտության դեպքում: Եթե մշտական կրթավայրերն անվտանգ չեն կամ ընդհանրապես գոյություն չունեն, ապա պետք է սահմանվեն ապահով և անվտանգ այլընտրանքային վայրեր և ուսուցման եղանակներ: Նման հանգամանքներում հնարավոր տարբերակներ կարող են լինել տնային կամ հեռահար ուսուցման ձևերը: Վտանգավոր իրավիճակներում համայնքը պետք է որոշում կայացնի սովորողների դպրոց հաճախելու կամ չհաճախելու մասին: Ուսումնական հաստատությունները երբեք չպետք է օգտագործվեն անվտանգության ուժերի կողմից որպես ժամանակավոր կայանման վայրեր (անվտանգության համար ստորև տե՛ս նաև ուղղորդող ցուցումներ 5-7-ը, ապահովության համար ստորև տե՛ս նաև ուղղորդող ցուցումներ 2-4-ը, 8-9-ը և 11-ը, տե՛ս նաև «Կրթության քաղաքականության ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցում 1-ը, էջ 151):

2. **Կրթական գործընթացում մասնակիցների հուզական, ֆիզիկական և սոցիալական բարեկեցությունը** կախված է.
   - անվտանգության ապահովումից և պաշտպանությունից,
   - առողջական վիճակից,
   - կրթական ծառայություններ մատուցողների և սովորողների, ինչպես նաև սովորողների միջև ուրախ և ջերմ փոխհարաբերություններից

   Ամենավաղ տարիքից երեխաների զարգացումն ու ուսուցումը պետք է ընթանա ապահով, անվտանգ, բարենպաստ միջավայրում իրենց մասին հոգ տանողների հետ փոխգործունեության միջոցով: Սովորողների բարեկեցությունն ապահովող միջոցառումները կենտրոնանում են կայուն զարգացման, սոցիալական դրական փոխհարաբերությունների և քաջառողջության ամրապնդման վրա: Նման միջոցառումները խրախուսում են սովորողների մասնակցությունը իրենց

վերաբերող որոշումների կայացման գործում: Մասնակցելով խնդիրների լուծման, որոշումների կայացման և ռիսկերի նվազեցման գործընթացներին, երեխաներն ու երիտասարդներն իրենց ավելի օգտակար են զգում և կարող են նպաստել իրենց իսկ արեկեցությանը: Եթե ծնողներն ի վիճակի չեն տանը ապահովել իրենց երեխաների բարեկեցությունը, ապա այլոց օգնության կարիք է զգացվում: Օգնություն կարող է հանդիսանալ, օրինակ, համապատասխան ծառայությունների (առկայության դեպքում) ուղեգրումը (տե՛ս նաև «Հասանելիության և ուսումնական միջավայրի ստանդարտ 3»-ը, ուղղորդող ցուցում 8-ը, էջ 103-104):

3. **Պաշտպանություն:** «Պաշտպանություն» նշանակում է ազատել մարդկանց ֆիզիկական, հուզական և սոցիալական բոլոր սպառնալիքներից, դաժան վերաբերմունքից, շահագործումներից և բռնություններից: Սովորողները, ուսուցիչները և կրթական ոլորտի այլ աշխատակիցները պետք է տեղեկացված և պաշտպանված լինեն ուսումնական միջավայրում և դրա շրջակայքում առկա վտանգներից:

   Վտանգ են համարվում.

   - ծաղրանքը,
   - սեռական շահագործումը,
   - բնական և բնապահպանական վտանգները,
   - զենքը զինամթերքը, ականները և չպայթած զինամթերքը,
   - զինված խմբերը, փոխհրաձգության վայրերը և ռազմական այլ սպառնալիքները, ինչպես նաև առևանգումը և հավաքագրումը,
   - քաղաքական անկայունությունը:

   Ռիսկերի գնահատումը, ինչպես նաև համայնքի անդամների, սովորողների, ուսուցիչների և կրթական ոլորտի այլ աշխատակիցների հետ խորհրդակցությունները, կարևոր նշանակություն ունեն պաշտպանության կարիքներն ու առաջնահերթությունները սահմանելու համար: Այս գնահատումները պետք է կատարվեն պարբերաբար և ներառեն համապատասխան մշակութային և քաղաքական գործոնների վերլուծությունը (տե՛ս նաև «Վերլուծության ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցումներ 2-3-ը, էջ 53-51):

   Պաշտպանության ոլորտում տեղի ունեցած խախտումները, պետք է գաղտնիաբար փաստաթղթավորվեն և դրանց մասին պետք է զեկուցվի: Նախընտրելի է այս գործընթացն իրականացնել մարդու իրավունքների մշտադիտարկման հարցերով վերապատրաստում անցած մարդկանց աջակցությամբ: Պետք է արձանագրել միջադե-

պի մասին առանցքային տեղեկատվությունը, նշելով թիրախ հանդիսացած անձի սեռը, տարիքը և այն հատկանիշները, որոնք կարող էին միջադեպի պատճառ հանդիսանալ: Նման տեղեկատվությունը կարևոր է օրինաչափությունները բացահայտելու համար, և խնդրին արձագանքելու նպատակով կարող է անհրաժեշտ լինել արդյունավետ միջամտություն կազմակերպելու համար: Խախտումների մասին զեկույցների արձագանքները նույնպես պետք է փաստաթղթավորվեն, ներառելով առողջապահական, պաշտպանության և հոգեբանասոցիալական ծառայությունների ուղեգրումները:

Այն միջավայրերում, որտեղ սովորողների, ուսուցիչների և կրթական ոլորտի այլ աշխատակիցների ֆիզիկական և հոգեբանասոցիալական ապահովության դեմ ուղղված բռնությունները և այլ սպառնալիքներն ընդհանուր բնույթ են կրում, շատ կարևոր է ընտանիքիների և համայնքների ներգրավումը տներում և համայնքում ապահովությունն ամրապնդելու գործում: Այդ գործունեությունները կարող են ներառել.

- ծնողների և տարեցների համար տեղեկատվական քարոզարշավների կազմակերպումերեխաների դաստիարակության դրական մեթոդների, ինչպես նաև կարգապահական դրական վարվելակերպի ամրապնդման նպատակով,
- ոստիկանական կամ անվտանգության այլ ուժերի հետ տեղեկատվաքարոզչական աշխատանքներ համայնքում պաշտպանության հետ կապված մտահոգությունների վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով,
- համայնքների և պատկան մարմինների հետ համագործակցություն՝ պաշտպանությանն առնչվող որոշակի մտահոգություններին անդրադառնալու նպատակով, ինչպես օրինակ, դպրոց գնալու և դպրոցից վերադառնալու ճանապարհին սովորողների ուղեկցման կազմակերպում:

(Տես նաև «Կրթության քաղաքականության ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցում 1-ը, էջ 151-152):

4. **Գենդերային բռնությունը** (բացատրությունը տե՛ս էջ 167-ի տերմինների բացատրական բառարանում), մասնավորապես, սեռական բռնությունը, պաշտպանության առումով, կյանքին սպառնացող լուրջ խնդիր է: Այն կարող է վերաբերել տղամարդկանց և տղաներին, բայց առավել հաճախ գենդերային բռնություն իրականացվում է կանանց և աղջիկների նկատմամբ: Կրթական ծրագրերը պետք է մշ-

տադիտարկվեն և արձագանքեն ոտնձգությունների և սեռական շահագործման խնդիրներին: Ծնողները, սովորողները, ուսուցիչները և կրթական ոլորտի այլ աշխատակիցները պետք է համաձայնության գան ուսումնական հաստատություններ տանող ճանապարհների վրա, ինչպես նաև վերջիններիս տարածքում գտվնող երեխաներին և երիտասարդներին սպառնացող ռիսկերի նվազեցման միջոցների հարցում: Միջոցներ կարող են հանդիսանալ.

- սեռական ոտնձգության, շահագործման, դաժան վերաբերմունքի և գենդերային այլ բռնությունների դեմ հստակ կանոնների մշակումը և հրապարակումը,
- այդ կանոնների ներառումը ուսուցիչների և կրթական ոլորտի այլ աշխատակիցների վարքագծի կանոնագրքերում: Նրանք պետք է գիտակցեն, թե որ վարքագծերն են անընդունելի,
- ուսումնական միջավայրում չափահաս կանանց թվի ավելացումը իգական սեռին պատկանող սովորողների պաշտպանությունն ու հանգստությունն ապահովելու համար: Եթե տղամարդ և կին ուսուցիչների թվաքանակը հավասարակշռված չի լինում, ապա համայնքի կանայք կարող են դառնալ դասարանի կամավոր օգնականներ՝ երեխաների համար առավել պաշտպանված միջավայր ստեղծելու համար:

Գենդերային բռնությունների դեպքում գաղտնի և ապահով զեկույցները, բողոքները և արձագանքման համակարգերը կարևորվում են: Այս միջոցառումների իրականացմանը կարող են աջակցել ազգային իշխանությունները կամ անկախ կազմակերպությունները, որոնք քաջատեղյակ են գենդերային բռնությունների մասին: Պատշաճ առողջապահական, հոգեբանասոցիալական, պաշտպանական և դատական աջակցությունը լավ համակարգված ուղեգրման համակարգում պետք է հասանելի լինի գենդերային բռնությունն վերապրածներին (ստորև տե՛ս նաև ուղղորդող ցուցում 9-ը, «Ուսուցիչների և կրթական ոլորտի այլ աշխատակիցների ստանդարտ 2»-ը, ուղղորդող ցուցում 3-ը, էջ 141-142 և «Կրթության քաղաքականության ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցում 1-ը, էջ 151):

5. **Սովորողների բնակավայրերի և ուսումնական հաստատությունների միջև առավելագույն հեռավորությունը** պետք է սահմանվի համաձայն տեղական և ազգային ստանդարտների: Կարևոր է հաշվի առնել անվտանգության, ապահովության և հասանելիության հետ կապված մտահոգությունները, ինչպես օրինակ, զինվորական ստորաբաժանումների տեղակայումը, ականապատված տարածք-

ները և մերձակայքում խիտ թփուտների առկայությունը: Սովորողները, ծնողները և համայնքի մյուս անդամները պետք է խորհրդատվություն ստանան ուսումնառության վայրերի և վտանգ ներկայացնող հնարավոր տեղանքների վերաբերյալ: Մինչև դպրոց ընկած մեծ հեռավորությունների դեպքում է, ինչը նվազեցնում է հասանելիությունը, խրախուսվում է լրացուցիչ դասարանների (մասնաճյուղերի) ստեղծումը սովորողների տներին մոտ գտնվող վայրերում (տե՛ս նաև վերոնշյալ ուղղորդող ցուցում 3-ը և ստորև նշված ուղղորդող ցուցումներ 6-7-ը):

6. **Երթուղիներ:** Սովորողների, ուսուցիչների և կրթական անձնակազմի համար ապահով և անվտանգ երթուղիներ ապահովելու նպատակով համայնքները, մասնավորապես, համայնքի տարբեր տարիքային խմբերի տղաները և աղջիկները, պետք է բացահայտեն սպառնալիքները և համաձայնության գան դրանց չեզոքացման միջոցների շուրջ: Օրինակ, եթե դեպի ուսումնական հաստատություններ տանող ճանապարհները վատ են լուսավորված, ապա սովորողների անվտանգությունը կարելի է ապահովել չափահասների ուղեկցությամբ կամ նրանց հագուստի և պայուսակների վրա լուսարձակներ կամ լուսարձակող ժապավեններ ամրացնելով (տե՛ս նաև վերոնշյալ ուղղորդող ցուցում 3-ը և ստորև նշված ուղղորդող ցուցում 7-ը, «Համայնքային մասնակցության ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցումներ 2-5-ը, էջ 36-40 և «Կրթության քաղաքականության ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցում 1-ը, էջ 151):

7. **Կրթական միջավայրի անվտանգությունը:** Երբեմն սովորողները, ուսուցիչները և կրթական ոլորտի այլ աշխատակիցներ ուսումնական հաստատությունների ճանապարհին ենթարկվում են ֆիզիկական և հոգեբանասոցիալական ռիսկերի: Այդ ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումներից նշենք հետևյալը.
   - ուսումնական ծրագրերի հարստացում՝ անվտանգության, հոգեբանասոցիալական աջակցության, մարդու իրավունքների, հակամարտությունների կարգավորման, խաղաղության ամրապնդման և մարդասիրական իրավունքի վերաբերյալ թեմաների ընդգրկմամբ,
   - հանրային իրազեկվածության բարձրացում Ժնևյան կոնվենցիաների և Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրության բովանդակության նշանակության և կիրառման մասին, համաձայն որոնց պատերազմի ժամանակ արգելվում են քաղաքացիական անձանց (այդ թվում՝ ուսանողների և ուսուցիչների)

դեմ ուղղված, ինչպես նաև ուսումնական մասնաշենքերի գրոհումները,

- կառավարական և ռազմական դատական համակարգերի, զինված ուժերի և զինված խմբավորումների կարողությունների զարգացում, հիմնվելով մարդասիրական իրավունքի և կրթության ոլորտի պաշտպանության համար վերջինիս կիրառման հիմնական սկզբունքների վրա,
- ուսումնական շենքերի կամ դրանց արտաքին պատերի ամրացում, պահակախմբերի (վճարովի կամ համայնքի կամավորներ) տրամադրում
- ուսուցիչների ապահովումը բնակարաններով ուսումնական հաստատությունների տարածքում,
- ուսումնական վայրերի և վտանգի ենթակա ուսանողների, ուսուցիչների և կրթական ոլորտի այլ աշխատակիցների վերատեղաբաշխում,
- տնային և համայնքահեն դպրոցների հիմնում:

Ելնելով համատեքստից և անվտանգության խնդիրներից, համայնքները կամ համայնքային կրթության հանձնախմբերը կարող են ստանձնել դպրոցների պաշտպանության պատասխանատվությունը: Օրինակ, նրանք կարող են տրամադրել ուղեկցորդներ կամ հայտնաբերել համայնքային կամ հոգևոր վստահելի առաջնորդներին դպրոցներում դասավանդելու և օժանդակություն ցուցաբերելու համար: Վարքագծի կանոնագրքի մշակման համար քաղաքացիական հակամարտությունների ժամանակ համայնքի անդամները կարող են նպաստել հակամարտության երկու կողմերի միջև բանակցություններ վարելու գործընթացին: Դպրոցներն ու ուսումնական վայրերն այդ նպատակի համար կարող են ծառայել որպես ապահով ապաստաններ կամ «խաղաղության գոտիներ» են:

Դպրոցների և հիվանդանոցների վրա հարձակումներն այն վեց ծանրագույն խախտումներից են, որոնք արգելված են ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1612 (2005) բանաձևով: Եթե նման հարձակումներ տեղի են ունենում, ապա դրանց մասին զեկուցվում է ՄԱԿ-ի գլխավորությամբ իրականացվող մշտադիտարկման և հաղորդման մեխանիզմներով (տե՛ս նաև «Կրթության քաղաքականության ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցում 1-ը, էջ 151 և «Կրթության քաղաքականության ստանդարտ 2»-ը, ուղղորդող ցուցում 4-ը, էջ 158-159):

8. Հոգեբանասոցիալական աջակցության և բարեկեցության վերա-

բերյալ դասընթացներ: Ուսուցիչներն ու կրթական ոլորտի այլ աշխատակիցները պետք է անցնեն սովորողներին հոգեբանասոցիալական աջակցություն ցուցաբերելու դասընթացներ հետևյալ միջոցներով.

- համակարգված ուսուցման,
- երեխային հարմար մեթոդների կիրառման,
- խաղերի և ժամանցի կազմակերպման,
- կյանքի հմտությունների ուսուցման,
- համապատասխան ծառայությունների ուղղորդման:

Կարևոր է նաև անդրադառնալ ուսուցիչների և կրթական ոլորտի այլ աշխատակիցների բարեկեցությանը: Սա կնպաստի սովորողների բարեկեցության բարձրացմանը, ինչպես նաև ֆորմալ ու ոչ ֆորմալ կրթական ծրագրերիհաջող ավարտին (տե՛ս նաև «Դասավանդման և ուսումնառության ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցում 6-ը, էջ 114-115, «Դասավանդման և ուսումնառության ստանդարտ 2»-ը, ուղղորդող ցուցում 2-ը, էջ 119-120 և «Ուսուցիչների և կրթական ոլորտի այլ աշխատակիցների ստանդարտ 3»-ը, էջ 143-145):

9. **Դասարանի ոչ բռնի կառավարումը:** Դաքարի գործողությունների ծրագրի համաձայն, կրթությունը պետք է իրականացվի «այնպիսի եղանակներով, որոնք խթանում են փոխըմբռնումը, խաղաղության հաստատումը և հանդուրժողականությունը, ինչպես նաև օգնում են կանխել բռնությունն ու հակամարտությունը»: Այս առումով ուսուցիչները դասարանի դրական կառավարման համար աջակցության կարիքն ունեն: Սա նշանակում է այնպիսի ուսումնական միջավայրի ապահովում, որը նպաստում է փոխըմբռմանը, խաղաղության հաստատմանը ու հանդուրժողականությանը, ինչպես նաև զարգացնում է բռնության և հակամարտության կանխարգելման հմտություններ: Դրական նվաճումները և դրական կարգապահության ամուր համակարգը նման միջավայրի ստեղծման հիմքն են: Դրանցով պետք է փոխարինվեն մարմնական պատիժները, վիրավորանքները, նվաստացումները և ահաբեկումները: Ահաբեկումները ենթադրում են հոգեկան սթրեսներ, բռնություն, դաժան վերաբերմունք և խտրականություն: Այս պահանջները պետք է ներառվեն ուսուցիչների վարքագծի կանոնագրքի մեջ և դրանց պետք է պարբերաբար անդրադառնալ ուսուցիչների վերապատրաստման և վերահսկողական միջոցառումների ժամանակ (տե՛ս նաև «Դասավանդման և ուսումնառության ստանդարտներ 2-3»-ը, էջ 118-125; «Ուսուցիչների և

կրթական ոլորտի այլաշխատակիցների ստանդարտ 2»-ը, ուղղորդող ցուցում 3-ը, էջ 141-142 և «Ուսուցիչների և կրթական ոլորտի այլ աշխատակիցների ստանդարտ 3»-ը, էջ 143-145):

10. **Համայնքի մասնակցություն:** Համայնքները պետք է առաջատար դեր ստանձնեն կրթական միջավայրի ստեղծման, աջակցման և պաշտպանության գործում: Բոլոր խոցելի խմբերի ներկայացուցիչները պետք է մասնակցեն ծրագրերի նախագծմանը: Սա ընդլայնում է համայնքի մասնակցությունը կրթությանն աջակցելու գործում (տե՛ս նաև «Համայնքային մասնակցության ստանդարտ 1»-ը, էջ 34-42 և «Հասանելիության և ուսումնական միջավայրի ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցում 7-ը, էջ 84-85):

11. **Աղետների ռիսկի նվազեցում և կառավարում:** Սովորողները, ուսուցիչները և կրթական ոլորտի այլ աշխատակիցները կարող են վերապատրաստվել աղետների կանխարգելման և կառավարման միջոցառումներին աջակցելու նպատակով: Վերապատրաստման դասընթացները կարող են վերաբերել.
    - արտակարգ իրավիճակների պատրաստվածության պլանների մշակմանը և դրանց կիրառմանը,
    - սպասվող և կրկնվող աղետների նմանակման ուսումնական վարժանքներին,
    - դպրոցների կառուցվածքային և ոչ կառուցվածքային անվտանգությանն, օրինակ, սեյսմավտանգ գոտիներում դպրոցների տարհանման պլանների մշակմանն ուղղված միջոցառումներին:

    Համայնքի կամ դպրոցների ապահովության հարցերով զբաղվող հանձնախմբերը կարող են աջակցության կարիք ունենալ դպրոցներում տեղի ունեցող աղետների կառավարման կամ անվտանգության ապահովման պլանների մշակման գործընթացում: Աջակցությունը ենթադրում է օգնություն ռիսկերի գնահատման և առաջնահերթությունների սահմանման, ֆիզիկական և շրջակա միջավայրի պաշտպանության ռազմավարությունների, արձագանքման պատրաստվածության ընթացակարգերի և հմտությունների մշակման հարցերում:

    Արտակարգ իրավիճակների պատրաստվածության պլանները, այդ թվում՝ դպրոցների տարհանման պլանները, պետք է մշակվեն և տարածվեն բոլորի համար հասանելի եղանակներով, այդ թվում՝ գրագիտությունից զուրկ, ինչպես նաև ֆիզիկական, ճանաչողական ու հոգեկան խանգարումներ ունեցող մարդկանց համար (տե՛ս նաև

«Վերլուծության ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցում 3-ը, էջ 54-56; «Հասանելիության և ուսումնական միջավայրի ստանդարտ 3»-ը, ուղղորդող ցուցումներ 1-2-ը, էջ 98-100; «Դասավանդման և ուսումնառության ստանդարտ 2»-ը, ուղղորդող ցուցում 6-ը, էջ 122; «Կրթության քաղաքականության ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցումներ 2-ը և 6-ը, էջ 152-156):

Հասանելիության և ուսումնական միջավայրի ստանդարտ 3. Կառույցներ և ծառայություններ

Ուսումնական հաստատությունները պետք է նպաստեն սովորողների, ուսուցիչների և կրթական ոլորտի այլ աշխատակիցների ապահովությանն ու բարեկեցությանը և կապված լինեն առողջապահական, սննդի, հոգեբանասոցիալական և պաշտպանության ծառայությունների հետ:

Առանցքային գործողություններ (կարդալ ուղղորդող ցուցումներին զուգահեռ)

- Ուսումնական հաստատություններն ու կառույցներն պետք է լինեն ապահով և հասանելի բոլոր սովորողների, ուսուցիչների և կրթական ոլորտի այլ աշխատակիցների համար (տե՛ս ուղղորդող ցուցումներ 1-4-ը):
- Ժամանակավոր և մշտապես գործող ուսումնական հաստատությունները պետք է լինեն վերանորոգված, ժամանակակից տեխնիկական միջոցներով հագեցված և պատրաստ դիմակայելու բնական աղետներին (տե՛ս ուղղորդող ցուցումներ 2-ը և 4-ը):
- Ուսումնական հաստատությունների տարածքը պետք է նշված լինի տեսանելի պաշտպանական սահմաններով և պայմանական նշաններով:
- Կրթական հաստատությունների համար նախատեսված ֆիզիկական կառույցները պետք է համապատասխանեն իրավիճակին և ունենան բավարար տարածք դասարանների, վարչական սենյակների, հանգստի կազմակերպման և սանիտարահիգիենիկ պայմանների ապահովման համար (տե՛ս ուղղորդող ցուցումներ 2-ը և 4-ը):
- Դասասենյակների մակերեսը պետք է համապատասխանի ընդունված նորմերին (մեկ սովորողի և մեկ ուսուցչի հաշվով), ինչը կնպաստի փոխներգործուն և սովորողներին միտված մեթոդների կիրառմանը (տե՛ս ուղղորդող ցուցում 4-ը):
- Համայնքի անդամները, այդ թվում՝ երիտասարդության ներկայացուցիչները, պետք է մասնակցեն ուսումնական հաստատությունների շինարարական, վերանորոգման և ուսուցման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման և պահպանման աշխատանքներին (տե՛ս ուղղորդող ցուցումներ 1-3-ը):

- Անձնական հիգիենայի կանոնները պահպանելու նպատակով մարդիկ պետք է ապահովվեն խմելու ջրի անհրաժեշտ քանակությամբ, սանիտարահիգիենիկ պայմաններով, ըստ որում պետք է հաշվի առնել նրանց սեռը, տարիքը, ինչպես նաև սահմանափակ կարողություններով մարդկանց հատուկ կարիքները (տե՛ս ուղղորդող ցուցումներ 3-ը և 5-6-ը):
- Ուսումնական հաստատությունում պետք է ձևավորվեն սովորողների հմտությունները առողջության և հիգիենայի ապահովման բնագավառում (տե՛ս ուղղորդող ցուցում 6-ը):
- Երեխաների լիարժեք կրթության և զարգացման համար ուսումնական հաստատություններում պետք է հասանելի լինեն առողջապահական և առողջ սննդի ծառայությունները, նպատակ հետապնդելով պահպանել երեխաների առողջությունը, ինչպես նաև վերացնել սովը և այլ խոչընդոտներ (տե՛ս ուղղորդող ցուցում 7-ը):
- Դպրոցները և ուսումնական հաստատությունները պետք է համագործակցեն երեխաների պաշտպանության, առողջապահության, սննդի, սոցիալական և հոգեբանական հարցերով զբաղվող ծառայությունների հետ (տե՛ս ուղղորդող ցուցում 8-ը):

Ուղղորդող ցուցումներ

1. **Տեղակայումը:** Ուսումնական հաստատությունները պետք է կառուցվեն, վերակառուցվեն սովորողների, ուսուցիչների և ուսումնական հաստատությունների այլ աշխատակիցների համար անվտանգ և ապահով վայրերում կամ տեղափոխվեն նման վայրեր: Անհրաժեշտ է ուսումնասիրել և բացահայտել ուսումնական հաստատությունների վերաշահագործման հնարավորությունը արտակարգ իրավիճակի հետևանքների վերացումից հետո:

   Ֆիզիկական կառույցների վերակառուցումը նախկին վայրերում կարող է պատճառ հանդիսանալ համայնքի որոշակի խմբերի հանդեպ խտրականության շարունակման համար, իսկ սովորողներին ենթարկել բնական աղետների վտանգին: Հնարավոր հակամարտությունների և աղետների ռիսկի գնահատումն առանցքային դեր ունի: Այդ նպատակով անհրաժեշտ է քննարկումներ կազմակերպել տեղական իշխանության ներկայացուցիչների և համայնքի անդամների, հատկապես, խոցելի խմբերի մասնակցությամբ: Նրանք կարող են արժեքավոր տեղեկություններ տրամադրել ուսումնական հաստատության կառուցման վայրի վերաբերյալ:

   Անհրաժեշտ է համագործակցել այլ ծառայությունների /օրինակ,

փախստականների տեղավորման և ճամբարների կառավարման, ժամանակավոր կացարաններով և բժշկական ապահովման / հետ սովորողներին դպրոցների, ուսումնական հաստատությունների և այլ ծառայությունների հարևանությամբ տեղաբաշխելու համար (տե՛ս նաև «Համակարգման ստանդարտ 1»-ը, էջ 47-51; «Վերլուծության ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցումներ 1-6-ը, էջ 53-59; «Հասանելիության և ուսումնական միջավայրի ստանդարտ 2»-ը, ուղղորդող ցուցում 11-ը, էջ 95-96 և «Կրթության քաղաքականության ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցում 3-ը, էջ 153-154):

2. **Նախագծում և կառուցում:** Ժամանակավոր և մշտապես գործող ուսումնական հաստատությունների նախագծման և շինարարության ընթացքում կարևոր է հաշվի առնել հետևյալ տարրերը.
   - Անվտանգ վայրի ընտրություն: Դպրոցների վնասված շենքերի կառուցվածքային անվտանգությունը պետք է գնահատվի միայն որակավորված մասնագետների կողմից: Շենքի վերաօգտագործման, վերանորոգման և վերակահավորման խնդիրները պետք է բխեն դպրոցի կարիքներից և պահանջվող ծախսերից:
   - Ներառական և աղետակայուն նախագծում ու կառուցում: Ժամանակավոր և մշտապես գործող օբյեկտների շինարարությունը պետք է համապատասխանի դպրոցների պլանավորման և կառուցման միջազգային ստանդարտներին /կամ տեղական ստանդարտներին, եթե դրանք ապահովում են շինարարության առավել բարձր որակ/:

Դպրոցների մասնաշենքերը պետք է նախագծվեն, կառուցվեն և շահագործվեն այնպես, որպեսզի դիմակայեն այնպիսի վտանգների և սպառնալիքների, ինչպիսիք են հրդեհները, փոթորիկները, երկրաշարժերը և սողանքները: Շենքերի վերակառուցումը պետք է իրականացվի այնպես, որ արդյունքում սովորողները, ուսուցիչները և կրթության ոլորտի այլ աշխատակիցները զերծ մնան ռիսկերից: Շենքերը նախագծելիս և կառուցելիս, պետք է հաշվի առնվեն պատշաճ լուսավորվածությունը, խաչաձև օդափոխման և ջեռուցման համակարգերը /ըստ իրավիճակի/՝ ուսուցման և ուսումնառության համար որակյալ միջավայր ստեղծելու նպատակով:

- Տեղական իշխանությունները և տեղական համայնքը հնարավորությունների սահմաններում պետք է միջոցներ տրամադրի շինարարության համար, այդ նպատակով ձեռքբերելով և օգտագործելով տեղական շինանյութերը ու աշխատուժը: Անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել, որպեսզի կառուցվող շինությունները լինեն

ծախսարդյունավետ, իսկ դրանց ֆիզիկական բնութագրերը (օրինակ, տանիքը, հատակը) լինեն դիմացկուն ու երկարաժամկետ օգտագործելի:

- Բյուջեի առկայությունը, կառույցների ընթացիկ և երկարատև օգտագործման հնարավորությունը, ինչպես նաև համայնքների, կրթական ծրագրեր պլանավորողների և կառավարողների /մենեջերների/ մասնակցությունը:

Կառույցները կարող են լինել ժամանակավոր, կիսամշտական, մշտական, ընդլայնված կամ շարժական: Արտակարգ իրավիճակներից տուժած խմբերի անդամների ներգրավվածությունը համատեղ միջոցառումներում, ինչպիսիք են՝ դպրոցների շինարարությունը և տեխնիկական սպասարկումը, կարող է նպաստել հակամարտությունների մեղմացմանը (տես նաև «Հասանելիության և ուսումնական միջավայրի ստանդարտ 2»-ը, ուղղորդող ցուցում 11-ը, էջ 95-96; «Կրթության քաղաքականության ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցում 3-ը, էջ 153-154, *Դպրոցների առավել ապահով շինարարության վերաբերյալ ԱԻԿՄՑ ուղղորդող ցուցումներ*. հասանելի է ԱԻԿՄՑ գործիքակազմում՝ **www.ineesite.org/toolkit** և ապաստանի, բնակեցման և ոչ պարենային ապրանքերի մասին «ՍՖերա»-ի ստանդարտներ):

3. **Հաշմանդամություն ունեցող անձինք:** Ուսումնական հաստատությունների մասնաշենքերի նախագծման շրջանում պետք է հաշվի առնել ֆիզիկական և տեսողական խանգարումներ ունեցող անձանց կարիքները: Մուտքերն ու ելքերը պետք է հարմարեցվեն անվասայլակներ կամ տեղաշարժման այլ օժանդակ հարմարանքներ օգտագործող մարդկանց: Դասասենյակներն ու կահույքը, ջրամատակարարման և սանիտարահիգենիկ ենթակառուցվածքները պետք է բավարարեն հաշմանդամություն ունեցողների կարիքները: Խորհուրդ է տրվում տարածքների ընտրության և ուսումնական հաստատությունների վերակառուցման ժամանակ (տեղական և ազգային մակարդակներում) համագործակցել տարբեր տիպի հաշմանդամություն ունեցող անձանց, երեխաների և երիտասարդների շահերը պաշտպանող կազմակերպությունների և նրանց ծնողների հետ:

4. **Ուսումնական հաստատությունների շենքերի նախագծում և տեխնիկական սպասարկում:** Ուսումնական հաստատությունները նախագծելիս պետք է հաշվի առնել, թե ո՞վ և ինչպե՞ս է օգտագործելու հաստատության տարածքը: Տարածքները պետք է համապատասխանեն բոլոր օգտվողների սեռական, տարիքային, ֆիզիկական ու

մշակութային առանձնահատկություններին: Տեղական իրատեսական ստանդարտը պետք է սահմանել ելնելով դասասենյակի առավելագույն մակերեսի չափերից: Մեծ թվով աշակերտներ հավաքագրելիս, հնարավորության շրջանակներում, լրացուցիչ դասասենյակների համար պետք է նախատեսել տարածքներ՝ ուսումնական հերթափոխերի կրճատման նպատակով: Մուտքերն ու ելքերը պետք է նախագծված լինեն այնպես, որ թույլ տան սովորողներին, ուսուցիչներին և կրթական ոլորտի այլ աշխատակիցներին արտակարգ իրավիճակների ժամանակ ապահով լքել շենքը:

Շենքը, սանիտարատեխնիկական հարմարությունները և կահույքը (գրասեղանները, աթոռները, գրատախտակները) մշտապես պետք է պահվեն սարքին վիճակում: Համայնքի անդամներն ու համայնքային կրթության բաժինը կարող են աջակցել ուսումնական շենքերի պահպանման գործին, տրամադրելով աշխատուժ, ժամանակ և շինանյութեր (տե՛ս նաև «Ուսուցիչների և կրթական ոլորտի այլ աշխատակիցների ստանդարտ 3»-ը ուղղորդող ցուցում 1-ը, էջ 143-144):

5. **Սանիտարահիգիենիկ շինությունները** պետք է տեղակայված լինեն ուսումնական հաստատության տարածքում կամ վերջինիս մերձակայքում: Նշված նպատակին հասնելու համար կարևոր է ջրամատակարարում և ջրահեռացում իրականացնող ծառայությունների հետ համագործակցությունը:

Սանիտարական կանոնները ներառում են հետևյալ միջոցառումները՝

- կոշտ թափոնների հեռացում՝ աղբամանների /կոնտեյներների/ և կոյուղու ջրհորների մաքրում.
- ջրահեռացման համակարգերի առկայություն /ջրհորներ ու դրենաժային ջրանցքներ/.
- ջրի համապատասխան քանակության ապահովում՝ անձնական հիգիենայի և զուգարանների մաքրման համար:

Սանիտարահիգիենիկ շինությունները պետք է լինեն մեկուսացված, հասանելի հաշմանդամություն ունեցող անձանց համար և ապահովեն մարդկանց անձեռնմխելիությունը, արժանապատվությունը և անվտանգությունը: Զուգարանի դռները պետք է ներսից կողպվեն: Սեռական ոտնձգությունները և բռնությունը կանխելու նպատակով տղաների/տղամարդկանց և աղջիկների/կանանց համար նախատեսված առանձին զուգարանները պետք է տեղակայված լինեն ապահով, հարմարավետ և հասանելի վայրերում: «Սֆերա» ուղե-

ցույցներում բերված պահանջների համաձայն, դպրոցներում յուրաքանչյուր 30 աղջկա և յուրաքանչյուր 60 տղայի համար նախատեղվում է մեկ զուգարան: Եթե, ի սկզբանե, հնարավոր չէ նախատեսել առանձնացված զուգարաններ, ապա անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել խուսափելու համար տղաների և աղջիկների կողմից զուգարանի միաժամանակյա օգտագործումից: Եթե ուսումնական հաստատության տարածքում զուգարաներ չկան, ապա պետք է օգտվել մերձակայքում գտնվող զուգարաններից, և վերահսկել երեխաներին զուգարանից օգտվելու ընթացքում: («Ջրամատակարարում, սանիտարական կանոնների և հիգիենիկ նորմատիվների խթանում» գլխում տե՛ս կոյուղամաքրման վերաբերյալ «Սֆերա»-ի ստանդարտները):

Իգական սեռի սովորողներին պետք է ապահովել սանիտարական միջոցներով, իսկ անհրաժեշտության դեպքում նաև նրանց մշակութային առանձնահատկություններին համապատասխանող հագուստով, ուսումնական գործընթացին նրանց լիարժեք մասնակցությունն ապահովելու նպատակով:

6. **Ջրի ապահով մատակարարում և հիգիենիկ նորմերի պահպանման խթանում:** Ուսումնական հաստատություններում պետք է լինեն ջրի անվտանգ աղբյուրներ, որոնց օգտագործման վայրերում պետք է ապահովել օճառի առկայությունը: Հիգիենիկ այնպիսի նորմատիվների պահպանումը, ինչպիսիք են ձեռքերի և դեմքի լվացումը, պետք է դառնա ամենօրյա գործունեության անբաժանելի մասը: Համաձայն «Սֆերա»-ի ուղեցույցի, յուրաքանչյուր սովորողին օրական պետք է հատկացվի 3 լիտր ջուր՝ խմելու և ձեռքերը լվանալու համար («Ջրամատակարարման, սանիտարական կանոնների և հիգիենիկ նորմերի խթանում» գլխում տե՛ս նաև ջրամատակարարման ստանդարտները):

7. **Առողջապահական և սննդի կազմակերպման ծառայությունները դպրոցներում:** Առողջապահական և սննդի կազմակերպման դպրոցական ծրագրերը կրթության ոլորտը կապում են առողջապահության, սննդի կազմակերպման և սանիտարահիգիենիկ վերահսկողության ոլորտների հետ: Միասնական ծրագրերը պետք է ուղղված լինեն ուսումնական գործընթացի խոչընդոտների վերացմանը և առողջության ամրապնդմանն ուղղված քարոզչությանը: Ծրագրերը կարող են ներառել.

- դպրոցներում սովորողներին սննդով ապահովումը՝ քաղցի դեմ պայքարի շրջանակներում.

- մանրէազերծումը՝ մակաբուծային վարակների բուժման նպատակով.
- վարակիչ հիվանդությունների կանխարգելումը (օրինակ՝ կարմրուկ, փորլուծություն, ՄԻԱՎ և ՁԻԱՀ)
- միկրոտարրերի ապահովումը (օրինակ՝վիտամին A, երկաթ և յոդ):

Ծրագրերը պետք է հիմնված լինեն այնպիսի հրահանգների վրա, ինչպիսիք են, դպրոցական սննդի կազմակերպման Պարենի համաշխարհային ծրագրի Ուղեցույցում սահմանված հրահանգները: Առողջապահության և սննդի կազմակերպման ոլորտների միջև համագործակցությունը և միջոցառումների համակարգումը կարևոր է (տե՛ս նաև Սննդամթերքի անվտանգության և սննդի կազմակերպման մասին «Սֆերա»-ի ստանդարտները):

8. **Տեղական ծառայությունների և տեղեկատուների հասանելիություն:** Ուսուցիչներն ու ուսումնական հաստատությունների այլ աշխատակիցները կարող են դիմել տարբեր ծառայություններ մատուցող տեղական կազմակերպություններին՝ երեխաների ֆիզիկական, հոգեբանական և հուզական վիճակի բարելավման և դրան նպաստելու համար: Նրանք պետք է վերապատրաստման դասընթացներ անցնեն բացահայտելու համար սովորողների ֆիզիկական ցավերը, հոգեբանասոցիալական մտատանջումները, ինչպես նաև այլ խնդիրներ, օրինակ, իրենց ընտանիքներից բաժանված երեխաների խնդիրները: Նրանք և այլ ծառայությունների ներկայացուցիչները սովորողների կյանքին սպառնացող վտանգների մասին պետք է միմյանց տեղեկատվություն տրամադրեն:

Ուղեգրման համակարգի արդյունավետ աշխատանքն ապահովելու համար անհրաժեշտ է պաշտոնական կապեր հաստատել արտաքին ծառայությունների հետ: Այդ ծառայությունները սեռական և գենդերային բռնություն վերապրածներին կարող են տրամադրել խորհրդատվական, հոգեբանասոցիալական, իրավաբանական ծառայություններ, ինչպես նաև սոցիալական ծառայություններ՝ խտրական կամ արհամարական վերաբերմունքի դրսևորման դեպքերում: Զինված ուժերի և զինված խմբավորումների հետ նախկինում կապ ունեցող երեխաները կարող են իրենց կազմալուծված ընտանիքների անդամներին որոնելու և նրանց հետ վերամիավորվելու համար օգնության կարիք ունենալ (տե՛ս նաև «Հասանելիության և ուսումնական միջավայրի ստանդարտ 2»-ը, ուղղորդող ցուցում 2-ը, էջ 88-89; «Դասավանդման և ուսումնառության ստանդարտ 1»-ը, ուղղոր-

դող ցուցում 6-ը, էջ 114-115 և «Դասավանդման և ուսումնառության ստանդարտ 2»-ը, ուղղորդող ցուցում 2-ը, էջ 119-120):

Այս ստանդարտների իրականացմանն օգնող գործիքների համար այցելեք ԱԻԿՄՑ գործիքակազմ՝ www.ineesite.org/toolkit

ԱԻԿՄՑ գործիքակազմ
↳ ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտներ
↳ Իրականացման գործիքներ
↳ Հասանելիություն և ուսումնական միջավայր

3 ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ

Հիմնական չափորոշիչների բաժին. Համայնքային մասնակցություն, համակարգում, վերլուծություն

Դասավանդման և ուսումնառության բաժին

Ստանդարտ 1 Ուսումնական ծրագիր

Կիրառվում են մշակութային, սոցիալական և լեզվական առանձնահատկություններին համապատասխան ուսումնական պլաններ ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության ապահովման համար՝ որոշակի համատեքստին և սովորողների կարիքներին համապատասխան:

Ստանդարտ 2 Վերապատրաստում, մասնագիտական կատարելագործում և աջակցություն

Ուսուցիչներն ու մանկավարժական այլ աշխատողներն, ըստ կարիքների և հանգամանքների, պարբերաբար անցնում են համապատասխան համակարգված վերապատրաստում:

Ստանդարտ 3 Դասավանդման և ուսումնառության գործընթացներ

Ուսուցման և ուսումնառության գործընթացներն աշակերտակենտրոն, մասնակցային և ներառական են:

Ստանդարտ 4 Ուսումնառության վերջնարդյունքների գնահատում

Ուսումնառության վերջնարդյունքների գնահատման և ստուգման համար կիրառվում են համապատասխան մեթոդներ:

Կրթության հասանելիության գաղափարն իմաստավորվում է միայն այն դեպքում, երբ կրթական ծրագրերն առաջարկում են որակյալ դասավանդում և ուսումնառություն: Արտակարգ իրավիճակները հնարավորություն են ընձեռում բարելավելու ուսումնական պլանները, ուսուցիչների վերապատրաստման դասընթացները, մասնագիտական կատարելագործման և աջակցության գործընթացները, ինչպես նաև դասավանդման և ուսումնառության վերջնարդյունքների գնահատումը, որպեսզի սովորողները ստանան հիմնավոր կրթություն և պաշտպանված լինեն արտակարգ իրավիճակներում: Անհրաժեշտ է կարևոր որոշումներ կայացնել առաջարկվող ուսումնական ծրագրերի և ուսումնական առաջնահերթությունների վերաբերյալ: Առաջնահերթ է համարվում այն գիտելիքների և հմտությունների ձևավորումը, որոնք կնպաստեն կանխել կամ նվազագույնի հասցնել ապագա հնարավոր ռիսկերը, սպառնալիքներն ու վտանգները: Կրթական ծրագրերում առանձնահատուկ տեղ պետք է տրամադրվի մարդու իրավունքների, խաղաղության հաստատման և ժողովրդավարության վերաբերյալ գիտելիքներին:

Ֆորմալ դպրոցներ չավարտած երիտասարդ տղամարդկանց և կանանց, մասնավորապես, խոցելի խմբերից, պետք է տրամադրվի զբաղվածություն և կենսական միջոցներ ապահովող կրթություն, օրինակ, փոքր բիզնեսի զարգացում, ֆինանսական գրագիտություն, տեխնիկական և մասնագիտական կրթություն և ուսուցում: Աշխատաշուկայի վերլուծությունը, տնտեսական և վաղ վերականգնման հարցերով զբաղվող ոլորտների հետ համագործակցությունը կնպաստի ծրագրերի արդիականացմանը և կապահովի օգտակար տնտեսագիտական հմտությունների ձեռքբերումը բնակչության տարբեր խմբերի կողմից:

Չվերապատրաստված կամ ոչ բավարար որակավորում ունեցող ուսուցիչները և կրթության ոլորտի այլ աշխատակիցները, որոնք լրացնում են տարերային աղետների կամ արտակարգ իրավիճակների հետևանքով թափուր մնացած աշխատատեղերը, կարիք ունեն վերապատրաստման՝ գիտելիքները սովորողներին արդյունավետորեն փոխանցելու համար: Ուսուցիչներն ու կրթական ոլորտի այլ աշխատակիցները պետք է մասնակցեն հատուկ դասընթացների, որոնք իրականացվում են աղետը վերապրած երեխաներին աջակցություն ցուցաբերելու նպատակով:

Արտակարգ իրավիճակերում կարևոր է, որ ազգային իշխանությունները, ուսումնական հաստատությունները և գործատուները ընդունեն կրթական ծրագրերը և ճանաչեն շնորհված վկայագրերը: Համայնքները ցանկանում են գիտակցել, որ իրենց երեխաներն արժեքավոր կրթություն են ստանում և այդ արժեքը ընդունվում է ազգային իշխանություն-

ների կողմից: Դասավանդման և ուսումնառության համապատասխան և ժամանակին կատարված նախնական և ընթացիկ գնահատումները թույլ են տալիս.

- Ներշնչել վստահություն,
- պատկերացում կազմել դասավանդման մեթոդների մասին,
- ի հայտ բերել ուսումնական պլանների և սովորողների ուժեղ և թույլ կողմերը,
- տեղյակ պահել կրթական անձնակազմին, համայնքի անդամներին և սովորողներին ձեռք բերված առաջընթացի և դեռևս արդիական կարիքների մասին:

Դասավանդման և ուսումնառության ստանդարտ 1. Ուսումնական պլաններ

Ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության ապահովման համար կիրառվում են մշակութային, սոցիալական և լեզվական առանձնահատկություններին հարմարեցված ուսումնական պլաններ, որոնք համապատասխանում են որոշակի համատեքստերին և սովորողների կարիքներին:

Առանցքային գործողություններ (կարդալ ուղղորդող ցուցումներին զուգահեռ)

- Կրթության ոլորտի կառավարման մարմինները, ներգրավելով բոլոր շահառուներին, պետք է վերահսկեն ֆորմալ ուսումնական պլանների վերանայման, մշակման և հարմարեցման՝ գործընթացները (տես ուղղորդող ցուցումներ 1-3):
- Ուսումնական պլանները, դասագրքերը և լրացուցիչ նյութերը պետք է համապատասխանեն սովորողների տարիքին, զարգացման մակարդակին, լեզվին, մշակույթին, կարողություններին և կարիքներին (տես ուղղորդող ցուցումներ 1-4-ը):
- Աղետի ծագման և ընդունող երկրների կառավարությունները պետք է ընդունեն փախստականների և ներքին տեղահանության ենթարկված մարդկանց կրթության մեջ կիրառված ֆորմալ ուսումնական պլաններն ու քննությունները (տես ուղղորդող ցուցում 3-ը):
- Ֆորմալ և ոչ ֆորմալ ուսումնական պլաններում պետք է ներառվեն աղետների ռիսկի նվազեցման, բնապահպանության և հակամարտությունների կանխարգելման վերաբերյալ առարկաներ (տես ուղղորդող ցուցումներ 3-4-ը):
- Ուսումնական պլանները, դասագրքերը և լրացուցիչ նյութերն պետք է ընդգրկեն հիմնական գիտելիքներ, այդ թվում՝ գրագիտություն, հաշվելու ունակություն, կյանքի հմտություններ, առողջապահության և հիգիենայի նորմերի իմացություն (տես ուղղորդող ցուցումներ 4-5-ը):
- Ուսումնական ծրագրերը պետք է անդրադառնան սովորողների հոգեբանասոցիալական բարեկեցության և պաշտպանության խնդիրներին (տես ուղղորդող ցուցում 6-ը):
- Ուսումնական նյութերի բովանդակությունը պետք է մատուցվի սովորողների լեզվով/լեզուներով (տես ուղղորդող ցուցում 7-ը):

- Ուսումնական պլաններում, դասագրքերում ու լրացուցիչ նյութերում պետք է հաշվի առնվեն գենդերային առանձնահատկությունները, բազմազանությունը, դրանք պետք է կանխեն խտրականությունը և նպաստեն բոլոր սովորողների նկատմամբ հարգանքի դրսևորմանը (տե՛ս ուղղորդող ցուցում 8-ը):
- Բավարար քանակությամբ տեղերում ձեռքբերված ուսումնամեթոդական նյութերը պետք է տրամադրվեն ժամանակին (տե՛ս ուղղորդող ցուցում 9-ը):

Ուղղորդող ցուցումներ

1. **Ուսումնական պլանը** գործողությունների ծրագիր է, որն կոչված է օգնել սովորողներին իրենց գիտելիքներն ու հմտությունները բարելավելու համար: Այն վերաբերում է ինչպես ֆորմալ, այնպես էլ ոչ ֆորմալ կրթական ծրագրերին, որոնք պետք է համապատասխանեցվեն և հարմարեցվեն բոլոր սովորողների համար: Ուսումնական պլաններում հաշվի են առնվում ուսումնական նպատակները, բովանդակությունը, գնահատումները, դասավանդման մեթոդները և նյութերը.
   - «Ուսումնական նպատակներ»-ը սահմանում են այն գիտելիքները, վերաբերմունքը և հմտությունները, որոնք կրթական միջոցառումների միջոցով զարգացնում են սովորողների ճանաչողական, սոցիալական, հուզական և ֆիզիկական կարողությունները:
   - «Ուսումնական բովանդակություն»-ը վերաբերում է այնպիսի ուսումնական բնագավառների, ինչպիսիք են գրագիտությունը, հաշվելու ունակությունը և կյանքի հմտությունները:
   - «Գնահատում» նշանակում է գիտելիքների, վերաբերմունքի և հմտությունների ձևով յուրացված ուսումնական բովանդակությունը:
   - «Դասավանդման մեթոդներ»-ը վերաբերում են ուսումնական նյութի ներկայացման համար ընտրված և կիրառվող մոտեցումներին բոլոր սովորողների գիտելիքների և հմտությունների ձեռքբերումը խրախուսելու նպատակով:
   - «Ուսումնական նյութեր» են համարվում գրքերը, քարտեզները, աղյուսակները, ուսումնական լրացուցիչ նյութերը, ուսուցիչների համար նախատեսված ուղեցույցները, սարքավորումները, խաղալիքներն և ուսումնամեթոդական այլ նյութերը:

2. **Համատեքստին, տարիքին և զարգացման մակարդակին համապատասխանող ուսումնական պլաններ:** Ուսումնական պլանները պետք է համապատասխանեն սովորողների տարիքին, նրանց զգայական, մտավոր, ճանաչողական, հոգեբանասոցիալական և ֆիզիկական զարգացման մակարդակին: Արտակարգ իրավիճակների պայմաններում, ինչպես նաև վերականգնման փուլում, տարիքային և զարգացման մակարդակները կարող են զգալիորեն տարբերվել ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական ծրագրերի շրջանակներում: Այս պատճառով պահանջվում է ուսումնական պլանների և մեթոդների համապատասխանեցում: Անհրաժեշտ է աջակցել ուսուցիչներին, որպեսզի նրանք կարողանան իրենց դասավանդման մեթոդները համապատասխանեցնել սովորողների կարիքներին և մակարդակին (տե՛ս նաև «Դասավանդման և ուսումնառության ստանդարտ 2»-ը, էջ 118-122):
3. **Ուսումնական պլանների վերանայումն ու մշակումը** երկար և բարդ գործընթաց է: Դա պետք է իրականացվի կրթության բնագավառի լիազորված և պատկան մարմինների կողմից: Եթե արտակարգ իրավիճակում կամ դրանից հետո վերականգնվել է ֆորմալ կրթությունը, ապա պետք է կիրառվեն տարրական և միջնակարգ դպրոցների համար ընդունված ազգային ուսումնական պլանները: Դրանց բացակայության դեպքում անհրաժեշտ է արագ մշակել նոր ուսումնական պլաններ: Փախստականների պարագայում հիմք են ընդունվում աղետի ծագման կամ ընդունող երկրների ուսումնական պլանները: Այլ դեպքերում նպատակահարմար կլինի նմանատիպ արտակարգ իրավիճակներին հարմարեցված ուսումնական պլանների կիրառումը:

   Փախստականներին առնչվող իրավիճակներում ուսումնական պլանները պետք է ընդունվեն ինչպես ընդունող, այնպես էլ աղետի ծագման երկրների կողմից՝ կամավոր հայրենադարձությունը խթանելու համար: Այս նպատակի համար զգալի աշխատանք է պահանջվում տարածաշրջանային և միջգերատեսչական համակարգումը կազմակերպելու համար, հաշվի առնելով, օրինակ, լեզվական գիտելիքները և քննական արդյունքների ճանաչման մասին վկայականներ ստանալը: Այս որոշումները պետք է ընդունվեն համաձայն փախստականների իրավունքների, ընդունող պետության դիրքորոշման և միջազգային իրավունքի նորմերի (տե՛ս նաև «Կրթության քաղաքականության ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցում 7-ը, էջ 156):

   Արտակարգ իրավիճակների պայմաններում, ինչպես և վերականգնման փուլում ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական ծրագրերի ուսումնական

պլանները պետք է հարստացվեն արտակարգ իրավիճակներին վերաբերող գիտելիքներով և հմտություններով (ստորև տե՛ս ուղղորդող ցուցում 5-ը):

Կարող է անհրաժեշտություն առաջանալ հատուկ ուսումնական պլաններ մշակել հետևյալ խմբերի.

- կենսագոյատևման համար միջոցներ հայթհայթող երեխաների և երիտասարդների,
- այն անձանց, ովքեր նախկինում ընդգրկված են եղել զինված ուժերում կամ խմբավորումներում,
- այն անձանց, որոնց տարիքը չի համապատասխանում իրենց կրթական մակարդակին կամ նրանց, ովքեր երկար բացակայությունից հետո դպրոց են վերադարձել,
- չափահաս սովորողների համար:

Ուսումնական պլանների և դասագրքերի մշակումն ու գնահատումը, ինչպես նաև կրթական ծրագրերի պարբերական վերանայումը պետք է ղեկավարվեն կրթության բնագավառում լիազորված մարմնի կողմից:

Սովորողները, ուսուցիչները, ուսուցիչների միություններն ու տուժած համայնքները պետք է ակտիվորեն ներգրավված լինեն: Դասագրքերի վերանայման հանձնաժողովները, այդ թվում՝ տարբեր էթնիկ և խոցելի խմբերի ներկայացուցիչները, կարող են օգտակար լինել շարունակական կողմնակալությունը կանխելու և տարբեր համայնքների միջև խաղաղություն հաստատելու գործում: Պետք է հետևել, որ անհանդուրժողականություն սերմանող ուսումնական նյութերը դասագրքերից հեռացնելիս, լարվածություն չառաջանա:

4. **Առանցքային գիտելիքները** պետք է բացահայտվեն նախքան ուսումնական բովանդակության և ուսուցիչների վերապատրաստման համար նյութերի մշակումը կամ հարմարեցումը: Հիմնարար կրթության համար «առանցքային գիտելիքները» հետևյալն են.
   - գործառնական գրագիտությունը և հաշվելու կարողությունը.
   - հիմնական գիտելիքները, կյանքի հմտությունները, գործնական կարողությունները /ունակությունները/, որոնք անհրաժեշտ են սովորողներին արժանապատիվ կյանք վարելու և, որպես իրենց համայնքի անդամներ, համայնքի կյանքին ակտիվ և նշանակալի մասնակցություն ունենալու համար:

   Առանցքային գիտելիքները պետք է ամրապնդվեն գործնական կի-

ռաման միջոցով: Զարգացումը պետք է սկսել վաղ մանկությունից: Վաղ մանկության շրջանում ձևավորված հմտություններն ու կարողությունները հիմք են հանդիսանում հետագայում հիմնական գիտելիքների ձեռքբերման համար:

5. **Կյանքի հմտությունների ուսուցման բովանդակությունը և հիմնական հասկացությունները**պետք է համապատասխանեն սովորողների տարիքին, փորձին և նրանց շրջապատող միջավայրին: Կյանքի հմտությունների ձևավորումն ու զարգացումը հնարավորություն է ընձեռում սովորողներին վարելու ինքնուրույն և ակտիվ կյանք:

   Կյանքի հմտությունների զարգացման հայեցակարգերը պետք է համապատասխանեն ստեղծված պայմաններին և կարող են վերաբերել հետևյալին.

   - առողջության և հիգիենայի, այդ թվում՝ սեռական և վերարտադրողական առողջության, ինչպես նաև՝ ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի խնդիրներին,
   - երեխաների պաշտպանության և հոգեբանասոցիալական աջակցության հարցերին,
   - մարդու իրավունքների, քաղաքացիության, խաղաղության ամրապնդման և միջազգային մարդասիրական իրավունքի մասին գիտելիքների ընդլայնմանը,
   - աղետների ռիսկերի նվազեցմանն ուղղված և փրկարարական հմտությունների ձևավորման, ինչպես նաև վերգետնյա ականների և չպայթած զինամթերքի մասին տեղեկատվություն տրամադրելու խնդիրներին,
   - մշակույթի, հանգստի, սպորտի ու արվեստի, այդ թվում՝ երաժշտության, պարարվեստի, թատրոնի և կերպարվեստի, մասին գիտելիքներին,
   - կենցաղային և մասնագիտական տեխնիկական հմտությունների ձևավորման հարցերին,
   - բնապահպանական գիտելիքներին,
   - պաշտպանական հմտությունների ձևավորման խնդիրներին, որոնք, մասնավորապես, առնչվում են աղջիկներին ու տղաներին սպառնացող ռիսկերին:

   Ուսուցման բովանդակությունը հող է նախապատրաստում սովորողների կենսապահովման համար: Մասնագիտական-տեխնիկական ուսումնական ծրագրերի բովանդակությունը սահմանվում է աշխա-

տանքի տեղավորման հնարավորությամբ և ներառում է գործնական պարապմունքներ, որոնք նպաստում են հմտությունների ձևավորմանը (տե՛ս նաև Փոքր ձեռնարկությունների ուսուցման և խթանման ցանց»-ի *Տնտեսության հետազնաժամային վերականգնման նվազագույն ստանդարտները*, Աշխատատեղերի ստեղծման ստանդարտը և Ձեռնարկությունների զարգացման ստանդարտները):

Տուժած համայնքներում հակամարտությունների կարգավորման և խաղաղության թեմաներին վերաբերող կրթության բովանդակությունն ու մեթոդաբանությունները կարող են նպաստել խմբերի միջև փոխըմբռմանը: Դրանք կարող են ձևավորել շփման հմտություններ, որոնք կնպաստեն հաշտեցման ու խաղաղության հաստատման գործընթացին: Անհրաժեշտ է զգուշորեն իրականացնել խաղաղության թեմայով ուսումնական նախաձեռնությունները, նպատակ հետապնդելով՝ ապահովել համայնքների պատրաստվածությունը վիճելի կամ ցավոտ հարցերին արձագանքելու գործում (տե՛ս նաև «Կրթության քաղաքականության ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցում 1-ը, էջ 151-152):

6. Սովորողների, ուսուցիչների և կրթության ոլորտի այլ աշխատակիցների **հոգեբանասոցիալական կարիքներն** անհրաժեշտ է ապահովել արտակարգ իրավիճակների բոլոր, այդ թվում վերականգնման, փուլերում: Կրթական անձնակազմը պետք է դասընթացներ անցնի, որոնք թույլ կտան բացահայտելու սովորողների մոտ դրսևորվող սթրեսի նշանները: Նրանք պետք է կարողանան քայլեր ձեռնարկել սթրեսներին արձագանքելու ուղղությամբ, իսկ լրացուցիչ աջակցություն ցուցաբերելու համար կիրառել նաև ուղղորդման մեխանիզմներ: Ուսուցիչների, կրթության ոլորտին աջակցող աշխատակիցների և համայնքի անդամների համար պետք է մշակվեն հատուկ ուղենիշեր դպրոցում և դպրոցից դուրս երեխաներին հոգեբանասոցիալական աջակցություն ցուցաբերելու նպատակով: Սթրեսի ենթարկված սովորողների ուսուցումը պետք է իրականացվի կանխատեսելի միջավայրում, դրական կարգապահական մեթոդներով և կարճատև ժամանակահատվածներով, խթանելու համար վերջիներիս կենտրոնանալու կարողությունը: Բոլոր սովորողները կարող են ներգրավվել ժամանցային և ուսումնական համագործակցային միջոցառումներում: Ուսուցման պատշաճ մեթոդներն ու բովանդակությունը սովորողներին դարձնում են ինքնավստահ և հույս են ներշնչում սեփական ապագայի նկատմամբ (տե՛ս նաև «Հասանելիության և ուսումնական միջավայրի ստանդարտ 2»-ը, ուղղորդող ցուցումներ 8-9, էջ

93-95; «Հասանելիության և ուսումնական միջավայրի ստանդարտ 3»-ը,ուղղորդող ցուցում 8-ը, էջ 103-104 և «Կրթության քաղաքականության ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցում 1-ը, էջ 151-152):

Ուսուցիչները և կրթական ոլորտի այլ աշխատակիցները, որոնք հաճախ հավաքագրվում են տուժած բնակչության շարքերից, նույնպես կարող են գտնվել սթրեսային վիճակում: Այդ վիճակը նրանք կարող են հաղթահարել վերապատրաստումների, մշտադիտարկումների և աջակցության միջոցով: Չի կարելի ակնկալել, որ ուսուցիչները կարող են ստանձնել այնպիսի պարտավորություններ, որոնք վնաս կհասցնեն սովորողների կամ իրենց սեփական հոգեբանասոցիալական բարեկեցությանը (տես նաև «Ուսուցիչներ և կրթական ոլորտի այլ աշխատակիցների ստանդարտ 3»-ը, ուղղորդող ցուցում 6-ը, էջ 145 և «Առողջապահական միջոցառումներ» գլխում Հոգեկան առողջության և հոգեբանասոցիալական բարեկեցության մասին ստանդարտները):

7. Դասավանդման **լեզվի** ընտրության հարցը կարող է վիճահարույց լինել բազմալեզու երկրներում և համայնքներում: Ծայրահեղական մոտեցումները սահմանափակելու նպատակով ուսուցման լեզվի (լեզուների) մասին որոշումները պետք է ընդունվեն փոխզիջման հիմունքներով համայնքի, կրթության ոլորտի կառավարման մարմինների և համապատասխան շահառուների ներգրավմամբ: Ուսուցիչները պետք է կարողանան դասավանդել սովորողների համար հասկանալի լեզվով (լեզուներով), ինչպես նաև հաղորդակցվել ծնողների և համայնքի հետ: Լիարժեք ներգրավվածություն ապահովելու նպատակով խլությամբ և կուրությամբ տառապող սովորողներին պետք է ուսուցանել նրանց հասանելի լեզուներով և մեթոդներով, ապահովելով նրանց մասնակցությունն ուսումնական գործընթացին: Լրացուցիչ դասերն ու միջոցառումները, հատկապես՝ վաղ մանկության շրջանում, պետք է իրականացվեն սովորողների համար մատչելի լեզվով (լեզուներով):

Փախստականների առկայության պարագայում ընդունող երկրները վերջիններիս համար նախատեսված դպրոցներից կարող են պահանջել ուսումնական գործընթացը, այդ թվում՝ լեզուն և ուսումնական ծրագրերը, համապատասխանեցնել նրանց ստանդարտներին: Անհրաժեշտ է ճանաչել փախստական սովորողների իրավունքները: Անհրաժեշտ է հաշվի առնել ապագայում կրթությունը շարունակելու նրանց հնարավորությունները, ինչպես նաև նրանց կարիքները ընդունող կամ արտակարգ իրավիճակի ծագման երկրներում: Ըն-

դունող երկրում երկարատև բնակություն հաստատելու դեպքում սովորողների համար պետք է պայմաններ ստեղծվեն ընդունող երկրի կամ համայնքի լեզուն սովորելու համար: Դա հնարավորություն կընձեռի վերջիններիս համար ինտեգրվել ընդունող համայնքի կենցաղին և շարունակել կրթությունը (տե՛ս նաև «Կրթության քաղաքականության ստանդարտ 1»-ը,ուղղորդող ցուցում 7-ը, էջ 156):

8. Կրթական միջոցառումների մշակման և իրականացման համար **բազմազանությունը** պետք է հաշվի առնվի արտակարգ իրավիճակի բոլոր, ինչպես նաև վերականգնման, փուլերում:Սա ենթադրում է հասարակության տարբեր շերտերի, սովորողների, ուսուցիչների, կրթական ոլորտի այլ աշխատակիցների ու խոցելի խմբերի ներգրավում ուսումնական գործընթացում, ինչպես նաև հանդուրժողականության ու փոխադարձ հարգանքի խրախուսում: Բազմազանության որոշակի ասպեկտներ կարող են պայմանավորված լինել.

- գենդերային հատկանիշներով,
- մտավոր և ֆիզիկական խնդիրներով,
- ուսումնառության ունակությունների տարբեր մակարդակով,
- եկամտային տարբեր խմբերի պատկանելությամբ,
- տարիքային տարբերություններով երեխաներից բաղկացած դասարաններով,
- մշակույթով և քաղաքացիությամբ,
- էթնիկ պատկանելությամբ և կրոնական համոզմունքներով:

Ուսումնական ծրագրերը, նյութերը և դասավանդման մեթոդաբանությունները պետք է բացառեն բնակչության այս կամ այն խմբերի և սովորողների նկատմամբ կանխակալ վերաբերմունքը և հաստատեն արդարություն և հավասարություն: Ծրագրերը պետք է չսահմանափակվեն հանդուրժողականությանը վերաբերող հարցերի քննարկումներով, այլ գործնականում նպաստեն նաև մարդկանց հայացքների և վարվելակերպի փոփոխությանը: Սա է այլ անձանց իրավունքները հարգելու և ճանաչելու ամենաարդյունավետ ճանապարհը: Մարդկային բազմազանության գաղափարը գիտակցելու և ընդունելու նպատակով ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության շրջանակներում սովորողներին գիտելիքներ են մատուցվում մարդու իրավունքների վերաբերյալ: Այդ գիտելիքների մատուցման ժամանակ պետք է հաշվի առնվեն սովորողների տարիքային և մշակութային առանձնահատկությունները: Դասավանդման ժամանակ կարելի է փոխկապակցել միջազգայնորեն ընդունված մարդու իրավունքների դրույթ-

ները, և կյանքի հմտությունները: Ուսուցիչները աջակցության կարիք կունենան առկա նյութերն ու դասավանդման մեթոդները ձևափոխելու հարցում, եթե դասագրքերը և այլ նյութերը դեռևս ենթակա են վերանայման (տես նաև «Դասավանդման և ուսումնառության ստանդարտ 2»-ը, ուղղորդող ցուցում 2-ը, էջ 119-120 և «Կրթության քաղաքականության ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցում 7-ը, էջ 156):

9. **Ուսումնական նյութերի** առկայության մասին անհրաժեշտ է տեղեկանալ արտակարգ իրավիճակների սկզբնական փուլում: Փախստականների կամ տեղահանվածների համար ուսումնական նյութ են հանդիսանում իրենց հայրենի երկրի կամ բնակության վայրի նյութերը: Ըստ անհրաժեշտության, նյութերը պետք է հարմարեցվեն կամ մշակվեն և քանակական առումով մատչելի լինեն բոլորի համար: Այստեղ ներառվում են նաև մատչելի ձևաչափեր կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար: Կրթության ոլորտի պատասխանատու մարմինները, շահագրգիռ այլ մարմինների աջակցությամբ, իրականացնում են ուսումնական նյութերի պահպանման, բաշխման և օգտագործման վերահսկողությունը (տես նաև «Ուսուցիչների և կրթական ոլորտի այլ աշխատակիցների ստանդարտ 3»-ը, ուղղորդող ցուցում 1-ը, էջ 143-144):

Դասավանդման և ուսումնառության ստանդարտ 2. Վերապատրաստում, մասնագիտական կատարելագործում և աջակցություն

Ելնելով կարիքներից ու հանգամանքներից, ուսուցիչները և կրթական ոլորտի այլ աշխատակիցները պետք է պարբերաբար անցնեն համակարգված վերապատրաստում:

Առանցքային գործողություններ (կարդալ ուղղորդող ցուցումներին զուգահեռ)

- Ելնելով անհրաժեշտությունից՝ վերապատրաստման հնարավորությունները պետք է տրվեն ինչպես տղամարդ, այնպես էլ կին ուսուցիչներին և կրթական ոլորտի այլ աշխատակիցներին (տես ուղղորդող ցուցումներ 1-2-ը):
- Վերապատրաստումը պետք է համապատասխանի համատեքստին և արտացոլի ուսումնական նպատակներն ու բովանդակությունը (տես ուղղորդող ցուցումներ 1-2-ը):
- Վերապատրաստման համակարգը պետք է ընդունվի և հաստատվի կրթության ոլորտի կառավարման համապատասխան մարմինների կողմից (տես ուղղորդող ցուցումներ 3-4-ը):
- Վերապատրաստման դասընթացները պետք է վարեն որակավորված դասընթացավարները: Այդ դասընթացները ուսուցիչներին պետք է տրամադրեն հավելյալ հմտություններ են աջակցման, ղեկավարման, վերահսկողության և դասղեկության խնդիրների հաղթահարման համար (տես ուղղորդող ցուցումներ 3-4-ը):
- Վերապատրաստման և շարունակական աջակցության շնորհիվ ուսուցիչները պետք է դառնան ուսումնական միջավայրի արդյունավետ օգնականներ, կիրառելով դասավանդման մասնակցային մեթոդները և ուսումնական ձեռնարկները (տես ուղղորդող ցուցումներ 3-6-ը):
- Վերապատրաստումը պետք է գիտելիքներ ու հմտություններ տրամադրի ֆորմալ և ոչ ֆորմալ ուսումնական ծրագրերով աշխատելու համար և ապահովի ուսուցիչների իրազեկվածությունը վտանգների, բնական աղետների ռիսկերի նվազեցման և հակամարտությունների կանխարգելման բնագավառներում (տես ուղղորդող ցուցում 6-ը):

Ուղղորդող ցուցումներ

1. **«Ուսուցիչ»** բառը վերաբերում է ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական ծրագրերում աշխատող ուսուցիչներին, հրահանգիչներին և վերապատրաստողներին: Ուսուցիչները կարող են տարբերվել իրենց փորձով և մասնագիտական պատրաստության մակարդակով: Ուսուցիչ կարող են լինել ավագ դասարանների աշակերտները, ինչպես նաև համայնքի ավագ անդամները (տե՛ս նաև «Ուսուցիչների և կրթական ոլորտի այլ աշխատակիցների ստանդարտներ 1-3»-ը, էջ 135-145):

2. **Ֆորմալ կրթության ուսումնական ծրագրերի և բովանդակության մշակումը** կրթության կառավարման մարմինների պարտականությունն է: Ուսումնական ծրագրերն ու դրանց բովանդակությունը պետք է արտացոլեն սովորողների կարիքներն ու իրավունքները, ինչպես նաև կրթական անձնակազմի որոշակի պահանջմունքները՝ մանկավարժական կադրերի վերապատրաստմանը հատկացվող բյուջեի և ժամանակային սահմանափակումների շրջանակներում:

   Դասընթացի բովանդակային մասը ներառում է.

   - հիմնական գիտելիքները, հմտությունները, կարողությունները, ինչպիսիք են՝ գրագիտությունը, հաշվելու ունակությունը և, համատեքստին համապատասխան, կյանքի հմտությունները, այդ թվում նաև առողջապահական խնդիրները,
   - մանկավարժության ու դասավանդման մեթոդաբանության հարցերը, այդ թվում՝ առարկայի դասավանդման, դասարանական աշխատանքի մեթոդները, ակտիվ ուսումնառության և ներառական կրթության խնդիրները,
   - ուսուցիչների և կրթական ոլորտի այլ աշխատակիցների վարքագծի կանոնագիրքը, որտեղ նշվում է սովորողների դեմ ուղղված գենդերային բռնության դատապարտումը, համապատասխան զեկուցման և ուղղորդման մեխանիզմները,
   - աղետների ռիսկերի նվազեցման և հակամարտությունների կանխարգելման սկզբունքները,
   - հոգեբանասոցիալական զարգացումն ու աջակցությունը, հաշվի առնելով թե՛ սովորողների, թե՛ ուսուցիչների կարիքները և նրանց համար տեղական ծառայությունների և ուղեգրման համակարգերի մատչելիությունը,
   - մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքները և հումանիտար իրավունքի հեռանկարները, վերջիններիս իմաս-

տի ու նպատակների ընկալումը, ինչպես նաև դրանց ուղղակի և անուղղակի կապը սովորողների, ուսուցիչների, համայնքի և կրթության ոլորտի մարմինների կարիքների և պարտականությունների հետ.

- համատեքստին համապատասխանող այլ դրույթներ:

Վերապատրաստման նախաձեռնությունները պետք է միտված լինեն լուծելու բազմազանությանն և խտրականությանն առնչվող խնդիրները:: Օրինակ, գենդերազգայուն ուսուցման ռազմավարությունները խրախուսում են երկու սեռին էլ պատկանող ուսուցիչներին ըմբռնել գենդերային հավասարության գաղափարը և նպաստել դրա հաստատմանը դասարաններում: Կրթական անձնակազմի և համայնքի իգական սեռին պատկանող անդամների վերապատրաստումը կարող է հանգեցնել դրական փոփոխությունների թե դասարաններում, և թե համայնքում (տե՛ս նաև «Դասավանդման և ուսումնառության ստանդարտ 1»-ը, էջ 109-117; «Հասանելիության և ուսումնական միջավայրի ստանդարտ 2»-ը, ուղղորդող ցուցումներ 2-3-ը և 8-ը, էջ 88-90 և 95; «Հասանելիության և ուսումնական միջավայրի ստանդարտ 3»-ը, ուղղորդող ցուցում 8-ը, էջ 103-104, ինչպես նաև «Ուսուցիչների և կրթական ոլորտի այլ աշխատակիցների ստանդարտ 3»-ը, էջ 143-145):

3. **Վերապատրաստման աջակցություն և համակարգում:** Հնարավորության սահմաններում կրթության ոլորտի կառավարման մարմինները պետք է ստանձնեն ուսուցիչների ֆորմալ և ոչ ֆորմալ վերապատրաստման միջոցառումների նախագծման ու իրականացման ղեկավարումը: Եթե կրթության ոլորտի կառավարման մարմիններն ի վիճակի չեն ղեկավարել այս գործընթացը, ապա այդ գործառույթը կարող է ստանձնել միջգերատեսչական համակարգող հանձնաժողովը: Վերապատրաստման պլաններում պետք է ներառվեն մանկավարժական պրակտիկան և ուսուցիչների վերապատրաստումը, իսկ անհրաժեշտության դեպքում նաև, ուսուցիչների վերապատրաստում իրականացնող հաստատությունների և համալսարանների վերականգնումը: Այս հաստատությունները կենսական դեր են կատարում կրթության ոլորտի կայունացումն ապահովելու գործում (տե՛ս նաև «Համակարգման ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցում 1-ը, էջ 48 և «Ուսուցիչների և կրթական ոլորտի այլ աշխատակիցների ստանդարտ 3»-ը, ուղղորդող ցուցումներ 3-4-ը, էջ 144-145):

Արձագանքելով արտակարգ իրավիճակներին՝ կրթության ոլորտի կառավարման ազգային մարմիններն ու համապատասխան այլ շա-

հառուները պետք է երկխոսություն սկսեն ուսուցիչների որակավորման բարձրացման ծրագրերի և դրանց ճանաչման մեխանիզմների վերաբերյալ: Հնարավորության դեպքում վերապատրաստումները պետք է միտված լինեն բավարարելու որակավորված ուսուցչի կարգավիճակին ներկայացվող ազգային պահանջները: Անհրաժեշտ է ներառել նաև արտակարգ իրավիճակներին առնչվող լրացուցիչ այլ տարրեր, օրինակ, վերապատրաստման համապատասխանելիությունը հոգեբանասոցիալական պահանջմունքներին: Այն վայրերում, որտեղ փախստականների կրթական համակարգերը տարբերվում են տեղական կրթական համակարգերից, փախստական ուսուցիչների որակավորման բարձրացումը պետք է իրականացվի համաձայն աղետի ծագման կամ ապաստան տրամադրած երկրներում գործող ուսուցիչների վերապատրաստման կարգի:

Ուսուցիչների վերապատրաստման նպատակով պետք է ընտրվեն տեղական հրահանգիչներ /դասընթացավարներ, մեթոդիստներ/՝ ուսուցիչների համար պատշաճ վերապատրաստման ծրագրեր մշակելու և իրականացնելու համար: Կարող է անհրաժեշտ լինել աջակցության և վերապատրաստման հմտությունների կարողությունների զարգացում: Անհրաժեշտ է խրախուսել տղամարդ և կին դասընթացավարների և վերապատրաստվողների միջև հավասարակշռությունը: Սահմանափակ թվով կամ ոչ պատշաճ վերապատրաստում անցած դասընթացավարների դեպքում պետք է հզորացվեն այն հաստատությունները, որոնք տրամադրում են աշխատանքին զուգահեռ և նախապատրաստական դասընթացներ: Սա պետք է լինի ազգային և տարածաշրջանային հաստատությունների և արտաքին գործակալությունների, ինչպիսիք են ՄԱԿ-ի գործակալությունները և ՀԿ-ները, համակարգված ջանքերի արդյունք:

Այդ հաստատությունները կարող են.

- վերանայել ուսուցիչների վերապատրաստման ուսումնական պլանները և դասագրքերը,
- թարմացնել ուսուցիչների վերապատրաստման բովանդակությունը ՝ հաշվի առնելով նոր տվյալներն ու արտակարգ իրավիճակներում աշխատելու առանձնահատկությունները,
- ապահովել դասավանդման գործնական փորձը, օրինակ, աշխատել որպես ուսուցիչների օգնականներ կամ պրակտիկանտներ:

4. **Վերապատրաստման ճանաչում և հավաստագրում:** Արտակարգ

իրավիճակների սկզբից մինչև վերականգման փուլ ընկած ժամանակահատվածում կրթության ոլորտի կառավարման մարմինների կողմից ուսուցիչների ընդունումն ու հավաստագրումը շատ կարևոր նշանակություն ունեն վերջիններիս վերապատրաստման որակի և դրա ճանաչման համար: Փախստական ուսուցիչների դեպքում հայրենի կամ ընդունող երկրներում կամ տարածքում կրթության ոլորտի կառավարման մարմինները պետք է որոշեն, թե արդյո՞ք վերապատրաստումն ընդունելի է իրենց համար և հարմարեցված սովորողների և ուսուցիչների կարիքներին (տե՛ս նաև «Կրթության քաղաքականության ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցում 7-ը, էջ 156):

5. **Ուսումնամեթոդական նյութեր:** Ուսուցիչները պետք է վերապատրաստվեն այնպես, որ հիմնվելով ուսումնական ծրագրերի վրա, կարողանան բացահայտել հատուկ ուսումնական ձեռնարկներում տեղ գտած թերությունները: Նրանք պետք է սովորեն, թե ինչպես մշակել արդյունավետ և համապատասխան ուսումնական ձեռնարկներ՝ օգտագործելով տեղական հասանելի նյութերը (տե՛ս նաև «Դասավանդման և ուսումնառության ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցում 9-ը, էջ 117 և «Ուսուցիչների և կրթական ոլորտի այլ աշխատակիցների ստանդարտ 3»-ը, ուղղորդող ցուցում 1-ը, էջ 143-144):

6. **Վտանգների մասին իրազեկվածություն, ռիսկերի նվազեցում և արձագանքման պատրաստվածություն:** Ուսուցիչները պետք է ունենան անհրաժեշտ հմտություններ և գիտելիքներ, որպեսզի կարողանան օգնել սովորողներին և համայնքի անդամներին կանխելու արտակարգ իրավիճակները և մեղմացնելու դրանց հետևանքները: Ռիսկերի նվազեցման և հակամարտությունների կանխարգելման թեմաները դասավանդման ծրագրերի մեջ ներառելու հարցում նրանք կարող են աջակցության կարիք ունենալ: Այն ենթադրում է այնպիսի տեղեկատվություն և հմտություններ, որոնք անհրաժեշտ են համայնքների առջև ծառացած հնարավոր վտանգներն ու աղետները կանխելու և վերջիններիս արձագանքելու համար (տե՛ս նաև «Վերլուծության ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցում 3-ը, էջ 54-56; «Հասանելիության և ուսումնական միջավայրի ստանդարտ 2»-ը, ուղղորդող ցուցում 11-ը, էջ 95-96; «Հասանելիության և ուսումնական միջավայրի ստանդարտ 3»-ը, ուղղորդող ցուցումներ 1-2-ը, էջ 98-100 և «Կրթության քաղաքականության ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցումներ 2-ը և 6-ը, էջ 152-156):

Դասավանդման և ուսումնառության ստանդարտ 3. Ուսուցման և ուսումնառության գործընթացներ

Ուսուցման և ուսումնառության գործընթացները պետք է լինեն սովորողակենտրոն, մասնակցային և ներառական:

Առանցքային գործողություններ (կարդալ ուղղորդող ցուցումներին զուգահեռ)

- Դասավանդման մեթոդները պետք է համապատասխանեն սովորողների տարիքին, զարգացման մակարդակին, լեզվին, մշակույթին, կարողություններին և կարիքներին (տե՛ս ուղղորդող ցուցումներ 1-3-ը):
- Սովորողների հետ փոխգործակցության ընթացքում ուսուցիչները պետք է կարողանան դրսևորել դասընթացի բովանդակության ըմբռնումը և դասավանդման հմտությունները (տե՛ս ուղղորդող ցուցումներ 1-3-ը):
- Ուսուցման և ուսումնառության գործընթացները պետք է բավարարեն ն բոլոր սովորողների, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց, կարիքները, խթանեն ներառականությունն ու հաղթահարեն ուսուցման խոչընդոտները (տե՛ս ուղղորդող ցուցում 2-ը):
- Ծնողները և համայնքի ղեկավարները պետք է ըմբռնեն և ընդունեն կրթության բովանդակությունը և դասավանդման կիրառվող մեթոդները (տե՛ս ուղղորդող ցուցում 3-ը):

Ուղղորդող ցուցումներ

1. **Ակտիվ ներգրավվածություն.** սովորողների ակտիվ ներգրավվածությունը կարևոր է տարիքային և զարգացման յուրաքանչյուր մակարդակում: Դասավանդումը պետք է լինի ինտերակտիվ և մասնակցային և ապահովի դասի ժամանակ բոլոր սովորողների ներգրավվածությունը: Դասավանդման ընթացքում պետք է օգտագործվեն դասավանդման և ուսումնառության համապատասխանող մեթոդներ: Վերջիններս կարող են ներառել խմբային և նախագծային աշխատանք, փոխադարձ ուսուցում, դերախաղ, պատմությունների շարադրանք կամ իրադարձությունների նկարագրություն, խաղերի, տեսանյութերի կամ պատմվածքների ներկայացում: Այս մեթոդները պետք է ներառվեն դպրոցական դասագրքերում, ուսուցիչների վերապատրաստման և ուսումնական ծրագրերում: Կարող է անհրա-

ժեշտ լինել առկա ուսումնական պլանները հարմարեցնել ակտիվ ուսուցման նպատակներին:

Կրտսեր տարիքի երեխաները սովորում են խաղերի միջոցով: Նրանց ուսուցումը պետք է հիմնված լինի ակտիվ խաղերի և փոխգործողությունների վրա: Ուսուցչի ղեկավարությամբ կազմակերպվող խաղերը կարող են ձևավորել թե՛ հասակակիցների, թե՛ ուսուցիչների հետ շփվելու հմտություններ և ունակություններ: Պետք է աջակցել կրտսեր տարիքի երեխաների ծնողներին և խնամողներին, որպեսզի վերջիններս ըմբռնեն և կիրառեն հետևյալը.

- երեխաների կարիքների նկատմամբ դրսևորեն զգայունություն և պատասխանատվություն,
- կիրառեն կրտսեր տարիքի երեխաների խնամքի մեթոդները,
- կիրառեն խաղային այնպիսի մեթոդներ, որոնց շնորհիվ երեխաներն ակտիվորեն կներգրավվեն ուսումնական գործընթացում ի նպաստ նրանց զարգացմանը:

2. **Ուսուցման խոչընդոտները:** Պետք է աջակցել ուսուցիչներին, ծնողների, համայնքի անդամների, կրթության ոլորտի կառավարման մարմինների և համապատասխան այլ շահառուների հետ արտակարգ իրավիճակներում ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական միջոցառումների կարևորության մասին քննարկումներում: Նրանք կարող են քննարկել իրավունքներին, բազմազանությանը, ներգրավմանը, ինչպես նաև կրթական միջոցառումներին չմասնակցող երեխաների և երիտասարդների հետ տեղեկատվաքարոզչական աշխատանքներին վերաբերող խնդիրները: Նման քննարկումներն ունեն կարևոր նշանակություն և պետք է նպաստեն, որպեսզի մարդիկ ըմբռնեն և օժանդակեն բոլոր երեխաների ներգրավվածությանը, ինչպես նաև ապահովեն նրանց համապատասխան մեթոդական նյութերով և միջոցներով: Այնպիսի խմբերը, ինչպիսիք են ուսուցիչ-ծնող միավորումները, դպրոցների ղեկավարները և կրթության հասարակական կազմակերպությունները պետք է համախմբվեն ուսուցման խոչընդոտները բացահայտելու և ծրագրեր մշակելու, ինչպես նաև՝ համայնքային մակարդակում դրանք վերացնելու նպատակով (տես նաև «Հասանելիության և ուսումնական միջավայրի ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցում 7-ը, էջ 84-85):

3. **Դասավանդման համապատասխան մեթոդները:** Արտակարգ իրավիճակներում, ինչպես նաև վերականգնման փուլում, ֆորմալ կրթության ոլորտի ուսուցիչներին պետք է ընձեռվի դրական փո-

փոխությունների հնարավորություն: Դասավանդման մեթոդները կարելի է փոփոխել այնպես, որ դրանք ընդունելի լինեն և հարմարեցվեն համատեքստին, ինչպես նաև անդրադառնան սովորողների իրավունքներին, կարիքներին, ինչպես նաև հատուկ կարիքներին, տարիքին և կարողություններին վերաբերող խնդիրներին: Սակայն, առավել մասնակցային կամ անձակենտրոն ուսուցման մեթոդները պետք է կիրառվեն զգուշությամբ և խնամքով: Նոր մեթոդաբանությունների կիրառումը, հատկապես արտակարգ իրավիճակների սկզբնական փուլում, կարող է սթրեսային լինել նույնիսկ փորձառու ուսուցիչների համար, ինչը կարող է բացասաբար անդրադառնալ սովորողների, ծնողների և համայնքի անդամների վրա (տե՛ս նաև Դասավանդման և ուսումնառության վերաբերյալ ԱԻԿՄՑ ուղղորդող ցուցումները, որոնք առկա են ԱԻԿՄՑ գործիքակազմում՝ **www.ineesite.org/toolkit**):

Ուսուցման և դասավանդման մեթոդներում իրականացվող փոփոխությունները պետք է հաստատվեն, համակարգվեն և ստանան կրթության ոլորտի կառավարման մարմինների աջակցությունը: Ժամանակ կպահանջվի, մինչև դպրոցը և համայնքը կըմբռնեն և կընդունեն այս փոփոխությունները: Անհրաժեշտ է երաշխավորել, որ ծնողների և համայնքի այլ անդամների մտահոգությունները կբավարարվեն: Ուսուցիչները պետք է ծանոթ լինեն նոր բովանդակությանը և սովորողների իրազեկվածության ու վարքի մեջ ակնկալվող փոփոխություններին:

Ոչ ֆորմալ կրթության գործընթացին միջամտելու համար սովորողակենտրոն մոտեցումները կարող են ներկայացվել կամավորների, վերապատրաստողների, օգնականների /ֆասիլիտատորների/ ու դաստիարակների վերապատրաստման և շարունակական աջակցության միջոցով: Մեթոդաբանությունները պետք է համապատասխանեն ուսումնական ծրագրին, անդրադառնան տարրական կրթության հիմնական գիտելիքներին, այդ թվում՝ գրագիտությանը, հաշվելու ունակություններին, կյանքի հմտություններին, որոնք անմիջականորեն կապված են արտակարգ իրավիճակների համատեքստի հետ (տե՛ս «Դասավանդման և ուսումնառության ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցում 4-ը, էջ 112-113):

Դասավանդման և ուսումնառության ստանդարտ 4. Ուսումնառության վերջնարդյունքների գնահատում

Ուսումնառության վերջնարդյունքների գնահատման և ստուգման համար պետք է կիրառվեն համապատասխան մեթոդներ:

Առանցքային գործողություններ (կարդալ ուղղորդող ցուցումներին զուգահեռ)

- Սահմանված նպատակներին հասնելու համար սովորողների առաջընթացի շարունակաբար իրականացվող վերլուծությունը և գնահատումը թույլ են տալիս ճշգրտել դասավանդման մեթոդները (տե՛ս ուղղորդող ցուցում 1-ը):
- Պետք է ճանաչվեն սովորողների ձեռքբերումները և, համապատասխանաբար, դասընթացի ավարտին տրամադրվեն ավարտական վկայականներ (տե՛ս ուղղորդող ցուցում 2-ը):
- Մասնագիտական-տեխնիկական ուսումնական հաստատությունների շրջանավարտների ձեռքբերումները պետք է գնահատվեն մշտապես փոփոխվող միջավայրին համապատասխան իրականացվող ծրագրերի որակի և արդիականության չափանիշներով (տե՛ս ուղղորդող ցուցում 2-ը):
- Նախնական և ընթացիկ գնահատման մեթոդները սովորողների համար պետք է լինեն արդար, հուսալի և անվտանգ (տե՛ս ուղղորդող ցուցում 3-ը):
- Գնահատումները պետք է համապատասխանեն սովորողների կրթական և տնտեսական ապագա կարիքներին (տե՛ս ուղղորդող ցուցում 4-ը):

Ուղղորդող ցուցումներ

1. **Նախնական և ընթացիկ գնահատման արդյունավետ մեթոդներն ու միջոցները** պետք է ներկայացվեն՝ հաշվի առնելով հետևյալը.
   - Համապատասխանությունը. թեստերն ու քննությունները պետք է համապատասխանեն ուսումնառության համատեքստին և սովորողների տարիքին (ստորև տե՛ս նաև ուղղորդող ցուցում 4-ը):
   - Հետևողականությունը. բոլոր ուսուցիչները պետք է ծանոթ լինեն գնահատման մեթոդներին և ամենուր նույնությամբ կիրառեն դրանք:

- Հնարավորությունը. բացակա սովորողներին պետք է տրվի գնահատման ևս մեկ հնարավորություն:
- Ժամկետները. գնահատումները պետք է անցկացվեն ուսուցման ընթացքում և վերջում:
- Հաճախականությունը. արտակարգ իրավիճակները կարող են ազդել վերջինիս վրա:
- Ապահով և պատշաճ պայմանները. ֆորմալ գնահատումները պետք է իրականացվեն կրթական անձնակազմի կողմից ապահով վայրում:
- Թափանցիկությունը. գնահատման արդյունքները պետք է տրամադրվեն սովորողների և քննարկվեն նրանցհետ, իսկ երեխաների դեպքում՝ վերջիններիս ծնողների հետ: Հնարավորության և նպատակահարմարության դեպքում գնահատման առանցքային փուլերում կարող են ներգրավվել արտաքին քննողներ:
- Հարմարությունների ստեղծումը հաշմանդամություն ունեցող երեխաների համար. հատկացվում է ավելի երկար ժամանակ, իսկ հմտություններն ու կարողությունները ցուցադրվում են համապատասխան այլընտրանքային միջոցներով (տես նաև ԱԻԿՄՑ *Գրպանի ուղեցույցը հաշմանդամություն ունեցող անձանց ուսման գործում օժանդակելու վերաբերյալ* ԱԻԿՄՑ գործիքակազմում՝ **www.ineesite.org/toolkit**):

2. **Գնահատման արդյունքները:** Ֆորմալ կրթական ծրագրերում գնահատումն իրականացվում է այնպես, որ սովորողների ձեռքբերումներն ու քննության արդյունքները ճանաչվեն կրթության ոլորտի կառավարման մարմինների կողմից: Անհրաժեշտ է ջանքեր գործադրել, որպեսզի աղետի ծագման երկրում կամ տարածաշրջանում կրթության ոլորտի կառավարման մարմինների կողմից ընդունվեն փախստականների համար նախատեսված կրթական ծրագրերը: Տեխնիկական և մասնագիտական կրթության ու վերապատրաստման համար վերապատրաստման ծառայություններ մատուցողները պետք է հետևեն ազգային հավաստագրման ստանդարտներին: Դասընթացների ավարտին վերապատրաստվողներին կարող են հանձնվել դիպլոմներ և հավաստագրեր:
3. **Էթիկայի նորմերի պահպանումը գնահատման ժամանակ:** Վերլուծության և արդյունքների գնահատման մեթոդները պետք է մշակվեն և կիրառվեն համաձայն էթիկայի կանոնագրքի: Սա նշանակում է, որ դրանք պետք է լինեն արդար, վստահելի և կիրառվեն այնպես,

որ սովորողների մոտ վախ չառաջանա: Իրենց հերթին, սովորողները չպետք է անհանգստանան դպրոցի կամ ծրագրի շրջանակներում լավ գնահատականներ ստանալու կամ առաջխաղացում դրսևորելու մասին: Նշված արդյունքի ձեռքբերմանը կարող են նպաստել մշտադիտարկումները, ինչպես նաև վերահսկիչների և համայնքի անդամների պարբերական ստուգումները (տե՛ս նաև «Հասանելիության և ուսումնական միջավայրի ստանդարտ 2»-ը, ուղղորդող ցուցումներ 4-ը և 9-ը, էջ 90-91 և 94-95):

4. **Համապատասխանությունը:** Գնահատումների բովանդակությունն ու օգտագործվող մեթոդներն անմիջականորեն կապված են ուսումնասիրվող նյութի հետ: Ուսուցման նպատակներն արտահայտվում են ուսումնական ծրագրերի միջոցով: Հնարավորության դեպքում պետք է ձգտել, որպեսզի գնահատումներն արտահայտեն փաստացի ուսուցանված նյութը, այլ ոչ թե չափորոշված ուսումնական ծրագրերը, այդպիսով արտացոլելով փաստացի ուսումնառությունը, այլ ոչ թե ուսուցման գործընթացի թերությունները:

   Ուսուցիչներն ու կրթական ոլորտի այլ աշխատակիցները պետք է կիրառեն համապատասխան և մատչելի գնահատման գործիքներ ու մեթոդներ: Գնահատման գործիքների օգտագործման վերաբերյալ ցուցումներն ու վերապատրաստումը կնպաստեն արդյունավետության բարձրացմանը: Համայնքի անդամները կարող են մասնակցել ուսումնական գործընթացի ու դասավանդման արդյունավետության գնահատմանը: Սա կարող է նպատակահարմար լինել, հատկապես, մեծ թվով կամ տարբեր կրթամակարդակի սովորողներ ունեցող դասարանների, կամ կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցող սովորողների առկայության դեպքում:

Այս ստանդարտների իրականացմանն օժանդակող գործիքների համար այցելեք ԱԻԿՄՑ գործիքակազմ՝www.ineesite.org/toolkit գործիքակազմ՝ www.ineesite.org/toolkit

ԱԻԿՄՑ գործիքակազմ ↳ ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտներ ↳ Իրականացման գործիքներ ↳ Դասավանդում և ուսումնառություն	ԱԻԿՄՑ գործիքակազմ ↳ Ուղղորդող ցուցումներ դասավանդման և ուսումնառության վերաբերյալ ↳ Դասավանդման և ուսումնառության ռեսուրսների փաթեթ

4 ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԱՅԼ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ

Հիմնարար չափորոշիչների բաժին. Համայնքային մասնակցություն, համակարգում, վերլուծություն

Ուսուցիչների և մանկավարժական այլ աշխատողների բաժին

Ստանդարտ 1 Հավաքագրում և ընտրություն

Զգալի թվով համապատասխան որակավորում ունեցող ուսուցիչներն ու մանկավարժական այլ աշխատողները հավաքագրվում են մասնակցային և թափանցիկ ընթացակարգերով՝ հիմնվելով բազմազանությունն և հավասարությունն արտացոլող ընտրության չափորոշիչների վրա:

Ստանդարտ 2 Աշխատանքային պայմաններ

Ուսուցիչներն ու մանկավարժական այլ աշխատողներն ունեն հստակ սահմանված աշխատանքային պայմաններ և համապատասխան վարձատրություն:

Ստանդարտ 3 Աջակցություն և ղեկավարում

Ուսուցիչների և մանկավարժական այլ աշխատողների համար նախատեսված աջակցության և վերահսկման մեխանիզմներն արդյունավետ են գործում:

Արտակարգ իրավիճակներում (ինչպես նաև վերականգնման փուլում) ուսուցիչներն ու կրթական ոլորտի այլ աշխատակիցներն ապահովում են երեխաների և երիտասարդների կրթական կարիքները: Նրանք կարող են տարբերվել մասնագիտական կարգավիճակով՝ սկսած բուհական կրթություն ստացած պետական աշխատողներից մինչև կամավորներ կամ համայնքային մանկավարժներ, որոնք ստացել են կարճատև ֆորմալ կրթություն: «Ուսուցիչներ և կրթական ոլորտի այլ աշխատակիցներ» եզրույթը վերաբերում է.

- դասարանների ղեկավարներին /դասղեկ/ և նրանց օգնականներին,
- երեխաների վաղ դաստիարակությամբ զբաղվող ուսուցիչներին և նախադպրոցական կրթական հաստատությունների դաստիարակներին,
- կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցող սովորողների համար նախատեսված հատուկ մանկավարժներին,
- առարկայական մասնագետներին և տեխնիկական մասնագիտական ուսումնարանների հրահանգիչներին /վարպետներ/,
- երեխաների համար նախատեսված տարածքներում ուսուցիչների օգնականներին,
- համայնքային կամավորներին, կրոնի ուսուցիչներին և կյանքի հմտություններ դասավանդող հրահանգիչներին.
- ավագ մանկավարժներին, դպրոցների տնօրեններին, դպրոցական հրահանգիչներին և և կրթության ոլորտի այլ պաշտոնատար անձանց:

Ուսուցիչների և կրթական ոլորտի այլ աշխատակիցների դերերն ու պարտավորությունները կախված են կրթության (ֆորմալ և ոչ ֆորմալ) և ուսումնական միջավայրի տեսակից: Արտակարգ իրավիճակներում կրթական նախագծերի մշակման գործում կարևոր բաղադրիչներ են համարվում ուսուցիչների և կրթական ոլորտի այլ աշխատակիցների մասնագիտական կատարելագործումը և նրանց մասնակցությունը որոշումների կայացման գործընթացում:

Ուսուցիչների և կրթական ոլորտի այլ աշխատակիցների բացահայտումը, հավաքագրումն ու ընտրությունը պետք է լինի ոչ խտրական, մասնակցային և թափանցիկ: Անհրաժեշտ է ապահովել գենդերային հավասարակշռությունը և համայնքային ներկայացուցչությունը: Ուսուցիչներն ու կրթական ոլորտի այլ աշխատակիցները պետք է ունենան համապատասխան փորձառություն և հմտություններ, ինչպես նաև պետք է վարձատրվեն պատշաճորեն: Նրանք պետք է ազատ լինեն միավորումներ ւ

և արհմիություններ կազմելու համար: Վարքագծի կանոնները, դերերն ու պարտականությունները, ղեկավարման մեխանիզմները, աշխատանքի պայմանները, պայմանագրային համաձայնությունները, վարձատրությունը և աշխատանքային իրավունքը լավագույնս մշակվում են տուժած համայնքների հետ քննարկումների արդյունքում:

Արտակարգ իրավիճակներում անհրաժեշտ է աջակցել ուսուցիչներին ու կրթական ոլորտի այլ աշխատակիցներին, որպեսզի նրանք կարողանան սկսել վերականգնման և ուսումնական գործընթացը: Կրթությունն արտակարգ իրավիճակներում, ինչպես նաև վերականգնման փուլում, ամրապնդում է դիմակայունության կարողությունը, երեխաներին, երիտասարդներին և համայնքներին տրամադրելով արտակարգ իրավիճակներում գոյատևելու մասին տեղեկատվություն, ուսման հնարավորություններ և սոցիալական աջակցություն անվտանգ ապագա կառուցելու համար: Արտակարգ իրավիճակներում, ինչպես և վերականգնողական փուլում, ուսուցիչներն ու կրթական ոլորտի այլ աշխատակիցները կարևոր ներդրում են կատարում արտակարգ իրավիճակներում կրթության համակարգի գործունեության համար:

Ուսուցիչների և կրթական ոլորտի այլ աշխատակիցների ստանդարտ 1. Աշխատակիցների հավաքագրում և ընտրություն

Ուսուցիչները և կրթական ոլորտի այլ աշխատակիցները պետք է հավաքագրվեն ընդհանուր և թափանցիկ ընտրությամբ, ինչը պետք է հիմնված լինի բազմազանության և հավասարության չափանիշների վրա:

Առանցքային գործողություններ (կարդալ ուղղորդող ցուցումներին զուգահեռ)

- Աշխատանքի պարզ, համապատասխան, ոչ խտրական նկարագրություններն ու ուղեցույցները պետք է մշակվեն մինչև հավաքագրման գործընթացը (տե՛ս ուղղորդող ցուցում 1-ը):
- Ներկայացուցչական ընտրական հանձնախումբը ուսուցիչներին և կրթական ոլորտի այլ աշխատակիցներին պետք է ընտրի, հիմնվելով թափանցիկության ստանդարտների և մասնագիտական ունակությունների գնահատման վրա, ինչպես նաև հաշվի առնելով համայնքի համաձայնության, սեռի և բազմազանության գործոնները (տե՛ս ուղղորդող ցուցումներ 2-4-ը):
- Աշխատանքի ընդունված ուսուցիչների և կրթական ոլորտի այլ աշխատակիցների թիվը պետք է բավարար լինի խուսափելու համար ուռճացված դասարաններից (տե՛ս ուղղորդող ցուցում 5-ը):

Ուղղորդող ցուցումներ

1. **Աշխատանքային պարտավորությունների նկարագրերում** պետք է զերծ մնալ խտրականության դրսևորումներից, ելնելով գենդերային, էթնիկ, կրոնական պատկանելիության, հաշմանդամության և բազմազանության սկզբունքներից:

   Նկարագրերում ներկայացվում են.

   - դերերը և պարտականությունները,
   - հաշվետվողականության վերաբերյալ հստակ պատկերացումները,
   - վարքագծի կանոնները:

   (Տե՛ս նաև «Ուսուցիչների և կրթական ոլորտի այլ աշխատակիցների ստանդարտ 2»-ը, ուղղորդող ցուցում 1-ը, էջ 139-140):

2. **Փորձառություն և որակավորումներ**: Կարևոր է հավաքագրել որակավորված ուսուցիչների: Նրանք պետք է տիրապետեն սովորողներին հոգեբանասոցիալական աջակցություն ցուցաբերելու և հաշմանդամություն ունեցող անձանց դասավանդելու հմտություններին: Եթե որակավորված ուսուցիչներն արտակարգ իրավիճակների հետևանքով չեն կարող ներկայացնել հավաստագրեր կամ այլ փաստաթղթեր, ապա պետք է գնահատվեն նրանց դասավանդման հմտությունները: Եթե որակավորված ուսուցիչների քանակը բավարար չէ, ապա պետք է նկատի առնել նաև դասավանդման պակաս փորձ ունեցող կամ բոլորովին փորձ չունեցող ուսուցիչներին: Անհրաժեշտ կլինի այս ուսուցիչների համար կազմակերպել վերապատրաստումներ՝ հիմնվելով նրանց կրթական մակարդակի և դասավանդման փորձի գնահատականի վրա:

   Հնարավորության դեպքում պետք է հավաքագրվեն սովորողների մայրենի լեզվին (լեզուներին) տիրապետող ուսուցիչներ: Անհրաժեշտության և նպատակահարմարության դեպքում խորհուրդ է տրվում կազմակերպել ինտենսիվ դասընթացներ ազգային կամ հյուրընկալող երկրի լեզվով (լեզուներով) (տե՛ս նաև «Դասավանդման և ուսումնառության ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցում 7-ը, էջ 115-116):

   Որոշ դեպքերում ուսուցիչների և կրթական ոլորտի այլ աշխատակիցների հավաքագրման և ընտրության գործընթացում անհրաժեշտ է ակտիվ աշխատել գենդերային հավասարակշռության ապահովման ուղղությամբ: Այս գործընթացում պետք է ներառել հավաքագրման ստանդարտների հարմարեցումը ընտող հանձնախմբի հետքննարկումների միջոցով: Համաձայն աշխատանքի և մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերի, օրենքների և կանոնակարգերի, ուսուցիչների և կրթական ոլորտի այլ աշխատակիցների նվազագույն տարիքը պետք է լինի 18 տարեկանը: Երբեմն կրթության ոլորտում որպես կամավորներ և օգնականներ աշխատելու նպատակով կարելի է հավաքագրել ավելի երիտասարդ անձանց:

3. **Ուսուցիչների ընտրության չափանիշները** կարող են ներառել հետևյալ պահանջները.

   Մասնագիտական որակավորումներ և հատկանիշներ.

   - ակադեմիական կրթությունը,
   - ուսուցչական, այդ թվում՝ սահմանափակ կարողություններ ունեցող երեխաների դասավանդման փորձը,
   - Երեխաների և երիտասարդների հոգեբանասոցիալական կա-

րիքների նկատմամբ զգայունությունը,

- տեխնիկական հմտությունները և փորձառությունը,
- համապատասխան լեզվական հմտությունները, այդ թվում նաև տեղական լեզվի, ժեստերի լեզվի կամ Բրայլյան գրերի իմացությունը:

Անձնական որակները.

- տարիքը և սեռը՝ հաշվի առնելով գենդերային հավասարակշռությունը,
- հանդուրժողականությունը,
- էթնիկ և կրոնական պատկանելիությունը,
- բազմազանության գործոնի գիտակցումը, ինչն արտացոլում է համայնքում տիրող իրականությունը:

Անհրաժեշտ է հաշվի առնել սոցիալական թաքնված լարվածությունը և գոյություն ունեցող անհավասարությունը, որոնք կարող են ազդեցություն ունենալ հավաքագրման գործընթացի վրա (տե՛ս նաև «Դասավանդման և ուսումնառության ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցում 8-ը, էջ 116-117):

Այլ որակավորումներ.

Ուսուցիչներն ու կրթական ոլորտի այլ աշխատակիցները պետք է համագործակցեն համայնքի հետ և ընդունվեն վերջինիս կողմից: Հնարավորության դեպքում նրանք պետք է ընտրվեն անմիջապես տուժած համայնքից, քանզի ավելի լավ են ընկալում տեղաբնակների սոցիալական, տնտեսական և քաղաքական խնդիրները: Երբ աշխատանքի են ընդունվում համայնքի սահմաններից դուրս բնակվող ուսուցիչներ կամ կրթական ոլորտի այլ աշխատակիցներ, ապա անհրաժեշտություն է առաջանում նրանց լրացուցիչ փոխհատուցում տրամադրել, օրինակ, տրանսպորտային ու կացարանային ծախսերի համար: Եթե փախստականների կամ ներքին տեղահանության ենթարկված անձանց համար ստեղծվել է ուսումնական հաստատություն, ապա հյուրընկալող համայնքից համապատասխան ուսուցիչների և կրթական ոլորտի այլ աշխատակիցների աշխատանքի ընդունումը կարող է նպաստել տեղաբնակների և տեղահանվածների միջև բարիդրացիական հարաբերությունների ստեղծմանը (տե՛ս նաև ԱԻԿՄՑ ուղղորդող ցուցումներ ուսուցիչների վարձատրության վերաբերյալ, որը հասանելի է ԱԻԿՄՑ գործիքակազմում՝ **www.ineesite.org/toolkit**):

4. **Հանձնարարագրեր**: Հնարավորության դեպքում պետք է ստուգել աշխատանքի ընդունված բոլոր ուսուցիչների և կրթական ոլորտի այլ աշխատակիցների հանձնարարագրերը սովորողներին ռիսկի չենթարկելու նպատակով:
5. **Դասարանների չափերը**: Անհրաժեշտ է սահմանել դասարանների չափերի տեղական չափանիշները որոնք կապահովեն բոլոր, այդ թվում՝ սահմանափակ կարողություններով, երեխաների ներառումը ուսումնական գործընթացում: Ուսուցիչ–աշակերտ անհրաժեշտ հարաբերակցությունն ապահովելու համար պետք է հավաքագրվի ուսուցիչների և աշակերտների համապատասխան քանակ: Ուսուցիչ – աշակերտ հարաբերակցությունը սահմանելիս, շահառուները պետքէ հաշվի առնեն ազգային և տեղական ստանդարտները: Որոշ դեպքերում, մարդասիրական և զարգացմանն ուղղված գործունեություն ծավալող կազմակերպությունները կարող են ունենալ ուսուցիչ – ուսանող հարաբերակցության իրենց սեփական ստանդարտները: Որոշ դեպքերի համար առաջարկվում է 40 ուսանողին 1 ուսուցիչ հարաբերակցությունը: Սակայն, շահառուներին առաջարկվում է վերանայել և որոշել, թե որ հարաբերակցությունն է իրատեսական և համապատասխան տեղական մակարդակին (Նվազագույն ստանդարտների համատեքստին հարմարեցման օրինակները տե՛ս նաև Ներածությունը, էջ 22-24 և Դասավանդման և ուսումնառության ստանդարտները, էջ 106-129):

Ուսուցիչների և կրթական ոլորտի այլ աշխատակիցների ստանդարտ 2. Աշխատանքային պայմաններ

Ուսուցիչներն ու կրթական ոլորտի այլ աշխատակիցները պետք է ունենան հստակ սահմանված աշխատանքային պայմաններ և համապատասխան վարձատրություն:

Առանցքային գործողություններ (կարդալ ուղղորդող ցուցումներին զուգահեռ)

- Վարձատրության համակարգերը և աշխատանքի պայմանները պետք է համաձայնեցվեն բոլոր համապատասխան շահառուների միջև (տե՛ս ուղղորդող ցուցումներ 1-2-ը):
- Վարձատրության և աշխատանքի պայմանները պետք է նշվեն պայմանագրերում, իսկ վարձատրությունը պետք է իրականացվի կանոնավոր (տե՛ս ուղղորդող ցուցում 2-ը):
- Ուսուցիչներին և կրթական ոլորտի այլ աշխատակիցներին թույլատրվում է բանակցություններ վարել աշխատանքային պայմանների շուրջ:
- Պետք է գործեն և պահպանվեն հստակ ցուցումներ ներառող վարքագծի կանոններ (տե՛ս ուղղորդող ցուցում 3-ը):

Ուղղորդող ցուցումներ

1. **Աշխատանքային պայմանները**: Պայմանագրում պետք է նշվեն աշխատանքային պարտավորությունները, աշխատանքային պայմանները և վարքագծի կանոնները: Դա օգնում է բարձր մակարդակի վրա պահել ուսուցիչների դերը կրթական միջավայրում և համայնքում: Պայմանագրում սահմանվում են այն ծառայությունները, որոնք ակնկալվում են ուսուցիչներից՝ համայնքների, կրթության ոլորտի կառավարման մարմինների և այլ շահառուների կողմից տրվող վարձատրության դիմաց և սահմանում են ուսուցիչներից ակնկալվող համապատասխան վարվելաձևի շրջանակը:

   Պայմանագրում պետք է նշել.

   - աշխատանքային ծանրաբեռնվածությունն ու պարտականությունները,
   - վարձատրությունը,

- հաճախելիությանը ներկայացվող պահանջները,
- աշխատանքային ժամերն ու օրերը,
- պայմանագրի վավերականության ժամկետը,
- վարքագծի կանոնները,
- աջակցության, վերահսկողության և վեճերի լուծման մեխանիզմները:

(Տե՛ս նաև «Ուսուցիչների և կրթական ոլորտի այլ աշխատակիցների ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցում 1-ը, էջ 135):

2. **Վարձատրություն**: Համապատասխան վարձատրությունն անհրաժեշտ է, որպեսզի ուսուցիչներն ու կրթական ոլորտի այլ աշխատակիցները կարողանան կենտրոնանալ իրենց մասնագիտական աշխատանքի վրա և չփնտրեն եկամտի լրացուցիչ աղբյուրներ իրենց հիմնական կարիքները բավարարելու համար: Անհրաժեշտության դեպքում և հնարավորինս շուտ պետք է վերահաստատել կամ մշակել ուսուցիչների և կրթական ոլորտի այլ աշխատակիցների վարձատրության համապատասխան համակարգը: Վարձատրության համակարգը մշակելիս, պետք է հաշվի առնվի այն փաստը, որ վարձատրության ապահովման պատասխանատվությունը կրում են կրթության ոլորտի կառավարման մարմինները: Համաձայնվածությունը համապատասխան շահառուների՝ կրթության ոլորտի կառավարման մարմինների, միությունների, համայնքի անդամների, հանձնախմբերի և ասոցիացիաների, ՄԱԿ-ի գործակալությունների և ՀԿ-ների, միջև հիմք է հանդիսանում վարձատրության կայուն քաղաքականության և գործելակերպի համար և օգնում է վերականգնման փուլից անցում կատարել դեպի զարգացման փուլ:

Վարձատրությունը կարող է լինել դրամական կամ ոչ դրամական /բնաիրային/: Ուսուցչի աշխատանքի վարձատրության համակարգը պետք է լինի արդար և կայուն: Փոխհատուցումների քաղաքականության իրականացումից հետո սահմանվում է նախադեպ, և ուսուցիչներն ու կրթական ոլորտի այլ աշխատակիցներն ակնկալում են, որ այն կպահպանվի: Տեղահանության դեպքերում առավել հավանական է, որ տեղահան եղած որակավորված ուսուցիչներն ու կրթական ոլորտի այլ աշխատակիցները կտեղափոխվեն այն վայրեր, որտեղ աշխատավարձերը բարձր են, նույնիսկ այն դեպքում, եթե դրա համար հարկ կլինի երկրից երկիր տեղափոխվել: Կարևոր է հաշվի առնել շուկայական գործոնները, օրինակ.

- ապրուստի գինը,

- ուսուցիչների և այլ մասնագետների պահանջարկը,
- նմանատիպ բնագավառներում աշխատանքի վարձատրության մակարդակը,
- որակավորված ուսուցիչների և կրթական ոլորտի այլ աշխատակիցների առկայությունը (Տես նաև և ՓՁԿԱ ցանցի «*Ճգնաժամից հետո ֆինանսական վերականգնման նվազագույն ստանդարտներ»,* Զբաղվածության ստեղծման ստանդարտ):

Վարձատրությունը կախված է աշխատանքի պայմանների և վարքագծի կանոնների պահպանումից: Պետք է խուսափել շահերի բախումից, ինչպես նաև այն իրավիճակներից, երբ ուսուցիչները մասնավոր կարգով վճարներ են գանձում ուսանողներից դասավանդման և ուսուցման համար (տես նաև «Համակարգման ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցում 2-ը, էջ 48-49 և *ԱԻԿՄՑ Ուղղորդող ցուցումներ ուսուցիչների վարձատրության վերաբերյալ*, որը հասանելի է ԱԻԿՄՑ գործիքակազմում՝**www.ineesite.org/toolkit**):

3. **Վարքագծի կանոնագիրքը** հստակ ստանդարտներ է սահմանում ուսուցիչների և կրթական ոլորտի այլ աշխատակիցների վարվելաձևի վերաբերյալ: Այս ստանդարտները կիրառվում են կրթական միջավայրում և ուսումնական միջոցառումների ժամանակ: Վարքագծի կանոնագիրքը պարտադիր հետևանքներ է սահմանում կանոններին չհետևող անձանց համար: Կանոնագիրքը սահմանում է այն պարտավորությունները, որոնք ուսուցիչները և կրթական ոլորտի այլ աշխատակիցները պետք է պարտադիր կատարեն: Դրանք են.
   - հարգել, պաշտպանել և, հնարավորության սահմաններում, պահպանել սովորողի կրթություն ստանալու իրավունքը.
   - պահպանել էթիկական վարքի բարձր ստանդարտները,
   - ակտիվորեն վերացնել կրթության բնագավառում խոչընդոտները և ապահովել ոչ խտրական միջավայր, որտեղ ընդունվում են բոլոր սովորողները,
   - պահպանել պաշտպանված, առողջ և ներառական միջավայր, որ ապահովագրված կլինի սեռական և այլ ոտնձգություններից, սովորողների աշխատանքային կամ սեռական շահագործումից, ահաբեկչությունից, չարաշահումներից, բռնությունից և խտրականությունից,
   - չուսուցանել և չխրախուսել մարդու իրավունքներին և ոչ խտրական վերաբերմունքի սկզբունքներին հակասող գիտելիքներ կամ գործողություններ,

- ապահովել կանոնավոր հաճախելիություն և պահպանել ճշտապահություն:

(Տես նաև վարքագծի կանոնագրքի օրինակ ԱԻԿՄՑ գործիքակազմում՝**www.ineesite.org/toolkit**, «Հասանելիության և կրթական միջավայրի ստանդարտ 2»-ը, ուղղորդող ցուցումներ 4-ը և 9-ը, էջ 90-91 և 94-95, «Ուսուցիչներ և կրթական ոլորտի այլ աշխատակիցների ստանդարտ 3»-ը, ուղղորդող ցուցում 4-ը, էջ 144-145):

Ուսուցիչների և կրթական ոլորտի այլ աշխատակիցների ստանդարտ 3. Աջակցություն և վերահսկում

Ուսուցիչների և մանկավարժական այլ աշխատողների համար նախատեսված աջակցության և ղեկավարման մեխանիզմները պետք է գործեն արդյունավետ:

Առանցքային գործողություններ (կարդալ ուղղորդող ցուցումներին զուգահեռ)

- Պետք է առկա լինեն համապատասխան ուսումնամեթոդական նյութերը և ուսուցումն իրականացնելու վայրը (տես ուղղորդող ցուցում 1-ը):
- Ուսուցիչները և կրթական ոլորտի այլ աշխատակիցները պետք է շահագրգիռ լինեն իրենց մասնագիտական կատարելագործման համար և աջակցություն ստանան այդ հարցերում (տես ուղղորդող ցուցումներ 2-3-ը):
- Թափանցիկ, հաշվետվողական վերահսկողության մեխանիզմը պետք է նախատեսի կանոնավոր գնահատում, վերահսկողություն և աջակցություն ուսուցիչների և կրթական ոլորտի այլ աշխատակիցների համար (տես ուղղորդող ցուցումներ 2-3-ը):
- Պարբերաբար պետք է անցկացվեն, փաստաթղթավորվեն և քննարկվեն ուսուցիչների և կրթական ոլորտի այլ աշխատակիցների կատարողականի գնահատումները (տես ուղղորդող ցուցում 4-ը):
- Ուսանողները պետք է հնարավորություն ունենան պարբերաբար կարծիք հայտելու ուսուցիչների և կրթական ոլորտի այլ աշխատակիցների աշխատանքի վերաբերյալ (տես ուղղորդող ցուցում 5-ը):
- Ուսուցիչների և կրթական ոլորտի այլ աշխատակիցների համար պետք է հասանելի լինի համապատասխան, մատչելի և գործնական հոգեբանասոցիալական աջակցությունը (տես ուղղորդող ցուցում 6-ը):

Ուղղորդող ցուցումներ

1. **Ուսումնամեթոդական նյութերն ու տարածքը** պետք է համապատասխանեն սահմանված պահանջներին, որպեսզի ուսուցիչներն ու կրթական ոլորտի այլ աշխատակիցները կարողանան դասավանդել և աշխատել արդյունավետորեն (տես նաև «Հասանելիության և

կրթական միջավայրի ստանդարտ 3»-ը, էջ 97-104, «Դասավանդման և ուսումնառության ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցում 9-ը, էջ 117, և «Դասավանդման և ուսումնառության ստանդարտ 2»-ը, ուղղորդող ցուցում 5-ը, էջ 122):

2. **Աջակցության և վերահսկողության մեխանիզմներ:** Արդյունավետ կառավարումը, վերահսկողությունը և հաշվետվողականությունը կարևոր են մասնագիտական աջակցության տրամադրման, ուսուցիչների մոտիվացիայի պահպանման և դասավանդման որակը բարձրացնելու համար: Համակարգերը պետք է հնարավորինս զարգացվեն կրթական ոլորտի կառավարման համապատասխան մարմինների ղեկավարությամբ և կրթական միավորումների, համայնքի անդամների, հանձնախմբերի և միությունների, ՄԱԿ-ի գործակալությունների ու ՀԿ–ների մասնակցությամբ: Խորհրդատվությունն ու գործընկերների կողմից տրամադրվող աջակցությունը կարող են մոտիվացնել ուսուցիչներին և կրթական ոլորտի այլ աշխատակիցներին սահմանելու նպատակներ և քայլեր ձեռնարկելու դրանց հասնելու և իրենց գործունեության արդյունքները բարելավելու համար (տե՛ս նաև «Համայնքային մասնակցության ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցումներ 1-5-ը, էջ 34-41, «Դասավանդման և ուսումնառության ստանդարտ 2»-ը, ուղղորդող ցուցում 3-ը, էջ 120-121, և ՅՈՒՆԵՍԿՕ/ՄԱԿ-ի Ուսուցչի կարգավիճակին առնչվող ուղեցույցը (1966 թ.)):
3. **Կարողությունների զարգացում, վերապատրաստում և մասնագիտական կատարելագործում:** Անհրաժեշտ է ուսուցիչների և կրթական ոլորտի այլ աշխատակիցների հետ քննարկել և բացահայտել նրանց աշխատանքային դրդապատճառները,, կարիքներն ու առաջնահերթությունները: Քննարկումներն օգնում են բացահայտել աշխատանքային կարիքներն ու մասնագիտական կատարելագործման հնարավորությունները: Կարողությունների զարգացման, վերապատրաստման ու մասնագիտական կատարելագործման հնարավորությունները պետք է ընձեռվեն առանց խտրականության (տե՛ս նաև «Դասավանդման և ուսումնառության ստանդարտ 2»-ը, ուղղորդող ցուցում 3-ը, էջ 120-121):
4. **Գործունեության գնահատականը**: Գործունեության մանրակրկիտորեն իրականացված գնահատումները նպաստում են տվյալ գործունեության հետագա կատարելագործմանը: Ուսուցիչների և կրթական ոլորտի այլ աշխատակիցների գործունեության արդյունավետության գնահատումն իրականացվում է յուրաքանչյուր անձի հետ

քննարկումների միջոցով, նրա խնդիրները բացահայտելու և հետագա գործողությունների վերաբերյալ համաձայնություն ձեռք բերելու նպատակով:

Գործունեության գնահատման գործընթացը ներառում է.

- ստանդարտների մշակում դասարանային դիտարկումներն ու արդյունքի գնահատումները բարելավելու նպատակով,
- հետադարձ կապի ապահովում, կարծիքների հավաքագրում,
- գործունեության նպատակների և խնդիրների սահմանում աճի ու առաջընթացի չափման նպատակով (ստորև տե՛ս նաև ուղղորդող ցուցում 5-ը «Ուսուցիչների և կրթական ոլորտի այլ աշխատակիցների ստանդարտ 2»-ը, ուղղորդող ցուցում 3-ը, էջ 141-142):

5. **Սովորողների մասնակցություն:** Կարևոր է ներգրավել սովորողներին գնահատման և արդյունքների վերլուծության գործընթացներում: Դա օգնում է հասկանալ կրթական միջավայրի բոլոր կողմերը և ապահովել դրանց որակը: Սովորողները կարող են պարբերաբար որևէ չեզոք կողմի հայտնել իրենց կարծիքը, ինչը հանդիսանում է գործունեության գնահատման գործընթացի բաղկացուցիչ մաս: Կարծիքները կարող են վերաբերել դասավանդման մեթոդներին, վարքագիծին, ուսումնական միջավայրին և պաշտպանության հարցերին:
6. **Հոգեբանասոցիալական աջակցություն և բարեկեցություն:** Արտակարգ իրավիճակներում նույնիսկ վերապատրաստված և փորձառու ուսուցիչներն ու կրթական ոլորտի այլ աշխատակիցները կարող են խուճապի մատնվել: Նրանց առջև ծառանում են նոր մարտահրավերներ և պարտավորություններ, ինչը կարող է հոգեբանական սթրեսի պատճառ հանդիսանալ: Իրավիճակի հաղթահարման և ի նպաստ սովորողների գործելու նրանց կարողությունը կախված է նրանց բարեկեցությունից և աջակցություն ստանալու հնարավորություններից (տե՛ս նաև «Հասանելիության և կրթական միջավայրի ստանդարտ 2»-ը, ուղղորդող ցուցումներ 8-9-ը, էջ 93-95, «Հասանելիության և կրթական միջավայրի ստանդարտ 3»-ը, ուղղորդող ցուցում 8-ը, էջ 103-104, և «Դասավանդման և ուսումնառության ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցում 6-ը, էջ 114-115):

Այս ստանդարտների իրականացմանն օժանդակող գործիքների համար Այցելեք ԱԻԿՄՑ գործիքակազմ՝ www.ineesite.org/toolkit

ԱԻԿՄՑ գործիքակազմ
↳ ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտներ
↳ Իրականացման գործիքներ
↳ Ուսուցիչներ և կրթական ոլորտի այլ աշխատակիցներ.

5 ԿՐԹԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


Հիմնարար ստանդարտներ.
Համայնքային մասնակցություն, համակարգում, վերլուծություն
Կրթական քաղաքականության բաժին
Ստանդարտ 1
Օրենքի և քաղաքականության մշակում
Կրթության կառավարման մարմիններն առաջնահերթ կարևորություն են տալիս որակյալ կրթության շարունակականությանն ու վերականգնմանը, այդ թվում՝ անվճար և ներառական կրթությունից օգտվելու հնարավորությանը:
Ստանդարտ 2
Պլանավորում և իրագործում
Կրթական միջոցառումներում հաշվի են առնվում միջազգային և ազգային կրթական քաղաքակությունները, օրենքները, չափորոշիչները և պլանները, ինչպես նաև տուժած բնակչության կրթական կարիքները:

Միջազգային իրավական փաստաթղթերն ու հռչակագրերը հաստատում են բոլոր անհատների կրթություն ստանալու իրավունքը: Ազգային իշխանությունների և միջազգային հանրության պարտականությունն է հարգել, պաշտպանել և իրացնել այդ իրավունքը: Ազատ արտահայտվելու, խտրականության բացառման և սոցիալական ու կրթական քաղաքականությունների վերաբերյալ որոշումների կայացման հարցում ձայն ունենալու իրավունքները կրթության իրավունքի անբաժանելի մասն են:

Այս իրավունքները պետք է պաշտպանվեն արտակարգ իրավիճակում, ինչպես նաև վերականգնման փուլում: Դրան նպաստելու համար կրթության ոլորտի կառավարման մարմինները և հիմնական այլ շահառուները պետք է մշակեն ու իրականացնեն արտակարգ իրավիճակներին համապատասխան կրթական ծրագիր:

Ծրագիրը պետք է.

- հաշվի առնի ազգային և միջազգային կրթական ստանդարտներն ու քաղաքականությունները,
- ցուցաբերի շահագրգիռ վերաբերմունք կրթության իրավունքի նկատմամբ,
- ցուցաբերի զգայունություն ճգնաժամից տուժած մարդկանց կրթական կարիքների ու իրավունքների նկատմամբ,
- քայլեր ձեռնարկի բոլորի համար որակյալ կրթության հասանելիությունն ապահովելու ուղղությամբ,
- հստակորեն նշի արտակարգ իրավիճակներին արձագանքելու պատրաստվածության և զարգացմանն ուղղված երկարաժամկետ գործողությունների միջև առկա կապերը:

Արտակարգ իրավիճակներում պատրաստվածության ու արձագանքման հաջողության համար շատ կարևոր է համայնքների ներգրավումը միջոցառումների, ծրագրերի և քաղաքականությունների պլանավորման և իրականացման գործում:

Գենդերային հավասարության և բազմազանության նկատմամբ հարգանքը խթանելու համար արտակարգ իրավիճակներում կրթության քաղաքականությունները և ծրագրերը պետք է ամբողջությամբ ներառեն «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի, ինչպես նաև «Կրթություն բոլորի համար» և «Հազարամյակի զարգացման նպատակները» շրջանակային ծրագրերի դրույթները: Այս փաստաթղթերը պաշտպանում են կրթության քաղաքականությունները և իրավունքները խտրականության բոլոր ձևերի (սեռական, կրոնական, լեզվական, էթնիկ և հաշմանդամության հատկանիշներով) դրսևորումներից:

Կրթական քաղաքականության ստանդարտ 1. Օրենքների և քաղաքականությունների մշակում

Կրթության ոլորտի կառավարման մարմինները պետք է առաջնահերթ համարեն որակյալ կրթության շարունակականությունն ու վերականգնումը, ինչպես նաև, որպես գերակա խնդիր, անվճար և ներառական կրթության իրականացումը:

Առանցքային գործողություններ (կարդալ ուղղորդող ցուցումներին զուգահեռ)

- Համաձայն ուսումնական հաստատությունների, սովորողների, ուսուցիչների և մանկավարժական այլ աշխատողների մասին միջազգային մարդասիրական օրենքի և մարդու իրավունքների մասին օրենսդրության՝ ազգային կրթական օրենքները, կանոնադրություններն ու քաղաքականությունները պետք է պաշտպանեն փախստականի կարգավիճակը (տե՛ս ուղղորդող ցուցում 1-ը):
- Ազգային կրթական օրենքները, կանոնադրություններն ու քաղաքականությունները պետք է հարգեն, պաշտպանեն և իրացնեն կրթության իրավունքը և ապահովեն կրթության շարունակականությունը (տե՛ս ուղղորդող ցուցումներ 1-2-ը):
- Օրենքները, կանոնադրություններն ու քաղաքականությունները պետք է ապահովեն վերակառուցված կամ վերականգնված յուրաքանչյուր կրթական հաստատության անվտանգությունը (տե՛ս ուղղորդող ցուցումներ 2-3-ը):
- Օրենքները, կանոնադրություններն ու քաղաքականությունները պետք է հիմնված լինեն մասնակցային և ներառական գործընթացների միջոցով մշակված համատեքստի վերլուծության վրա (տե՛ս ուղղորդող ցուցում 4-ը):
- Գործողությունների ծրագրերը, իրավունքները և բյուջեները, որոնք թույլ են տալիս արագ արձագանքել արտակարգ իրավիճակներին, պետք է նպաստեն ազգային կրթական քաղաքականություններին (տե՛ս ուղղորդող ցուցում 5-6-ը):
- Օրենքները, կանոնադրություններն ու քաղաքականությունները փախստականների համար նախատեսված դպրոցներում թույլ են տալիս օգտագործել աղետի ծագման երկրի կամ վայրի ուսումնական պլաններն ու լեզուն (տե՛ս ուղղորդող ցուցում 7-ը):

- Օրենքները, կանոնադրություններն ու քաղաքականությունները պետք է թույլ տան ոչ պետական դերակատարներին՝ ՀԿ-ներին և ՄԱԿ-ի գործակալություններին, կազմակերպել կրթությունը արտակարգ իրավիճակների ծրագրերի շրջանակներում (տե՛ս ուղղորդող ցուցում 8-ը):

Ուղղորդող ցուցումներ

1. **Ազգային իշխանությունները պարտավոր են հարգել, պաշտպանել և իրացնել կրթության իրավունքն՝** ըստ մարդու իրավունքների պաշտպանության մասին միջազգային փաստաթղթերի (տե՛ս Ներածություն, էջ 3):

   Մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ այս փաստաթղթերում ներառված են ազգաբնակչությունների նկատմամբ հոգատարության ցուցաբերման միջազգային կանոնները, որոնցում ուշադրության կենտրոնում են երեխաներն ու երիտասարդները: Ներառված ոլորտների շարքում են սննդի մատակարարումը, հանգիստի, կազմակերպումը, մշակույթը, բռնության կանխումը և մինչև 6 տարեկան երեխաների վաղ ուսուցումը: Առանձնահատուկ կարևորություն է տրվում «Երեխաների իրավունքների մասին» կոնվենցիային, որում արծարծվում են ինչպես երեխաների կրթության իրավունքը, այնպես էլ նրանց իրավունքները կրթական գործընթացի շրջանակներում, օրինակ, իրենց վերաբերյալ որոշումների ընդունման, խորհրդատվություն ստանալու, հարգալից վերաբերմունքի և իրենց իրավունքների մասին տեղեկացված լինելու իրավունքը (տե՛ս նաև «Համայնքային մասնակցության ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցում 5-ը, էջ 39-41, «Հասանելիության և ուսումնական միջավայրի ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցումներ 1-2-ը, էջ 80-82, և «Դասավանդման և ուսումնառության ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցումներ 5-6-ը, էջ 113-115):

   Սովորողներին, ուսուցիչներին և կրթական ոլորտի այլ աշխատակիցներին տրվում է քաղաքացիական կարգավիճակ, որը տարածվում է նաև ուսումնական հաստատությունների վրա: Վերջիններս պաշտպանված են զինված հարձակումներից՝ համաձայն Ժնևյան կոնվենցիաների, որոնք հանդիսանում են յուրաքանչյուր երկրի կողմից ընդունված միջազգային մարդասիրական իրավունքի մասը: Ազգային իշխանությունները և միջազգային շահառուները պետք է սատարեն պաշտպանվածության այս կարգավիճակն ազգային օրենսդրության մեջ և միջազգային փորձում ներառելուն ուղղված ջանքերը, դրանով

իսկ կանխելով ուսումնական հաստատությունների օգտագործումը ռազմական նպատակներով:

Այն իրավիճակներում, երբ բռնությունը սպառնալիք է դառնում կրթության շարունակականության և երեխաների պաշտպանության համար, առաջնահերթ է դառնում կրթության, մարդու իրավունքների և կրթության բնագավառում մարդասիրական իրավունքի պաշտպանությունը: Կարևոր են համարվում սովորողների, ուսուցիչների, կրթական ոլորտի այլ աշխատակիցների, ուսումնական հաստատությունների վրա հնարավոր հարձակումների կանխման նպատակով մշտադիտարկումները, ինչպես նաև հարձակման բոլոր հնարավոր իրավիճակների մասին զեկույցները: Սա վկայում է հարձակման ենթարկված զոհերի արժանապատվությունը հարգելու մասին և համակարգում է արձագանքման, հետաքննության ու հետապնդման գործընթացները (տե՛ս նաև «Հասանելիության և ուսումնական միջավայրի ստանդարտ 2»-ը, ուղղորդող ցուցումներ 1-ը, 3-4-ը և 6-7-ը, էջ 88-93):

2. **Ազգային կրթական օրենքներն ու քաղաքականությունները պետք է ապահովեն կրթության շարունակականությունը բոլորի համար**: Արտակարգ իրավիճակներում դպրոցների գործելու ծրագրերում պետք է հաշվի առնվեն հայտնի, ակնկալվող և պարբերաբար կրկնվող վտանգները, ինչպես նաև փոքր սպառնալիքները, օրինակ, ամենամյա հեղեղումները, որոնք բացասաբար են անդրադառնում կրթական գործընթացի վրա: Պետք է նկատի առնվեն նաև խոցելի խմբերին պատկանող երեխաների և երիտասարդների հատուկ կարիքները: Այն երկրներում, որտեղ արտակարգ իրավիճակների արձագանքման գործողությունների ծրագրում բացակայում են կրթությանը վերաբերող օրենքներ, արտակարգ իրավիճակները հնարավորություն են ընձեռում դրանց ստեղծման համար (տե՛ս նաև «Վերլուծության ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցում 3-ը, էջ 54-59, «Հասանելիության և ուսումնական միջավայրի ստանդարտ 2»-ը, ուղղորդող ցուցում 1-ը, էջ 88, և «Դասավանդման և ուսումնառության ստանդարտ 2»-ը, ուղղորդող ցուցում 6-ը, էջ 122):

Կրթության քաղաքականություններում և ծրագրերում պետք է ընդգրկվեն նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման համար նախատեսված ծառայությունները, ինչպես նաև նրանց ծնողներն ու խնամակալները:

Ծառայությունները կարող են ներառել.

- երեխաների խնամքի և ծնողավարման խմբերի ստեղծում,

- խաղային խմբերի ստեղծում,
- կրտսեր տարիքի երեխաների ընդգրկում անվտանգ միջավայրում կազմակերպվող միջոցառումներում,
- առողջապահության, սննդի և այլ ծառայությունների հետ կապերի ապահովում:

Այն երկրներում, որտեղ գոյություն ունի երիտասարդների համար մշակված ազգային քաղաքականություն, արտակարգ իրավիճակները հնարավորություն են ընձեռում ընդլայնել երիտասարդների կրթությանն ուղղված միջճյուղային աշխատանքները: Ճգնաժամի պայմաններում նման քաղաքականություն չունեցող երկրներում համապատասխան շահառուների կողմից պետք է ստեղծվի երիտասարդների խնդիրների համակարգման կենտրոն: Միջճյուղային քաղաքականության, ծրագրերի պլանավորման և մշակման համար պետք է իրականացվի համատեղ աշխատանք, որի ընթացքում հաշվի կառնվեն երիտասարդների խնդիրները: Երիտասարդական ազգային քաղաքականությունները պետք է հիմնված լինեն երիտասարդական տարբեր ենթախմբերի հետաքրքրությունների և նրանց կրած ազդեցությունների, ինչպես նաև հասարակական և կրթական գործընթացներում երիտասարդների մասնակցության հնարավորությունների ու դրանց հետ առնչվող ռիսկերի վերլուծության վրա: Երիտասարդական ազգային քաղաքականությունը համալրում է ազգային ծրագրերը հետևյալ ուղղություններով.

- միջնակարգ և բարձրագույն կրթություն,
- տեխնիկական և մասնագիտական կրթություն և վերապատրաստում,
- պատրաստվածություն արտակարգ իրավիճակներին:

(Տե՛ս նաև «Հասանելիության և ուսումնական միջավայրի ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցում 2-ը, էջ 82 և «Փոքր ձեռնարկությունների ուսուցման և խթանման ցանց»-ի Տնտեսության վերականգնման նվազագույն ստանդարտները, Աշխատատեղերի ստեղծման ստանդարտ):

3. **Նորակառույց և վերակառուցված դպրոցների անվտանգությունը**: Դպրոցական համալիրները պետք է ապահովեն սովորողների անվտանգությունը: Դրանք պետք է նախագծվեն ու կառուցվեն առավելագույնս կայուն: Արտակարգ իրավիճակներում դպրոցների տարածքները, բացի ուսումնական նպատակներից, պետք է ունենան որպես ժամանակավոր կացարան ծառայելու հնարավորություն:

(տես նաև «Հասանելիություն և ուսումնական միջավայրի ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցում 9-ը, էջ 85-86, Հասանելիության և ուսումնական միջավայրի ստանդարտ 3»-ը, ուղղորդող ցուցումներ 1-2-ը, էջ 98-100 և *Դպրոցների առավել ապահով շինարարության վերաբերյալ ԱԻԿՄՑ ուղղորդող ցուցումները*, որոնք հասանելի են ԱԻԿՄՑ գործիքակազմում՝ **www.ineesite.org/toolkit**):

4. **Համատեքստի վերլուծություն**: Կրթության բնագավառում գործող օրենքներում ու քաղաքականություններում պետք է արտացոլվի արտակարգ իրավիճակներում սոցիալական և տնտեսական պայմաններին, անվտանգությանը, բնապահպանությանը և քաղաքական դինամիկային վերաբերող խնդիրների խորը ընկալումը: Այսպիսով, կրթության պլանավորումն ու կազմակերպումը կարող են բավարարել են սովորողների և հասարակության պահանջմունքներն ու իրավունքները, ինչպես նաևթույլ կտան խուսափել սոցիալական տարաձայնությունների և հակամարտությունների սրումից:

   Համատեքստային վերլուծություններում գնահատականներ են տրվում հակամարտությունների, մարդու իրավունքների պաշտպանության խնդիրներին, ինչպես նաև վերլուծվում են աղետների ռիսկերն ու տարերային աղետներին արձագանքելու պատրաստվածության մակարդակը: Կրթական հարցերի վերանայման նպատակով կրթության ոլորտի կառավարման մարմինները և ոլորտի այլ շահառուները պետք է նպաստեն համատեքստային վերլուծության գործընթացին: Համատեքստային վերլուծությունների համար պետք է իրականացվեն լայն քննարկումներ համայնքի ներկայացուցիչների հետ: Կրթության ոլորտի կառավարման մարմինները և այլ շահառուները պետք է սատար լինեն այնպիսի վերլուծությունների, որոնք կիրականացվեն կանոնավոր կերպով վերահսկելու կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների գործընթացը (տես նաև «Վերլուծության ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցումներ 3-6-ը, էջ 54-59):

   Ռիսկերի վերլուծությունը ենթադրում է կոռուպցիոն ռիսկերի վերլուծություն քաղաքական, վարչական և մարդասիրական ոլորտներում: Արտակարգ իրավիճակներում կրթության խնդիրներին ուղղված արձագանքումը պլանավորելու ու իրականացնելու համար կոռուպցիայի վերաբերյալ քննարկումները պետք է հնարավորինս բաց լինեն: Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման համար ամենահուսալի ձևը բաց քննարկումներն են: Կոռուպցիոն հարցերի քննարկումը չի նշանակում, որ կարելի է համակերպվել կաշառակերության երևույթի հետ և չի ենթադրում որևէ դերակատարի մասնակի խոցե-

լիությունը (տե՛ս նաև «Վերլուծության ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցում 3-ը, էջ 54-56):

5. **Տեղեկատվության փոխանակում և տեղեկատվական համակարգեր:** Կրթության քաղաքականության մշակման և իրականացման մեջ ներգրավված անձինք պետք է տեղեկատվություն տարածեն քաղաքականությունների և արձագանքմանն ուղղված ռազմավարական միջոցառումների վերաբերյալ: Սա հատկապես կարևոր է հակամարտությունների ու աղետների մեղմացման համար: Տեղեկատվությունը պետք է ընկալելի և հասանելի լինի բոլորի համար (տե՛ս նաև «Համակարգման ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցում 3-ը, էջ 49-50):

   Օրենքները, կանոններն ու քաղաքականությունները պետք է մշակվեն հավաստի տեղեկատվության հիման վրա: Կրթության ոլորտի կառավարման տեղեկատվական համակարգի տվյալները պետք է վերաբերեն տարերային աղետների ենթակա տարածքներին և բնակչության խմբերին: Սա էլ հենց պատրաստվածության ռազմավարությունն է, որն արտացոլվում է ազգային և տեղական կրթական պլաններում: Հնարավորության դեպքում, համայնքի կողմից կրթությանը վերաբերող հավաքագրված տվյալները պետք է մուտքագրվեն ազգային կրթության կառավարման տեղեկատվական համակարգում (տե՛ս նաև «Վերլուծության ստանդարտ 3»-ը, ուղղորդող ցուցում 3-ը, էջ 68-69):

6. **Աղետների պատրաստվածությանն ուղղված համակարգային ծրագրեր:** Կրթությունը պետք է լինի աղետներին պատրաստվածությանն ուղղված ազգային ծրագրերի անբաժանելի մասը: Արտակարգ իրավիճակներում ռեսուրսները պետք է երաշխավորեն կրթության համակարգի արդյունավետ և ժամանակին արձագանքմանը: Ազգային և տեղական կրթական ծրագրերին աջակցող միջազգային շահառուները պետք է խթանեն արտակարգ իրավիճակներում կրթության համակարգի արձագանքման պատրաստվածությունը՝ որպես զարգացման ծրագրերի բաղկացուցիչ մաս: Պատրաստվածությանն ուղղված համակարգային ծրագրերը պետք է սահմանեն համայնքային մակարդակում երեխաների և երիտասարդների մասնակցության վերաբերյալ հստակ դրույթներ (տե՛ս նաև «Համայնքային մասնակցության ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցումներ 4-5-ը, էջ 38-39, «Համայնքային մասնակցության ստանդարտ 2»-ը, ուղղորդող ցուցում 5-ը, էջ 46, «Հասանելիության և ուսումնական միջավայրի ստանդարտ 2»-ը, ուղղորդող ցուցում 1-ը, էջ 88, և «Դասա-

վանդման և ուսումնառության ստանդարտ 2»-ը, ուղղորդող ցուցում 6-ը, էջ 122):

7. **Խտրականության բացառում:** Կրթության ոլորտի կառավարման մարմինները պետք է ապահովեն կրթության իրավահավասար հասանելիությունը բոլոր խմբերի համար: Ըստ միջազգային իրավունքի դրույթների, տարրական կրթության մակարդակում փախստականները տեղաբնակների հետ մեկտեղ պետք է ունենան միևնույն կրթական իրավունքները: Ավելի բարձր կրթական մակարդակներում փախստականների համար պետք է հասանելի լինի մասնագիտական կրթությունը, պետք է ճանաչվեն նրանց վկայականները, դիպլոմները և գիտական աստիճանները: Նրանք պետք է ազատվեն ուսման վարձերից և վճարներից, ինչպես նաև ընդունող երկրի քաղաքացիների հետ հավասար հիմունքներով կրթաթոշակներ ստանան: Ներքին տեղահանության ենթարկված սովորողները պահպանում են կրթություն ստանալու իրավունքը երկրի այն քաղաքացիների նման, որոնք տեղահանված չեն համարվում: Նրանք պաշտպանված են մարդու իրավունքների պաշտպանության ազգային և միջազգային իրավունքով, ինչպես նաև ներքին տեղահանումների վերաբերյալ ուղղորդող սկզբունքներով (տե՛ս նաև «Հասանելիության և ուսումնական միջավայրի ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցումներ 3-ը և 7-8-ը, էջ 82-85, և «Դասավանդման և ուսումնառության ստանդարտ 2»-ը, ուղղորդող ցուցում 5-ը, էջ 63-64):

8. **Հասարակական կազմակերպություններին և ՄԱԿ-ի գործակալություններին** պետք է հնարավորություն տրվի լրացումներ կատարել կրթության ազգային կանոնադրություններում, որպեսզի բոլոր սովորողների կրթական կարիքները բավարարվեն, իսկ իրավունքները՝ իրացվեն: Ընդունող երկիրը պետք է նպաստի ծրագրերի և հարմարությունների ստեղծման, ինչպես նաև արտակարգ իրավիճակներին արագ ու անվտանգ արձագանքման գործում վերջիններիս նախաձեռնություններին: Դա կարող է նպաստել վիզաների արագ ձևակերպման, ինչպես նաև ուսումնական նյութերի և մարդասիրական օգնության ներկրման համար հատուկ մաքսային կանոնների մշակման գործին:

Կրթության քաղաքականության ստանդարտ 2. Պլանավորում և իրագործում

Կրթական միջոցառումները պետք է հաշվի առնվեն միջազգային և ազգային կրթության քաղաքականությունները, իրավունքները, ստանդարտներն ու պլանները, ինչպես նաև տուժած բնակչության կրթական կարիքները:

Առանցքային գործողություններ (կարդալ ուղղորդող ցուցումներին զուգահեռ)

- Ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական ծրագրերը պետք է արտացոլեն միջազգային և ազգային իրավական համակարգային ծրագրերը և քաղաքականությունները (տե՛ս ուղղորդող ցուցում 1-ը):
- Կրթական միջոցառումների պլանավորումն ու իրականացումը պետք է ինտեգրվի արտակարգ իրավիճակներին արձագանքող այլ ոլորտների աշխատանքներին (տե՛ս ուղղորդող ցուցում 2-ը):
- Արտակարգ իրավիճակներում կրթական ծրագրերը պետք է կապակցված լինեն ազգային կրթական ծրագրերի ու ռազմավարությունների հետ և ներառվեն կրթության ոլորտի երկարաժամկետ զարգացման ծրագրերում:
- Կրթության ոլորտի կառավարման մարմինները պետք է մշակեն և իրականացնեն ազգային և տեղական կրթական ծրագրեր, որոնք կնախապատրաստեն և կարձագանքեն հնարավոր արտակարգ իրավիճակներին (տե՛ս ուղղորդող ցուցում 3-ը):
- Ֆինանսական, տեխնիկական, նյութական և մարդկային ռեսուրսները պետք է բավարար լինեն կրթության քաղաքականության արդյունավետ և թափանցիկ մշակման, ինչպես նաև կրթական ծրագրերի պլանավորման և իրականացման համար (տե՛ս ուղղորդող ցուցումներ 4-5-ը):

Ուղղորդող ցուցումներ

1. **Կրթական իրավունքների իրացում և նպատակների իրականացում:** Ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական ծրագրերում պետք է նախատեսվեն կրթության իրավունքներն ու նպատակներն իրականացնող ներառական կրթական միջոցառումներ: Դրանք պետք է համապատասխանեն ազգային և միջազգային իրավական դաշտին (տե՛ս «Հասանելիության և ուսումնական միջավայրի ստանդարտ 1»-ը,

ուղղորդող ցուցումներ 1-2-ը և 4-ը, էջ 80-84 և «Կրթության քաղաքականության ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցումներ 1-ը և 7-ը, էջ 151-152 և 156):

2. **Միջոլորտային կապեր:** Կրթական ծրագրերը /այդ թվում վաղ տարիքի երեխաների զարգացման և երիտասարդական ծրագրերը/ պետք է նարառվեն այլ, օրինակ, ջրամատակարարման, սանիտարահիգիենիկ, սննդի, սննդամթերքի անվտանգության և պարենային օգնության, կացարաններով ապահովման, բժշկական ծառայությունների և տնտեսության վերականգնման, ոլորտներում իրականացվող նախագծերում (տե՛ս նաև «Վերլուծության ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցում 6-ը, էջ 58-59, «Հասանելիության և ուսումնական միջավայրի ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցում 9-ը, էջ 85-86, «Հասանելիության և ուսումնական միջավայրի ստանդարտ 3»-ը, էջ 100, «Սֆերա» նախագծի ձեռնարկ և «Փոքր ձեռնարկությունների ուսուցման և խթանման ցանց»-ի Տնտեսության վերականգնման նվազագույն ստանդարտները, Աշխատատեղերի ստեղծման ստանդարտը և Ձեռնարկությունների զարգացման ստանդարտները):
3. **Կրթության բնագավառում ազգային և տեղական պլաններում պետք է սահմանվեն այն** միջոցառումները, որոնք պետք է իրականացվեն ընթացիկ և հնարավոր արտակարգ իրավիճակներում: Միջոլորտային աշխատանքների համակարգման նպատակով այդ պլաններում պետք է հստակ սահմանվեն որոշումների կայացման, համակարգման, և պաշտպանության մեխանիզմները: Պլաններում պետք արտացոլված լինի համատեքստի լիարժեք ըմբռնումը, ինչպես նաև պետք է ներառված լինեն աղետների և հակամարտությունների մասին վաղ ահազանգման ցուցանիշներն ու մեխանիզմները: Այդ պլանները պետք է հաստատվեն նաև կրթության քաղաքականություններով ու համակարգված ծրագրերով: Ազգային և տեղական կրթական պլանների պարբերական վերանայման համար պետք է գործի նախատեսված համակարգ (տե՛ս նաև «Համայնքային մասնակցության ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցում 4-ը, էջ 38-39, «Համայնքային մասնակցության ստանդարտ 2»-ը, էջ 43-46, «Համակարգման ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցում 1-ը, էջ 48, «Վերլուծության ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցում 3-ը, էջ 54-56, և «Կրթության քաղաքականության ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցում 4-ը, էջ 154-155):
4. **Ռեսուրսներ:** Ազգային իշխանությունները, մարդասիրական կազմակերպությունները, դոնորները, ոչ կառավարական կազմակեր-

պությունները, ՀԿ-ները, համայնքները և այլ շահառուները պետք է համագործակցեն արտակարգ իրավիճակներում կրթություն իրականացնող մարմինների հետ՝ անհրաժեշտ ֆինանսավորումն ապահովելու նպատակով: Ռեսուրսների համակարգումը պետք է ղեկավարվի պետության կողմից՝ գործող համակարգման մեխանիզմների հիման վրա: Ելնելով համատեքստից, ռեսուրսների բաշխումը պետք է հավասարակշռվի հետևյալ բաղադրիչների միջև.

- ֆիզիկական տարրեր, ինչպես օրինակ, լրացուցիչ դասասենյակներ, դասագրքեր և ուսումնամեթոդական նյութեր,
- որակական բաղադրիչներ, ինչպես օրինակ, ուսուցիչների և վերահսկող անձնակազմի վերապատրաստման դասընթացներ, ուսումնամեթոդական նյութեր:

Ռեսուրսներ պետք է հատկացվեն կրթական հաստատությունների վրա իրականացված հարձակումների մասին զեկուցումների ապահովման, ինչպես նաև կրթական ոլորտի վերաբերյալ տվյալների հավաքագրման, վերլուծության և տարածման համար (տե՛ս նաև «Համայնքային մասնակցության ստանդարտ 2»-ը, ուղղորդող ցուցում 1-ը, էջ 43-44, «Համակարգման ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցումներ 1-2-ը, էջ 48-49, «Վերլուծության ստանդարտ 1»-ը, էջ 52-59, «Վերլուծության ստանդարտ 2»-ը, ուղղորդող ցուցում 2-ը, էջ 61-62, «Վերլուծության ստանդարտ 3»-ը, ուղղորդող ցուցում 3-ը, էջ 68-69, «Վերլուծության ստանդարտ 4»-ը, ուղղորդող ցուցումներ 3-4-ը, էջ 72-73, և «Հասանելիության և ուսումնական միջավայրի ստանդարտ 2»-ը, ուղղորդող ցուցումներ 4-ը և 7-ը, էջ 90-93):

5. **Թափանցիկություն և հաշվետվողականություն:** Քաղաքականության պլանավորման և իրականացման մասին, ինչպես նաև կոռուպցիայի (ինչպես դրամական, այնպես էլ ոչ դրամական ձևերի) կանխարգելմանն ուղղված գործողությունների մասին համապատասխան տեղեկատվությունը, պետք է տարածվի կենտրոնական և տեղական մարմինների, համայնքների և մարդասիրական գործունեություն իրականացնող շահառուների միջև: Թափանցիկությունը կարևոր է արդյունավետ մշտադիտարկման և հաշվետվողականության համար: Կոռուպցիայի դեմ բողոքները դիտարկելու համար պետք է գործեն գաղտնի և մշակույթներին համապատասխան համակարգեր: Պետք է մշակվեն քաղաքականություններ, որոնք կխրախուսեն մարդկանց տեղեկատվություն տրամադրել կոռուպցիայի դեպքերի մասին և կպաշտպանեն վերջիններիս (տե՛ս նաև «Համակարգման ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցում 5-ը, էջ 51,

«Վերլուծության ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցում 3-ը, էջ 54-56 և «Կրթության քաղաքականության ստանդարտ 1»-ը, ուղղորդող ցուցում 4-ը, էջ 154-155):

Այս ստանդարտների իրականացմանն աջակցող գործիքների համար այցելեք ԱԻԿՄՑ գործիքակազմ

ԱԻԿՄՑ գործիքակազմ
↳ ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտներ
↳ Իրականացման գործիքներ
↳ Կրթության քաղաքականություն

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Աղետներ. համայնքի կամ հասարակության կենսագործունեության լուրջ խաթարումներ, որոնք պատճառում են մարդկային, նյութական, տնտեսական կամ բնապահպանական զանգվածային կորուստներ և առաջացնում են բացասական հետևանքներ, որոնք անկարող են դարձնում տուժած համայնքին կամ հասարակությանը սեփական միջոցներով հաղթահարել այդ իրավիճակը:

Աղետների ռիսկի նվազեցում. համակարգված ջանքերով ռիսկերի նվազեցման գաղափարն ու գործելակերպերը, որոնք նպատակ ունեն վերլուծել և կառավարել աղետների պատճառ հանդիսացող գործոնները, ինչպես նաև վտանգների բացասական ներգործության, մարդկանց և գույքի խոցելիության նվազեցման, հողի և շրջակա միջավայրի խելամիտ կառավարման և անցանկալի իրադարձությունների ժամանակ առավել բարձր պատրաստվածության միջոցով:

Հասանելիություն. ֆորմալ կամ ոչ ֆորմալ կրթական ծրագրում գրանցվելու, հաճախելու և ավարտելու հնարավորություն: Եթե հասանելիությունը չի սահմանափակվում, նշանակում է չկան գործնական, ֆինանսական, ֆիզիկական, անվտանգությանն առնչվող, կառուցվածքային, ինստիտուցիոնալ կամ սոցիալ-մշակութային խոչընդոտներ, որոնք կխանգարեն սովորողներին մասնակցել կրթական ծրագրերին և ավարտին հասցնել դրանք:

Հաշվետվողականություն. Ելնելով տուժած կողմերի կարիքներից, մտահոգություններից, կարողություններից և հանգամանքներից՝ գործողությունների և որոշումների նշանակության և պատճառների պարզաբանում: Հաշվետվողականությունը ղեկավարման գործընթացների, այդ թվում՝ ֆինանսական ռեսուրսների օգտագործման թափանցիկությունն է: Վերջինս ենթադրում է լսված լինելու իրավունք և արձագանքելու պարտավորություն: Կրթության ոլորտում հաշվետվողականություն ասելով, նկատի ունենք ուսանողի գիտելիքների, հմտությունների և վերաբերմունքի, ինչպես նաև ուսուցչի վարքագծի և դպրոցի կամ համակարգի արդյունավետության առումով, մատուցած ծառայության որակի համար պատասխանատու կրթություն մատուցողների առկայություն:

Նախնական գնահատում.

1) Արտակարգ իրավիճակներում կրթական միջոցառումների պլանավորումից առաջ իրականացվող ուսումնասիրություն, ինչպես նաև միջամտություն արձագանքման և առկա ռեսուրսների բացերն ու կարիքները

որոշելու նպատակով,

2) սովորողների առաջադիմության և ձեռքբերումների ստուգում: «Ուսումնառության վերջնարդյունքների գնահատումը» կրթական ծրագրով սահմանված գնահատման ձև է: Գնահատման մի շարք գործիքներ կարող եք գտնել ԱԻԿՄՑ-ի գործիքակազմում. www.ineesite.org/toolkit:

Գնահատման գործիքները միշտ պետք է հարմարեցվեն որոշակի համատեքստի կամ միջավայրի՝ անհրաժեշտ տեղեկատվությունն արտացոլելու համար:

Կարողություններ. անհատների մոտ, համայնքում, հասարակությունում, կամկազմակերպությունում առկա ռեսուրսների, ինչպես նաև ուժեղ կողմերի և հատկանիշների համադրություն, որը կարող է օգտագործվել համաձայնեցված նպատակներին հասնելու համար:

Կարողությունների զարգացում. գիտելիքների, ունակությունների, հմտությունների և վարքագծի բարելավում, ինչն ուղղված է օգնել մարդկանց և կազմակերպություններին իրենց նպատակներին հասնելու համար:

Երեխաներին հարմար նախատեսված տարածքներ և դպրոցներ. Երեխաների համար նախատեսված ապահով տարածքներ և դպրոցներ, որտեղ համայնքները բարենպաստ միջավայր են ստեղծում երեխաների համար համակարգված խաղերի, հանգիստի, ժամանցային և կրթական միջոցառումների հասանելիությունն ապահովելու համար: Հարմար տարածքներում երեխաներին կարող են տրամադրվել առողջապահական, սնուցման, հոգեբանական աջակցություն և այլ միջոցառումներ, որոնք վերականգնում են կյանքի բնականոն ընթացքի և շարունակականության զգացումը: Վերջիններս նախագծվում և շահագործվում են մասնակցային եղանակով և կարող են ծառայել երեխաների որոշակի կամ տարբեր տարիքային խմբերի: Արտակարգ իրավիճակներում, ինչպես նաև վերականգնման փուլում, երեխաների համար նախատեսված հարմար տարածքները և դպրոցները կարևոր նշանակություն ունեն:

Երեխաների պաշտպանություն. բռնության, շահագործման, արհամարհանքի և խտրականության այլ ձևերից, այդ թվում՝ հասակակիցների, ուսուցիչների կամ կրթական ոլորտի այլ աշխատակիցների կողմից գործադրվող բռնությունից, ծաղրանքից, սեռական շահագործումից, բնական վտանգներից, զենք ու զինամթերքից, ականներից և չպայթած զինամթերքից, զինված անձնակազմից, փոխհրաձգության վայրերից, քաղաքական և ռազմական սպառնալիքներից, զինված ուժերում կամ

զինված խմբավորումներում անդամագրվելուց ազատումը:

Երեխաներ. 0-ից մինչև 18 տարեկան բոլոր մարդիկ: Այս տարիքային դասն ընդգրկում է 10-19 տարեկան դեռահասների մեծ մասին և, մասամբ, համընկնում է 15-24 տարեկան երիտասարդության տարիքային դասի հետ (ստորև տե՛ս նաև «երիտասարդություն» եզրույթի սահմանումը):

Զինված ուժերի և զինված խմբավորումների հետ առնչություն ունեցող երեխաներ. երեխաները կարող են առևանգվել, հարկադրաբար անդամագրվել կամ «կամավոր» միանալ ռազմական միավորումներին: Վերջիններս միշտ չէ, որ զենք են կրում: Նրանք կարող են լինել բեռնակիրներ, լրտեսներ, խոհարարներ կամ ծանր աստիճանի սեռական բռնության զոհեր: Այս երեխաները զրկված են կրթություն ստանալու հնարավորությունից: Զորացրման և վերաինտեգրման գործընթացների ժամանակ հատուկ ուշադրություն պետք է դարձնել նրանց հատուկ կրթական կարիքներին՝ ներառյալ ֆորմալ և ոչ ֆորմալ կրթությանը, արագացված ուսուցմանը, կյանքի հմտություններին և մասնագիտական կրթությանը: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել աղջիկներին, ովքեր հաճախ անտեսվում և դուրս են մնում վերականգնողական ծրագրերից:

Ճանաչողական (կոգնիտիվ). մտավոր գործընթացներ, ինչպիսիք են՝ մտածողությունը, երևակայությունը, ընկալումը, հիշողությունը, որոշումների կայացումը, դատողությունը և խնդիրների լուծումը:

Համայնքային կրթության հանձնախումբ. վաղուց գոյություն ունեցող կամ նոր ձևավորված հանձնախումբ, որը վեր է հանում համայնքի կրթական կարիքներն ու անդրադառնում դրանց: Հանձնախմբի անդամներ կարող են լինել ծնողների կամ խնամատարների ներկայացուցիչները, ուսուցիչները, սովորողները, համայնքային կազմակերպությունները և առաջնորդները, մարգինալացված (մեկուսացված) խմբերը, քաղաքացիական հասարակության միավորումները, երիտասարդական խմբերը և բուժաշխատողները:

Հակամարտությունների մեղմացում. գործողություններ և գործընթացներ, որոնք.

1) զգայուն են հակամարտությունների նկատմամբ և չեն ուժեղացնում լարվածությունները կամ բռնության աղբյուրները,

2) նպատակ ունեն անդրադառնալ հակամարտության պատճառներին և փոխել դրանցում ներգրավված կողմերի գործողության եղանակներն

ու խնդրի ընկալումը: Մարդասիրական, վերականգնողական և զարգացման միջոցառումները վերանայվում են՝ ելնելով համապատասխան հակամարտության իրավիճակի վրա ունեցած իրենց ազդեցությունից, ինչպես նաև հաշվի առնելով, թե վերջիններս որքանով են նպաստում ավելի երկարատև խաղաղության ու կայունության ապահովմանը:

Հակամարտությունների մեղմացմանն ուղղված մոտեցումները կարող են կիրառվել հակամարտությունների կանխարգելման և հակամարտային ու հետհակամարտային իրավիճակներին միջամտելու նպատակով:

Հաշմանդամություն. ֆիզիկական, հոգեկան, մտավոր կամ զգայական խանգարումներ, ինչպես նաև վերաբերմունքային ու միջավայրային խոչընդոտներ, որոնք խաթարում են անհատների՝ մյուսներին հավասար լիարժեք ու արդյունավետ մասնակցությունը հասարակական կյանքում:

Տարանջատված տվյալներ. բաղադրիչ մասերի բաժանված վիճակագրական տեղեկատվություն: Օրինակ, ընդհանուր բնակչությունից կամ որևէ ընտրանքից ստացված գնահատման տվյալները կարող են տարանջատվել ըստ սեռի, տարիքային խմբի և աշխարհագրական տարածքի:

Խտրականություն. սեռով, կրոնով, սեռական կողմնորոշմամբ, տարիքով, էթնիկ պատկանելությամբ, ՄԻԱՎ կարգավիճակով կամ այլ գործոններով պայմանավորված խտրական վերաբերմունք մարդկանց նկատմամբ, որը հանգեցնում է հաստատությունների անհասանելիության, ինչպես նաև ծառայություններից, հնարավորություններից, իրավունքներից կամ մասնակցությունից զրկվելուն:

Սթրես. տխուր, մտահոգ և անկայուն վիճակ: Այն կարող է առաջանալ որպես ծանր կենսապայմանների, ինչպիսիք են՝ աղքատությունը և գերբնակեցումը, ինչպես նաև անձի անվտանգության կամ բարեկեցության նկատմամբ սպառնալիքների հետևանք:

«Մի՛ վնասիր». մոտեցում, որն օգնում է վերհանել մարդասիրության և զարգացման միջամտությունների անսպասելի բացասական կամ դրական հետևանքներն այն վայրերում, որտեղ առկա է հակամարտություն կամ հակամարտության ռիսկ: Այն կարելի է կիրառել պլանավորման, մշտադիտարկման և արդյունքների գնահատման ընթացքում համոզվելու համար, որ միջոցառումը չի խորացնում հակամարտությունը, այլ, ընդհակառակը՝ նպաստում է վերջինիս կարգավորմանը: «Մի՛ վնասիր»-ը հակամարտային իրավիճակներում գործող կազմակերպությունների

գործունեության կարևոր սկզբունքն է:

Վաղ մանկական զարգացում. գործընթացներ, որոնց ընթացքում 0-8 տարեկան երեխաների մոտ զարգանում են նրանց օպտիմալ ֆիզիկական առողջությունը, մտավոր ակտիվությունը, էմոցիոնալ կայունությունը, սոցիալական ունակությունը և սովորելու պատրաստակամությունը: Այս գործընթացներին նպաստում են սոցիալական և ֆինանսական գործոններն ու համապարփակ ծրագրերը, որոնք ընդգրկում են առողջապահության, սննդի, ջրամատակարարման, ջրահեռացման, հիգիենայի, կրթության և երեխաների պաշտպանության ծառայություններ: Բոլոր երեխաներն ու ընտանիքներն օգուտ են քաղում բարձրորակ ծրագրերից, սակայն, առավելագույն օգուտը ստանում են սոցիալապես անապահով խմբերը:

Կրթության ոլորտի կառավարման մարմիններ. Կառավարություններն իրենց կից նախարարություններով, վարչություններով, հաստատություններով և գերատեսչություններով, որոնք պատասխանատու են կրթության իրավունքի ապահովման համար: Նրանք կրթության ապահովման լիազորություններերն իրականացնում են ազգային, մարզային և տեղական մակարդակներում: Այն իրավիճակներում, երբ պետական իշխանության անունը վարկաբեկված է, ոչ պետական դերակատարները, ինչպիսիք են՝ ՀԿ-ները և ՄԱԿ-ի գործակալությունները, երբեմն կարող են ստանձնել սույն պարտականությունը:

Կրթական կլաստեր. կրթության ոլորտում ներքին տեղահանության իրավիճակներում փորձագիտությամբ և մարդասիրական արձագանքման մանդատով օժտված միջգերատեսչական համակարգող մեխանիզմ՝ նախատեսված գերատեսչությունների և կազմակերպությունների համար: Հիմնվել է 2007թ. Միջգերատեսչական մշտական հանձնաժողովի կողմից (տե՛ս առանձին հոդվածը): ՅՈՒՆԻՍԵՖ և «Սեյվ դը Չիլդրեն» կազմակերպությունները համաշխարհային մակարդակով ղեկավարում են «Կրթական կլաստերը»: Ազգային մակարդակում կարող են ղեկավարել այլ գործակալություններ, կրթության ազգային նախարարության ակտիվ ներգրավմամբ: ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակը (ՓԳՀԳ) փախստականների հարցերով զբաղվող գլխավոր կառույցն է: «Կրթական կլաստերը» մարդասիրական արձագանքման առումով պատասխանատու է արտակարգ իրավիճակներում տեխնիկական կարողությունների պատրաստվածության բարձրացման համար: Մարդասիրական արձագանքման ընթացքում այն կրթության ոլորտում պետք է ապահովի կանխատեսելի առաջ-

նորդություն և հաշվետվողականություն:

Կրթություն արտակարգ իրավիճակներում. ճգնաժամի պայմաններում որակյալ կրթության հնարավորություններ, այդ թվում՝ վաղ մանկական զարգացում, տարրական, միջնակարգ, ոչ ֆորմալ, տեխնիկական, մասնագիտական, բարձրագույն, ինչպես նաև չափահաս մարդկանց համար նախատեսված կրթություն բոլոր տարիքային խմբերի համար: Արտակարգ իրավիճակներում կրթությունն ապահովում է ֆիզիկական, հոգեբանասոցիալական և ճանաչողական պաշտպանություն, որը կարող է պաշտպանել ու փրկել կյանքեր:

Կրթության արձագանքում. մարդկանց կրթության իրավունքների իրացման և կարիքների բավարարման նպատակով կրթական ծառայությունների մատուցում արտակարգ իրավիճակներից մինչև վերականգնման փուլ:

Արտակարգ իրավիճակ. իրավիճակ, որի ընթացքում համայնքային բնականոն կյանքը խաթարվել է և դեռ չի վերականգնել իր կայունությունը:

Ֆորմալ կրթություն. դպրոցներում, քոլեջներում, համալսարաններում և այլ ուսումնական հաստատություններում ապահովվող ուսումնական հնարավորություններ: Սովորաբար այն ենթադրում է ամբողջական ուսուցում երեխաների և երիտասարդների համար սկսած 5-7 տարեկանից մինչև 20-25 տարեկան հասակը: Այն սովորաբար մշակվում է կրթության ազգային նախարարությունների կողմից, սակայն արտակարգ իրավիճակներում կրթության ոլորտի այլ շահառուներ ևս կարող են աջակցություն ցուցաբերել:

Գենդեր. կանանց և տղամարդկանց ինքնությունները, դերերը և պարտականությունները և այն, թե ինչպես են դրանք արժևորվում հասարակության մեջ: Տարբեր մշակույթներում դրանք տարբեր են լինում և ժամանակի ընթացքում փոփոխվում են: Գենդերային ինքնություններն են պայմանավորում, թե հասարակությունն ինչ է ակնկալում կանանց և տղամարդկանց մտածելակերպից և գործելակերպից: Այս վարքագծերը ձեռք են բերվում ընտանիքում և դպրոցներում, ինչպես նաև լրատվամիջոցների և կրոնական ուսուցման միջոցով: Գենդերային դերերը, պարտականություններն ու ինքնությունները կարող են փոխվել, քանի որ դրանք սոցիալական ձեռքբերումներ են:

Գենդերային հավասարակշռություն. տղամարդկանց և կանանց, տղա-

ների ու աղջիկների գրեթե հավասար թվաքանակ: Այն կարող է վերաբերել միջոցառումներում և որոշումների կայացման գործընթացներում մասնակցությանն ու ներգրավմանը, հոգալով, որ թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց հետաքրքրությունները հաշվի առնվեն և պաշտպանվեն: Այն կարող է վերաբերել կրթության ոլորտի կառավարման մարմիններում, ինչպես նաև միջազգային և ազգային կառույցներում աշխատող տղամարդկանց և կանանց թվին: Այն հատկապես կարևոր է ուսուցիչների զբաղվածության հարցում: Բոլոր մակարդակներում տղամարդկանց և կանանց հավասարակշռությունն ավելի լայն հնարավորություններ է ստեղծում քաղաքականությունների և ծրագրերի՝ տղամարդկանց և կանանց, տղաների ու աղջիկների վրա ունեցած տարբեր ազդեցությունների քննարկման և արձագանքման համար:

Գենդերային բռնություն. գենդերային տարբերություններով պայմանավորված ցանկացած վտանգավոր գործողություն: Հասարակության մեջ ունեցած ցածր կարգավիճակի պատճառով կանայք շատ դեպքերում ավելի խոցելի են գենդերային բռնությունների նկատմամբ: Տղամարդիկ և տղաները նույնպես կարող են հանդես գալ որպես զոհ, հատկապես՝ սեռական բռնության զոհ: Տարբեր մշակույթներում, երկրներում և շրջաններում գենդերային բռնությունների բնույթն ու չափերը տարբերվում են: Օրինակ՝

- *սեռական բռնությունը*, օրինակ՝ սեռական շահագործումը և ոտնձգությունը, հարկադրված մարմնավաճառությունը, ինչպես նաև պարտադրված և մանկական ամուսնությունը,
- *կենցաղային և ընտանեկան բռնությունը*, այդ թվում՝ ֆիզիկական, հուզական և հոգեբանական բռնությունը,
- *մշակութային կամ ավանդական վտանգավոր ծիսակատարություններ*, օրինակ՝ կանացի սեռական օրգանների թլպատումը, հանուն պատվի սպանությունը, այրիացած կնոջ ժառանգումը սովորաբար մահացած ամուսնու ընտանիքի արական սեռի անդամների կողմից:

Վտանգ. հնարավոր վնասակար ֆիզիկական իրադարձություն, երևույթ կամ մարդկային գործունեություն, որը կարող է հանգեցնել կյանքի կորստի կամ վնասվածքի, գույքի վնասի, հասարակության, տնտեսության կամ շրջակա միջավայրի քայքայման: Վտանգները կարող են լինել բնական կամ մարդածին ծագման կամ էլ այս երկուսի համադրությամբ: Վտանգից առաջացած ռիսկը կախված է այն բանից, թե որքանով է այն հավանական և որտեղ, ինչ հաճախականությամբ և ինչ ուժգնությամբ է տեղի ունենում: Օրինակ, անապատային շրջանում թույլ երկրաշարժը,

որը տեղի է ունենում 100 տարին մեկ անգամ, փոքր վտանգ է ներկայացնում մարդկանց համար: Քաղաքային ջրհեղեղները, որոնք տեղի են ունենում 5-10 տարին մեկ անգամ, 48 ժամվա ընթացքում հասնելով 3 մետր բարձրության՝ ունեն համեմատաբար ավելի բարձր հավանականություն և մեղմացուցիչ միջոցառումներ են պահանջում:

ՄԻԱՎ-ի կանխարգելում, բուժում, խնամք և աջակցություն. վարքային, իրավական, կառուցվածքային և կենսաբժշկական միջամտությունների համադրություն, որն անհրաժեշտ է ՄԻԱՎ-ի նոր վարակների քանակը, ինչպես նաև ՄԻԱՎ-ի ու ՁԻԱՀ-ի՝ դրանցով վարակված ու տուժած անձանց վրա թողած ազդեցությունը նվազեցնելու համար: ՄԻԱՎ-ի կանխարգելումը, բուժումը, խնամքը և աջակցությունը պետք է հիմնված լինի այդ համաճարակի խորն ըմբռնման վրա, այն է, թե ով է ամենաշատը ենթարկվում վարակման ռիսկի և թե որ վարքագծերն են հանգեցնում վարակների նոր դեպքերի: Ռիսկային վարքագծերի մեծ մասն ընդգրկում են տղամարդկանց միջև սեռական հարաբերությունը, ներարկվող թմրամիջոցների օգտագործումը, փողի կամ նյութական այլ միջոցների դիմաց սեռական հարաբերությունը, միաժամանակ մի քանի զուգընկեր կամ տարիքային մեծ տարբերությամբ զուգընկեր ունենալը: Սոցիալ-տնտեսական գործոնները նույնպես ազդում են ՄԻԱՎ-ի կանխարգելման, բուժման, խնամքի և աջակցման վրա:

Մարդու իրավունքներ. արժանապատիվ ապրելու նախադրյալներ: Մարդու իրավունքները համընդհանուր են և հնարավորություններ ընձեռող. դրանք չեն կարող տրվել կամ հետ վերցվել: Արտակարգ իրավիճակների համատեքստում առաջնահերթ կարևորություն է տրվում մարդու հիմնական իրավունքներին, ինչպիսիք են՝ խտրականության արգելումը, պաշտպանությունը և կյանքի իրավունքը, մինչդեռ այլ իրավունքների աստիճանական իրականացումը կարող է հիմնված լինել առկա ռեսուրսների վրա: Քանի որ կրթությունը նպաստում է պաշտպանությանը, խտրականության արգելմանը և գոյատևմանը, այն պետք է դիտարկվի որպես մարդու հիմնական իրավունք: Մարդու իրավունքի միջազգային օրենսդրությունը միջազգային իրավական պայմանագրերի և նորմատիվ չափանիշների համակցություն է, որը բոլոր ժամանակներում, այդ թվում՝ արտակարգ իրավիճակներում, կարգավորում է պետության՝ մարդու իրավունքները հարգելու, պաշտպանելու և իրացնելու պարտականությունները: Հակամարտությունների ժամանակ կիրառվում է նաև միջազգային մարդասիրական և քրեական իրավունքը: Այս պայմանագրերն ու ստանդարտները կարգավորում են ռազմական գործողությունները, պաշտպանում քաղաքացիներին և սահմանում պար-

տականություններ այն անձանց նկատմամբ, ովքեր կարող են լուրջ խնդիրներ առաջացնել, փոխարինել պետությանը կամ գործել դրա անունից: Փախստականների մասին օրենքը սահմանում է կառավարության պարտավորություններն այն անձանց նկատմամբ, ովքեր հետապնդումից կամ զինված հակամարտությունից խուսափելու հետևանքով խախտել են միջազգային սահմանները:

Ներառական կրթություն. ապահովում է բոլոր անձանց ներկայությունը, ձեռքբերումներն ու մասնակցությունն ուսումնական հնարավորություններում: Այն նաև հոգում է այն մասին, որ կրթության քաղաքականությունները, գործելակերպերը և հաստատություններն արձագանքեն մարդկանց բազմազանությանը տվյալ իրավիճակին համապատասխան: Կրթական համակարգից դուրս մնալը կարող է լինել խտրականության, խոչընդոտների վերացման ջանքերի պակասի, ինչպես նաև լեզուների, բովանդակության կամ դասավանդման մեթոդների օգտագործման արդյունք, որն օգուտ չի բերում ոչ մի սովորողի: Ամենից հաճախ կրթությունից դուրս են թողնվում ֆիզիկական, զգայական, հոգեկան կամ մտավոր արատներով մարդիկ: Արտակարգ իրավիճակները նպաստում են դուրս մնալու դեպքերին: Որոշ անհատներ, որոնց համար կրթությունը նախկինում հասանելի էր, կարող են դուրս մնալ հանգամանքներից բխող, հասարակական, մշակութային, ֆիզիկական կամ ենթակառուցվածքային գործոնների պատճառով: Ներառական կրթության իմաստը հոգ տանելն է այն մասին, որ մասնակցության և ուսումնառության այս խոչընդոտները վերանան, իսկ դասավանդման մեթոդներն ու ուսումնական ծրագրերը հասանելի և հարմար լինեն հաշմանդամ ուսանողների համար: Բոլոր անհատների մասնակցությունն ու առաջընթացը ողջունվում և խրախուսվում է, իսկ նրանց անհատական պահանջները հաշվի են առնվում:

Տեղեկատվության կառավարում. ընդգրկում է կարիքների, կարողությունների և բովանդակության գնահատում, ինչպես նաև համապատասխան մշտադիտարկում, արդյունքների գնահատում, տվյալների պահպանում, տվյալների վերլուծություն և տեղեկատվության փոխանակման համակարգեր: Տեղեկատվության կառավարման գործիքները և համակարգերը պետք է օգնեն շահառուներին որոշել, թե որ փաստերն ու տվյալներն ում հետ, երբ, ինչ նպատակով և ինչպես պետք է հավաքագրվեն, մշակվեն և փոխանակվեն:

Ուսուցման և ուսումնառության գործընթացներ. սովորողների և ուսուցիչների միջև փոխհարաբերություններ: Ուսուցումը պլանավորվում

է ըստ ուսումնական ծրագրի, որը հիմնվում է գնահատման միջոցով վերհանված կարիքների վրա և հնարավոր է դառնում ուսուցիչների վերապատրաստման շնորհիվ: Աշակերտակենտրոն, մասնակցային և ներառական կրթության և ուսումնառության գործընթացները հասարակության ավելի լայն շերտերի են ներգրավում կրթության մատուցման և աջակցության գործում:

Միջգերատեսչական մշտական հանձնաժողով (ՄՄՀ). մարդասիրական օգնության շրջանակներում համակարգման, քաղաքականության մշակման և որոշումների կայացման միջգերատեսչական համաժողով: ՄՄՀ-ն հիմնադրվել է 1992 թվականի հունիսին՝ ի պատասխան մարդասիրական օգնության ընդլայնման մասին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի բանաձևի: ՄՄՀ-ն ներառում է թե՛ ՄԱԿ-ի հիմնական գործընկերներին, թե՛ մարդասիրական գործունեությամբ զբաղվող այլ կազմակերպությունների:

Ներքին տեղահանված անձ (ՆՏԱ). անձ, ով հայրենիքի ներսում ապահով վայր գտնելու նպատակով ստիպված է եղել լքել իր հայրենի տարածքը՝ չհատելով միջազգային սահմանը: ՆՏԱ-ները հաճախ փախչում են նույն պատճառներով, ինչ փախստականները, օրինակ՝ զինված հակամարտության, աղետներ, համատարած բռնության կամ մարդու իրավունքների խախտման հետևանքով: Այնուհանդերձ, վերջիններս իրավաբանական տեսանկյունից գտնվում են իրենց կառավարության պաշտպանության ներքո, նույնիսկ եթե հենց այդ կառավարությունը կարող է հանդիսանալ իրենց փախուստի պատճառը: Թե՛ մարդու իրավունքների օրենսդրության, թե՛ միջազգային մարդասիրական իրավունքի համաձայն վերջիններս, որպես քաղաքացիներ, պահպանում են իրենց իրավունքները, այդ թվում՝ պաշտպանության իրավունքը:

Սովորողներ. կրթական ծրագրերին մասնակցող մարդիկ, այդ թվում երեխաները, երիտասարդները և մեծահասակները: Սա ներառում է ֆորմալ դպրոցների աշակերտներին, տեխնիկական և մասնագիտական կրթություն ու ուսում ստացող ուսանողներին կամ վերապատրաստման ծրագրերի մասնակիցներին, ինչպես նաև ոչ ֆորմալ կրթությանը, օրինակ՝ համայնքում կազմակերպվող գրագիտության և թվաբանության դասերին, կյանքի հմտությունների վերաբերյալ դասընթացների և փոխուսուցման մասնակիցներին:

Ուսումնառության վերջնարդյունքներ. այն գիտելիքները, վերաբերմունքները, հմտությունները և ունակությունները, որոնք ուսանողները ձեռք են բերել որևէ դասընթացի կամ կրթական ծրագրի մասնակցելու

արդյունքում: Ուսումնառության վերջնարդյունքները սովորաբար նկարագրում են այն ամենը, ինչ ուսանողները «պետք է իմանան և կարողանան անել» ուսուցման և ուսումնառության գործընթացների արդյունքում:

Ուսումնական վայրեր. ուսումնական հաստատությունների գտնվելու վայրերը:

Ուսումնական տարածքներ. այն վայրերը, որտեղ տեղի են ունենում ուսումնառությունն ու դասավանդումը: Օրինակ՝ մասնավոր տները, երեխաների խնամքի կենտրոնները, նախադպրոցական ուսումնական հաստատությունները, ժամանակավոր կառույցները և դպրոցները:

Կյանքի հմտություններ. դրական վարքագծի համար հմտություններ և ունակություններ, որոնք անհատներին թույլ են տալիս արդյունավետորեն դիմակայել և հարմարվել առօրյա կյանքի պահանջներին ու մարտահրավերներին: Վերջիններս օգնում են մարդկանց մտածել, զգալ, գործել և փոխազդել որպես անհատներ և որպես հասարակության մասնակից անդամներ: Կյանքի հմտությունները բաժանվում են երեք փոխկապակցված կարգի. *ճանաչողական, անձնային* կամ *հուզական* և *միջանձնային* կամ *սոցիալական*: Կյանքի հմտությունները կարող են լինել ընդհանրական, օրինակ՝ տեղեկատվության վերլուծումն ու կիրառումը, այլ մարդկանց հետ արդյունավետ հաղորդակցումը և փոխազդումը: Դրանք կարող են վերաբերել որոշակի ոլորտների, ինչպիսիք են՝ ռիսկերի նվազեցումը, շրջակա միջավայրի պաշտպանությունը, առողջության ամրապնդումը, ՄԻԱՎ-ի կանխարգելումը, բռնության կանխարգելումը կամ խաղաղաշինությունը: Ճգնաժամի պայմաններում կյանքի հմտությունների կարիքը հաճախ ավելանում է՝ պահանջելով ավելի մեծ ուշադրություն դարձնել արտակարգ իրավիճակներին, ինչպես նաև տեղական համատեքստերին համապատասխան և կյանքի կիրառելի հմտությունների զարգացմանը:

Կենսապահովում. ապրուստի միջոցներ հայթայթելու համար պահանջվող կարողությունները, ակտիվները, հնարավորություններն ու միջոցառումները: Ակտիվները ներառում են ֆինանսական, բնական, ֆիզիկական, սոցիալական և մարդկային ռեսուրսներ, օրինակ՝ խանութները, հողը, հասանելիությունը դեպի շուկաներ և տրանսպորտային համակարգերը: Կենսապահովման միջոցը կայուն է, եթե այն կարողանում է հաղթահարել և վերականգնվել սթրեսից և ցնցումներից, պահպանել և ընդլայնել իր հնարավորություններն ու ակտիվները և հետագա սերունդների համար ապահովել կայուն կենսապահովման հնարավորություններ:

Ոչ ֆորմալ կրթություն. կրթական միջոցառումներ, որոնք չեն համապատասխանում ֆորմալ կրթության սահմանմանը (վերևում տես առանձին հոդվածը): Ոչ ֆորմալ կրթությունը տեղի է ունենում և՛ ուսումնական հաստատությունների ներսում, և՛ դրանցից դուրս և սպասարկում է բոլոր տարիքի մարդկանց: Միշտ չէ, որ այն ավարտական վկայական է տրամադրում: Ոչ ֆորմալ կրթական ծրագրերը բնութագրվում են իրենց բազմազանությամբ, ճկունությամբ և երեխաների ու մեծահասակների կրթական նոր կարիքներին արագ արձագանքելու ունակությամբ: Վերջիններս սովորաբար նախագծվում են սովորողների որոշակի խմբերի համար, ովքեր չափազանց մեծ են իրենց դասարանի համեմատ, և ովքեր ֆորմալ դպրոցներ չեն հաճախում կամ չափահաս են: Ուսումնական ծրագրերը կարող են հիմնված լինել ֆորմալ կրթության կամ նոր մոտեցումների, օրինակ՝ հետ մնացածների համար արագացված ուսումնառության, հետդպրոցական ծրագրերի, գրագիտության և թվաբանության դասավանդումների վրա: Ոչ ֆորմալ կրթությունը կարող է հնարավորություն ընձեռել սովորողին ավելի ուշ մասնակցելու ֆորմալ կրթության ծրագրերին: Սա հաճախ կոչվում է «կրթության երկրորդ հնարավորություն»:

Մասնակցություն. գործընթացներում, որոշումներում և գործողություններում ներգրավված լինելն ու դրանց վրա ազդելը: Մասնակցությունը բոլորի իրավունքն է և հիմք է հանդիսանում համայնքների հետ աշխատելու և ծրագրեր մշակելու համար: Փոփոխվող կարողություններից կախված՝ մասնակցությունը կարող է տարբեր լինել: Բոլոր խմբերը, այդ թվում՝ մեծահասակները, երեխաները, երիտասարդները, հաշմանդամություն ունեցող անձինք և խոցելի խմբերի անդամներն ամենավաղ հասակից սկսած կարող են տարբեր ձևերով մասնակցություն ցուցաբերել: Մարդկանց ոչ մի խումբ չպետք է զրկվի մասնակցության հնարավորությունից իրենց դժվար աշխատանքի կամ հասանելիության պատճառով: Մասնակցությունը կամավոր է: Մարդկանց հրավիրում և խրախուսում են մասնակցել, այլ ոչ թե հարկադրում կամ մանիպուլացիայի ենթարկում: Մասնակցությունը կարող է ընդգրկել մի շարք միջոցառումներ և մոտեցումներ: Պասիվ դերերն են ծառայություններից օգտվելը, նյութական օժանդակությունը, այլոց կողմից կայացրած որոշումների ընդունումը և քննարկումներին նվազագույն չափով մասնակցությունը: Ակտիվ մասնակցության օրինակներ են՝ ժամանակի տրամադրումը, որոշումների կայացման, պլանավորման և կրթական միջոցառումների իրականացման գործում անմիջական ներգրավվածությունը:

Մասնակցային ուսումնառություն. դասավանդման և ուսումնառության

մոտեցում, որի ուշադրության կենտրոնում սովորողն է: Այն խրախուսում է սովորել ինչ-որ բան անելով, օգտագործելով փոքր խմբեր, որոշակի ուսումնական նյութեր, ազատ հարցադրումներ և փոխուսուցանում: Օրինակ՝ մաթեմատիկական հասկացություններն ըմբռնելու համար սովորողները գործնական աշխատանք են կատարում կամ, միասին աշխատելով, խնդիրներ են լուծում, հարցեր են տալիս ու պատասխանում: Մասնակցային ուսումնառությունը հակասում է ուսուցչակենտրոն մեթոդաբանություններին, որոնց բնորոշ են աշակերտական նստարաններին պասիվ նստած, կաղապարված հարցերին պատասխանող և գրատախտակից արտագրող սովորողները: Մասնակցային ուսումնառությունը կարող է կիրառվել նաև ուսուցիչների և կրթության ոլորտի կառավարման մարմինների համար՝ օգնելու նրանց վերլուծել իրենց կարիքները, գտնել լուծումներ, մշակել և իրականացնել գործողությունների ծրագրեր: Նման համատեքստերում այն կարող է ներառել համայնքային մասնակցություն, համակարգում և վերլուծություն:

Պատրաստվածություն. կառավարությունների, արձագանքման և վերականգնման մասնագիտացված կազմակերպությունների, համայնքների և անհատների կողմից գիտելիքների և կարողությունների զարգացում՝ հավանական, մոտալուտ կամ առկա վտանգավոր երևույթների և պայմանների ազդեցությունների արդյունավետ կանխատեսման, արձագանքման և վերականգնման նպատակով:

Կանխարգելում. վտանգների անցանկալի բացասական ազդեցություններից և դրանց հետ կապված աղետներից (տես սույն եզրույթների բառարանի առանձին հոդվածները) խուսափելու նպատակով ձեռնարկվող միջոցներ:

Պաշտպանություն. ամեն տեսակի դաժան վերաբերմունքից, շահագործումից, բռնությունից և արհամարհանքից ազատումը:

Հոգեբանասոցիալական աջակցություն. գործընթացներ և գործողություններ, որոնք նպաստում են մարդկանց լիարժեք բարեկեցությանը իրենց սոցիալական շրջապատում: Այն ենթադրում է ընտանիքի և ընկերների կողմից տրամադրվող աջակցություն: Ընտանեկան և համայնքային աջակցության օրինակ են արտակարգ իրավիճակներում կրթության կազմակերպման և ընտանիքից առանձնացված երեխաների վերամիավորմանն ուղղված ջանքերը:

Որակյալ կրթություն. որակյալ կրթությունը մատչելի է, հասանելի, հաշվի է առնում գենդերային գործոնները և արձագանքում է բազմազա-

նությանը: Այն ներառում է 1) ապահով և սովորողների համար բարենպաստ ներառական միջավայր, 2) բանիմաց և լավ վերապատրաստված ուսուցիչներ, որոնք լավ են տիրապետում առարկային և մանկավարժությանը, 3) իրավիճակին համապատասխան ուսումնական ծրագիր, որն ըմբռնելի է և մշակութային, լեզվաբանական ու սոցիալական առումներով համապատասխանում է սովորողների կարիքներին, 4) ուսուցման և ուսումնառության համար ակտուալ և պատշաճ ուսումնական նյութեր, 5) ուսուցման և ուսումնառության գործընթացների մասնակցային մեթոդներ, որոնք հարգում են սովորողի արժանապատվությունը, 6) դասարանում աշակերտների համապատասխան քանակ և ուսուցիչ-ուսանող հարաբերակցություն, ինչպես նաև 7) հանգստի, խաղային, սպորտային և ստեղծագործական միջոցառումների շեշտադրում՝ ի հավելումն այնպիսի ոլորտների, ինչպիսիք են՝ գրագիտությունը, թվաբանությունը և կյանքի հմտությունները:

Վերականգնում. հաստատությունների, կենսապահովման միջոցների, կենսապայմանների կամ տուժած համայնքների սոցիալ-հոգեբանական բարեկեցության վերականգնումն ու բարելավումը, այդ թվում՝ աղետների ռիսկային գործոնների կրճատմանն ուղղված ջանքերը:

Փախստական. ըստ «Փախստականների կարգավիճակի մասին» 1951թ. ընդունված կոնվենցիայի՝ փախստականն այն անձն է, ով կրոնական, ռասայական, ազգության, որոշակի սոցիալական խմբերի պատկանելության կամ քաղաքական կարծիքների պատճառով հալածանքի ենթարկվելու հիմնավորված երկյուղի հետևանքով գտնվում է իր քաղաքացիության երկրից դուրս և անկարող է կամ այդ երկյուղի պատճառով չի ցանկանում օգտվել այդ երկրի պաշտպանությունից:

Պատշաճ կրթություն. Սովորողների կարիքներին համապատասխան ուսումնական հնարավորություններ: Պատշաճ կրթությունը հաշվի է առնում տեղական ավանդույթներն ու հաստատությունները, մշակութային դրական սովորույթները, համոզմունքների համակարգերն ու համայնքի կարիքները: Այն երեխաներին նախապատրաստում է հասարակության լուսավոր ապագայի թե՛ ազգային, թե՛ միջազգային համատեքստում: Պատշաճ կրթությունը կրթության որակի տարր է և վերաբերում է նրան, թե ինչ և ինչպես են սովորում, և թե որքան արդյունավետ է ուսումնառությունը:

Դիմակայունություն. հավանական վտանգների ենթակա որևէ համակարգի, համայնքի կամ անհատի հարմարվելու կարողությունը: Սույն հարմարվողականությունը ենթադրում է դիմադրություն կամ փոփոխու-

թյուն՝ գործունեության և կառուցվածքի ընդունելի մակարդակին հասնելու և այն պահպանելու նպատակով: Դիմակայելու կարողությունը կախված է հաղթահարման այնպիսի մեխանիզմներից և կյանքի հմտություններից, ինչպիսիք են՝ խնդիրների լուծումը, աջակցություն փնտրելու ունակությունը, մոտիվացիան, լավատեսությունը, հավատը, հաստատակամությունը և հնարամտությունը: Դիմակայունությունը դրսևորվում է այն դեպքում, երբ բարեկեցությանը նպաստող պաշտպանական գործոններն ավելի ուժեղ են, քան վնաս հասցնող ռիսկային գործոնները:

Ռիսկ. արտաքին սպառնալիքների արդյունքը, ինչպիսիք են՝ բնական վտանգները, ՄԻԱՎ-ի տարածվածությունը, գենդերային բռնությունը, զինված հարձակումը և առևանգումը՝ զուգորդված անհատի այնպիսի խոցելի կողմերի հետ, ինչպիսիք են՝ աղքատությունը, ֆիզիկական կամ հոգեկան խանգարումները կամ որևէ խոցելի խմբի անդամ լինելը:

Ռիսկի գնահատում. ռիսկի բնույթը և աստիճանը որոշելու մեթոդաբանություն՝ վերլուծելով հնարավոր վտանգները և գնահատելով խոցելիության առկա պայմանները, որոնք կարող են հնարավոր սպառնալիք կամ վնաս հասցնել մարդկանց, գույքին, կենսապահովման միջոցներին և այն միջավայրին, որից կախում ունեն:

Ապահովություն. ֆիզիկական կամ հոգեբանասոցիալական վնասներից ազատություն:

Անվտանգություն. սպառնալիքից, վտանգից, վնասվածքից կամ կորուստից պաշտպանվածություն:

Շահառու. անձ, խումբ կամ հաստատություն, որը հետաքրքրված է որևէ նախագծով կամ ծրագրով:

Խոցելիություն. այն անհատների կամ խմբերի բնութագրերը և հանգամանքները, որոնց արդյունքում վերջիններս զգայուն են դառնում հարձակման, վնասի կամ սթրեսի հանդեպ: Խոցելի խմբերի օրինակներ կարող են լինել առանց ուղեկցության երեխաները, հաշմանդամություն ունեցող անձինք, միածնող ընտանիքները և նախկինում զինված ուժերի կամ զինված խմբավորումների մեջ ներքաշված երեխաները:

Բարեկեցություն. լիարժեք առողջ վիճակն ու այդ վիճակին հասնելու գործընթացը: Այն վերաբերում է ֆիզիկական, հուզական, սոցիալական և հոգեկան առողջությանը: Բարեկեցությունն այն ամենն է, ինչը լավ է անձի համար. սոցիալական նշանակալի դերում հանդես գալը, լավատեսությունն ու երջանկության զգացողությունը, տեղական արժեքներին

համապատասխան կյանքը, դրական սոցիալական հարաբերությունների և բարենպաստ միջավայրի առկայությունը, կյանքի դրական հմտությունների միջոցով մարտահրավերներ հաղթահարումը, անվտանգության, պաշտպանվածության զգացողությունը և որակյալ ծառայությունների հասանելիությունը (տե՛ս նաև «ճանաչողական» հոդվածը):

Երիտասարդներ և դեռահասներ. Երիտասարդ են համարվում 15-24 տարեկան, իսկ դեռահաս՝ 10-19 տարեկան մարդիկ: Միասին նրանք կազմում են երիտասարդության ամենամեծ տարիքային կատեգորիան, որին պատկանում են 10-24 տարեկան անձինք: Դեռահասության ավարտն ու հասունության սկիզբը տարբերվում են: Երկրի կամ մշակույթի ներսում տարիքային շեմը, երբ անհատը համարվում է բավականին հասուն որոշակի հարցերում հասարակության կողմից վստահության արժանանալու համար, տարբեր է: Արտակարգ իրավիճակներում դեռահասներն ունեն այնպիսի կարիքներ, որոնք տարբերվում են փոքր երեխաների և հասուն տարիքի մարդկանց կարիքներից: Երիտասարդություն ասելով, հասկանում ենք ինքնուրույն պատասխանատվության աճի ժամանակաշրջան: Տարբեր համատեքստերում սահմանումները տարբեր են, կախված սոցիալ-մշակութային, ինստիտուցիոնալ, տնտեսական և քաղաքական գործոններից:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԳՆ	Արտաքին գործերի նախարարություն
ԱՄԿ	Աշխատանքի միջազգային կազմակերպություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՁԻԱՀ	Ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ
ԱԻԿՄՑ	Արտակարգ իրավիճակներում կրթության հարցերով միջգերատեսչական ցանց
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԻԱՎ	Մարդու իմունային անբավարարության վիրուս
ՄՄՀ	Միջգերատեսչական մշտական հանձնաժողով
ՅՈՒՆԵՍԿՕ	ՄԱԿ-ի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպություն
ՅՈՒՆԻՍԵՖ	ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ
ՆՈՐԱԴ	Նորվեգիայի զարգացման համագործակցության գործակալություն
ՆՏԱ	Ներքին տեղահանված անձ
ՓԳՀԳ	Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԲԱՌԱՑԱՆԿ

«Մի՛ վնասիր» 62, 164

«Սֆերա» նախագիծ 9, 24-25

ազգային և տեղական մակարդակում կրթության ծրագրեր 48, 64, 155, 157-158

ազգային ծրագրեր 153

ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտներ 6-11, 13-28, 51, 74, 129, 146, 160, 177

ակտիվ ուսուցում 124

աղետներ 161

աղետների ռիսկի նվազեցում 64, 161

աղետների ռիսկի նվազեցում և կառավարում 87, 95, 122

աղետներին պատրաստվածություն 122, 155

անվտանգություն 12, 25, 32, 35, 38, 44, 52-53, 55-57, 65-68, 84-88, 91-95, 153, 158, 161, 164, 176

անվտանգություն և ապահովություն 52, 55, 88

աշխատանքային պայմաններ 12, 139

աշխատանքի նկարագրեր 123, 135

աշխատողների հավաքագրում և ընտրություն 12, 22, 38, 69, 101, 115, 133, 135-138

ապահով ջուր 102

ապահովության ամրապնդում 90-91

ապահովություն 5, 12, 22, 37, 43, 52-55, 65, 87, 90, 97

ապահովություն հարձակումներից 35, 38, 87, 93, 151-152, 159

ապրուստի միջոց 171

աջակցություն և համակարգում 92, 107, 120

աջակցություն և վերահսկում 12, 121, 143-144

առողջապահություն և սննդի կազմակերպում 97-98, 102-103, 163

արդյունքահեն մոտեցում 51

արդյունքներ 59

արձագանքման պատրաստվածություն 64, 95, 122

արձագանքման ռազմավարություններ 31, 60-

արձագանքման ռազմավարությունների թարմացում 62
արտակարգ իրավիճակներ 10, 166
արտակարգ իրավիճակներին արձագանքման պատրաստվածություն 31, 53, 64, 95, 153
Արտակարգ իրավիճակներում կրթության հարցերով միջգերատեսչական ցանց (ԱԻԿՄՑ) 6
արտակարգ իրավիճակներում կրթություն 3, 149, 159, 166, 173

բազմազանություն 110, 116, 124, 135, 137
բաժիններ 11
բարեկեցություն 87, 93, 97, 115, 145, 173, տե՛ս նաև պաշտպանությունը
բռնությունից զերծ դասարանի կառավարում 141
բռնություններ 167

գենդեր 68, 78, 110, 135, 149, 166, 173
գենդերային բռնություն 58, 90-91, 103, 119, 167, 175
գենդերային հավասարակշռություն 62, 120, 133, 136-137, 166
գտնվելու վայրը 79, 87, 98, 143, 171
գրաճանաչություն 5, 70

դասավանդման մեթոդներ 108, 110, 117, 125-126, 145, 169
դասավանդում և ուսումնառություն 12, 20, 37, 43, 77, 79, 99, 107-129, 169
դասարանում աշակերտների թիվը 138, 170, 174
դեռահասներ 176
դերեր և պարտականություններ 37, 45, 135, 166
դիմակայունություն 15, 31, 134
դոնորների արձագանքում 63
դպրոցի ապահովություն 95

ելակետային տվյալներ 60
երաշխավորագրեր
երեխայի պաշտպանություն 83, 87, 89, 97-98, 152, 162, 165

երեխաներ 14, 31, 34-35, 39-40, 44, 58, 63, 67, 69, 79, 87, 98, 109, 116, 124, 152, 158, 163
երեխաներ և երիտասարդություն 31, 34, 39, 44, 67 100, 112, 133, 151, 155, 162
երեխաներին հարմար նախատեսված տարածքներ և դպրոցներ 87, 162
երեխաներին հարմար տարածքներ 77, 83, 133, 162
երիտասարդություն 13, 97, 163, 176
երկարաժամկետ զարգացում 32, 45, 157

զարգացում 5, 13

էթիկական նկատառումներ 54, 141

ընդունելություն, դասերի հաճախելիություն և պահպանում 82
ընթացիկ գնահատում 31, 34, 71, 126
ընտրության չափանիշներ 135, 136

թափանցիկություն 127
թափանցիկություն և հաշվետվողականություն 159
թիմեր 54

ժամանակավոր ապաստաններ 85, 153, 171

իրականացման գործիքներ 23, 74, 104, 129, 146, 160

խաղ 94, 123-124
խանգարումներ, խանգարումներ ունեցող մարդիկ 95, 100, 164, 175
խոցելիություն 14, 53, 161, 175
խտրականության բացառում 10, 149, 156, 168
խտրականություն 10-11, 34, 62, 78-81, 94, 110, 135, 164

ծառայություններ 31, 34, 46, 78, 97, 102-103, 139, 152

կազմակերպական մանդատներ 64
կանխարգելում 173
կաշառակերություն 154
կառուցվածք, նախագծում և շինարարություն 99-100
կատարողականի գնահատումներ 143
կարողություն 14, 32, 42, 46, 56, 59, 98, 119, 127, 145, 162, 174
կարողությունների զարգացում 21, 26, 31, 34, 36, 41, 47, 60, 61, 72, 144, 162
կիրառել 11, 13–20
կյանքի հմտություններ 65, 82, 94, 109, 110, 112, 113, 119, 125, 163, 170, 172-174

գործընթացներ 123, 163, 165, 169, 173

կոյուղացում 59
կրթական և հոգեբանասոցիալական կարիքներ 59, 114, 121, 137
կրթական իրավունքներ և նպատակներ 157
Կրթական կլաստեր 6, 17, 20, 26, 32, 50, 59, 165
կրթության առաջնահերթ գերակայություններ 84
կրթության արձագանքում 31, 52, 166
կրթության իրավունք 8-10, 15, 27, 32, 39, 47, 60, 63, 79, 81, 149-151, 157, 165-166
կրթության կառավարման մարմիններ 28, 36, 48, 64, 119, 150, 156, 165
կրթության շարունակականություն 38, 51, 77, 79, 150, 152
կրթության քաղաքականություն 12, 20, 149-160

հակամարտության մեղմացում 163
հակամարտության վերլուծություն 55
հաճախակի տրվող հարցեր 27
համակարգում 11, 22, 31, 47, 120
համայնքային կրթության հանձնախմբեր 22, 34, 36-38, 93, 163
համայնքային մասնակցություն 11, 22, 34-46, 173

համայնքային ներգրավվածություն 31, 84
համայնքային ռեսուրսներ 43-46
համատեղ նախնական գնահատումներ 34, 50
համատեքստ, տարիք և զարգացման մակարդակներ 109, 111
համատեքստի վերլուծություն 14, 52, 154
հաշվետվողականություն 51, 67, 71, 159, 161
հասանելիություն 12, 40, 63, 77, 79, 97, 103, 107, 161, տե՛ս նաև հավասար հասանելիություն
հասարակական կազմակերպություններ և ՄԱԿ-ի գործակալություններ 9, 68, 156
հաստատություններ 85
հավասար հասանելիություն 63, 79,
հավաստիություն և վերլուծություն 57
հավաքագրում 48, 65, 135
հարձակումներ, պաշտպանություն 87, 89, 162
հիգիենիկ նորմատիվների պահպանման խթանում 71
հիմնարար ստանդարտներ 11, 20
հնարավորություններ 63, 79, 82
հոգեբանասոցիալական կարիքներ 59, 114

ճանաչում և հավաստագրում 121
ճկունություն 83

մաթեմատիկական գրագիտություն 69, 174
մասնագիտական կատարելագործում, տե՛ս վերապատրաստում և մասնագիտական կատարելագործում 12, 118, 144
մասնագիտական ուսուցում 49, 65, 70, 81, 156, 170
մասնակիցներ 57
մասնակցային ուսումնառություն 172
մասնակցություն 95, 145, 172
մարդասիրական արձագանքում 6, 14, 24
մարդու իրավունքներ 8-13, 168
մեծահասակ սովորողներ 63, 65

միջազգային իրավական գործիքներ 10
Միջգերատեսչական մշտական հանձնաժողով (ՄՄՀ) 6, 22, 26, 48, 170
միջոլորտային կապեր 158
մշտադիտարկում 31, 44, 66, 68-69

նախնական գնահատում 50, 52, 161
ներառական կրթություն 13, 169
ներառականություն 123
ներդրումների ճանաչում 45
ներքին տեղահանված անձինք (ՆՏԱ) 170

շահառուներ 47, 71

ոչ կառավարական կազմակերպություններ 159
ոչ ֆորմալ կրթություն 41, 79, 109, 125, 172
որակական տվյալներ 72
որակյալ կրթություն 77, 149, 150, 173

ուղղորդող ցուցումներ 16
ուսումնական բովանդակություն 110
ուսումնական գործընթացներ 79, 115
ուսումնական միջավայր 12, 20, 40, 79, 87, 97
ուսումնական նյութեր 109-110, 117
ուսումնական նպատակներ 110, 117
ուսումնական պլան և բովանդակություն 110
ուսումնական վայր 171
ուսումնական տարածքներ 77, 171
ուսումնական տարածքների տեխնիկական սպասարկում 100
ուսումնամեթոդական նյութեր 110
ուսումնառության վերջնարդյունքներ 126, 170
ուսումնառություն, տե՛ս դասավանդում և ուսումնառություն
ուսուցիչ. սահմանումը 119

ուսուցիչներ և մանկավարժական աշխատողներ 87, 97, 118
ուսուցիչների վարձատրություն 49, 134
ուսուցման և ուսումնառության գործընթացներ 123, 169
ուսուցողական նյութեր 109, 112, 117, 122

պայմանագրեր 168
պատշաճ կրթություն 79, 174
պատրաստվածություն 64, 122, 173
պլանավորում և իրականացում 149, 157

ռազմավարական կապեր 24-25
ռեսուրսներ 12-17, 21, 28, 43, 48, 85, 158
ռեսուրսների հավաքագրում 39, 48
ռիսկ 95, 161, 175
ռիսկի գնահատում 98, 175
ռիսկի նվազեցում և կառավարում 95

սահմանումներ 173-174
սթրես 114, 145, 164
սովորողներ 39-40, 63, 69, 82, 87, 91, 97, 109, 145, 170
Սոցիալական աուդիտներ 41
սոցիալ-հոգեբանական կարիքներ 40, 174
ստանդարտներ 6, 10, 11, 19, 24, 28

վաղ մանկական զարգացում 165
վարքագծի կանոնագրքեր 9, 91
վերականգնում 174
վերանայում և մշակում 111
վերապատրաստում և մասնագիտական կատարելագործում 118, 121, 144
վերլուծություն 14, 55, 154,
վտանգների մասին իրազեկվածություն 122
տարանջատված տվյալներ 164

տեղական կարողություններ 46
տեղական մակարդակում կրթության գործողությունների ծրագրեր 35, 38
տեղեկատվական աղբյուրներ 57
տեղեկատվության և գիտելիքների կառավարում 49
Տեղեկատվության տարածում և տեղեկատվական համակարգեր 155
տե՛ս նաև բարեկեցություն
տե՛ս նաև ծառայությունները
տե՛ս նաև վերապատրաստում և մասնագիտական կատարելագործում
Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր (1966 թ.) 10, 81
տվյալների հավաստիություն և վերլուծություն 57
տվյալների հավաքագրման գործիքներ 54

փախստականներ 10, 27, 63, 79, 99, 109, 111, 115, 150, 156, 165, 170, 174
փոխգործակցություն 123
փորձ և որակավորում 136

քանակական տվյալներ 72

օրենքի և քաղաքականության մշակում 12, 154

ֆինանսավորում 28, 49, 63, 159
ֆորմալ կրթություն 83, 109, 119, 124, 133, 166

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊԻ ՁԵՎ

Կոնտակտային տվյալներ	
Ամսաթիվ՝	Անուն-ազգանուն՝
Կազմակերպությունը և պաշտոնը՝	
Հասցե՝	
Հեռախոս՝	
Էլ. հասցե՝	

1. Խնդրում ենք թվարկել, թե ինչպես եք Դուք կամ Ձեր կազմակերպությունն օգտագործել «Նվազագույն ստանդարտները»: Եղեք հնարավորինս հստակ և նշեք այն եղանակները (եթե այդպիսիք կան), որոնցով ձեռնարկի հիմնական գործողությունները հարմարեցրել եք ձեր համատեքստին և ձեր նախագծի/կազմակերպության/համակարգման կառույցի և այլն աշխատանքին:

_____
_____
_____
_____
_____
_____

2. Ինչ դժվարությունների եք հանդիպել այս ձեռնարկն օգտագործելիս և ինչպե՞ս եք հաղթահարել կամ շրջանցել դրանք:

_____
_____
_____
_____
_____

3. Կարո՞ղ եք նշել, թե այս ձեռնարկն օգտագործելիս, ի՞նչ դասեր եք քաղել որոշ և/կամ ինչպիսի՞ փորձ եք ձեռք բերել: Ի՞նչ ազդեցություն է ունեցել ստանդարտների օգտագործումը ձեր աշխատանքում:

4. Հիմնվելով Ձեր փորձի վրա, նշեք, թե ի՞նչ լրացուցիչ տեղեկատվություն և/կամ գործիքներ այս ձեռնարկն ավելի արդյունավետ կդարձնեն:

5. Խնդրում ենք լրացուցիչ մեկնաբանություններ տալ կամ կարծիք հայտնել այս ձեռնարկի վերաբերյալ:

Շնորհակալություն «*Կրթության նվազագույն ստանդարտներ. պատրաստվածություն, արձագանքում և վերականգնում*» ձեռնարկի կիրառման փորձը մեզ հետ կիսելու համար: Հետադարձ կապի այս ձևը կոգեշնչի թարմացնելու «Նվազագույն ստանդարտները» և մշակելու առաջընթացի ռազմավարությունը: Խնդրում ենք լրացնել այս հարցաշարը և ուղարկել այն **minimumstandards@ineesite.org** էլեկտրոնային հասցեին կամ ԱԻԿՄՑ Նվազագույն ստանդարտների և ցանցային գործիքների համակարգողին, ԱՄՆ, Նյու-Յորք նահանգ, 10017, ք. ՆյուՅորք, ՄԱԿ-ի Պլազա 3, 7-րդ հարկ, ՅՈՒՆԻՍԵՖ, Կրթության բաժին: Հետադարձ կապի այս ձևը կարող եք լրացնել նաև առցանց՝ **www.ineesite.org/feedback**:

INEE

Inter-Agency Network for Education in Emergencies
Réseau Inter-Agences pour l'Éducation en Situations d'Urgence
La Red Interagencial para la Educación en Situaciones de Emergencia
Rede Inter-Institucional para a Educação em Situação de Emergência
الشبكة المشتركة لوكالات التعليم في حالات الطوارئ

ՔԱՐՏԵՋ

Կրթության նվազագույն ստանդարտներ.
պատրաստվածություն, արձագանքում, վերականգնում

Հիմնարար ստանդարտներ

Համայնքային մասնակցության ստանդարտներ. մասնակցություն և ռեսուրսներ **- Համակարգայման ստանդարտ.** համակարգում **- Վերլուծության ստանդարտներ.** նախնական գնահատում, արձագանքում, ռազմավարություններ, մշտադիտարկում և ընթացիկ գնահատում

Հասանելիություն և ուսումնական միջավայր

Ստանդարտ 1. Հավասար հասա-նելիություն – Բոլոր անհատներն ունեն որակյալ և պատշաճ կրթության հասանելիություն

Ստանդարտ 2. Պաշտպանություն և բարեկեցություն - Ուսումնական միջավայրերն անվտանգ են ու ապահով և նպաստում են սովորողների, ուսուցիչների և մանկավարժական այլ աշխատողների պաշտպանությանը և սոցիալ-հոգեբանական բարօրությանը:

Ստանդարտ 3. Հաստատություններ և ծառայություններ - Ուսումնական հաստատությունները նպաստում են սովորողների, ուսուցիչների և մանկավարժական այլ աշխատողների ապահովությանն ու բարեկեցությանը և կապված են առողջապահական, սնուցման, հոգեբանասոց. և պաշտպանության ծառայությունների հետ:

Դասավանդում և ուսումնառություն

Ստանդարտ 1. Ուսումնական պլաններ – Կիրառվում են մշակութային, սոցիալական և լեզվական առանձնահատկություններին համապատասխան ուսումնական պլաններ ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության ապահովման համար՝ որոշակի համատեքստին և սովորողների կարիքներին համապատասխան:

Ստանդարտ 2. Վերապատրաստում, մասնագիտական կատարելագործում և աջակցություն – Հաշվի առնելով կարիքներն ու հանգամանքները՝ուսուցիչները և մանկավարժական այլ աշխատողները պարբերաբար համապատասխան և համակարգված վերապատրաստում են անցնում:

Ստանդարտ 3. Ուսուցման և ուսումնական գործընթացներ – Ուսուցման և ուսումնական գործընթացներնաշակերտակենտրոն են, մասնակցային և ներառական:

Ստանդարտ 4. Ուսումնառության վերջնարդյունքների գնահատում - Ուսումնառության վերջնարդյունքների գնահատման և ստուգման համար կիրառվում են համապատասխան մեթոդներ:

Ուսուցիչներ և մանկավարժական այլ աշխատողներ

Ստանդարտ 1. Աշխատողների հավաքագրում և ընտրություն – Բավարար թվով համապատասխան որակավորում ունեցող ուուցիչներն ու մանկավարժական այլ աշխատողները հավաքագրվում են մասնակցային և թափանցիկ ընթացակարգերի միջոցով՝ հիմնվելով ընտրության չափանիշների վրա, որոնք արտացոլում են բազմազանությունն ու հավասարությունը:

Ստանդարտ 2. Աշխատանքային պայմաններ – Ուսուցիչներն ու մանկավարժական այլ աշխատողներն ունեն հստակ սահմանված աշխատանքային պայմաններ և նրանք պատշաճ կերպով վարձատրվում են:

Ստանդարտ 3. Աջակցություն և վերահսկողություն – Ուսուցիչների և մանկավարժական այլ աշխատողների համար նախատեսված աջակցությունն ու վերահսկողությունն արդյունավետ են գործում:

Կրթության քաղաքականություն

Չափանիշ 1. Իրավունքի և քաղաքականության մշակում – Կրթության կառավարման մարմինները առաջնահերթ կարևորություն են տալիս որակյալ կրթության շարունակականությանը և վերականգնմանը, այդ թվում՝ անվճար և ներառական կրթության հնարավորությունը:

Ստանդարտ 2. Պլանավորում և իրականացում - Կրթական միջոցառումները հաշվի են առնում միջազգային և ազգային կրթության քաղաքականությունները, իրավունքները, չափորոշիչները, պլանները և տուժած բնակչության ուսումնական կարիքները:

Հիմնական թեմատիկ հարցերը. Հակամարտության մեղմացում, Աղետների ռիսկի նվազեցում, Վաղ մանկական զարգացում, Գենդերային հարցեր, ՄԻԱՎ և ՁԻԱՀ, Մարդու իրավունքներ, Ներառական կրթություն, Միջոլորտային կապեր, Պաշտպանություն, Հոգեբանասոցիալական աջակցություն և Երիտասարդություն:

INEE

Inter-Agency Network for Education in Emergencies
Réseau Inter-Agences pour l´Éducation en Situations d´Urgence
La Red Interagencial para la Educación en Situaciones de Emergencia
Rede Inter-Institucional para a Educação em Situação de Emergência
الشبكة المشتركة لوكالات التعليم في حالات الطوارئ

«Կրթության նվազագույն ստանդարտները. պատրաստվածություն, արձագանքում, վերականգնում» ձեռնարկն արտահայտում է այն հանձնառությունը, որ բոլոր անհատները՝ երեխաները, երիտասարդները և մեծահասակները, կրթության իրավունք ունեն: Ստանդարտները միավորում են կրթության որակի նվազագույն մակարդակը և հասանելիությունը արտակարգ իրավիճակներից մինչև վերականգնման փուլ: Դրանք կարող են կիրառվել մարդասիրական կառույցների, կառավարությունների և տեղական բնակչության համար՝ որպես կարողությունների զարգացման և վերապատրաստման գործիք կրթական աջակցության արդյունավետությունը և որակը բարձրացնելու նպատակով: Դրանք օգնում են մեծացնել մարդասիրության բնագավառի դերակատարների շրջանում հաշվետվողականությունն ու կանխատեսելիությունը և բարելավել գործընկերների, այդ թվում՝ կրթության ոլորտի մարմինների միջև համակարգումը:

ԱԻԿՄՅ-ն նպաստել է 2003-2004թթ. Նվազագույն ստանդարտների մշակման և 2009-2010թթ. թարմացման վերաբերյալ լայնածավալ խորհրդակցական գործընթացին: Դրանց հիմքում ընկած են Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան, 2000թ. Դաքարի «Կրթություն բոլորի համար» համաժողովի նպատակները և «Սֆերա» նախագծի մարդասիրական կանոնադրությունը:

Մարդասիրական չափորոշիչների գործընկերությունը փաստերի, փորձագիտական եզրակացության և լավագույն փորձի վրա հիմնված չափորոշիչների նախաձեռնությունների միջև փոխգործակցություն է և կիրառվում է մարդասիրական արձագանքման որակի և հաշվետվողականության բարելավման նպատակով: